



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ANTONIA ARSLAN

ԱՆՏՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

**LA MASSERIA
DELLE ALLODOLE**

**ԱՐՏՈՅՏՆԵՐԻ
ԱԳԱՐԱԿԸ**

Traduzione e note di
SONA HAROUTYUNIAN

Redazione di
SONA SEFERIAN

Introduzione di
BOGHOS LEVON ZEKIYAN

YEREVAN 2007
SAHAK PARTEV

Իտալերէնից թարգմանեց՝
ՍՈՆԱ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆԸ

ՍՈՆԱ ՍԵՖԵՐԵԱՆԻ
Խմբագրութեամբ

Նախաբանը՝
Հ. ԼԵՒՈՆ ԶԷՔԻԵԱՆԻ

ԵՐԵՒԱՆ 2007
ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

ԹԱՐԳՄԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ

2004 թ., երբ մէկ շնչով ընթերցեցի իտալահայ գրող Պրոֆ. Անտոնիա Արսլանի Միլանի «Ռիցցոլի» հեղինակաւոր հրատարակչատան մամուլից լոյս տեսած «La masseria delle Alledole» գիրքը, չէի կարող երեւակայել, որ երեք տարի անց դառնալու էի վէպի թարգմանչուհին:

Ամէն ինչ սկսուեց 2005 թ. աշնանից: Երեւանում ընթանում էին իտալական բարեկամութեան օրերը: Գտնուում էի Հայաստանում՝ մասնակցելու ՀՀ ԳԱԱ տեղի ունեցող գիտաժողովին՝ Դանտէի հայերէն թարգմանութիւնների շուրջ գեկոյցով: Այդ օրերին պէտք է տեղի ունենար նաեւ Անտոնիա Արսլանի «Արտոյտների Ագարակը» գրքի շնորհանդէսը հեղինակի եւ իտալացի հանրայայտ կինոբեմադրիչներ Պաոլո եւ Վիտտորիո Տաւիանիների մասնակցութեամբ, որոնք յաջորդ տարին սկսելու էին վէպի հիման վրայ համանուն ֆիլմի նկարահանումը: Եւ ահա հեղինակն ինձ դիմեց թարգմանելու գրքի առաւել յուզիչ երեք հատուածները՝ շնորհանդէսի ժամանակ ընթերցելու համար: Միանգամից անցայ գործի, եւ մէկ շաբաթ յետոյ արդէն պատրաստ էին անհրաժեշտ հատուածները: Պրոֆ. Արսլանը ժամանեց, եւ գրքի շնորհանդէսը մեծ շուքով տեղի ունեցաւ Ազգային պատկերասրահում:

Իտալիա վերդարձիս կրկին հանդիպեցի հեղինակին: Այս անգամ նա ինձ առաջարկեց գրքի ամբողջական թարգմանութիւնը, սակայն մէկ պայմանով՝ Հայերէն տարբերակը պէտք է պատրաստ լինէր Տաւիանի եղբայրների ֆիլմի նկարահանման աւարտին: Ժամկէտը շատ կարճ էր, ըստ որում այդ

© 2004 by Antonia Arslan

Published by arrangement with Roberto Santachiara

Literary Agency

© 2004 RCS Libri S. p. A., Milano

ISBN 88-17-00144-9

Translation copyright © 2007 by Sona Haroutyunian

ISBN 978-99941-944-8-3 (Աստղիկ)

ISBN 978-99941-944-7-6

ընթացքում պէտք է պաշտպանութեան ներկայացնէի թեկնածուական ատենախօսութիւնս՝ «Դանտէի «Աստուածային կատակերգութեան» լեզուաճական իւրայատկութիւնները հայերէն եւ անգլերէն թարգմանութիւնների զուգադրութեամբ» թեմայով: Սակայն միանգամից խինդով ընդունեցի առաջարկութիւնը եւ ձեռնամուխ եղայ Անտոնիա Արսլանի «Արտոյտների ագարակը» վէպի թարգմանութեանը, որն ունեցաւ երեք ամիս դադար 2006 թ. ամռանը թեկնածուական ատենախօսութեանս պաշտպանութեան առիթով: Ապա աշխատանքները վերսկսուեցին:

Կը ցանկանայի տալ որոշ բացատրութիւններ որդեգրած սկզբունքների շուրջ: Հեղինակի ոճին հարազատ մնալու նպատակով, օտարաբանութիւններին դէմ լինելով հանդերձ, պահպանուել են թուրքերէն, ֆրանսերէն, անգլերէն մէջբերումները: Սակայն դրանք բացատրուած են տողատակում՝ ընթերցանութիւնն առաւել դիւրին դարձնելու համար:

Մէկ անդրադարձ էջ 70-ում տեղ գտած երկխօսութեան շուրջ Ազնիւի եւ Իսմէնէի միջեւ.

– Քրիստոս յարեաւ, – ասաց յոյն Իսմէնէն:

– Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի, – պատասխանեց Ազնիւը:

Հայ ընթերցողին գուցէ տարօրինակ թուայ այս ողջոյնն ու ստացուած պատասխանը, քանի որ, ըստ Հայ Եկեղեցու, պէտք է լինի.

– Քրիստոս յարեալ ի մեռելոց:

– Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

Մինչդեռ Բիւզանդական Եկեղեցիներում Յարութեան գիշերուանից քառասուն օր շարունակ՝ մինչեւ Համբարձում, ասուում է.

– Christós anesti,

եւ պատասխանն է

– Alithôs anesti, այսինքն՝

– Քրիստոս յարեաւ:

– Իրաւ յարեալ:

Հեղինակը բնագրում գործածել է Բիւզանդական ծիսակարգի ողջոյնի ձևը: Մինչդեռ հայերէն տարբերակում Իսմէնէն ողջունում է Յոյն Եկեղեցու, Ազնիւն էլ պատասխանում է Հայ Եկեղեցու աւանդոյթի համաձայն: Ըստ որում ներմուծուած է յոյն որոշիչը՝ իմաստն առաւել հասկանալի դարձնելու համար:

Գրքում տեղ գտած գէթ աննշան փոփոխութիւնները կատարուել են հեղինակի գիտութեամբ:

Միանգամայն անհնար էր աշխատանքը ժամանակին աւարտին հասցնել, եթէ շրջապատուած չլինէի վաւեր համագործակցութեամբ:

Նախ եւ առաջ երախտապարտ եմ ընտանիքիս, որն ինձ նեցուկ եղաւ իր ջերմ սիրով եւ խոր ըմբռնմամբ: Պարտական եմ ծնողներիս՝ ինձ անհոգ մեծացնելու եւ կեանքի քառուղիներում սատար կանգնելու համար:

Խորին շնորհակալութիւն Անտոնիա Արսլանին՝ գիրքը յղանալու եւ ներքոգրեալիս հայերէն թարգմանութիւնը վստահելու համար:

Յայտնում եմ առանձնայատուկ երախտագիտութիւն ուսուցչապետուհուս՝ անուանի թարգմանչուհի, Երեւանի համալսարանի Թարգմանչաց դպրոցի (թուով ութնորդը՝ սկսած հինգերորդ դարից), Հայ իրականութեան մէջ առաջին Գիրք թարգմանչացի՝ «Աստղիկի», «Սահակ Պարթեւ» հրատարակչութեան, ամենամեայ «Թարգմանչաց արուեստ» խորագրով գիտաժողովի հիմնադիր, ԵՊՀ ՌԳԲ բաժանմունքի Անգլիական թարգմանչական բաժնի ղեկավար, չեքսպիրագէտ, դոկտոր, պրոֆեսոր Սոնա Սեֆերեանին:

Երախտագիտութիւնս Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանի հայագիտութեան ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ Հ. Լեւոն Մ. Վրդ. Զէքիեանին:

Շնորհակալութիւն Մխիթարեան Միաբան Հ. Վահան վրդ. Օհանեանին, որի սիրայօժար աշխատակցութեան շնորհիւ Հնարաւոր եղաւ գիրքը ներկայացնել հայերէն դասական վայելուչ ուղղագրութեամբ եւ ք.գ.թ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտի աւագ գիտաշխատող տիկին Անահիտ Վարդանեանին՝ լեզուական արժէքաւոր դիտարկումների համար:

Շնորհակալութիւն բոլոր նրանց, ովքեր ինչ-որ կերպ նպաստեցին սոյն գրքի լոյս ընծայմանը: Ամէն պարագայում, եթէ նշմարուի որեւէ թերութիւն, միակ պատասխանատուն ներքոգրեալն է:

Թարգմանիչը պետք է ջանայ հնարաւորինս մօտենալ բնագրին, բայց առանց յաւակնելու, թէ մօտեցել է: Ինչպես ասում են՝ «չկայ կատարեալ թարգմանութիւն»: Թարգմանչի մեծագոյն ձիրքն իր համեստութիւնն է:

Կցանկանայի խօսքս աւարտել նշանաւոր արեւելագէտ էմիլիո Տեզայի բառերով. «Երբ գործես իբրեւ հաւատարիմ ծառայ, կբամբասեն ցուրտ հաւատարմութիւնդ եւ կամ երբ գործես իբրեւ յանդուգն նախանձորդ, կյանդիմանեն նորութիւններդ. եթէ վազես, կկանգնեցնեն. դանդաղ ընթանաս, կհրմշտեն: Ընթերցողի քննադատութեանը, ծածկօրէն պատասխանում է թարգմանիչը՝ դու՛ք արէք: Բայց կարեւոր է մարդկային գրականութեան պատմութիւնների մէջ, որ ընթերցողը խիստ լինի, թարգմանիչն էլ հանդուրժի, եւ նորից սկսի»: (Տեզա է., Հանդէս իտալական մատենագիտութեան, 1902)

Մաղթենք, որ սոյն գիրքն օժանդակի Թուրքիայում զարգացող գործընթացին՝ ի նպաստ Մեծ Եղեռնի ճանաչմանը որպէս հայ ժողովրդի վրայ գործադրուած ցեղասպանութիւն:

Բարի՛ ընթերցում իմ հայրենակից:

Սոնա Յարութիւնեան

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ՀԵՏ՝ ՊԱՏՈՒՄԻ ՍԵՄԻՆ

Շատ յաճախ այն է մեր համոզումը՝ որ ժամանակի ու սերունդներու հոսքը անխնայ հարուած մ'է յիշողութեան, թանձր վարագոյր մը անթափանց՝ որ անյետադարձօրէն կը քօղարկէ ու կը թաղէ պատմութեան փշուրները, մինչեւ անոնց հետզհետէ նօսրացող հետքերը:

Վերջին տասնամեակներու անցուդարձերը, բազմաթիւ ժողովուրդներու կեանքին մէջ, եկան հերքել այս վարկածը: Այդ հերքումը, սակայն, գրեթէ աննախադէպ ներոյժ եւ աւելն ցուցաբերեց մեր ազգային ներքին իրադրութեան մէջ, ուր՝ քանիցս՝ մակերեսային մերձեցումներ ազգային տեսակէտէ վերջացած, ի սպառ կորած կարծել կու տային սերունդներ, կորիզներ, խմբաւորումներ, որոնք անակնկալօրէն մթնշաղի ստուերներէն դէպի լոյս բացուեցան, հանդէս եկան անակնկալ և, որքան աննախակարծ՝ նոյնքան եւ աւելի եւս զարմացնող և հիացնող կենսունակութեամբ մը:

Այս կարգի երեւոյթներէն է, մանաւանդ թէ խորհրդանշական հզօր ճառագայթումով և իմաստաւորումի առաջնահերթ գործառոյթով մը օժտուած, Անտոնիա Արսլանի վէպը՝ «Արտոյտների ագարակը» (La masseria delle allodole), որ Իտալիայի մէջ յայտնի է արդէն իբրեւ վերջին տարիներու առաւել գրաւիչ «բեստ սելը»ներու կարգին, պսակուած՝ գրական բազմաթիւ և բարձրագոյն վարկի մրցանակներով, ծանօթ առանց չափազանցութեան՝ աշխարհի չորս ծագերուն. Զպոնիայէն Միացեալ Նահանգներ, Շուեդէն Յունաստան, թարգմանուած՝ բազմաթիւ լեզուներու: Այսօր հայրենի

ընթացողը ևս հնարաւորութիւնն ունի վայելելու այս փայլուն ստեղծագործութիւնը՝ շնորհիւ Սոնա Յարութիւնեանի թարգմանութեան:

Անտոնիա Արսլան՝ թողնուհին է Երուանդ Արսլանեանի և դուստրը Քայլէ Արսլանի, որոնք՝ Ի. դարու ընթացքին՝ հանդիսացան հանրայայտ և նորարար բժիշկներ քթի, կոկորդի և ականջի մասնագիտութեան ասպարէզներուն մէջ Եւրոպական չափանիշերով:

Անտոնիա Արսլանը բարձրագոյն ուսումը բոլորած է՝ Պատմայի պատմական նշանաւոր Համալսարանին մէջ (Եւրոպայի հնագոյնը, յետ Բոլոնիայի՝ սոսկ երկու տարուան տարբերութեամբ), որմէ յետոյ յաճախած է Համբուրգի և Գեոտինգենի Համալսարանները, ձեռք բերելով հնագէտի մասնագիտութիւն: Սակայն աւարտելէն անմիջապէս ետք, կ'որոշէ փոխել իր մասնագիտական հետազօտութեան դաշտը ու կ'անցնի դէպի Ժժ.—Ի. դարերու իտալական գրականութեան ոլորտները: Կը դառնայ տիտղոսաւորը Պադովայի Համալսարանի իտալական ժամանակակից գրականութեան ամբիոնին:

Անտոնիան, որ՝ մանկութեան տարիներէն ի վեր՝ տեւական փնտռութիւններ մը մէջ եղած է իր ինքնութեան, իր ընտանիքին, իր արմատներուն նկատմամբ, կը սկսի հետզհետէ ինքզինքը վերագտնել որպէս հայ: Մանկութեան կարօտը, Երուանդ պապիկի նահապետական կերպարը, Անրիեթ Տօրաքի գրաւիչ, անմոռանալի անձնականութիւնը, ինչպէս նաև Եղեռնը վերապրողներու յաճախ լսուող պատմութիւնները կ'օգնեն Անտոնիային պեղելու տակաւ առ տակաւ իր հայեցի ինքնութիւնը, և նորովի տէր կանգնելու ընտանեկան-ազգային այդ աւանդին՝ որ հասուն կնոջ և գիտնականի իր աչքերուն կը վերայայտնուի այլեւս ո՛չ լոկ ողբերգութեան, այլ նաև անգնահատելի մի գանձի և ժողովուրդի գոյատեւման հէքիաթային հերոսապատմին կրկնակի կախարդանքով:

Մինչ այդ կը ծանօթանայ Դանիէլ Վարուժանի գլուխ գործոց «Հացին երգը» հատորին: Անտոնիայի աշխատասի-

րութեամբ գիրքը հրապարակ կ'իջնէ իտալերէն յաջող թարգմանութեամբ Միլանի «Գուեթինի» Հատարակչութեան շնորհիւ, անմիջապէս արժանանալով արտակարգ ընդունելութեան: Տաս տարիէ նուազ ժամանակահատուածի մը ընթացքին, հինգ տպագրութիւններ կը յաջորդեն իրարու, Իտալիոյ բանաստեղծական արտադրութեան տեսարեմին վրայ՝ ինքնատիպ կամ թարգմանական՝ մրցանշային երեւոյթ մը արձանագրելով: Այնուհետև, Անտոնիա լոյս կ'ընծայէ Վարուժանի լաւագոյն քերթուածներէն ընտրանի ծաղկաքաղ մը, զոր կը կոչէ թարգմանած քերթուածներէն մէկուն անունով՝ «Յորեանի ծովեր» (Հրատարակչութիւն՝ Պաուլինի): Ենթահայի ջանքերուն, Վարուժան կը դառնայ յանկարծօրէն իտալացի գրականագէտ և գրասէր շրջանակներու ծանօթ և սիրելի անուն մը, որմէ մէջբերումներ յաճախ կը սկսին երեւան գալ լայն ծաւալումով, հեղինակաւոր թերթերու և հանդէսներու մէջ, բանաստեղծական ստեղծագործութեան մասին շատ բարձր գնահատականներով:

Վերջապէս հասունացած է պահը գրելու «Արտոյտների Ագարակը»: Անաւարտ ճակատագրով իր ազգականները, որոնց միջոցով Անտոնիան կը ներկայացնէ Եղեռն ապրած համայն Հայութեան ճակատագիրը, կը ձայնէին իրեն՝ իրենց անյայտ գերեզմաններէն: Գիրքը լոյս կը տեսնէ 2004-ին և անմիջապէս մեծ յաջողութիւն կ'արձանագրէ: Մի քանի ամսուան ընթացքին ունեցած է ութը վերահրատարակութիւն, արժանանալով գրական տասը կարևոր մրցանակներու: Գիրքը, մինչև օրս, ունեցած է թարգմանութիւններ՝ անգլերէն, ֆրանսերէն, շուեդերէն, յունարէն, գերմաներէն, սպաներէն ու ջապոներէն լեզուներով:

Գրքին յաջողութեան կը վկայէ նաև այն փաստը՝ որ իտալացի հանրահայտ բեմավարներ Պաուլոյ և Վիտտորիոյ Տաւիանի եղբայրները, Անտոնիայի վէպէն կը ներշնչուին, ազատ ընթացքով նկարահանելու համար համանուն ֆիլմը, որ 2007-ի Փետրուարին ներկայացուեցաւ, մրցոյթէ դուրս, Բեռ-

լինի Շարժանկարի միջազգային փառատօնին, և շրջանառու-
թեան մէջ է արդէն Իտալիոյ կարեւորագոյն կինոսրահներուն
մէջ:

«Արտոյտների ագարակը» գրքի Հայրենիքում հրատարա-
կելի Հայերէն թարգմանութիւնը, յետ Փարիզի «Յառաջ»ի
սիւնակներուն մէջ որպէս թերթօն լոյս տեսած արեւմտահա-
յերէն թարգմանութեան՝ ձեռամբ Վազգէն Բամպակեանի,
վստահուեցաւ բանասիրական գիտութիւնների թեկնածու
Սոնա Յարութիւնեանին, որ արդէն ներկայացած էր Հայ ըն-
թերցասէր հասարակութեան:

Սոնա Յարութիւնեան, յետ գերազանց աւարտելու ԵՊՀ-ի
Ռոմանագերմանական բանասիրութեան ֆակուլտետի թարգ-
մանչական բաժինը, նուիրուած է Դանտէի «Աստուածային
Կատակերգութեան» Հայերէն և անգլերէն թարգմանութիւն-
ներուն զուգադրական ուսումնասիրութեան, արժեւորելով
այն կարեւոր փաստը, որ մի շարք եւրոպական և բոլոր ասի-
ական լեզուներէն առաջ Դանտէն Հնչած է Հայերենով, Վե-
նետիկի Աբ. Ղազար կղզիի Մխիթարեան Միաբանութեան
բազմավաստակ Հայրերուն շնորհիւ: Նա բազմիցս Հանդէս
եկած է զեկուցումներով թէ՛ Հայրենի և թէ՛ միջազգային դան-
տէագիտական գիտաժողովներու ընթացքին, և հեղինակն է
մի շարք գիտական հրատարակումներու:

Այժմ Սոնա Յարութիւնեան կը գտնուի Վենետիկ, ուր կը
դասաւանդէ Կա Ֆոսկարի Համալսարանին մէջ որպէս Հայե-
րէն լեզուի օժանդակ դասախօս: Յաջողութեամբ անցնելով
նոյն Համալսարանին աւրնթեր դոկտորականի (PhD) ընդուն-
ման մրցոյթը, դասախօսութեան զուգահեռ նա կը զարգացնէ
իր դանտէագիտական հետազօտութիւնները, դոկտորական
գիտաճառին պատրաստութեամբ: Սոնայի գիտական հետա-
քերթութիւնները կ'ընդգրկեն նաեւ Դանտէ-Նարեկացի Հան-
գիտական փոխարարներութիւններու ուսումնասիրութիւնը,
ինչպէս նաև Դանտէի ազդեցութիւնը արդի Հայ գրականու-
թեան վրայ:

2000 թ. Սոնա Յարութիւնեանի թարգմանութեամբ լոյս
տեսաւ «Հայերի Վենետիկը» հատորը, որ արժանացաւ «Տա-
րուայ լաւագոյն թարգմանուած գիրք» մրցանակին: Գրքի՝
մանրանկարուած մագաղաթեայ ընծայաթերթիկով՝ յատկա-
պէս պատրաստուած երեք օրինակներէն առաջինը թարգման-
չուհին ունեցած է պատիւը նուիրելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.
Վեհափառ Հայրապետին Մ. Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, երկրոր-
դը՝ Մխիթարեան Միաբանութեան Ընդհանրական Աբբահայր
Հ. Եղիա Վրդ. Քիլաղպեանին Ս. Ղազար կղզին՝ գրքի շնոր-
հահանդէսի ժամանակ, իսկ երրորդը Հռոմի Պապին՝ Ն.Ս.
Յովհաննէս Պօղոս Բ.ին, Վատիկան:

Ահա, յետ այս թարգմանութեան յաջող փորձին, Անտո-
նիա Արսլան Սոնային վստահեցաւ իր «Արտոյտների ագա-
րակը» վէպին թարգմանութիւնը: Գրքի Հայերէն տարբերակի
ստեղծման համար պայման էր, որ երբ Տավիանիններն աւար-
տէին Ֆիլմի նկարահանումը, Հայերէն տարբերակը պատ-
րաստ ըլլար: Եւ այսօր, իրոք, պատրաստ է Ֆիլմը, պատրաստ
է նաև գիրքը:

Սոնա Յարութիւնեանի թարգմանութիւնը կը ցուցաբերէ
բնագրին բծախնդիր հաւատարմութեան հետ Հայերէն արտա-
յայտութեան հարազատութիւն և ներդաշնակութիւն: Այն ինչ
որ պիտի կոչէի «լեզուական բնագր», և որ հետզհետէ ցան-
ցառ երեւոյթի կարգավիճակին կը մօտենայ դժբախտաբար,
բնորոշիչ լծակներէն մէկն է Սոնայի լեզուակիրառութեան,
միացած՝ գրական ճաշակի: Նա, ըստ համագրի պահանջին, չէ
վարանած դիմելու մերթ նաև արեւմտահայ որոշ դարձուածք-
ներու և արեւմտահայերէնի առաւել ընտել ու բնորոշ եզրե-
րու, ճկունութեամբ հիւսելով մեր հազարագանձ Մեծաքան-
չին բազմակի դրսեւորումները:

Թարգմանութեան մեջ պահպանուած են հեղինակին օգ-
տագործած օտարանուն բառերը: Այս երեւոյթը միանգամայն
ողջունելի է, քանի որ եթէ հեղինակը իտալերէնի մէջ կիրա-
ռած է այդ բառերը, որոնք բոլորովին օտար են իտալացիին,

ուրեմն ևս աւելի կ'արժէր վերապրեցնել հայերէնով այդ նոյն տեղական գոյնը, նկատի առած մանաւանդ որ այդ բառերը ոչ միայն կը յատկանշէին Մեծ Եղեռնի սերունդին անմիջական շրջապատը, այլ նաեւ մաս կը կազմէին իրենց առօրեայ կենցաղին: Ուստի ստեղծագործութեան համն ու տեղական բնոյթը պահպանելու փութկոտութեամբ, այդ բառերը, որոնք մեծ մասամբ օսմանական թրքերէնին կը պատկանին, նոյնութեամբ պահուած են՝ տառադարձելով, և ի հարկին տողատակի ծանօթագրութիւններով հակիրճ բացատրութիւններ տալով կամ թարգմանելով, որով ընթերցումն ալ աւելի կը դիրանայ: Իսկ մասնաւորապէս գնահատելի է այն հանգամանքը, որ թարգմանչուհին, ինչպէս նախընթացաբար, նոյնպէս իր այս ներկայ թարգմանութեան համար եւս ուղած է կիրարկել դասական ուղղագրութիւնը: Աւելորդ է կրկնել, չկայ մարդկային, մանաւանդ թարգմանական, անթերի գործ: Ինքը թարգմանչուհին աւելի քան ուրիշ ոչ ոք, վստահ ենք, գիտակից է այս հանգամանքին և բաց՝ ամէն շինիչ թելադրութեան:

Ուրեմն՝ հաճելի՜ և գրաւիչ ընթերցում, ու բարի վայելք, սիրելի ընթերցող:

Հ. Լեւոն Զէքիեան
Վենետիկ, 13 Մայիս 2007
Զ. Կիւրակէ Յինանց

Գիրքը նուիրուած է Անրիեթին,
այն երեխային, որ չմեծացաւ

ԱՌԱՋԱԲԱՆ

Աբ. Անտոն¹ եկեղեցին գնալու համար ընտրեցինք կամարակապերի տակի ճանապարհը: Յունիսի տասներեքն էր, իմ անուանակոչութեան օրը: Անձրեւում էր, եւ ես տեղից շարժուելու ցանկութիւն չունէի, բայց Երուանդ պապը՝ նահապետը, որին ոչ ոք չէր համարձակուում հակառակել, ասել էր. «ժամանակն է, որ երեխան ճանաչի իր սրբին: Գրեթէ ուշացել ենք, արդէն հինգ տարեկան է: Լաւ չէ սրբերին սպասեցնելը: Եւ պէտք է նրան ոտքով տանէք»: Նա մեզ կմիանար իր Լանչա մականիչի մեքենայով վարորդ Անտոնիոյի հետ:

Այսպիսով, հօրաքրոջս հետ անցանք դէպի եկեղեցին առաջնորդող կամարաշար երկու փողոցները. պստիկճատիկ Անրիեթ հօրաքոյրս, որն ունէր հայկական մեծ քիթ, սեւ, փայլուն մազեր, որոնք կրում էր թասակի նման, եւ հոգում շատ գաղտնիքներ՝ ամուր փայփայած, երբեք ցածրակրունկ կօշիկ չէր հագնում եւ թոյլ չէր տալիս, որ իր պայուսակը բացեմ: Նա էլ գոհ չէր պապիկի հրահանգից. շոգում էր, գլուխը «ցաւելու վրայ էր», եւ այն կարծիքին էր, որ Աբ. Անտոնի օրը համանուն եկեղեցին գնալը դէմ էր բարեկրթութեան կանոններին՝ աւելի բնորոշ գաւառացիներին ու զբօսաշրջիկներին, շարունակ վախենում էր ինձ կորցնել եւ տագնապահար էր, ինչպէս միշտ:

¹ Աբ. Անտոնը Պաղովայի պաշտպանն է: Նրա հանդէպ պաղովացիները առաւելագոյն ջերմեռանդութիւն եւ պաշտամունք են տածում (ծնթ. թարգմ.):

Անրիեթ Հօրաքոյրը 1915 թուականի ցեղասպանութեան վերապրողներից էր: Սփիւռքի արարած լինելով՝ այլևս մայրենի լեզու չունէր: Շատ լեզուների էր տիրապետում՝ ներառեալ իր մայրենին՝ Հայերէնը, սակայն խօսում էր քարացած, վերամբարձ արտայայտութիւններով, օտարի պէս: Անում էր արտառոց սխալներ եւ երբեք չէր ցանկանում պատմել իր ողջ մնալու պատմութիւնը: Մոռացել էր նոյնիսկ իր տարիքը (երբ Իտալիա էին հասել, այնքան նուազ ու հիւժոճած տեսք էր ունեցել, որ իր տարիքից առնուազն երկու-երեք տարի փոքր էին գրանցել): Բայց ամէն երեկոյ մեր տուն ընթրիքի գալիս հետը բերում էր սկուտդներով լի չոր թխուածք՝ ըստ աւստրիական նորոյթի, խոշոր ամաններով տնական մածուն եւ փախլաւայ: Նրա ներկայութիւնը լցնում էր տունը տարտամ յիշողութիւններով:

Ես նրան շատ էի սիրում, նա էլ ինձ շփացնում էր: Նրա տանն ամբողջ օրը էդիտ Պիաֆի սկաւառակներն էին պտտում, եւ կարելի էր պարել հողաթափերով: Այսպիսով, իմ ծոյլ հետաքրքրասիրութիւնը թոյլ էր տալիս, որ Հօրաքոյրս քարշ տար ինձ դէպի սրբատեղի, յոյս ունենալով արժանանալու պաղպաղակի կամ կրծքանշանի, կամ էլ պատկերազարդ գրքի, ո՛վ գիտէ: Ես համաձայն էի ցանկացած նուէրի եւ հաւատացած սպասում էի:

Եւ երբ հասանք Սբ. Անտոն եկեղեցու հսկայական հրապարակը, ես ստացայ իմ նուէրը: Մի քանի ըրպէ էր, ինչ անձրեւը դադարել էր: Յանկարծ ամպերը վարագոյրի պէս բացուեցին, եւ արեւալոյսի մի տաք շող վերածեց հրապարակը թատրոնի, որտեղ բազմաթիւ գունաւոր կերպարանքներ սկսեցին իրենց թափ տալ եւ հովանոցները փակելով՝ շտապեցին դէպի եկեղեցու շքամուտքը: Շատերն ուրախ-գուարթ ձայն էին տալիս միմեանց՝ Աիդա, Նիւես, Էստերինա, Զիջա. նրանց ընկերակցում էին հոգեւոր եղբայրների շորեր հագած, ձգուած, փոքրիկ տղաներ ու սեւ հագուստով, յաղթանդամ, լուրջ տղամարդիկ: Կենտրոնում առանձնանում էր

երկարափէշ, պճնազարդ հագուստներով հանդիսաւոր մի խումբ, իրենց սանրուածքներից գոհ կանանցով եւ բեղը սրած տղամարդկանցով: Բոլորը, անշարժ կանգնած, յառել էին իրենց հայեացքները դէպի եկեղեցու կիսաբաց մայր դուռը:

– Տեսնու՞մ ես, այստեղ գնչուներ էլ կան, – ասաց Հօրաքոյրս տագնապած, – ձեռքս ամուր բռնի՛ր:

Ես ամենեւին էլ միտք չունէի բաց թողնել նրա ձեռքը: Միայն տեսնելն իսկ բաւական էր: Հմայուած էի ու շփոթուած: Արդեօք դրա՞նք էին գնչուները: Այն գնչուները, որոնք միշտ շարժման մէջ էին եւ երբեք ոչ մի տեղ տիտիկ չէին անում: Նրանք, որ ապրում էին փոքրիկ տնակների նմանուող խայտաբղէտ-խայտաճամուկ սայլերում, որոնց ներսում կար ամենայն անհրաժեշտը: Մենք՝ Հայերս էլ գնացել ենք շատ երկրներ, բայց ինչ-որ տեղ հասնելով՝ հաստատուել ենք. այդ իսկ պատճառով էլ ազգականներ ունենք աշխարհի չորս ծագերում: Ես սկսեցի կրկնել այդ քաղաքների եւ այնտեղ ապրող ազգականների անունները՝ բերանումս շաքարի պէս շուռումճուռ տալով դրանք:

Հօրաքոյրս միշտ կրկնում էր. «Երբ չարութիւն անէք եւ ինձ յոգնեցնէք, կգնամ Բէյրութ՝ Արուսեակի մօտ, Հալէպ՝ Զարեհ Հօրեղբօր մօտ, Բոստոն՝ Ֆիլիպի եւ Միլդրիթի, Ֆրեզնո՝ քրոջս՝ Նուարդի կամ Նիւ Եորք՝ Անիի, կամ էլ Կոպակաբանա՝ գարմիկիս՝ Միշելի մօտ: Բայց նրա մօտ՝ ամենավերջում, քանի որ ասորու հետ է ամուսնացել»: Ես հմայուած էի այդ ասորի Հօրաքրոջ կերպարով: Պատկերազարդ մի գրքում տեսել էի հին ասորիների տարազներն ու մօրուքները, ինձ պատմել էին Նաբուգոդոնոսորի եւ մեծ քաղաքներ Բաբելոնի ու Նինուէի պատմութիւնը, եւ այդ տիկնոջը պատկերացնում էի շքեղ կերպասներով, Բաբելոնի կախովի այգիներով վերուվար անելիս (Բաբելոնն, ըստ իս, արտասանութեամբ շատ մօտ էր Կոպակաբանային): Ինչպէ՞ս թէ նրանց վերջում թողնել, ինչպէս մտադիր էր Հօրաքոյր

Անրիեթը. իմ կարծիքով՝ այս չքեղ ազգակցութեան հրապոյ-
րը պէտք է առաջին տեղում դրուէր: Սակայն իրականում ոչ
ոք չէր հարցնում իմ կարծիքը:

Շարունակելով նեարդայնացած սեղմել ձեռքս՝ հօրաքոյրս
շուրջբոլորն էր նայում: Փոքրիկ, սրտաշարժ եւ ինքնամոռաց
Անրիեթը փնտրում էր պապիկի ապահով ներկայութիւնը.
վերջինս այդ պահին, իրօք, ժամանեց: Արծաթագոյն մեքե-
նան, անթերի շրջադարձ կատարելով, սահեց ողջ հրապարա-
կի երկայնքով եւ անձայն կանգնեց ճիշտ մեր կողքին: Վա-
րորդ Անտոնիոն իջաւ եւ շտապեց բացել դուռը: Պապիկը
եւս փոքրամարմին էր, բայց որքա՛ն հեղինակաւոր: Սկսած
լրիւ ճաղատ գլխից, որ խնամքով սափրել էր տալիս ամէն
առաւօտ, մինչեւ կզակը ծածկող հպարտ մօրուքը, ճշգրտօ-
րէն կոճկուած սոնապաններով փայլուն մոյկերը, պապիկը
ինքնավստահութիւն էր ներշնչում, եւ նրանից բխում էր
ներքին մեծ ուժ: Եւ այս ամէնը զուգակցուած էր քմահաճ
հեղինակութեամբ, որը վիճարկման ենթակայ չէր եւ զուար-
ճացնում էր մեզ՝ երեխաներիս, քանի որ յաճախ միանգա-
մայն անհասկանալի կերպով հակառակում էր տան միւս
մեծերի կշռադատ որոշումներին:

Պապիկն անմիջապէս ըմբռնեց իրավիճակը՝ ներառեալ
գնչուների՝ անհանգստութիւն պատճառող ներկայութիւնն,
ու արտայայտուեց.

– Դու՛, Անրիեթ, մտիւր եկեղեցի կողքի դռնից, նստիւր եւ
սկսիւր աղօթել: Լաւ կլինի՝ վարդարանով, քանի որ ժամանակ
կպահանջուի: Յետոյ կգանք քեզ մօտ: Փոքրիկն ինձ հետ է
գալիս: Իսկ դու՛, Անտոնիոն, ներսում մի շրջան կատարիւր.
այսօր Սբ. Անտոնի տօնն է, որը եւ քո Սուրբն է: Անկասկած
խնդրելու բան կունենաս. ապա գնա, նստիւր օրիորդի ետե-
ւում, եւ միասին ինձ սպասէք:

Եւ ձեռքիցս բռնած՝ ինձ ուղիղ տարաւ գնչուների մօտ,
որոնք դեռեւս անշարժ կանգնած էին հրապարակի կենտրո-
նում: Նրանց առաջնորդը, որն առաջին շարքում էր, յաղ-

թանդամ էր ու գեղեցիկ: Երբ տեսաւ պապիկին, որն այնքան
պստիլիկ էր ու գնդիլիկ, բաճկոնակից կախուած ժամացոյցի
պսպղուն շղթայով, բարեւեց եւ դիմելով իր խմբին, որն իմ
հմայուած աչքերին նոյնքան գեղեցիկ թուաց, որքան
գնչուն, անմիջապէս ասաց.

– Ահա պրոֆէսորը: Նա է, որ փրկել է երեխային: Մեզ
հետ եկեղեցի է գալիս, մեզ հետ աղօթում է:

Իսկ պապիկն ասաց.

– Սա իմ թոռնիկն է: Անունը Անտոնիա է:

Այդ պահին բազիլիկի մայր դուռը սկսեց կամաց-կամաց
բացուել, եւ երկու ծանր կերպասէ վարագոյրների ետեւից
երեւաց մի մթին, անհուն խորութիւն, որտեղից փչում էր զօ-
րաւոր խնկաբոյր. միաժամանակ լսուեցին ամբոխի անորոշ
չչուկներ՝ մերթ ընդ մերթ ուժգնացող երգեցողութեան յոր-
ձանքներով: Պապիկը բռնեց մի ձեռքս, իսկ գնչուների
առաջնորդը՝ միւսը, եւ դանդաղ ու ծանր քայլերով միասին
ընթացանք խմբի առջեւից դէպի մուտքը: Մեր շուրջբոլորը
հաւաքուած մարդիկ ճամփայ էին տալիս՝ խորհրդաւոր
չնջալով: Խմբից իւրայատուկ հոտ էր տարածոււմ՝ ձիու ու
կաշուի, թխացած մաշկի ու փողոցային փոշու: Հոտ, որն
ընդմիջտ կմնայ յիշողութեանս մէջ իբրեւ բոյր հոգու բոյնի,
որին ամէնքս էլ կվերադառնանք:

Գնչուները երգում էին իրենց խորհրդաւոր լեզուով: Պա-
պիկն էլ երգում էր իր խորհրդաւոր լեզուով, այնպիսի
քաղցր բառերով, որ ասես ոչ թէ նրանից էին դուրս գալիս,
այլ նրա ներսն էին թափանցում: Իսկ ես, նրա կողքին կանգ-
նած, վարից վեր ունկնդրում էի, ունկնդրում, եւ ինձ թւում
էր, թէ տանն էի, թէ մուտք էի գործել տաքուկ մի բոյն:
«Տէր, ողորմեա», ասում էր պապիկս իր հնամենի լեզուով.

Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա. Յիսուս Փրկիչ, մեզ ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղու-
թիւն.

Եկեղեցւոյ պայծառութիւն, Ազգիս Հայոց սէր, միութիւն.
Եւ հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Այդ պահին լսուեց մի ուժգին, խրոխտ ձայն, որն ասաց (ինձ թուաց, թէ այդ ձայնը հնչում էր տարբեր տեղերից, մինչդեռ քարոզիչն էր խօսում ամբողջից, որին չէի տեսնում).

– Անսացէք Սբ. Անտոնի խօսքը: Քրիստոսին համեմատում է թխսամօր հետ. «Ինչպէս թխսամայրն է հաւաքում իր ձագերին թեւերի տակ...»: Նկատում է, որ թխսամայրը հիւանդանում է, երբ ձագուկներն են հիւանդանում. նրանց ուտելու է կանչում այնքան ժամանակ, մինչեւ որ ձայնը խռպօտի. նրանց պահպանում է թեւերի տակ եւ փետուրները ցցած՝ դիմակայում ուրուրին, որպէսզի պաշտպանի ձագերին: Այդպէս էլ Յիսուսը՝ Աստծոյ Իմաստութիւնը, մեզ՝ հիւանդներիս համար դարձել է հիւանդ, ինչպէս ասում է Նսային: «... նայեցինք մենք նրան, բայց նա ո՛չ տեսք ունէր եւ ո՛չ էլ գեղեցկութիւն: Նրա տեսքն աւելի անարգ էր ու նսեմ, քան բոլոր մարդկանց որդիներինը: Նա հարուածների ենթակայ մի մարդ եղաւ, որ ցաւերին համբերել գիտէ...» (Նսայ. 53. 2–3):

Ինձ դուր եկաւ թխսամօր միտքը: Ճանաչում էի թխսամայրերին, գիտէի, թէ ինչպիսին են նրանք: Ժամանակին ճուտիկ էի ունեցել: Թէպէտեւ գիտակցում էի, որ իմ երիտասարդ, ինքնավստահ մայրը, ի հարկէ, թխսամայր չէր... Եւ ուղեղս պարուրած մտքերը՝ պապիկի աղօթքի հիւանդների ապաքինումը, Հայաստան աշխարհը, Աստուած-թխսամօր մայրական հոգատարութիւնը, որի մասին խօսում էր ձայնը, գնչուների հոտը եւ բազիլիկի պահպանիչ ամեհի խորութիւնը միախառնուեցին այնպիսի լիակատար ապահովութեան, այնպիսի զօրեղ երջանկութեան զգացումի հետ, որ սկսեցի արտասուել:

Իսկ պապիկը ձեռքս առաւ իր ձեռքերի մէջ եւ ասաց.

– Այս եկեղեցին կարծես նաւ լինի, նաւավարն էլ՝ քո Սուրբը: Այս եկեղեցին նաւահանգիստ է, եւ քո Սուրբն է, որ

մեզ հիւրընկալում է ներսում, թելադրում այն բառերը, որ դու լսեցիր, եւ չարն ընդմիշտ մնում է դռներից դուրս:

Ես նայեցի շքամուտքին: Այն ողողուած էր դրսի լոյսով եւ նման չէր պահակի: Բայց պապիկն ամէն ինչ գիտէր...

– Այս է տեսանելի տունը, որն առաջնորդում է մեզ դէպի անտեսանելին: Դու այստեղ միշտ տանը կլինես: Տե՛ս, թէ ինչ ասաց Սուրբը՝ Աստուած մխիթարութիւն է եւ ճանաչողութիւն, նեցուկ է հիւանդութեան պահին եւ քո կողքին բաբախող տաք սիրտ է: Այստեղ են մեր բոլոր հանգուցեալները՝ Անտոնիետա տատիկը, իմ երիտասարդ մայրը (պարզուում է պապիկը մայրիկ է ունեցել, յայտնաբերեցի ես սաստիկ զարմանքով), տարագրութեան ժամանակ անհետացած եղբայր-քոյրերս...

– Բայց հիմա,– շարունակեց նա,– ժամանակն է, գնանք՝ նրան ողջունելու: Լաւ չէ անտեսել տանտիրոջը:

Եւ այսպէս, թողեցինք գնչուներին՝ միմեանց ջերմօրէն ողջունելուց յետոյ, եւ մտանք քրտնաթոր, խոնուած ամբօխ մէջ, որը ձգտում էր ձեռքը հպել այն սեւ սալաքարին, որի տակ, ինչպէս բացատրեց պապիկը, հանգչում էր Սբ. Անտոնի մարմինը:

– Բայց նա իրօ՞ք այնտեղ է ու լսում է մեզ,– հարցրի ես,– ու կարդում է մեր մտքերը:

– Պէտք է ձեռքդ դնես մարմարին,– ասաց պապիկը,– եւ աղօթք ասես, որը որ լաւ գիտես կամ էլ որը առաջինը միտքդ գայ: Սուրբը տեսնում է սրտիդ խորքը:

Այնքան էլ համոզուած չէի, որ սրտիս խորքում բան կար տեսնելու, որովհետեւ այն լի էր մանկական տպաւորութիւններով: Ինձ չէր թւում, որ սրբի համար որեւէ հետաքրքրական բան կլինէր այնտեղ: Մինչդեռ այնպէ՛ս էի հրապուրուել արծաթեայ սրտիկներով, փայլփլուն մետաղական նուրբ ժանեակներով, որոնք ամէնուր կախուած էին արծաթեայ փոքրիկ սրունքների, թեւիկների ու գունաւոր նկարների հետ միասին: Սակայն որեւէ բանի վրայ կանգ առնելու

ժամանակ չկար: Հոծ բազմութիւնը սեղմում էր ինձ ու պապիկին ամէն կողմից, այս ու այն կողմ տանում մեզ ու շփոթութեան մէջ գցում:

Ի վերջոյ, մեր ետեւում մի յաղթանդամ տղամարդ նկատեց ծերուկին ու աղջնակին եւ ձգուելով ինձ բարձրացրեց ու ապա մի պահ ամուր սեղմեց սեւ սալաքարին: Ես արագ-արագ մտքումս ասացի. «Նախ եւ առաջ անունս Անտոնիա է: Քեզ միանգամից անունս եմ ասում, այլապէս այսքան բազմութեան մէջ ինչպէ՞ս կկարողանաս յետոյ ինձ յիշել»: Բայց Սուրբը չպատասխանեց: «Շատ մարդ կայ, – մտածեցի, – երեւի բարձրաձայն պէտք է խօսէի»: Բայց ես իմ պարտականութիւնը կատարել էի, ինձ քաղաքավարի էի պահել, եւ բացի դրանից, նա՝ Սուրբը, հաւանաբար գիտէր, թէ ով եմ ես: Նրան պապիկը ասած կլինէր:

Եւ երջանկութիւնը յորձանուտի պէս կրկին պարուրեց ինձ, որպէսզի առաջ տանէր անդադրում շարժուող ամբոխի հետ: Այդ օրուայ այցելութիւնից ուրիշ ոչինչ չեմ յիշում, միայն այն, որ պապիկը ամուր բռնել էր ձեռքս, կարծես երկուստեք մի գաղտնի յուզում ապրելիս լինէինք: Ապա պապիկս, որն այնքան նրբաճաշակ էր ու դժուարահաճ, յանկարծ նստեց աստիճանի վրայ (հաւանաբար Աւագ խորանի ետեւի համեմատաբար հանդարտ մթութեան մէջ)՝ ասես նրան մեկուսացնող մտածմունքից ընկճուած: Իսկ ես, հանդարտ ու խինդով լի, մնացի կանգնած նրա դիմաց եւ լուռ սպասեցի: Այսօր եմ գիտակցում, որ այդ պահին պապիկիս բոլոր հանգուցեալները մօտեցան նրան, եւ նա անմիջապէս ընդունեց ծեր, խոնջացած վաճառականի կերպարանք, որը զուր երազներ էր հիւսել ետդարձի ճամփան բռնելու, որպէսզի աւարտէր իր օրերը Արեւելքի ծննդավայրում: Եւ այժմ համակերպուել էր այն մտքի հետ, որ կնքելու էր իր մահ-կանացուն այստեղ՝ աքսորի մէջ, որը, սակայն, այլեւս աքսոր չէր, քանզի բոլոր ժողովուրդների հանդիպման վայր էր, մի հին, կորուսեալ հայրենիք:

Մինչդեռ շատ լաւ եմ յիշում, թէ ինչպէս պապիկը սթափ-ւեց: Յանկարծ ուրախ-զուարթ, եռանդով լի ասաց ինձ.

– Դէ, հիմա գնանք, ողջունենք գաւառի մեծաւոր վանահօրը: Հօրաքոյրն ու Անտոնիոն կարող են շարունակել աղօթքը: Քեզ անպայման նարնջի հիւթ եւ պաքսիմատ կտան:

Սակայն պաքսիմատի հետ ինձ փոքրիկ բաժակով անթառամի գոյնի վարդի համեղ օշարակ հրամցրին, որի քաղցրահամն ինձ անմահական թուաց, եւ որի մասին պէտք է տանը պատմէի նախանձ եղբայրներիս, եւ նուիրեցին նկարագրող «Յովսէփի պատմութիւնը», որը պէտք է ընթերցէի, երբ կարդալ սովորէի: Բայց ես գերադասեցի նայել հաստ գորգապատ սեղանին, պատերից կախուած սրբերի նկարներին, լսել բարեկամաբար զրուցող երկու ծերուկներին. պապիկին՝ գունատ, դեղնաւուն մաշկով, որ հանդարտօրէն մօրուքն էր շոյում, եւ վարդագոյն մաշկով, հանդարտ ու ոչ պակաս անուանի վանականին, որը մերթ ընդ մերթ մատնե-րով շտկում էր թաւ, մոխրագոյն մօրուքը:

– Պէտք է մի անգամ ինձ այցի գաս պապիկիդ հետ, մի օր, երբ այսօրուանից աւելի հանգիստ կլինի, չէ՞ որ այսօր Սրբի տօնն է: Դու, որ Սրբի անուանակիցն ես եւ կին ես, յատուկ պարտաւորութիւններ ունես: Շատ Անտոնիոններ կան, բայց քիչ Անտոնիաներ:

Այդ միտքն ինձ երանութիւն պարգեւեց:

Այս ամէնը ես՝ հետաքրքրասէր երեխաս, որպէս սպունգ ներքաշեցի յունիսեան այդ յետմիջօրէին:

Պապիկը հոգին աւանդեց մի քանի ամիս անց: Այլեւս միասին չգնացինք այդ ծեր վանականի մօտ, երբեք չիմացայ, թէ որոնք էին Անտոնիա կոչուելու այն «յատուկ պարտաւորութիւնները»: Սակայն տարիներ են անցել, բայց ես դեռ-եւս չեմ մոռացել: Այսօր էլ Սբ. Անտոն եկեղեցու մեծ գմբէթներն ինձ համար կարծես այս փոքր քաղաքի վրայ

Հաւասարակշռութեան մէջ դրուած Հոգի նաւեր լինեն, որոնք առագաստներով փառահեղորէն նաւարկում են Արեւմուտքից Արեւելք՝ հետեւելով մարգարէութեանը: Ամէն անգամ, երբ մտնում եմ շքամուտքից, ինձ առաջուայ պէս յուզում են խնկաբոյրը, Լորեթեան աղօթք-բարեխօսութիւնների շարականները (կամ նրանց յիշատակը), ծովի պէս եկող ու գնացող բիւրաւոր ուխտագնացների քայլերի արձագանքը, եւ մեծն Սուրբը, որի անունն եմ կրում, Հոգ է տանում նրանցից իւրաքանչիւրին:

Շատ տարիներ անց բազմաբոյր, եռ եկող ամբոխի մէջ ինձ զգում եմ, ինչպէս տանը, երբեմնի իմ տաք բնում, որտեղ օտար կամ հիւր չեմ, այլ գնացքի սպասող ուղեւոր, որը չգիտէ չուացուցակը: Մի բան միայն գիտեմ, որ գնացքը կանցնի այստեղից, այս մեծ կայարանից, որտեղ ոչ ոք օտար չէ, եւ մի մեծ սիրտ դեռեւս բարախում է՝ ցոյց տալու ուղիս: Այստեղ, մարդկանց քայլերից մաշուած այս աստիճանին յենուած կցանկանայի աւարտել իմ ժամանակը, որպէսզի ինչ-որ Մէկն ինձ ընդունի, որ ես չանէանամ, անցնեմ լոյսի միջով՝ ձեռք ձեռքի տուած իմ բարեկամ պորտուգալացի Անտոնի հետ, որին կոչում են Պաղովայի Սբ. Անտոն, Սբ. Անտոն՝ շուշանը ձեռքին:

Ա. ՄԱՍ

ՀՕՐԵՂԲԱՅՐ ՍՄԲԱՏԸ

Սմբատ Հօրեղբայրը մեզ համար մի առասպել է: Մի առասպել, որի վրայ բոլորս ենք արցունք թափել: Պապիկի միակ հարագատ եղբայրն էր, իրենից փոքրը: Նրանց մայրը՝ Իսկուհին, արքայադստրիկը, վախճանուել էր նրան լոյս աշխարհ բերելիս: Ապա պապիկի հայրը ամուսնացել էր «չար խորթ մօր հետ», որը նրան բազում զաւակներ էր պարգեւել: Երուանդ պապը նրան տանել չէր կարող, ուստի տասներեք տարեկանում խնդրել էր հօրը իրենց փոքրիկ քաղաքից գնալ Վենետիկ՝ Մուրատ-Ռափայէլեան վարժարան՝ ուսումը շարունակելու, եւ հայրը չէր մերժել:

Սմբատ Հօրեղբայրը եղբօրից աւելի մեղմ էր, յարմարուող ու հանդարտ: Նա սիրում էր իր հանգիստ քաղաքը, իր անհոգ, թմբիրի մէջ թաղուած գաւառը, ընկերների հետ սուրճի գաւաթի շուրջ շաղակրատելը, նարդու բուռն խաղերն ու որսի գնալը: Սովորել էր Կոստանդնուպոլսում՝ մի դեղագործի մօտ, սակայն տուն դառնալու մտադրութեամբ: Համալսարանում լրագրեր էր ընթերցել, անդամագրուել մի կուսակցութեան, նոյնպէս Երազել էր իր հնամենի հայրենիքի վերածնունդը, մի քիչ խանդավառուել, ապա յուսալքուել: Խորթ մօր հետ փոխզիջման էր գնացել: Զուարճանում էր փոքրիկ եղբայրներին փաղաքշելով, քոյրերի հիւսքերից քաշելով. մտադիր էր ամուսնանալ:

Երբեմն ձիով զբօսանքի էր գնում լազերի երկրից մի բարեկամի հետ: Միասին իրենց խաչակիրներն ու ասպետներն

էին երեւակայում, մտածում էին պատերազմն՝ գնալով արեւ-
ւին ընդառաջ, ինչպէս Աղեքսանդրը, դաշոյնը կողքնորից
կախած, ինչպէս ազատ մարդիկ:

Այլեւս չէին ուզում սրտմաշուկ բանակցութիւններ վարել
ամէն մի թոյլտուութեան համար, յոգնել էին կայսերական
թղթարարութիւնից, հպատակի այն պարտադիր քծնանքից,
որ հայը, վաճառականը պէտք է ցուցադրէին Կայսրութեան
հանդէպ, որին դիմելիս կարող էին մերժուել. եւ այս ամբող-
ջի դէմ ոչ մի ուրիշ միջոց չունէին, բացի հպատակի խորա-
մանկութիւնից: Այդուհանդերձ, հարկ էր արշաւել դէպի
Արեւելք, նուաճել այն, բայց միաժամանակ լինել արեւմուտ-
ցի, այսինքն՝ տիրակալ, խօսել Ֆրանսերէն, բաժանորդա-
գրուել Revue des deux mondes ամսագրին, այցելել Փարիզ...

Յաճախ խօսում էին Փարիզի կամ Իտալիայի մասին, բա-
րեկամ երկիր, որտեղ իր եղբայր Երուանդը յաջողութեան էր
հասնում: Սակայն Սմբատը ցանկութիւն չունէր մեկնելու,
թէպէտ խոստացել էր եղբօրը այցելութեան գնալ. ամօթխած
էր ու արեւելցի: Նա ուրախ կլինէր, եթէ եղբայրը վերադառ-
նար, իր հետ բերէր Ֆրանկ կնոջը, էդուարդ եւ Քայել որդի-
ներին՝ իր մեծ ընտանիքի հետ ծանօթացնելու: Արժանապա-
տիւ կերպով գնացել էր, արժանապատիւ կերպով էլ կգար ու
կընդունուէր: Բայց Սմբատն իր պարզ սրտի խորքում վախե-
նում էր, որ դա երբեք տեղի չունենար: Երուանդն ընդմիշտ
հեռացել էր, եւ նրա որդիները, չնայած իրենց անուններին,
չգիտէին պապերի լեզուն եւ կրթում էին գերմանական կամ
իտալական դպրոցներում: Անատոլիան նրանց համար հե-
ռաւոր մի հէքիաթ էր:

«Միգուցէ, - մտածում էր Սմբատը, - մի օր որդիներիցս
մէկը կարողանայ գնալ եղբօրս մօտ, եւ միգուցէ կամաց-կա-
մաց բոլորս էլ տեղափոխուենք եւ այլեւս չվախենանք»: Բայց իրականում չէր ուզում: Ծիշտ է, շատերն էին մեկնում:
Ամենավտանգաւոր գօտիներից, առաւել համարձակ երիտա-
սարդները, գիտունները, արկածախնդիրները, նրանք, ովքեր

պայթում էին կայսրութեան մէջ էրմենի միլլեթին² յատկաց-
ւած նեղ սահմանների ներսում, շարունակական հոսքով ան-
դադար մեկնում էին:

Դէպի Եւրոպա, դէպի երազած մշակոյթը՝ դառնալու
բժիշկ, ատամնաբոյժ, ճարտարապետ, գրող, կամ դէպի Ամե-
րիկա՝ լրիւ նորանալու եւ ամէն ինչ մոռանալու: Բոստոնում
ապրում էր խորթ եղբայրը՝ Ռուբէնը, եւ բաւականաչափ գոհ
էր: Բայց Սմբատն իր պարզ հոգում գգում էր նրա մենու-
թիւնը եւ եղբօրն ուղարկեց մի գեղեցիկ փայտեայ նարդի՝
փորագրութիւնները վրան, շուրջբոլորը հայատառ արձանա-
գրութիւններ, ճիշտ իր ունեցածի նման: Ի՞նչ իմանար, որ մի
օր իր երկու զաւակների համար այդ նարդին՝ որպէս խոր-
տակուած նաւի բեկոր կամ սրբազան մատունք, հանդիսաւոր
ծիսական լուսանկարի հետ մէկտեղ դառնալու էր հօր կեն-
դանի յիշատակի միակ վկայութիւնը:

Սմբատը սիրում էր իր դեղատունը: Մի քիչ դանդաղկոտ,
մի քիչ զուարթաբան, բայց շատ բարի մարդ էր նա: Երբ
դեռեւս պատանի էր, պաշտպանում էր փոքրիկ քոյրերին՝
Վերոնին ու Ազնիւին, չարածճի եղբայրներ Ռուբէնի ու Զա-
րեհի կսմթոցներից: Շատ էր սիրում նաեւ հեռագրել:

- Դեղագործը, - ասում էր նա, - պէտք է պատրաստուած
լինի հեռագիր տալու եւ ստանալու: Ո՞վ գիտէ, կարող է
հրատապ անհրաժեշտութիւն ծագել:

Բոլորը ծիծաղում էին նրա վրայ, թէ՛ ընտանիքում, թէ՛
դեղատանը, թէ՛ ինչպիսի ոգեւորութեամբ էր հնչեցնում
«հրատապ» բառը: Ինչպէս էր զնգզնգում նրա բերանից չա-
փից դուրս արեւմտեան առաջընթացի, ամէն ինչ չափից

² Միլլեթը օսմանեան իրավակարգի յատուկ մի հաստատութիւն
էր, որ ունէր միանգամայն թէ՛ ազգային-էթնիկական եւ թէ՛ կրօնական-
յարանուանական հիմք: Այսպէս, Կայսրութիւնը ճանաչում էր բացի
յոյն օրթոդոքս եւ հրեայ միլլեթներից, երեք հայկական միլլեթ՝ հայ
առաքելական, հայ կաթողիկէ եւ հայ բողոքական (ծնթ. թարգմ.):

դուրս արագ անելու, արեւելեան դանդաղկոտութիւնը վրայից թօթափելու այս ախտանիշը:

– Մարդիկ, – ասում էր սովորաբար, – չեն սպասի, որ մենք խաղն աւարտենք, յետոյ մեռնեն: Մենք՝ Հայ մտաւորականներս, պէտք է այժմէացման, ճշտապահութեան օրինակ ծառայենք պարզ Հայերին եւ պարզ թուրքերին: Ապա թէ ոչ՝ էլ ինչու՞ ենք սովորել:

Բայց նա ոչինչ նոր չէր սովորում. յարգում էր տօներն ու յարդարում մօրուքը՝ հաշուելով իր եօթ զաւակներին: Թեթեւակիօրէն թերթում էր կոստանդնուպոլսեան լուրերով ողողուած լրագիրը եւ խանդավառում, որ այնտեղ՝ վերելում, Հայերին սկսում էին յարգել, մինչեւ իսկ երեսփոխաններ ընտրել, իսկ գրող, երեսփոխան Գրիգոր Զոհրապը ամէն շաբաթ թաւլի էր խաղում Ներքին գործոց Հզօրագոյն նախարար Թալէաթ փաշայի հետ:

Զոհրապի թաւլի՛ն: Նրա մտերմութիւնը Թալէաթի հետ հեզ ու անըջալից Հայ ժողովրդի Համար դարձել էր յաջողութեան գրաւական, նոր դարաշրջանի բարգաւաճութեան ու առաջընթացի խորհրդանիշ, որը իրականանալու էր Երիտթուրքերի եւ Հայ միլլեթի միջեւ քաղաքական Համագործակցութեան շնորհիւ: Զինաթափելու աստիճան զօրեղ մի գէնք: «Պատկերացնում էք, Զոհրապը գնում է Թալէաթի տուն, նրան ընդունում են ընտանիքի անդամի նման, միասին թէյ են խմում»: Սմբատն ու նրա նմանները բառացիօրէն չէին կարող հասկանալ, որ կարելի է խաբել, ապա սպանել հիւրին, որի հետ տանգ մէջ թէյ են ըմպում:

Սմբատի եւ նրա նմանների աշխարհին յարիւր չէր կեղծաւորութիւնն ու խաբէութիւնը: Այն առաւել հիմնուած էր վաճառականին յատուկ արարողակարգով եկամուտը, շահոյթն ու կորուստը առանց ճիշտութեան հաշուելու վրայ, պահելով Հանդերձ յարգանքի պարտականութիւնը Համայնքի աղքատների հանդէպ:

Բացի դրանից, դեղագործ Սմբատը բարոյական օրէնքներ

ունէր: Կէս-բժիշկ էր, կէս-գրականագէտ. առողջութեան ու թոյների, լրագրերի ու հեռագրերի պահապանն էր, համայնքի սիւնը:

Բոլորը գիտէին, որ նրա եօթնածին ու աղմկոտ կիներ՝ Շուշանիկը, որը յայտարարում էր, թէ չէր խառնուում ամուսնու գործերին, գոհ ու երջանիկ իշխում էր Սմբատի վրայ եւ, ինչպէս ասում են, մօրուքը ձեռքում էր պահում: Սմբատն էլ միեւնոյն գոհունակութեամբ թոյլ էր տալիս, որ կիներ իրեն իշխէր, նոյնիսկ այն ժամանակ, երբ նա, կնոջ լուռ հաւանութեամբ կաշուէ տաբատով հրացանն ուսին, որսի էր գնում լազ ընկերոջ հետ եւ Հպարտօրէն ետ գալիս՝ տուն բերելով մի զոյգ նապաստակ: Երբեմն որդիներից մէկը նրան ընկերակցում էր:

Մեծը՝ սակաւախօս Սուրէնը, երազում էր գնալ Եւրոպա եւ պատրաստում էր մեկնել, սակայն պաշտում էր իր պարզ, միամիտ հօրը եւ չէր ուզում նրանից հեռանալ: Այս փափագը չարամտօրէն յարգուելու է ճակատագրի կողմից:

Սուրէնն ընթերցասէր էր, շատ էր կարդում եւ շատ էր մտածում. օգնում արեան հոտ էր զգում, չարիք էր կանխագգում. բայց ո՞վ կհաւատար տասնչորսամեայ պատանուն, որը սակաւախօս էր, գիշերն էլ մենակ մնալիս լալիս էր ու միայնակ երազում գտնել ապաստարան, որտեղ, ինչպէս մի ժամանակ մօր արգանդում, կաներեւութանար ու կանէանար:

Կարո՞ն Սմբատի երկրորդ զաւակը, եւս քչախօս էր, բայց աւելի պակաս խորհող: Նրա սիրոյ բնագղն էր ուժեղ, գործում էր առանց երկար-բարակ մտածելու, խնայելով շարժումները: Կարողանում էր հանդարտեցնել մանկական իւրաքանչիւր ճիչ, իւրաքանչիւր լաց, իւրաքանչիւր ողբ: Միմիայն իր կարճատեւ ներկայութիւնը բաւական էր, որպէսզի մի անպաշտպան ու անվստահ ժողովուրդ, որին ամէն Աստծոյ օր չարիք էր սպառնում, հանդարտուէր ու խաղաղւէր: Այդ ժողովրդի ծերերը չէին պատմում փէրիների կամ հսկաների մասին, այլ յիշում էին քսան տարի առաջուայ,

տասը տարի առաջուայ ջարդերը եւ վարդարանի պէս շարան-շարան թուարկում կոտորուած կամ անհետ կորած ազգականներին:

Երբորդ որդին անգլիացի Լեսլին էր:

– Յղացուել է մի փոթորկալից գիշեր,– պնդում էր Սմբատը:

– Լիալուսնի մի հանդարտ գիշեր,– կատակում էր Շուշանիկը:

Մնողներն ասում էին, որ չգիտէին, թէ ինչու նրան անմիջապէս անգլիացի անուանեցին:

– Սկզբից անունը՞ եկաւ, թէ մակդիրը,– հարցնում էին ընկերները չարամտօրէն, յիշելով Սմբատի հերոսական գինովութիւնը, որն ընդհանրապէս բաւական չափաւոր էր կամ, առաւելագոյնը, տիրոջը տխրութեամբ էր համակում: Մինչդեռ այդ անգամ, երբ ամերիկացի մի միսիոներ դեղատանը նրան նուիրեց մի շիշ բժշկական վիսկի, այն ունեցաւ հետեւեալ հետեւանքը. կատարը տաքացած Սմբատը սկսել էր բակում վագ տալ Շուշանիկի շուրջը, որ հաւանոցում ունեցաւ անվայել աւարտ, բայց շոշափելի արդիւնք, որը հէնց Լեսլին էր:

Շշի վրայ բաց գոյնի տառերով գրուած այս տարաշխարհիկ անունը դուր եկաւ զղջացած ծնողներին, որոնք շիշը պահեցին որպէս յիշատակ (բալկանեան պատերազմների մասնակից մի ծեր զինուոր շշի ներսում մի հրաշալի առագաստանաւ զետեղեց, որը պարունակում էր ծովակալ Նելսոնի ճակատամարտերը եւ ծովերով ազատ նաւարկելու զինուորի երազանքը յիշեցնող մի կարօտագրութիւն. սակայն 1915 թուականի մայիսին այդ զինուորը առաջին զոհերից կլինէր ջարդուփշուր եղած առագաստանաւերի բեկորների միջեւ):

Սմբատի անդրանիկ զաւակի ծնուելու առիթով Երուանդն Իտալիայից գեղեցիկ, ընկոյզի փայտից պատրաստուած պահարան էր ուղարկել, որի գլխին դրուեց շիշը, իսկ Լեսլին սովորութիւն դարձրեց մտնել պահարանի տակ: Տղան ինք-

նուրոյն մեծացաւ. սկզբում նա դարձաւ տիկնիկ՝ իրենից մեծ երկու երեխաների համար, ապա տասը ամիս անց նրան մոռացան, որովհետեւ ծնուեց անուշիկ քոյրը, որը տարիներ յետոյ պէտք է դառնար Ֆրեզնոյի Նուարդ հօրաքոյրը, որ երեխաներ չէր սիրում:

Լեսլին միշտ ծիծաղում էր, խնդրում, որ իր հետ խաղան, եւ չէր վիրաւորում, երբ նրան մերժում էին, այլ մտնում էր պահարանի տակ, իր թաքուն որջը:

Իսկ մնացածները՝ Արուսեակ, Անրիեթ, Նուբար՝ երկու աղջնակներ ու մի տղայ՝ աղջկայ շորերով, այն բոլոր բախտաւոր վերապրեալները, որ Հալէպից ճողոպրած՝ պիտի գային Արեւմուտք... Այս երեխաներն այժմ ինձ են նայում մէկ տարի անց՝ 1916 թուականին, Հալէպում արուած մի լուսանկարից, Իտալիա գալուց անմիջապէս առաջ, իրենց մանկական տխուր աչքերով, որոնք կարծես խորհրդաւոր գաղտնիք ունեն, խամրած են ու սառած մի շարք անպատասխան «ինչուններից» եւ սակայն երախտապարտ են քմահաճ բախտին, որը նրանց ողջ-առողջ տեղ էր հասցրել: Երեխաների հագին կայ որբուկի կոկիկ հագ ու կապ: Բայց կարծես դրանք համազգեստներից կարուած լաթեր լինեն, որոնք յիշեցնում են կալանաւորների գծաւոր շորերը: Ծակատի վրայ կամարներ կապած թաւ յօնքերով մուգ, արեւելեան աչքեր, որոնք անարտայայտիչ հայեացքով չորս անգամ վերարտադրում են վախը ապագայի, որ լինելու է անողոք եւ մի գաղտնի յանցանքի թաքուն կորիզը:

Եւրոպայում պատերազմ էր պայթել: Կրկին բալկանեան տագնապ էր տիրում: Կայսրութիւնը յարել էր կենտրոնական ուժերին՝ Գերմանիային եւ Աւստրո-հունգարիային: Յոյս կար, որ այս անգամ ճիշտ էին կանխագուշակել, բայց բնաւ պէտք չէր գնալ հին քինախնդրութեան հետքերով, ազգային նուաստացման հաշուին, որը դրօշ էր դարձել: Փոքրիկ քաղաքը խմորումների մէջ էր: Շատերը գնում էին խորհուրդ

հարցնելու ամերիկացի քարոզչից, որը մեծ յաջողութեամբ բողոքականների վարժարան էր բացել: Մարդկանց դուր էր գալիս հին հաւատքի այս նոր մեկնաբանութիւնը՝ առանց աւանդական երկար-բարակ ձգուող զգացմունքային, յուզական չափազանցութեան, որը մխիթարում էր, բայց երբեք ոչինչ չէր փոխում: Դուր էր գալիս այս խստաբարոյ Աստուածը, որ պահանջում էր ինքնատիրապետում, ճշտապահութիւն, նուիրում, ժամանակակից աղօթք: Հայերի մեղքի զգացումը մաքրագործւում էր, Ամերիկայի առասպելը՝ զօրանում:

Վերոն հօրաքոյրը, որ հապշտապ յարել էր այդ Աստծուն, շատ գործունեայ էր որպէս խնամակալուհի. նա իր պարզ սրտի խորքում մտածում էր, որ միգուցէ այս Աստուածն աւելի զօրեղ էր, կկարողանար պաշտպանել հայերին յաջորդ անգամ... Վերոնը կարճիկ էր ու գիրուկ, արտասովոր փարիզեան քիթ ունէր (ըլթրուսէ, ասում էր նա), որով եւ անչափ հպարտանում էր: Որոշ առաջադիմական սկզբունքներ էր մշակել բողոքական եկեղեցու համար. կիրակի օրերին մեն-մենակ եկեղեցի էր յաճախում՝ գլխին ֆրանսական գլխարկ դրած. եւ շատ հպարտ էր քայլում: Վերոնի կարծիքով՝ մատուռը գերազանց ճաշակով էր կառուցուած, հարկ եղածի պէս, միեւնոյն ժամանակ նորաոճ էր: Բայց նրա հոգին, որ առանց իր գիտութեան մնացել էր խորապէս յետադէմ, Հանդիպում էր զգացական որոշ դժուարութեան, եւ նա չէր կարողանում ազատ արտասուել Տիրամօր Հանդիսաւոր Հայնացքից Հեռու:

Այո՛, Վերոնը երբեմն լալիս էր, երեկոյեան: Նշանած էր ուզում, որին ծիծաղելի չթուար իր անունը («Վերոն, Վերոն, վրէ փոմփոն»³), – երգում էին եղբօր զաւակները՝ նրան բար-

կացնելու նպատակով, եւ ոչ ոք չգիտէր, թէ ով էր յօրինել այդ խայտառակ յանգերգը): Միգուցէ ամերիկացի նշանած, երազում էր Վերոնը: Եթէ զնար Ռուբէնի մօտ՝ Բոստոն, եւ մնար այնտե՞ղ: Կարող էր աշխատել, վաճառողուհի լինել կամ գլխարկագործ, գլխարկի նորաձեւ նմոյշներ կստեղծէր...

Մի արկղիկի մէջ, թաքուն, դեղին կաշուէ ձեռնոցների տակ, որ հէնց Ռուբէնն էր ուղարկել Ս. Ծնունդին, Վերոնը դրած էր մի կողմ դնում իր ամերիկեան հարսանիքի համար. բայց եւ այնպէս չէր ցանկանայ մենակ մեկնել, երբեմն սիրտը բացում էր փոքր քրոջը՝ «վարդ բերանով» Ազնիւ Հօրաքրոջ մօտ, որը նրան սիրում էր, բայց ետեւից ծիծաղում էր: Ազնիւը հիւսքը ուսերից կախ էր գցում եւ ամէն առաւօտ ականջի ետեւը թարմ խորդեհու մի փոքրիկ ճիւղ դնում («Պէտք է վերագտնենք Հայ կանանց աւանդոյթը», – կարդացել էր նա սոցիալ-յեղափոխական կուսակցութեան լրագրում. կարդացել էր նաեւ յօդուած *Illustration Parisienne* ամսագրում գնչու Կարմենի եւ նրա ողբերգական սէրերի մասին):

Ազնիւն ամենեւին մեկնելու միտք չունէր: Փոքրիկ քաղաքը նրան միանգամայն բաւարարում էր, իրեն կարեւոր մարդ էր համարում գեղեցիկ աղջիկներին յատուկ ինքնավստահութեամբ եւ համոզուած էր, որ իրեն բաժին էր ընկել լաւ ապագայ: Վարժ խօսում էր ֆրանսերէն. ունէր մի Հայ պարոնկեր, որի հետ ամենայն սիրով պարում էր բոլոր հանդէսներին. բայց ունէր նաեւ մի թուրք սիրահար-երկրպագու, մի երիտասարդ սպայ, որը Ազնիւին Հանդիպելիս սիրահարուած աչքերի մեղմ Հայնացքով Հետեւում էր նրան: Բազմիցս նրան բանաստեղծութիւններ էր ուղարկել, իսկ աղջիկն էլ իմաստուն կերպով ոչ ոքի ցոյց չէր տուել դրանք: Բայց սիրտը թպրտում էր նրան Հանդիպելիս, հէնց միայն իր իսկ համարձակ մարտահրաւերի հրապոյրից, որ թոյլ էր տալիս թուրքին իրեն գրել: Յղկուած ու ռոմանտիկ երիտասարդ էր եւ Ազնիւին գեղեցիկ էր թւում:

³ «Veron, Veron, vrai pompon» – Առանձնայատուկ իմաստ չունեցող ֆրանսերէն յանգաւոր արտայայտութիւն. որի հայերէն բառացի թարգմանութիւնն է՝ Վերոն, Վերոն, իսկական ծոպ (ծնթ. թարգմ.):

Բայց Ազնիւը երբեք չէր լրջացնի իրենց կապը: Կապու- լետտիոններն ու Մոնտեգիւնները ոչինչ էին նրանց համեմա- տութեամբ. միայն գրականութեան մէջ, միայն արեւմտեան վէպերում էր հնարաւոր նման միութիւնն եւ սակայն այդ կա- պը նաեւ ոգեւորիչ էր. ձեւացնել, որ հաւատում ես կոյր կրքին, մերժել ապագան...

Ազնիւն իր վառվռուն անհատականութեամբ շատ գործ- նական էր. նաեւ իրեն վեր էր դասում մահամեղական կանան- ցից, որոնք պարտաւոր էին ամուսնուն կիսել այլ կանանց հետ: Ազնիւն ազատ էր ու անկախ, ու ինքը կորոչէր, թէ ինչ անել, եւ իրեն դուր էր գալիս այն միտքը, որ իրօք այդպէս էլ կանէր, եւ որ հայրը հաշուի կառնէր իր կարծիքը:

Միշտ այդպէս էր եղել նրանց ընտանիքում: Երբ Երուան- դը Իտալիա գնալու ցանկութիւն էր յայտնել, տասներեք տարեկան էր. մի քիչ աւելի մեծ էր Ռուբէնը, երբ Ամերիկա մեկնեց. եթէ Վերոնը կարողանար ճանապարհածախսը հո- գալ, ոչ ոք նրան չէր կանգնեցնի: Ծեր Համբարձումը չէր կարողանում մերժել զաւակների ընտրութիւնը, որը միգուցէ համազօր էր փրկութեան. իսկ մեծ աշխարհում ամէնուրեք միշտ մի հայ կգտնուի, որին կարելի լինի վստահել որդուն կամ երիտասարդ դստերը:

Բայց այնտեղ՝ սիրիական անապատում, Ազնիւն ու Վերո- նը կսեղմուէին միմեանց, մեղմ կօրօրուէին ու կերգէին գրե- թէ մարած ձայնով «Ով սիրու՛ն, սիրու՛ն» իրենց երգը եւ «Վերոն, փոմփոնը», որը աբսորի ժամանակ դարձել էր նրանց գաղտնի, դժուարին խաղը. նրանք ոչ թէ հացի վերջին պա- տաւը որոնող կենդանիներ էին, այլ կանայք, որ սրտում դեռեւս ունէին ուժ՝ երեխաներին փրկելու...

Զարեհը մինչդեռ ապրում էր Հալէպում: Նա բժիշկ էր: Ուսեալ, թերահաւատ, հպարտ Զարեհը գիտէր նարդի խա- ղալ, ինչպէս բոլորը, բայց իր նախընտրած խաղը բրիջն էր: Երեկոներն էին խաղում Ֆրանսական դեսպանատանը: Այն-

տեղ միշտ մի զոյգ ազատ սեղան կար, արագաշարժ արաբ մատուցողները հրամցնում էին ոգելից խմիչք, եւ, որ յատ- կապէս ուշագրաւ է, խաղին մանակցում էին նաեւ կանայք:

Զարեհը քսանվեց տարեկան էր, թաւ բեղերով, փոքրիկ սրածայր մօրուքով, որն ընդօրինակել էր Երուանդից՝ աւագ եղբորից, որը նոյնպէս բժիշկ էր, ապրում ու բարգաւաճում էր Իտալիայում: Զարեհին հաճելի էր կարծել, որ նման էր եղբօրը, բայց առաւել խոշորակազմ էր, թերեւս փոքր-ինչ անտաշ (չէ՞ որ նրա մայրը ոչ թէ արքայադստրիկ Իսկուհին էր, այլ վաճառականների ամրակուռ դուստրը. երկրորդ ամուսնութեան համար Համբարձումը ընտրել էր հասարա- կութեան երկրորդ խաւը...): Նայելով գունագեղ զգեստներ հագած, արհեստականօրէն ուրախ ձեւացող (բայց որքա՛ն հանգստացնող) բրիջ խաղացող տիկնանց՝ Զարեհը մտածում էր, որ կներեն իր՝ այլեւս հայ չլինելը. որքա՛ն լաւ կլինէր, եթէ ետեւում ունենար ազնուաբարոյ ֆրանսացի ծնողներ, արեւմտեան հիմնաւոր կրթութիւնն եւ լինել իսկական, ոչ թէ միայն թուացեալ արեւմուտցի:

Բայց դու, խեղճ Զարեհ, այդ քո ձիթադոյն մաշկով եւ ամուր, բահաձեւ մատներով, մեծ քթով ու շագանակագոյն ջրոտ աչքերով ինչի՞ կնմանուէիր Արեւմուտքում, եթէ ոչ՝ Արեւելքի որեւէ քաղցած գաւակի:

Զարեհը կարծում էր, որ իրեն ապահովապէս անջրպետել էր՝ օր օրի հեռանալով իր հեռաւոր բազմանդամ ընտանիքից, պնդակազմ արեւելեան կանանցից՝ հաստիկ հօրաքոյրերից, յիմարիկ, միամիտ ու չափազանց հետաքրքրասէր քոյրերից, որոնք դեռեւս ամուսին չէին գտել, եղբօր սնապարծ դստրիկներից, որոնց մի ժապաւենով էլ կգոհացնէիր... Սրանց բոլորին տարին երկու անգամ ուղարկում էր մի ճամպրուկ՝ լի Հալէպի ծաղկաւոր նուրբ կերպասով: Գործա- րանի տէրն իր հիւանդն էր եւ իրեն յարմար գնով տալիս էր աննշան թերութիւններով ծանր մետաքսի կտորեղէն: Վերջին անգամ ուղարկել էր նաեւ Ազնիւին՝ իր նախընտրեալ, իրե-

նից ընդամենը տասնմէկ ամիս փոքր, գրեթէ երկու տրեակ քրոջը, նուան գոյնի կարմիր մետաքս, մի անթերի, չքեղ կերպաս՝ ոսկեթել թաւշեայ վարդերով:

Այս մետաքսը կ'այտնուի անապատում, կ'ծառայի որպէս ծածկոց, իսկ Ազնիւն էլ, սմբած երեսին դեղին ատամներն ի ցոյց հանած, կ'ծիծաղի, երբ Վերոնը նրան ամէն երեկոյ, քաղցից կ'ծկուելով, կ'ասի.

– Պատրաստուում ես քո արքայազնի համա՞ր, աղաւնեակս, մետաքս ու ոսկի՞ ես հագնում:

Բայց Ազնիւն ի վերջոյ առանց վարանելու կ'փոխանակի այն մի քիչ ջրի ու մի կտոր հացի հետ:

Զարեհն այս պատմութեան մէջ շատ կարեւոր դեր ունի, բայց ոչ իր կեանքի կամ մահուան պատճառով: Կամուսնանայ բարի ասորուհի Ալիսի հետ, իր գրեթէ անթերի ֆրանսերէնը կ'օգտագործի Լիբանանում եւ Սիրիայում ֆրանսական պետական խնամակալութեան տարիներին: Անդորր կապրի տասնիններորդ դարի ոճով կառուցուած մի խաղաղ թաղամասում՝ մի գեղեցիկ տան մէջ, որի ներքնաբակի պատշազմբները նայում էին միջնաբերդին: Զուլիետ անունով մի դուստր կունենայ, որը, նորահարս դարձած, կ'մահանայ խորհրդաւոր մի հիւանդութիւնից, ամուսին առնելուց անմիջապէս յետոյ. վերջինս նոյնպէս ասորի էր, Դամասկոսից, մուգ, յստակ աչքերով:

Բայց հէնց այս կասկածամիտ, եւրոպացի Զարեհը կ'փրկի ընտանեկան ժառանգութիւնը՝ նկարներն ու եղբօր զաւակներին. դրանք չորս հիւծուած մարմնիկներ էին, մահամերձ թուշակներ, ամբողջովին աչք դարձած, իրար միահիւսուած փոքրիկ գանգեր, եւ ընտանեկան նկարների թանկագին փաթեթը՝ մի թաւշեայ կտորի մէջ կարուած Աբ. Գրիգոր Նարեկացու *Մատենի* հետ, որը ձեռքից ձեռք էր անցնել՝ մահացողներից փոխանցուելով վերապրողներին: Դրանք չոր ու ցամաք կ'մախքներ էին, յիշատակագրութիւնը մի կեանքի, որը

եղել էր աշխոյժ ու բեղուն, հիւրասիրութիւններով ու ուրախութիւններով առկեցուն...

Եւ այսպէս, Եւրոպայում պայթել էր պատերազմը: 1914 թ. օգոստոս ամիսն էր: Մեր Համբարձումը մահանում էր: Տեսել էր ամէն ինչ, սիրել էր ամէն ինչ, աշխատել էր շատ ու մտածել էր շատ իր ընտանիքի ու Եկեղեցու մասին: Այժմ հաւատարմութեամբ ու պատուով օրհնում էր բոլորին եւ հրածեշտ տալիս ու հրածեշտ առնում բոլորից: Զաւակներին վստահեց իր աննման կնոջը՝ իմաստուն ու դժուարահաճ Նուարդ Ալեքսանեանին:

Այժմ կարող էր ազատագրուել ծերութիւնից, տխրութիւնից, ուրախութիւնից: Այժմ կարող էր վերագառնալ իր գեղեցկուհի արքայադստրիկի, դեղձան այտերով ու կրակէ զգեստով Իսկուհի Քարտաշեանի մօտ, որ իրեն յաւիտեան գայթակղեց 1865 թուականի մի յետմիջօրէի: Երբ տեսնում էր Ազնիւին՝ խորդեանին քունքին, մտածում էր կնոջ մասին. բայց Իսկուհին որքա՛ն աւելի գեղեցիկ էր: Կարծես արեւով լուսաւորուած, կարծես բոցեղէն շղարչների միջից դեռեւս ժպտում էր իրեն Աստուծոյ պարուրող ոսկեայ ամպերից, թաց, մշուշոտ, սեւ աչքերով, թախճոտ բերանով:

Գիտէր ծեր Համբարձումը, որ կինը սպասում էր իրեն եւ արդէն կ'ախուռնէր երկնքի փէշերից գեղեցիկ, թմբլիկ ձեռքերը պարզած դէպ ամուսինը. ուստի Համբարձումը կարող էր վայելել իր վերջին օրերը: Չէր տառապում. միայն աստիճանաբար անասելի երանելի թմբիր էր տարածում ոսկորների մէջ: Ումպ-ումպ խմեց վարունգով մածուն, ծամ-ծմեց մի կտոր հաց եւ զգաց, որ միտքը ժամ առ ժամ դառնում էր աւելի սուր, աւելի պայծառ ու աւելի մարգարէական:

– Պապիկ, խաղող կուզե՞ս,– ներս եկաւ Նուբարը երեւոյով, խիստ գոհ իրենից, քանի որ ուզում էր ցոյց տալ իր առաջին քայլերը: *Ամէնից փոքր թռուիկն էր, Սմբատի ու*

Շուշանիկի վերջին գաւակը՝ ծիծաղաշարժ, կլորիկ Նուբարն իր հնչեղ անունով:

Փոքրիկ քաղաքի շրջակայքի գիւղերի վագերի խաղողը քաղցր էր ու խոշոր. ծերունին մի հատիկ վերցրեց ու զգաց իր շողափայլ մարալի՝ Իսկուհու մարմնի անուշ բոյրը... «Կմիանամ նրան կորուսեալ հայրենիքում, նրան, որ այլեւս չի մեռնի, - մտածում էր Համբարձումը, - եւս մի քանի օր...»:

Եւ յանկարծ միտքը նրա դէմ յառեց սարսափի ու յուսահատութեան մի բիւրեղեայ, պայծառ տեսիլք. սիրտը սկսեց անկանոն բաբախել, տագնապն իր պողպատեայ մատներով սեղմեց կոկորդը, եւ կեանքը սկսեց փոխակերպուել, արագօրէն հոսել դէպի անհունութիւն: Սիրած էակի յստակ տեսիլքն անհետացաւ. փոխարէնը երեւացին Յայտնութեան սեւ ձիւղերները՝ առաջարկելով աղէտի, եղեռնի չարագուշակ տեսարաններն Աստուծոյ խաւար բացակայութեամբ:

Համբարձումն այդ պահին հասկացաւ, որ տեսնում էր ապագան, որ իրենից ծնունդ առած այս բոլոր լուսաւոր կեանքերը կոչնչացունեն, եւ միայն իրեն՝ ծեր կոճղին էր բախտի քմահաճոյքով թոյլ տրուած մեռնել իր սեփական անկողնում՝ գալիքը կանխագգալով:

Բարձր-բարձր երկնքում, որ դարձել էր մետաղական ու դատարկ, Աստուած գոյութիւն չունէր. ով մեռնում էր, անհետանում էր յաւիտեան, իսկ Իսկուհին երբեք գոյութիւն չէր ունեցել, ոչ էլ վերստին կյայտնուէր իր կողքին: Մնում էր յանձնուել խուճապին եւ ապա մահանալ: Այլեւս անելիք չունէր:

Բայց Նուբարը դեռեւս սենեակում էր՝ հմայուած լուսաստուերներով, որ արեւն առաջացնում էր յատակի կապոյտ, վարդագոյն եւ կանաչ աղիւսածածկ սալերի վրայ: Պարում էին ստուերները, իսկ փոքրիկը հայիլ-մայիլ դիտում էր: Դեռեւս ձեռքին էր խաղողի ողկոյզը: Ինքն ու պապիկն էին միայն սենեակում: Յանկարծ մի փափուկ թրմփոց գրաւեց նրա ուշադրութիւնը: Պապիկին տուած խաղողի հատիկն էր,

որ գլորուեց նրա բաց ձեռքից: Այդ ձեռքի մէջ ինչ-որ անպաշտպան, աղաչական բան կար, իսկ պապիկն էլ առաջուայ պէս ընդարմացած չէր, ինչպէս վերջին օրերին, այլ նայում էր մի ինչ-որ անորոշ ուղղութեամբ, բաց, վախեցած աչքերով:

Նուբարը յանկարծ հասկացաւ, թէ ինչ էր հարկաւոր անել. որոշեց ոչ ոքի չկանչել եւ հէնց ինքը օգնել պապիկին: Գիտէր, որ միակն էր, որ կարող էր օգնել նրան այդ պահին, եւ իրեն շատ քաջ զգաց: Վազեց դէպի մահճակալը, մագլցեց եւ պառկեց պապիկի անշարժ մարմնի վրայ՝ տարածելով իր պատիւի ձեռքերը՝ կաշուն ողկոյզի ճգմուած հատիկներով, փնտրելու ծերունու դէմքը:

Չէր խօսում, գործում էր: Փոքրիկ մարմնի ջերմութեամբ ու խոնաւ ձեռքերով փոխանցւում էր ծերունուն խաղողի բոյրը, կեանքի բոյրը, ջահէլ ձեռքերի ու փափուկ դէմքի ջերմութիւնը: Սկսւում էր մի պայքար, մի անզօր պայքար: Եւ մանկիկի միջոցով երկնքի դաշտերից խոնաւ երկիր էր իջնում չքնաղ Իսկուհին, գալիս էր հիւանդութիւնից ու հիւանդութեան հոտերից ծանրացած սենեակը, յաղթում մահին ու մխիթարում նրան:

Օրօրուելով նրա գրկում՝ ծերունին այժմ գիտակցութեան էր գալիս: Վերջին պարտականութիւնն էր, վերջին ճիգը, բայց անհրաժեշտ էր զգուշացնել:

«Սմբատ, Նուարդ», - կանչեց նրա նուազած միտքը, բայց շուրթերը բառերի փոխարէն միայն սպառնալից քրթմնջոցներ արձակեցին: Նուբարը վախեցած սահեց մահճակալից՝ նայելով պապիկի մշուշոտ, սեւեռուն աչքերին, որոնք գնալով փառակալում էին: Ի վերջոյ յստակ լսուեց «Փախէ՛ք» ճիչը նրա սառչող շուրթերից:

«Փախէ՛ք, փախէ՛ք», - կրկնում էր Համբարձումը մանկիկին, բայց նրա ձայնը դառնում էր սուր խռխոց, ցաւալի բաժանում:

Է՛հ, մահը չէր կարող երջանկութիւն լինել... «Թող որ

գոնէ փրկուի այս փոքրիկի կեանքը», – խնդրեց Համբարձումը վերջին շնչում: Իսկուհին ու Տիրամայրը հաւանութեան նշան արեցին: Եւ նրանց հոգատար գրկում ծերունին աւանդեց հոգին: Նուբարը անշարժ ու լուռ նայում էր նրան ու շարունակում ամուր բռնած պահել ձեռքը:

Պապին ու թոռին հէնց այդպէս էլ գտան՝ անշարժացած փոխադարձ լուռ հաղորդութեան մէջ, անցեալի ու ապագայի անկայուն հաւասարակշռութեան միջեւ հրաշքով յայտնուած ներկայում: մի կարմիր երեկոյ, որ չէր իջնում, մի խորհրդաւոր յայտնութիւն:

Աստուածածինն անցել էր երկրի վրայով, կակաչների ու ոսկէ հասկերի միջով ու գերադասել էր խաղողի ողկոյզը:

«Ներս, դուրս, ներս, դուրս», – արագօրէն առանձնացնում էին երեխաները ոլոռն ու ոսպը: Յաջորդ օրը պապիկի յուղարկաւորութիւնն էր: Եկեղեցու զանգատունը Հնչեցնում էր ժամերը, ամէն ինչ խաղաղ էր, ու տիրում էր լուռ եռուզեռ. մարմարեայ մեծ սեղանին շարուեցին հոգեճաշի սկուտեղները, երեխաները ցածրաձայն ծիծաղում էին, չամիչ ու արեւածաղկի սերմ ուտում:

Շուրջըրըր տիրութիւն չէր տիրում, այլ առաջադրանքների ու պարտաւորութիւնների որոշակի բաժանում՝ փոքրինչ համեմուտած գուսպ արժանապատուութեամբ: Կարեւոր ընտանիք էր, արտասահմանում շատ հարուստ ազգականներ ունէր. զեղեցիկ յուղարկաւորութիւն կլինէր: Եպիսկոպոսը գալու էր ծէսը կատարելու, պատուիրուած էր Մայր եկեղեցու դպիրների երգչախումբը, իսկ ողբասաց կանայք արդէն գործի էին անցել ու շարունակաբար խոհանոց էին գնում կոկորդները թարմացնելու: Սիրում էին Շուշանիկին ու նրա առատաձեռնութիւնը, վախենում էին Սմբատից ու նրա գիտութիւնից, ուստի ջանք չէին խնայում:

Ամբողջ թաղը (ամբողջ քաղաքը) խօսում էր Համբարձումի մահուան մասին՝ որպէս մի հիանալի իրադարձութեան,

ու թէ ինչպէս էր շունչը փչել իր ամենափոքր թոռնիկի ներկայութեամբ, ու թէ ինչպէս էին պապ ու թոռ երկուսն էլ անշարժ, ձեռք ձեռքի տուած, հանդարտ նայել միմեանց աչքերի մէջ:

Շուտով ողբասաց կանայք ծոր տուեցին պատմութեանը, ու Նուբարը դարձաւ ի վերուստ ուղարկուած, որին գտել էին լուսաթաթախ եւ, – աւելացնում էր յոյն Իսմէնէն, – այնտեղ պէտք է որ հաստատ հրեշտակ իջած լինէր, որովհետեւ ամբոստիայի հոտ էր տարածուած սենեակում... Իսմէնէն յունական Քրոս կղզուց էր եւ բերանում միշտ մազտաք ունէր, իսկ զգեստի խոր գրպաններում՝ գունաւոր կախարդական թաշկինակներ, որոնք երբեմն զարմանալի ճարպկութեամբ արագօրէն դուրս էր հանում, հանգուցում ու քանդում: Թաւ, մոխրագոյն աղուամազը զարդարում էր նրա վերին շուրթը:

Իսմէնէն դուր էր գալիս հայերին, ինչպէս նաեւ թուրքերին, որոնք յաճախ էին նրան հրաւիրում ծիսակատարութիւնների ու յուղարկաւորութիւնների, որովհետեւ գիտէր երգեր ու ողբեր բազմաթիւ տարաշխարհիկ լեզուներով. երիտասարդ հասակում էլ Ամերիկայում էր եղել, գնացել էր Քլոնդայք՝ բռնուած ոսկու տենդով, ծանօթացել Հնդկացիներին ու ապրել նրանցից մէկի հետ: «Որպէս կին, իսկական կին, – սիրում էր կրկնել, – եւ որքա՛ն էր ինձ յարգում» (իսկ ո՞վ կարող էր չյարգել Իսմէնէին), ու սկսում էր արտաբերել խորհրդաւոր բառեր, ու վառում էին նրա խորամանկ աչքերը:

Բայց վա՛յ նրան, ով բան ասէր նրա սիրած ընտանիքին: Շան հաւատարմութիւն էր տածում Սմբատի ու Շուշանիկի նկատմամբ, որը վերաբերում էր միայն նրանց որդիներին, բայց ոչ հօրեղբայրներին ու հօրաքոյրերին, ոչ էլ ծերունու այրուն, որին ծաղրանքով կոչում էր Մադամ Նուբարը:

Յուղարկաւորութեան այս առանձնայատուկ առիթով Իսմէնէն գերազանցել էր ինքն իրեն, քանի որ Սմբատն էր

այժմ ընտանիքի աւագը՝ հաշուի առնելով այն, որ Երուանդը վստահաբար երբեք Փոքր Ասիա չէր վերադառնայ: Երուանդն անմիջապէս հեռագրեց, ինչպէս նաեւ եղբօրը գրեց մի նամակ-կտակ, որը տեղ կհասնէր յուղարկաւորութիւնից երկու ամիս անց, եւ որը ընդարձակ լրագորութիւն էր տալիս Սմբատին՝ ընտանեկան իւրաքանչիւր հարց լուծելու համար, սկսած քոյրերի ամուսնութիւնից մինչեւ նրանց օժիտը, տան ծեր ծառայ Յակոբի թոշակից մինչեւ բլուրների վրայի նրանց հին տան՝ Արտոյտների Ագարակի ճակատագիրը:

Սմբատը մտորում էր մի ամառանոց կառուցել, ինչպէս ընդունուած էր Եւրոպայում, ապա հրաւիրել Երուանդին ու նրա իտալական ընտանիքը: Խաչակրաց աշտարակով ու մեծ աղանատնով գլխաւոր կառոյցի ետեւում ալոճենիներով ցանկապատուած մի տարածք կար, որը կատարեալ էր lawn-tennis⁴-ի համար՝ ըստ անգլիական նորաոճութեան. տեղ կգտնուէր նաեւ խորդանոց ու յետմիջօրէի թէյի համար մի գեղեցիկ բոլորածեւ տաղաւար կառուցելու: Տարիներ շարունակ ինքն ու եղբայրը ծրագրում էին այս ուղեւորութիւնն ու այս այցելութիւնը, որոնք անհնար էին ծերունու կենդանութեան օրօք, որը երբեք չէր ընդունի Սմբատի նորարարութիւնները. միւս կողմից էլ՝ Երուանդը չէր ուզում վերստին տեսնել հօրը:

Անբացատրելիօրէն հպարտ ու մրցունակ նկարագրի տէր Երուանդն ակամայ յարգանք էր տածում հօր նկատմամբ, որը՝ որպէս նահապետ տեղի էր տուել իր տասներեքամեայ առաջնեկի ըմբոստ ցանկութեանն ու թողել էր, որ հայրենիքից միայնակ հեռանար՝ հոգ տանելով նրան միայն մինչեւ տասնութ տարին լրանալը: Բայց նրանք այդպէս էլ այլեւս չտեսնուեցին. հեռաւոր որդուց Համբարձումը երբեք չէր խօսում, միայն Հաւանութիւն էր տալիս Սմբատի եղբայրական հպարտութեանը, միւս զաւակների խանդավառու-

թեանը, որոնց համար Երուանդը սրբապատկեր էր, ապրող առասպել:

Սակայն պատերազմը թողեց, որ Սմբատը թենիսի դաշտի միայն հողը հարթեցնէր, ու այդ նոր փորած հողի թարմ, գեղեցիկ, ուղղանկիւնաձեւ փոսում ինքն ու իր զաւակները պիտի հանգչէին առյաւէտ:

Քաղաքի կէսը փողոցում էր: Հայոց եկեղեցու բարձրաստիճան պաշտօնեաները, եպիսկոպոսն ու բազմաթիւ քահանաներ հանդիսաւոր կերպով սպասում էին Մայր եկեղեցու սանդուղքի գլխին, ասես շարուել էին լուսանկարուելու համար (եւ, իրօք, իր գերժամանակակից գերմանական գործիքով կլուսանկարէր նրանց Լեւոն Եակովլեանը, վերահսկիչը, հայկական թաղամասի հաւատարիմ փոստատարը եւ հպարտ հայրը նուիրատուի, որը տարիներ առաջ գաղթել էր Միւնխենի Բաւարիա, որտեղ աշխատեցնում էր մի յայտնի գարեջրատուն):

Միաժամանակ մէկ այլ լուսանկար արուեց: Դազաղի մէջ Հանդարտօրէն մեկնուած Համբարձումի մարմնի շուրջբոլորը լուռ շարուեցին ներկայ որդիներն ու թոռները, կարծես մի նոր արարողութիւն կատարելիս լինէին: Առաջին յարկի ընդարձակ միջանցքում կախուած էր Ընտանիքի բարեպաշտ հօր մահը մակագրութիւնը կրող տասնիններորդ դարի մի պատկերանկար, որը ներկայացնում էր քաղքենիական միջավայրում թագաւորների հանրային մահուան հին ծիսակատարութիւնը, որտեղ բոլոր ազգականները ծնրադիր հաւաքուած էին փառաւոր մահճի շուրջ, որի մէջ պառկած էր Վերջին Օծումը ստացող մահամերձը:

Հաւանաբար Սմբատն էր հոգացել, որ լուսանկարուէին, բայց ուրիշ իմաստով: Լուսանկարչին կանչել էր ոչ թէ ցուցադրական պատկեր, այլ վկայութիւն տալու համար, որ արդիականութիւնն ու առաջընթացը հասել էին նաեւ այդ փոքրիկ քաղաքը: Նրան արեւմտեան նրբաճաշակութեան

⁴ Lawn-tennis – անգլ. դաշտային թենիս (ծնթ. թարգմ.):

ապացոյց էր թուում ընտանեկան այս նոր սրբապատկերը: Ձէ՞ որ այսօր ժամանակակից լուսանկարչական մեքենաներ կան, եւ հարկաւոր էր յիշատակ ուղարկել հեռաւոր եղբայրներին: Այսպիսով, լուսանկարիչը փոխնեփոխ շարում էր բոլորին՝ երեխաներին ու մեծերին, կանանց ու տղամարդկանց, բայց ամուսիններին իրարից չէր բաժանում: Բնականաբար, ոչ ոք բացէիբաց չէր ժպտում, բայց բոլորի աչքերն աշխոյժ էին ու գուարթ: Նուբարին նստեցրել էին պապիկի գլխի մօտ:

Քանի՛ զոյգ աչքեր, քանի՛ անհանգիստ կօշիկներ: Դագաղը պահող երկար սեղանի սեւ թաւշեայ ծածկոցը հասնում էր մինչեւ գետին: Եւ այնտեղ՝ սեղանի տակ, պոռթկում էր դասաւորումի անհամբերութիւնը: Փոքրիկ տղաները աքացի էին տալիս աղջիկներին, ձեռք ու ոտքով իրար էին հարուածում ու ցաւեցնելու աստիճան կսմիթներ շռայլում. խաղի իմաստն էլ հէնց այն էր, որ դէմքերը չպէտք է մատնէին ոչինչ, այլ միայն սգոյ հանդէսին պատշաճ լուրջ տեսք ընդունէին:

Վերջապէս նկարուելու արարողութիւնը վերջացաւ: Զօրաքոյրերն ամէնուրեք հետապնդում էին երեխաներին, որ տանէին զուգարան ու կարգի բերէին նրանց հագուկապը հանդիսութեան համար: Խոհանոցում լուսանկարիչը սուրճ էր ըմպում, եւ յուղարկաւորութեան ընթրիքի համար թխուած քաղցրաւենիք ուտում: Անունը Գրիգոր էր. շատ չէր վաստակում, ուստի գրպանը դրեց մի քանի պաքսիմաս՝ քաղցրացնելու համար այն պատմութիւնը, որ կանէր աւելի ուշ իր գաւակներին:

Ներս մտան հօրեղբայրները: Ուսերին բարձրացրին բաց դագաղը եւ դանդաղօրէն դուրս հանեցին լայն բացուած դռնից: Մուգ շորեր էին հագել, շքեղ փողկապներ կապել, մազերը քսուքով փայլեցրել եւ ոչ ոքի չէին նայում:

Նուբարը զգաց, որ իր փառքի պահն աւարտուեց, բայց չէր ուզում տանը մնալ, ինչպէս նրան պատուիրել էին:

«Այդքան էլ փոքր չեմ», – մտածեց նա, բայց նրան պաշտպան էր պէտք. որ չկորչէր քաղաքում:

Դագաղի ետեւից, որն այժմ դրուած էր շքեղ դիակառքի վրայ, որը քաշում էին փետրափնջերով զարդարուն չորս ամեհի երիվարներ, հարազատները թեւանցուկ ուղեկցեցին այրուն եւ աւագ որդուն՝ Սմբատին: Ետեւից երկար շարքով գալիս էին քեռի-հօրեղբայրները, հօրաքոյր-մօրաքոյրերը, զարմիկներն ու զարմուհիները, միւս ազգական-բարեկամները, հեղինակութիւնները, մի քանի աղքատ, որոնց մէջ էր նաեւ թուրք մուրացկան կաղ Նազիմը: Կային նաեւ երկու թուրք սպայ. Ազնիւի երկրպագուն մենակ չգալու համար խնդրել էր ընկերոջը, որ իրեն ընկերակցէր:

Ազնիւն անցաւ շատ լուրջ, գեղեցիկ, սեւ քօղը դէմքին քաշած, ասես չտեսաւ նրան: Բայց իրականում բոլորն էին տեսել տղային, ու մարդկանց երկար թափօրի միջով օձագալար շշուկ պտտուեց:

Ամենավերջում ծիսական արժանապատուութեամբ ընթանում էին ողբասացները: Իսմէնէն կենտրոնում, կոլոլուած իր երփներանգ շորերի մէջ, թափահարում էր մի լայն, սեւ շալ, որը դրօշակի պէս պահում էր լայն պարզած ձեռքերում: Սգոյ հանդիսաւոր ծիսակատարութիւնը հարկաւոր էր յարգել. բոլորը դա գիտէին, եւ այն պէտք է զգուշութեամբ կիրառուէր փորձառու մարդկանց կողմից: Այդ կանանց սուգ ու շիւանի ամէն մանրամասնը մի իմաստ ունէր՝ լաց ու կոծր, բղաւոցները, բացականչութիւնները միասին կազմում էին սգոյ ողբալի ներդաշնակութիւնը, որի սկզբում ներկայացուում էր մարդկային համբերութիւնը, անտես Աստծոյ հանդէպ եղած վստահութիւնը, եւ միայն այս քահանայուհիներն էին իրաւասու դիմելու նրան հրապուրիչ մտերմութեամբ:

Ողբասացների վայնասունը նեցուկ էր ընտանիքին ու առաջնորդում էր նրան դէպի ապագայ ուղին, դէպի անյայտութիւն, որովհետեւ չկար այլեւս նա, ով ներկայացնում էր

մի ողջ ընտանիք, պաշտպանում չարից ու թողութիւն տալիս:

Նուբարը իսմէնէի հետ էր, սեւ շալի ետեւում: Ծօծւում էր կանանց պէս ու կորչում նրանց մետաղական ու կտրտուող գոռում-գոչիւնի մէջ: Երջանիկ էր, արբած աղմուկից ու խորհրդաւոր տարուբերումներից: Եւ սա կմնար որպէս առաջին յուշ. իսկ պապիկի վերջին հանդիպումից ոչինչ չէր յիշում:

Օգոստոսի խաղողը... Երուանդը հասուն տարիքում, երբ իր անսասան հեղինակութեամբ հետեւում էր աղջնակի ապաքինմանը, յիշում էր, որ դեռեւս փոքր հասակից օգնում էր այգեկուծի ժամանակ զարմիկներ Յովհաննէսին եւ Վահանին: Յիշում էր՝ ինչպէս բլրալանջի այգուց երկուսով ուսերին դրած տուն էին բերում փայտից կախած հսկայական ողկոյզներ: Սառն էր ու չոր այս հեղինակաւոր պապիկը (բնական հեղինակութիւն, որ հմայում էր ամենափոքրերին): Բայց աղջնակը կյիշէր Fratelli Doglioni ալպեան հիւրանոցի մագլցող որթերի ստուար հովանու տակ այդ հեգնանքի քողարկուած յուզմունքը:

– Սա իսկական խաղող չէ, գունատ է, համ չունի. իմ հեռաւոր երկրում աճում էին հսկայական ողկոյզներ, իսկ կաթն ու մեղրը հայրենի ափունքի համն ունէին:

– Մի՛ ընդհատէք նրան, երբ խօսում է. – ասաց աղջնակը: Ծեր պարոնն, ասես ինքնիրեն, շարունակեց.

– Ոչ մի համ չի հասնի նրա համին, հօրաքոյր Մարիամի հետ մածուն էինք պատրաստում, եւ նրանք այնքան բարի էին, որ ինձ թոյլ էին տալիս փախլաւայ թխել:

Այսպէս, աղջնակն առաջին անգամ համի քաղցր զգացումի, հեռաւոր բոյրի երազի միջոցով ոտք դրեց Կորուսեալ երկիր:

Վստահօրէն, ճանաչում էր լոխումը, փախլաւան, քուրաբիէն, շաքար-լոխումը, վիեննական կրփֆելը, Արեւելքի ու

Արեւմուտքի բոլոր քաղցրաւենիքները, որ հօրաքոյր Անրի-եթը բերում էր ամէն երեկոյ՝ կտրել-անցնելով ճանապարհը հաւատարիմ Մարիամի հետ: Բայց պապիկը ուրիշ բան էլ աւելացրեց՝ համի ու հոտի կենդանի արձագանքը, իրական սնունդը, կարօտի սնունդը (մի երկրի հանդէպ, որն այլեւս գոյութիւն չունէր, արսորեալների շարքերի հանդէպ, թունոտ արեւի տակ մեռնող մի ընտանիքի հանդէպ, Փոքր Ասիայի փոչոտ ճանապարհների ու արահետների երկայնքով սփռուած անյայտ գերեզմանների հանդէպ... ինչպէս նաեւ տառապանքի եւ ուրախութեան, վշտի ու մխիթարութեան կենդանի ու բուրումնաւէտ այն ամէնի հանդէպ, որ անհետացաւ նրանց հետ միասին):

– Ապա ինձ մի հրաւէր ուղարկեցին...

– Ուրեմն քեզ հրաւէ՞ր ուղարկեցին, բայց ինչու՞ չգնացիր, պապիկ:

Հարցի պատասխանն աղջնակը հասկացաւ միայն տարիներ անց...

Իր պարզ սրտում Սմբատը, որ այժմ ընտանիքի ղեկավարն էր, ուրախութեամբ մտածում էր, որ վերջապէս Երուանդը կգար: Նկատի ունէր նրա այցելութիւնը, յաջորդ ամառ. Արտոյտների Ազարակն այդժամ պատրաստ կլինէր նրան ընդունելու:

Երուանդը, որ երկխօսում էր միայն ինքն իր հետ ու վստահում միայն ինքն իրեն, մտմտում էր այս ճանապարհորդութեան շուրջ: Նոր հաճոյք էր զգում մտածելուց: Քաղաքում, որն արդէն իրենն էր, առաջիններից մէկն էր, որ մեքենայ գնեց ու սկիզբ դրեց կիրականօրեայ զբօսանքների ընտանիքի ու երկու վարորդների հետ դէպի Ռեկտարո, Թիենէ, Բերեան բլուրները, մօտակայ Ալպեան լեռները: Կիրակի առաւօտ կնոջ մօտ յանկարծ ուժեղ գլխացաւեր էին սկսում, որդիներն էլ դաս ունէին սերտելու, բայց դժուար էր չհնազանդուել նրան, ուստի զբօսանքները կատարւում

էին, իսկ վատ տրամադրութիւնն անցնում էր ընդատակ: Դռնների վրայ փակցուած էր արծաթեայ զինանշանը, որը ներկայացնում էր միահիւսուած երկու տառ՝ Y եւ A:

Երուանդի ու նրա որդիների մէջ կար մի խորհրդաւոր, մոլթ շերտ, կարծես փոխադարձ վախ, զգուշաւորութիւն, որը երբեք չէր վերածուած փստահութեան: Անդրանիկ որդին տասնվեց տարեկան էր. միշտ վարժարանում, միշտ եղել էր վարժարանում, դեռեւս մանկուց. երկրորդը տասնմէկ տարեկան էր, մօր տղան էր, միշտ մօր կողմից էր, որն այնքա՛ն անպաշտպան էր թուում ասիացի բռնակալ, ինքնակալ ամուսնու առջեւ:

Երուանդը, երբ դուրս էր գալիս տնից, չէր ասում, թէ ուր էր գնում, երբեմն մի քանի օրով անհետանում էր, ընդունում էր հայ ընկերներին, խօսում էր այն բարբարոսական ու մոլթ լեզուով, որը երբեք կնոջը չէր խնդրել սովորել: Կինն էլ պաշտպանում էր որդիներին այդ արիւնից, այդ շարժուձեւերից, այդ աւանդութիւններից: Որդիները մեծանալով կփոխէին նաեւ անունները:

Բայց կինը՝ Սարտենա կոմսերի ընտանիքից սերող Թերեզան, չգիտէր, որ իրականում կատարում էր ամուսնու գաղտնի փափագը. ինքն էր ակամայ պարտաւորութիւն վերցրել անելու այն, ինչը ամուսինը չէր կարող անել՝ որդիների զգացական օտարացումը, Հեռաւոր երկրի հանդէպ տածած ցանկացած հետաքրքրութեան ոչնչացումը (միայն ծերութեան օրերին, երբ ամէն ինչ արդէն վերջացած էր, Երուանդը թոռուհու առջեւ կրացէր հայրենաբաղձութեան գլուխը):

Էդուարդի ու Քայելի համար միանգամայն օտար էին իրենց հասակակից զարմիկները՝ Սմբատի որդիները: Նոյն Սմբատն էլ մի ազգական էր, որից մի փոքր ամաչում էին՝ թաւ բեղերով, հասարակ տեսքով, գլխին Փէս (որքա՛ն ծիծաղեցին Սարտենա զարմիկներն Երուանդի թիկունքի ետեւում այդ լուսանկարների ու իր թարմ հարստութեան վրայ):

Մինչ այդ Երուանդը բծախնդրօրէն ծրագրեր էր կազմում: Ուզում էր, որ իր վերադարձը մեծ շուքով լինէր: Մի որոշ ժամանակ գոնէ ընկղմուէր երկրի տաք գրկում, վայելէր հրճուանքը, յարգանքը, եւ, ինչու ոչ, նաեւ նախանձն այն մարդկանց, որոնց հանդէպ կարօտի զգացում չուներ: Յուսով էր, որ Իտալիան չէր ներքաշուի պատերազմի մէջ (իրականում, սրտի խորքում նա միանգամայն չէզոք էր): Չէր վստահում ազգայնամոլների անորոշ երթին, գրգռուած կրքերի խենթութիւններին. միշտ համոզուած էր եղել, որ ցանկացած խենթութիւն կարող էր սպանել, եւ որ ցանկացած խենթութիւն զոհ էր պահանջում, յագենում արեամբ:

Ամէն դէպքում, երբ իրեն հարց էին տալիս, կարծիք չէր յայտնում կամ շատ մեղմ էր, պատրաստ փոխելու միտքը, հետեւելու խօսակցին, ծպտուելու, անհետանալու: Իտալիան այն երկիրն էր, որ իրեն հիւրընկալել էր, յաջողութիւն ու յարգանք էր տուել. նրա անկեղծութիւնը կասկածից դուրս էր: Սակայն տուրք տալով արեւելեան անվստահութեանը, Երուանդն իրեն զգում էր իտալահպատակ եւ ոչ օսմանահպատակ: Իսկ հպատակը անձեռնմխելի իրաւունքներ չուներ, ուստի աւելի լաւ էր խուսափել քաղաքականութիւնից: Ազատ էր միայն իր նեղ շրջանակում, որն անտեսանելի էր, բայց շօշափելի. այստեղ նա գործի էր դնում իր հեղինակութիւնը, եւ վա՛յ նրան, ով այն խախտեր: Այդպէս էր Երուանդի համար բժշկութիւնը, որտեղ բոլորն էին նրան հպատակ:

Մնացեալ ամէն ինչում նա լաւ էր կարողանում թաքցնել իր թուլութիւնը, որ ոչ ոք չէր տեսնում: Բայց որդիներին ջանում էր տալ այն, ինչն իր կարծիքով ամենամեծ նուէրն էր՝ ամբողջովին նոր երկրին պատկանելը, առանց յիշողութիւնների ծանրութեան, առանց կարօտախտի բեռի, մայրական ամուր արմատներով լինել իտալական իրականութեան մէջ՝ հասարակութեան նեղ շրջանակ, Վենետոյի բարբառով

սահուն խօսք, որով իրար ճանաչում էին ազնուական տիկնայք ու պարոնայք, եկեղեցականները, ծառայողներն ու փաստաբանները...

Բայց որդիները՝, որդիները՝ բարգաւաճութեան մէջ մեծացած որդիներն ու՞մ կյայտնէին իրենց մտահոգ թուլութիւնները, քարուքանդ անող բարութեան տարօրինակ տագնապները, աղջիկների առջեւ վայրի ամօթխածութիւնը, երբեք մինչեւ վերջ ընդունուած չլինելը...

Հոկտեմբերի կէսերին Երուանդը վերջապէս որոշում ընդունեց: Պատուիրեց կարմիր գոյնի Իզոտտա Ֆրասկինի աւտոմեքենայ՝ դռների վրայ դրոշմել տալով իր անուան արծաթեայ սկզբնատառերը: Ներսում կային վեց, շարժական նստատեղեր՝ կաշուից ու թաւշից, վարագոյրներ, փոքրիկ սառնարան՝ ոգելից ըմպելիքների սրուակներով ու բլերեղապակեայ ողորկ գաւաթիկներով, արծաթեայ սպասք ու իր անուան սկզբնատառերով զարդարուած ափսէներ, ինչպէս նաեւ սաղափապատ, խնամքով թաքցրած փոքրիկ մի դրամարկղ՝ թուերի անգլիական զուգադրութեամբ (այդ հրաշքի՝ խնամքով պատրաստուած բանալին Երկրորդ աշխարհամարտի ժամանակ կախուած էր լինելու կապոյտ մետաքսեայ պաստառով պատուած միջանցքում՝ որպէս ցորենի պահեստում պատսպարուած մեքենաների վկայ ու գաղտնի մուտք դէպի վերջիններս):

Ընտանիքին իր հանդիսաւոր այցելութեան համար Երուանդը հետեւել էր արեւելեան մշակուած բարեկրթութեանը. շալյուլթիւն անելն անհրաժեշտ էր, իսկ չափն անցնելը՝ մահացու վիրաւորանք: Ուստի լոնդոնեան մի յայտնի վաճառատանը պատուիրեց մեծ թուով ոսկեայ եւ արծաթեայ փոքրիկ առարկաներ՝ տղամարդկանց ու պատանիների համար՝ սիգարկտրիչներ, կրակայրիչներ, ծխախոտատուփեր, բեղկտրիչներ՝ կանաչ ու ոսկեայ փոքրիկ երկրաչափական արծնապակիներով, կանանց համար՝ դիմափոշու արծնապա-

կեայ ու ոսկեայ տուփեր, կռունկի կամ արագիլի տեսքով փոքրիկ մկրատներ, երեկոյեան պայուսակներ ու արծաթաթելով հիւսկէն պայուսակներ՝ ամուր քարէ ճարմանդներով (եղէգնաքար, սաթ, ոսկեզմրուխտ, մոխրաքար, փիրուզ)։ աղջնակների համար էլ՝ ոսկեայ զարդասեղներ ու փոքրիկ մատանիներ՝ Remember կամ Souvenir կապոյտ արծնապակեայ մակագրութեամբ:

Յուշանուէրները պատուիրել էր աւելի շատ, քան ընտանիքի անդամներն էին, որոնց ցուցակը Սմբատին գրել էր տուել. ով գիտէ, քանի հոգի կլինէին հօր կամ ընտանիքի բարեկամները, որ ճանաչել էին իրեն այն հեռաւոր, լուսաւոր տարիներին: Երուանդը սկսում էր մտածել մանկութեան մասին, եւ սա նրան թուլացնում էր ու շփոթեցնում: Բայց միաժամանակ, յիշողութիւնների ու խնդութիւնների ի՛նչ ծաղկեթոյլ, ի՛նչ վաղեմի հանդարտութիւն էր ետ գալիս ու լցնում այն ամեհի դատարկութիւնը, որ միայն այժմ էր յայտնաբերում:

1915 թ. Երուանդը դարձաւ յիսուն տարեկան: Բաւարարուած էր ու... միայնակ: Մի այցելութիւնից միւսի, մի վիրահատութիւնից միւսի միջեւ անորոշ, պատահական, յեղյեղուկ ու տարտամ յուշեր էին խոնուում նրա մտքում: «Արդէն Իտալիայի քաղաքացի եմ, Օսմանեան կայսրութիւնում այլեւս ոչ ոք ինձ չի կարող դիպչել, — մտածում էր նա եւ շարունակում, — ինչու՞ մի տուն չգնեմ Ագարակի մօտ՝ ջրվէժների հարեւանութեամբ»:

Այդ պահերին նրան համակում էր մի անսահման խաղաղութիւն, եւ ամէն ինչ նրան հնարաւոր էր թւում, կարծում էր, որ կինը կհամաձայնէր վերադառնալ այնտեղ իր հետ, երբ ծերանան, որ որդիները կսովորէին իր հնագոյն լեզուն, որ գոյութիւն կունենար Հայ ժողովուրդը... «Միգուցէ, — մտորում էր Երուանդը, — հէնց պատերազմը կլինի պատեհ առիթը: Հաւանաբար կյաղթեն գերմանացիները, իսկ Հայերը կորովի մարտնչում են թէ՛ ճակատում եւ թէ՛ խորհրդարա-

նու՛մ սատարելով կառավարութեանը: Մերոնք Երիտթուրքե-
րի հետ յեղափոխութիւն են արել, իսկ էնվէրն անձամբ շնոր-
հակալութիւն է յայտնել պատրիարքին՝ հայերի անկեղծու-
թեան համար... եւ, բացի դրանից Թալէաթը Ձօհրապի հետ
թաւլի է խաղում...»

Իր բարեկամ բժիշկ Արամ Քարտաշեանը, որ նաեւ հե-
ռաւոր զարմիկ էր մօր՝ Իսկուհու կողմից, մայրաքաղաքից
իրեն ուղարկել էր 1915 թ. մի տարեցոյց լաւատեսական մի
նամակի հետ, որտեղ նկարագրում էր այն խանդավառու-
թիւնը, որով հայերը վերագտնում էին իրենք իրենց, այն
յարգանքն ու բարեկամութիւնը, որ իթթիհատականների
շատ ղեկավարներ տածում էին նրանց նկատմամբ, այն մտա-
ւոր եռանդը, որով բանաստեղծները, նկարիչները, գրողները
վերագտնում էին հին մշակոյթը, հետազօտում հայրերի փա-
ռահեղ լեզուն, սովորում, հրատարակում, հանդիպումներ
ունենում: «Կարմիր Սուլթանի հին ժամանակներն անցել
են, – գրում էր Արամը, – վերջապէս, մենք եւս ապագայ կու-
նենանք: Երբ պատերազմն ավարտուի, նուաճած կլինենք
լիիրաւ քաղաքացիներ լինելու իրաւունք՝ ինքավար եւ հա-
ւատարիմ լինելով միեւնոյն ժամանակ:

Երուանդի անվստահութիւնը որոշ չափով մեղմանում էր:
Թերթում էր տարեցոյցը, ժպտում՝ երիտասարդ, կենսախինդ
լրագրողի նկարագրած առօրեայ կեանքի տեսարաններին ի
տես. բայց նրան յատկապէս դուր եկաւ (ընդհանրապէս շատ
զբաղուած էր՝ պարզ ընթերցանութիւնից այն կողմ անցնելու
համար) մեծ յաջողութիւն վայելող բանաստեղծ Դանիէլ Վա-
րուժանի՝ երեխաներին ձօնած «Անդաստան» կարճ բանա-
ստեղծութիւնը, որ կարծես օրօրոցային լինէր: Այն խաղա-
ղութեան ու ներդաշնակութեան մի երգ էր, որ առեղծուածօ-
րէն գրաւեց նրա խռովուած սիրտը. կտրեց այն լրագրից,
ծալեց, դրեց դրամապանակի գրպանիկի մէջ՝ որպէս մաղ-
թանք, որպէս խոստում:

Արեւելեան կողմն աշխարհի
նաղաղութիւն՝ թող ըլլայ...
Ո՛չ արիւններ, քըրտիք հոսին
Լայն երակին մէջ ակօսին.
Ու երբ հընչէ կոչնակն ամէն գիւղակի՝
Օրհներգութիւն՝ թող ըլլայ⁵:

Աղջնակը հէնց դրամապանակից էլ կգտնէր այդ թերթի
կտորը պապի մահից յետոյ՝ 1949 թ. մայիսին:

Այնպէս եղաւ, որ երկու եղբայրների միջեւ սերտ նամա-
կագրութիւն սկսուեց 1914 թուականի հոկտեմբերի ու 1915
թուականի մարտի միջեւ. այնպէս եղաւ, որ երկուսն էլ, կար-
ծես ընկղմուած փոխադարձ ճանաչման ցաւագին ընթացքի
մէջ, աւելի շատ տեղի տուեցին սրտի յուշերին՝ չանսալով
բանականութեան ու ժամանակների թելադրանքին: Կեանքը
միշտ ժպտացել էր Սմբատի ի բնէ լաւատեսութեանը, եւ այդ
ամիսներին, իրօք, նրան ամէն ինչ ուրախութիւն էր պատ-
ճառում: Նրա փայլուն, կլոր երեսը բաւականութիւն էր ճա-
ռագում: Դեղատանն այժմ հերթական կատակները վերաբե-
րում էին նաեւ Երուանդին եւ երկու եղբայրների կանանց՝
Ջերմ, հեղինակաւոր Շուշանիկի ու միշտ մանուշակագոյն
հանդերձով փոքրիկ իտալուհի կոմսուհու հանդիպման հա-
րաւոր վարկածներին:

Նարդու զարբերի ռիթմիկ շխշխկոցի հետ մէկտեղ
թռչում էին գրազնեքը: Արմէնակ Մարտիրոսեանը, որ միշտ
եղբօր պէս էր եղել, արմունկով հրում էր Սմբատին.

– Երբ երկու տիկինները հանդիպեն, ի՞նչ կասեն մի-
մեանց: Իսկ կոմսուհին կուտի՞ մեր կերակուրները:

⁵ Դանիէլ Վարուժան, Հացին երգը (Il canto del pane), լոյս է տեսել
1992 թ., Միւսնում, Գուերիինի է Աստեատի հրատ. կողմից. Անտոնիա
Արսլանի եւ Կիարա Հայկանուշ Մթիկեանի իտալերէն թարգմանու-
թեամբ:

– Կթքի, կթքի, դուրս կհանի ամբողջը,– ինքնավստահու-
թեամբ միջամտում էր բժիշկ. մանկաբարձ Գրիգորը՝ ծխա-
խոտ փաթածվելով: – Ստիպուած կլինես դիմել իմ ծառայու-
թիւններին, որոնք ձրի չեն լինի: Մեր ուտելիքը նրան կվնա-
սի, գլխացաւից կտառապի, մեզ վերից կնայի, կշոգի, եւ,
յետոյ, հո չե՞ս կարող նրան քնեցնել տանիքում (բոլորը
գիտէին, որ Սմբատն ու Շուշանիկը, ինչպէս եւ միւսները,
ամառային գիշերներին հէնց այդպէս էլ անում էին. բայց
անամօթ ու խաղաղ գոյգը չէր սահմանափակում միայն
քնելով...):

Տանիքի նենգաւոր մտքից Սմբատը սրտնեղուեց: Բայց
անմիջապէս գտաւ իրեն.

– Ագարակում արդէն նախագծել եմ ջրվէժների հովտի
վրայ բացուող երկար պատշգամբը, իսկ մէջտեղում կլինի
գունաւոր ապակիներով ու երկաթեայ կառուցուածքով անգ-
լիական ոճի փակ պատշգամբ: Եւ յետոյ, Ֆրանսիայում էլ
պատուիրել եմ նորագոյն հովհարներ:

– Բայց նա, միեւնոյնն է, կշոգի, գրագ գա՞նք,– ծիծաղեց
Գրիգորը՝ ձեռքերը շփելով:

Ու միանգամից սկսուեց գրազը՝ «ինն ամիս» ժամկետով:

– Սեպտեմբերի վերջին, երբ «նրանք» մեկնած կլինեն,
բոլորին կվճարես, այն էլ՝ շատ դառը:

Սմբատն այնքան երջանիկ էր, որ նոյնիսկ չվիրաւորուեց:
«Նրանք» իր սեփական պաշտելի սրբապատկերն էին, իր կա-
պը տասնիններորդ դարի ու Առաջինթացի հետ: «Ձեմ տես-
նի Փարիզը, բայց կարեւոր եղբայր ունեմ»,– մտածում էր
նա եւ սկսում որպէս յետին միտք երանութեամբ խորհել, որ
յաջորդ տարին Երուսաղէմ կփոխադարձի հրաւէրը, ու ինքը
համարձակութիւն կունենայ գնալու նրա մօտ: Աւագ որդին՝
Սուրէնը արդէն իտալիայում կլինէր, քանի որ 1915 թուա-
կանի սեպտեմբեր ամսից գնալու էր Վենետիկի Մուրատ-Ռա-
փայէլեան հայկական վարժարան՝ ուսանելու հօրեղբոր ուշա-
դիր աչքի ներքոյ:

Սմբատն ընտրել էր Վենետիկը, որովհետեւ այն հէնց եղ-
բոր ապրած քաղաքին մօտ էր. նա մի քիչ անհանգստանում
էր այս թախծոտ տղայի համար, որը նրան ամէնուր հետե-
ւում էր. ծերերին պատմել էր տալիս 1894–96 թթ. ջարդերը,
լրագրեր կարդում, բայց կռուասէր չէր: Սմբատն աւելի լաւ
կըմբռնէր, թէեւ աւելի շատ կանհանգստանար, եթէ Սուրէնը
քաղաքի կամ շրջանի միւս երիտասարդների պէս յարէր
որեւէ կուսակցութեան, մասնակցէր անվերջանալի քաղաքա-
կան քննարկումներին, որոնք ուշ երեկոյին երկարում էին
սուրճի հերթական գաւաթի, քաղցրաւենիքի, ոգելից խմիչք-
ների շուրջ: Սակայն որդին տանն էր մնում՝ ընթերցելու.
աւելի ճիշտ, որոշ ժամանակ է, ինչ սկսել էր հօրը հետեւել
ամէնուր, կարծես երբեք չէր յոգնում նրան տեսնելուց: «Թէ՞
ինձ դատելուց»,– մտածում էր Սմբատը փոքր-ինչ շփոթու-
ած այս ընդգծուած ուշադրութիւնից, որը խափանում էր իր
հերթական կատակները. մի քիչ էլ ամաչում էր ընկերների
մօտ նրա մանկամտութիւնից:

– Ես չեմ մեկնիւ,– փետրուարեան մի քամոտ օր ասաց
հօրը Սուրէնը, երբ ձիւ վրայ նստած՝ ընկերակցում էր նրան
դէպի Ագարակ: Աշխատանքն արդէն սկսուել էր, եւ հօր
վստահելի անձը՝ փորձառու Օհաննէսը, վերահսկում էր եր-
կար, պերճաշուք եւ ապակեպատ պատշգամբների կառու-
ցումը: Անգլիայից բերուել էին գունաւոր ապակիները՝
երկու ռոմանտիկ կերպարանքերի՝ Ասպետի ու նրա սրտի
Գեղուհու ամբողջական պատկերներով, ինչպէս նաեւ փեղ-
կերի համար անյայտ ծաղիկների՝ ծաղկաւելի եւ անգլիական
պատատուկի վայելուչ գծանկարները:

– Մեր կողմերում երբեք նման բան չեմ տեսել,– կրկնում
էր Օհաննէսը հպարտօրէն, իսկ Սմբատը մտածում էր, որ եղ-
բոր նրբակազմ, մանուշակագոյն հանդերձով փոքրիկ կինը
չէր կարող դժգոհ մնալ այս ամէնից:

– Ես չեմ կարողանայ մեկնել,– կրկնում էր Սուրէնը, կար-
ծես փորձելով բացատրել միտքը, բայց ոչինչ չէր ստացուում:

– Չե՞ս ցանկանում մեկնել:

Սմբատը փոքր-ինչ անհանգստացած էր ու յուզուած՝ իր անմեղ հիացմունքի մէջ տեսնելով այն հրաշքները, որ իր աշխատանքն ու դրամը կարողացել էին իրականացնել: Այդ պահին մտածում էր տան բացման հանդէսի մասին՝ ողջ ընտանիքով, ընկերներով, աշխատողներով, հեռաւոր ազգականներով, ներառեալ քիչ համակրելիները: Ինչու՞ ոչ, կհրաւիրէր նաեւ Խալիլ էֆէնդիին⁶, քայմաքամին, ոստիկանութեան պետին, որն իր յաճախորդն էր ու լաւ բարեկամը: Երբեմն դեղատունն էր գալիս՝ նարդի խաղալու, եւ թողնում էին, որ միշտ նա յաղթէր:

Բայց, ի վերջոյ, կտրուելով իր երազներից ու ծրագրերից՝ Սմբատը սիրալիր թեւանցուկ արեց Սուրէնին ու նստեց որդու հետ պարտէզի մի անկիւնում՝ այնտեղ, որտեղ արդէն պատրաստ էր թենիսի դաշտի հիմքը: Սպիտակ ներկուած կոփածոյ երկաթից երկու բազկաթոռներ կային այնտեղ, որոնք լաւագոյն օրեր էին տեսել («Անհրաժեշտ է պատուիրել վիեննական ծղօտէ բազմոց ու բազկաթոռներ», – արագ մտածեց Սմբատը):

– Ինչու՞ ասացիր, որ չես մեկնելու, – հարցրեց նա՝ վերջապէս հարցադրումն ուղիղ ձեւակերպելով:

Սուրէնը աչքերը խոնարհեց եւ նկատելիօրէն գունատուեց, ապա դանդաղ բարձրացրեց գլուխը՝ ամօթի ու արցունքի այնպիսի այրող ցաւ աչքերում, որ հայրը հեռացրեց հայեացքը՝ յանկարծակի զգալով մի ներքին դատարկութիւն, մի ներքին սառը վիհ, որը գնալով ընդարձակում էր:

Չկար տագնապ կամ մոլեգնութիւն. միայն ցաւ ու դատարկութիւն: Եւ Սմբատը տառապում էր որդու համար եւ տառապում էր անգիտութիւնից, ինչպէս թանձր քօղի դիմաց, որը թաքցնում էր երբեւէ չտեսած մղձաւանջը Գազանների գագանը, Յայտնութիւնը: Այս պահին էր, որ ներքին

⁶ էֆէնդի – թրք. Տիար (ծնթ. թարգմ.)

տեսիլքը կարող էր թանձրանալ, կարող էին աչքին երեւալ ճշմարիտ ապագայի պատկերներ: Բայց նրա պարզ սիրտը ի գօրու չէր ըմբռնել չարագուշակ նախազգացումներ, հրաժարում էր կարգալ այն, ինչ միտքն արդէն տեսնում էր, այն, ինչ նրան յայտնում էր անտեղեակ որդու միջոցով:

Սմբատը ձեռքն աչքերին տարաւ, այն ձեռքը, որ մի քիչ դողում էր, եւ իսկոյն ամէն ինչ մոռացաւ: Նայեց որդուն կրկին ուրախ ու յոյսով լի աչքերով ու ամէն ինչ մոռացաւ: Ոտքի կանգնելով՝ բռնեց որդու ձեռքն ու ասաց.

– Մի՛ վախեցիր, կտեսնես, թէ՛ որքան գեղեցիկ է Վենետիկը, վարժարանը, յետոյ էլ կիրակի օրերին հօրեղբայրը քեզ միշտ ճաշի կհրաւիրի...

Սուրէնն իր հերթին նայեց հօրը սիրով լի հեզ աչքերով ու լռեց:

Գրում էր Երուանդը խանդավառ, պատմում աւտոմեքենայի, պատրաստութիւնների, որդիների, նուէրների մասին: Լռում էր կնոջ՝ Թերեզայի դժգոհութեան մասին, որի գլխացաւերը գնալով սաստկանում էին:

Մեկնման ժամկէտը նախանշուած էր մայիսի վերջին. դպրոցից մի քանի օր բացակայութիւնը չէր վնասի ո՛չ Շուից գաւառի բենեդիկտեան վարդապետներին պատկանող Այնզիդելնի շուկայարական վարժարանի փայլուն եւ ուսումնատենչ սան տասնվեցամեայ էդուարդին, ո՛չ էլ տասնմէկամեայ կենսուրախ ու գորովալից Քայլիլին, որը դպրոցում մի տարով առաջ էր իր հասակակիցներից եւ լաւ էր սովորում. բայց մոլթ օրերին նրան պատում էր անորոշ ու անդարմանելի մի թախիծ: Այդժամ նա մեկուսանում էր ու լալիս՝ ամաչելով իր թուլութիւնից: Մեկնելու էին երկու վարորդով ու մի լրացուցիչ մեքենայով, որը բարձուած կլինէր նուէրներիով եւ զանազան պահեստամասերով:

«Կանցնենք Տրիեստը, – կարդում էր Սմբատը ընկերներին, – եւ կշարունակենք դէպի Աթէնք: Ապա՝ Սալոնիկ,

Քաւալա, Ալեքսանդրապոլիս, Կոստանդնուպոլիս... Գուցէ
գա՞ս մեզ դիմաւորելու Շուշանիկի հետ»:

Դող անցաւ ներկաների միջով այն մտքից, որ երկու եղ-
բայրների կանանց միջեւ հանդիպումը տեղի էր ունենալու
դրսում: Ձէ՞ որ Շուշանիկը թագուհի էր իր տանը, բայց եր-
բեք չէր տեղաշարժուում, եւ այս առիթով երբեք չէր ուզենայ
կորցնել իր առաւելութիւնը:

– Ես կգամ քեզ հետ նրանց դիմաւորելու, – առաջարկեց
Վերոնը, որն այդ պահին էր ներս մտել: – Կարող եմ գնաց-
քով գնալ:

Այդ միտքն անմիջապէս դուր եկաւ Սմբատին, որը խան-
դավառուում էր նոր ժամանակներին համահունչ ցանկացած
առաջարկից. նոր երկաթգծով մեկնում ես ու ժամանում
ստոյգ ժամին՝ ըստ հաստատուած չուացուցակի, ոչ թէ
Երուանդի ժամանակուայ պէս, երբ գնացքները շարժուում
էին միայն այն դէպքում, երբ լեցուն էին (տան աւանդոյթը
պատմում էր, որ հայրը նրան յանձնել էր իր կողմից վստա-
հուած աւագակների, որոնց տուել էր մէջտեղից կտրուած
թղթադրամներ: Միւս կէսը տեղ հասաւ այն ժամանակ, երբ
Երուանդը Վենետիկից գրեց առաջին նամակը): Եւ բացի
դրանից, ապահով փոխադրամիջոց է, քեզ գգում ես ինչպէս
տանը, երկաթուղայիններից շատերն էլ հայեր են: Վերոնն
արդէն սկսել էր մտածել գլխարկի գոյնի մասին, որը կունե-
նար նաեւ իրեն ներդաշնակ քոյ:

Այդ երեկոյ Սմբատի Հայաստան դեղատանն էր գտնուում
նաեւ ոստիկանութեան պետը՝ հերթական ընկերական խաղի
համար: Յանկարծ աղմուկի միջից լսուեց նրա բարակ ձայնը,
ու շուրջընդհար լուութիւն տիրեց.

– Միգուցէ յարմար պահ չէ ճանապարհ ընկնելու դէպի
Հիւսիս, – հանդարտ ասաց նա:

Եւ սա ընկալուեց որպէս հեռաւոր ամպրոպ, որպէս տհաճ
մտմտուք, ո՛վ գիտէ: Իսկ յետոյ տանը այն երկար կքննար-
կուէր կանանց հետ մէկտեղ անկողնու գաղտնի, տաքուկ

ժողովում, քանի որ այն ամէնը, ինչ անկողնու ծածկոցից
դուրս էր, ասես յայտնի էր բոլորին եւ օտար: Եւ, ինչպէս
միշտ, ոչինչ չէին ձեռնարկի. չէին լսի սրտի հեռաւոր ձայնը,
այլ միայն կխաչակնքէին՝ չարը չէզոքացնելու համար:

Մինչ այդ պատերազմն այնքան էլ յաջող չէր ընթանում
արեւելեան ճակատում: Շուշանիկը ու տարօրինակ կոչեր էին
լսում այդ ցրտաշունչ ձմռան վերջին. կարծես գարունն
ուշանում էր: Բայց Մայր եկեղեցու գմբէթի ոսկին փայլում
էր թարմ շուքով. Արմէն ու Հրայր Սարգսեանները՝ երկու-
րեակ ատաղձագործները, երգում էին տուել նախորդ տա-
րին, որ եթէ նրանց հայրը՝ Յարութիւնը, գրէր Ամերիկայից,
որ որդիների համար աշխատանք էր գտել (այն էլ՝ երկուսի
համար նոյնը, քանի որ երկուորեակներն ուզում էին միշտ
միասին լինել եւ միտումնաւոր ամուսնացել էին երկու քոյ-
րերի հետ. սակայն աղջիկներից մէկը կարգադրուում էր, միւ-
սը՝ ենթարկուում), ապա թարմ, փայլուն ոսկով կօծէին գմբէ-
թի խունացած հատուածները:

Այդպէս էլ եղաւ: Այժմ մարդիկ նրանց էին հետեւում:
Եղբայրները թառել էին իրենց զամբիւղներով գմբէթի
ընդարձակ, ոսկեգոյն մակերեսի այս ու այն կողմը, ու հարց-
նում էին իրենք իրենց, թէ կկարողանայի՞ն արդեօք ժամա-
նակին աւարտել՝ նկատի առնելով, որ հայրը նրանց ուղար-
կել էր նաեւ Նիւ Եորքի տոմսը, իսկ մեկնման օրը սահ-
մանուած էր յունիսի մէկը: Երեք ամիսը քիչ էր, բայց եր-
դումն էլ երգում էր. ոգեւորուեցին գրագները, յատկապէս,
որ երկուորեակները պէտք է առանց օգնութեան, միայնակ
աւարտէին աշխատանքը: Սմբատը, որ մի համեստ թիւ էր
գրագ եկել տղաների օգտին, մտածում էր գրագը փոքր-ինչ
խախտել ու նրանց օգնել: Ուրիշ ելք չկար, երգումը երգում
էր: Երկուորեակները, երբ իջնում էին կէսօրին՝ թեթեւ քուն
առնելու, ընդունում էին միայն ուտելիքով լեցուն զամբիւղը,
որ Շուշանիկն էր բերած լինում եկեղեցականի տան խաղաղ

շուաքին: Վերջինիս անունը Կարո էր, ինչպէս Սմբատի փոքր տղայինը, եւ մի պարզ մարդ էր Աստծոյ:

Իրօք, Կարոն ամէն օր խօսում էր Աստծոյ հետ, եւ զարմանում, որ միևնոր չէին խօսում: Երկնքի կանաչ դաշտերն իրեն նոյնքան հարագատ էին, որքան երկրինը: Իր տեւական մանկութիւնը միեւնոյն հանդարտութեամբ հոսում էր այնտեղ, ինչպէս այստեղ, եւ գունաւոր հրեշտակները միշտ ներկայ էին: Բոլորը գիտէին, որ Կարոն գոյները տեսնում էր հրեշտակների միջոցով:

– Մի կանաչ հրեշտակ ինձ ասաց, որ շուտով բոլորս կխաղանք իր հետ, եւ որ նոր գուարճանքներ են յօրինում յատուկ մեզ համար,– լրջօրէն տեղեկացրեց նա իր ունկնդիրներին ասարիւեան մի գով կէսօր:

Նրա ունկնդիրն այն մշտական եռեակն էր՝ շինութիւնից իջած եղբայրներն ու փոքրիկ Կարոն, որ զամբիւղն էր բերել: Նա երբեք ոչնչի վրայ չէր կասկածում ու սիրում էր բոլոր կենդանի արարածներին:

– Ինչպիսի՞ն կլինեն երկնքի բոյրերը,– հարցրեց Արմէնը: Հրայրն անմիջապէս պատասխանեց (երկուորեակները կատարեալ անկախ էին իրենց անսպառ զրոյցների մէջ)։

– Ինչպէս այստեղիները, բայց շատ աւելի գօրեղ: Եւ այլեւս ցանկութիւն չենք ունենայ հեռանալու:

– Իսկ դուք ինչու՞ էք մեկնում,– հարցրեց փոքրիկ Կարոն,– ոչ մի տեղ այսպիսի երկինք չէք գտնի:

Բայց մեծ Կարոն նրան ուղղեց.

– Բոլոր երկնքներն էլ հրեշտակներով են բնակեցուած, նաեւ աշխարհի միւս կէսում: Միայն թէ, երեւի, ուրիշ գոյն ունեն:

Ամերիկեան հրեշտակների գոյների քննարկումը դարձաւ բուռն ու աշխոյժ: Իւրաքանչիւրը մանրամասներ էր աւելացնում՝ հաստատելու իր կարծիքը, եւ ժամանակն էլ ուրախ էր անցնում: Ապա երկուորեակները անցնում էին գմբէթը ներկելու գործին, եկեղեցականն էլ Կարոյի հետ գնում էր զբօս-

նելու: Ունէին իրենց թաքուն նպատակակէտը՝ ջրվէժի վրայ բացուող ամառանոցը, որ երկիր դարձած մի գաղթական որոշ ժամանակ առաջ կառուցել էր տուել՝ ամբողջը փորագրուած փայտով, շուեյցարական շալէի ոճով:

Մեծ սնկի տեսքով քարէ մի սեղան ու աւելի փոքր սնկի տեսքով՝ երկու նստատեղ՝ կրկին քարից, այս ամէնը հիացմունք էր պատճառում երկուսին էլ, որոնք նստում էին հանդարտօրէն, ձեռքերը ծնկներին ու լուում: Մեծ Կարոն ու փոքր Կարոն կեանքը կտային մէկը միւսի համար: Վայելելով կիսում էին այս կանգ առած ժամանակը, որն ամբողջովին իրենցն էր հրեշտակների բազմազբաղ հոյլերի գունաւոր ու յստակ տեսիլքների հետ մէկտեղ, որոնց մասին գրեթէ ոչ ոքի չէին կարող հաղորդել:

Փոքրիկ Կարոն կլոր աչքեր ունէր ու մեծ գլուխ՝ անհնազանդ մագերով: Գուրգուրում էր բոլորին՝ առանց խտրականութեան, իր այդքան փոքր մարմնից բխող զմայլելի ձայնով, ոչ շատ ճկուն լեզուով, որից խաղաղութիւն էր բուրում ու տրտմութիւնը ցրում: Բոլոր մայրերը նրան էին վստահում իրենց երեխաներին, բայց նրա գաղտնի տառապանքը հէնց իր մայրն էր՝ Շուշանիկը, որ այլեւս չէր վստահում իրեն այն ժամանակուանից, երբ շուկայում կորցրել էր փոքրիկ Անրիեթին, որին, խոր քնի մէջ, խորհրդաւոր կերպով գտել էին Սամուէլսոնի խանութներից մէկում, այն հրեայ ռակերչի, որը երեխայ չունէր:

Ոչ ոք չգիտէր, թէ ինչպէս էր յայտնուել այնտեղ Անրիեթը, որ երեք տարեկան էր եւ քայլում էր ճօճուելով, արցունքն աչքին միշտ պատրաստ եւ չափազանց մեծ քթով: Խնամութիւն փակ էր, երեխան էլ խաղաղ քնած էր եղել ներսում: Էլիա Սամուէլսոնը, որ կիրթ ու յղկուած մի անձնաւորութիւն էր, բռնել էր նրա ձեռքից ու լալով տարել Սմբատի տուն:

– Յայտնուել էր իմ փակ խանութի մէջ: Աստծոյ հրեշտակն էր բերել: Եթէ նրան ինձ թողնէք, պատուով կմեծացնեմ,– ամօթխած շնջաց նա. իսկ երեխան, ձեռքերը նրան

պարզած, խաղաղ ժպտում էր: Ապա ցածրաձայն շարունակեց.
— Դուք եօթը զաւակ ունէք այս դժուարին ժամանակնե-
րում... նրան քրիստոնեայ կմեծացնեմ:

Շուշանիկը, տազնապած, չպատասխանեց անգամ:
Սմբատն իր պարզ հոգում մէկ այլ ուժգին ահագանգ զգաց
եւ յանկարծ զարմացաւ իր՝ «Պէտք է անէի» մտքի վրայ, չգի-
տես ինչու: Բայց շուտով մոռացաւ:

Աւագ Շաբաթն էր: Փայլուն փշալարով ու թանձրացած
արիւնով համբերատար թակարդը լարուում էր:

Ջելալ Ջեղիմը՝ այն թուրք սպան, որ սիրահետում էր հօ-
րաքոյր Ազնիւին, երկու շաբաթ էր, ինչ անհետացել էր: Ազ-
նիւը զգում էր, որ սիրտը փոքր-ինչ ճմլուում էր, քանի որ
սովորել էր նրա անխոնջ ու լուակեաց ներկայութեանը, այն
թաւշեայ, կրակոտ աչքերին, որ նրան շարունակ հետեւում
էին: Բայց չէր կարող շուրջը հարցուփորձ անել, քրոջ՝
Վերոնի հետ էլ չէր կարող քննարկել, այնքան էր տարուած
Կոստանդնուպոլիս կատարելիք ուղեւորութեան պատրաս-
տութիւններով: Միւս կողմից՝ Ազնիւն իրականում չէր
զգում նրա պակասը, այլ փոքր-ինչ խոցուած էր նրա ինք-
նասիրութիւնը: Սպան շատ լաւ թեկնածու էր ցանկացած
աղջկայ համար, մանաւանդ հայուհու:

Այսպիսի աղօտ մտքէր էին պաշարել Ազնիւին, որը, քթի
տակ երգելով, բացում էր փախլաւայի խմորը ծեր Սրբուհու
հետ: Նա վարպետ էր այս գործում, քոյրն այս հարցում
համբերութիւն չունէր. բայց ոչ ոք չէր կարողանում վերջի-
նիս նման բէօրէքը լցօնել:

Փոքրիկ քաղաքի հայկական թաղամասում տնից տուն էր
փոխանցւում գալիք Ջատկի՝ տարուայ ամենամեծ տօնի
ուրախութիւնը: Իւրաքանչիւր սեղանի վրայ յայտնւում էին
խոտերով ներկուած խաշած ձուեր, որոնք համբերութեամբ
նախազարդւում էին երեկոյեան, երեսաներից թաքուն:
Տուփերի մէջ արդէն պատրաստ էր լինում փխրուն շաքար-
լոքման՝ նշի ու կարագի թանձր համով:

Աղջիկները տնից տուն էին գնում նոր գոգնոցներով՝
տանելու կամ բերելու մի քիչ շաքարաւազ կամ աղ, ալիւր,
Ջմիւռնիայի խաղող կամ նշի ջուր, տնից տուն էին վազ-
վզում երեսները՝ խմբով յայտնուելով մէկ այստեղ, մէկ
այնտեղ, աննկարագրելի խանդավառութեան մէջ, կտցելու
խմորի կտորտուքը, փոքրիկ մնացորդները, անյաջող
թխուած պաքսիմատները:

Մեծերը Ջատկի ծոմի մէջ էին, որ կանայք պահում էին
խստութեամբ: Բայց որոշ համարձակներ, ինչպէս բժիշկ
Գրիգորը Աւագ Ուրբաթ օրը մտով թացան էին պատուիրում
կամ էլ մի զոյգ տապակած աղաւնի. մի անմեղ մեղք, որ
Աստուած գրեթէ չէր նկատում, իսկ Գրիգորն էլ գիտակցե-
լով մեղք էր գործում՝ ցուցադրելու իր արեւմտամէտ առաւե-
լութիւնն ու Բեռլինի համալսարանի արդէն ոչ թարմ վկայա-
կանը:

Համբարձումի մեծ տան ետեւում (որն այժմ բաժանուած
էր երկու մասի՝ մէկը Սմբատի ընտանիքի, իսկ միւսը այրու՝
Նուարդի համար, որ բնակւում էր Ազնիւի ու Վերոնի հետ,
իսկ պարտէզն ընդհանուր էր, երկու խոհանոցների միջեւ
հաղորդակից դուռն էլ՝ միշտ բաց), այգի-բանջարանոցն էլ լի
էր երեկոյեան փսփսուքներով ու տօնին նախորդող յուզա-
ռատ հանգստութեամբ:

Բանջարանոցի ծայրը հասնում էր անմշակ հողաչերտի
պարսպապատ պատնէշին: Այն պարզ երեւում էր բոլոր
սենեակներից. տպաւորիչ էր ու շատ աւելի հին, քան տունը,
եւ շրջափակում ու խստօրէն պահպանում էր ամբողջ տա-
րածքը: Խնձորենիների, դեղձենիների, տանձենիների պտղա-
տու ծառաշարքերը հերթափոխւում էին մեծ չինարներով ու
երեսուն տարի առաջ Անգլիայից ներկրուած մագլցող
վարդենիներով, որոնք զարդարում էին դէպի կլոր պատշ-
գամբը տանող վայելուչ փրօմընադը⁷, բուսական բարձ-

⁷ Promenade – ֆր. ճամուկի (ծնթ. թարգմ.):

րարուեստի նմոյշ, պարտիզպան Ներսէսի գլուխգործոցը: Ոչ մի ճառագայթ ուղղակիօրէն չէր թափանցում բուրումնաւէտ կամարից ներս, որից կախ էին ընկած տարին մէկ անգամ, հէնց ապրիլի վերջին ծաղկող խոշոր, արնակարմիր վարդերը:

Եւ միայն հովանու բարձր ծառերն էին թաքցնում պատնէշը, իսկ այնտեղ՝ կախուած բուսականութեամբ պարուրուած ու կիսածածկ ելքի մօտ, մի փոքրիկ դուռ կար, որն անմիջականօրէն բացուում էր մայր տաճարը եզերող Աբ Առաքեալներ փողոցի նեղ փակուղու վրայ:

Գարնանային երեկոյի մեղմ, հանգստաւէտ մելամաղձութեան մէջ, երբ երեխաները ծիծեռնակների պէս ճռուողում էին, ու նրանց գոռում-գոչիւնը բռնել էր շրջապատը, Ազնիւը նստեց պատշգամբի փայտեայ նստարանին՝ Ֆրանսական մի վէպ ձեռքին: Փոքր-ինչ յանդուգն պատմութիւն էր, բոլոր աղջիկներն այն ձեռքից ձեռք էին խլում: Կարդում էին անմեղ յուզումով ու տառապում փարիզեան սիրոյ դաժան հէքիաթից:

Այնուամենայնիւ, Ազնիւն այդ երեկոյ ցրուած էր: Մագերի մէջ ծաղիկ չէր դրել, իսկ խոնաւ ձեռքերից էլ գալիս էր դարչնի ու ընկոյզի հոտ: Եւ հէնց այդ պահին պատի այն կողմից յստակ լսուեց մի ձայն, որը յուզուած, արագ-արագ ասում էր.

– Օրիորդ Ազնիւ, գիտեմ, որ այդտեղ էք: Ձեզ տեսել եմ: Խնդրում եմ, խնդրում եմ՝ ինձ մի պահ ներս թողէք: Ինձ լսէք:

Ողջ օրուայ անհանգստութիւնը միանգամից խտացաւ: Հասկացաւ, որ թուրք սպան էր եւ, ընդդէմ բոլոր օրէնքների, վագեց դէպի դուռը, մի կողմ տարաւ կախուած վարդենին ու բացեց այն (բանալին միշտ անցքի մէջ էր նրա համար, ով կուզենար արագ Պատարագի գնալ, ով ուշանում էր, ցանկացած մարդու համար, ով պէտք է փախչէր Շուշանիկի ու Նուարդի ուշադիր աչքից):

Տղան շտապ ներս մտաւ, փոքր-ինչ գողունի, ասես ուզենար թաքնուել դրսում գտնուող ինչ-որ մէկից: Ապա ամուր բռնեց աղջկայ ձեռքերն ու հանդիսաւոր ծնկի իջաւ.

– Խնդրում եմ, օրիորդ Ազնիւ, խնդրում եմ, մի յուզուէք, մի վախեցէք: Ինձ լսէք:

Ազնիւը վախեցած չէր: Յաջորդ օրը Ձատիկ էր, ինքն էլ գտնուում էր պարտէզի դիւթիչ մասում՝ կանաչ գմբէթի ու հոտաւէտ վարդերի ներքոյ: Կարծես երիտասարդը մտել էր իր սեփական երագի մէջ, եւ Ազնիւին բնական էր թւում, որ տղան ծնկի էր իջած: Ազնիւը նրբօրէն ազատեց ձեռքերը նրա ջղային սեղմումից ու վայելչութեամբ նստեց նստարանի վրայ: Սպասում էր ռոմանտիկ պահի: Իւրաքանչիւր ոք կեանքում գոնէ մէկ անգամ իրաւունք ունի վայելելու այդ պահը. պէտք կգայ մութ օրերին՝ յուշերը ջերմացնելու...

Բայց Ձեւալը շարունակում էր սեղմել նրա ձեռքերն ու կրկնել.

– Ինձ լսէք, մի վախեցէք:

Ազնիւը չէր վախենում, բայց սկսել էր փոքր-ինչ սրտնեղուել: Ինչու՞ չէր բացատրում: Ինչու՞ էր եկել:

– Խնդրում եմ, մայիսեան վարդ, – ի վերջոյ սկսեց տղան, – ինձ լսէք, լսէք իմ ծրագիրը: Եկէք ինձ հետ, արագ: Խոստանում եմ, որ ուրիշ հարսնացուներ չեմ ունենայ, եւ Ձեզ երբեք չեմ ստիպի հաւատափոխ լինել: Միասին եւրոպա կգնանք, ես կաշխատեմ, Փարիզում կապրենք...

Ազնիւը չէր հասկանում: Այս մարդու հազիւ անունը գիտէր, հետաքրքրասէր ընկերուհիները փորփրել, գտել էին. նրանից մի քանի զարդարուն նամակ էր ստացել, երբեք նրա հետ չէր խօսել, ուր մնաց՝ սիրոյ խոստովանութիւն անէր: Եւ ոչ էլ հիմա էր անում, կարծես չափազանց կարեւոր ինչ-որ բան նրան մղում էր մի քայլ առաջ, կարծես նրանց միջեւ արդէն ամէն ինչ որոշուած էր:

Ազնիւը լուռ էր, անակնկալի եկած: Որքան տղան տագնապում էր՝ խճի վրայ անյարմար կերպով ծնկի իջած, այն-

քան աւելի քիչ էր հասկանում աղջիկը, ոչ էլ երիտասարդի յետագայ ասածներն էին նրան պարզ:

– Չեմ ցանկանում, որ Դուք տառապէք, իմ մայրսեան վարդ, իմ արքայադստրիկ: Ես Ձեզ կփրկեմ: Կգնանք Փարիզ կամ Լոնդոն, կամ Վիեննա, ուր որ ցանկանաք: Ես կաշխատեմ...

Այս խօսքերը կրկնեցի նման մեխուկեցին Ազնիւի ուղեղում՝ նրան գցելով մոլորուած ընդարմածութեան մէջ: Երիտասարդը շարունակում էր երկար ու ձիգ խօսել, մինչեւ որ Ազնիւը յանկարծ զգաստացաւ ու զրնգուն ձայնով հարցրեց՝ ինչու[՞]. տղան շփոթուեց:

Մինչ այդ երեկոն իջել էր, երեխաներն անհետացել էին: Երկիրքը մանուշակագոյն էր ու սեւ՝ լուսաւոր եզրագծով:

– Ինչու[՞] էք այս ամէնն ինձ ասում: Մենք իրար չենք էլ ճանաչում...

– Որովհետեւ ուզում եմ Ձեզ փրկել, – ընդհատեց սպան, ապա գաղտնի նայեց չորսբոլորը, – թանկագին փոքրիկս, ինձ պէտք է հաւատաք: Ես կարող եմ եւ ես պէտք է փրկեմ Ձեզ: Եկէք ինձ հետ, անմիջապէս: Ես բանակը կլքեմ: Երկու արագավազ ձի ունեմ... – եւ աւելի խոնարհուելով՝ սեղմեց աղջկայ ձեռքերը դէմքին ու համբուրեց ծնկները:

Մի յուսահատ դող պատեց Ազնիւին, եւ նա յանկարծ վտանգ զգաց, սպառնացող սարսափ, եւ նրա երիտասարդ արիւնը եռ եկաւ ցանկալի յոյսով: Մի կոյր բնազդ նրան մղեց հեռանալ այդ վայրից, որտեղ վարդերն ասես մահ էին բուրում, իսկ պարտէզի պատն անյայտ գերեզմաններ էր թաքցնում: Ազնիւը ոտքի կանգնեց, տղան (որ ոչինչ չէր ըմբռնել)՝ նոյնպէս եւ Ազնիւին իրեն սեղմեց, որ համբուրի: Համբոյրը նոր պէտք է փթթէր, երբ աղջիկը ետ քաշուեց. ամօթ, անպատուութիւն, խենթութիւն՝ հէնց հայրական օջախում...

Ազնիւը ձեռքերը կրծքին սեղմեց, կարմրեց եւ նոյն արագութեամբ, որ տղային ներս էր թողել, բացեց պատնէշի

դռնակն ու երիտասարդին լուռ կատաղութեամբ դուրս հրեց: Մարմինը նրան թելադրեց այն, ինչը որ միտքը դեռեւս չէր ըմբռնել՝ տարբերութեան ծովը, որ գնալով աւելի կարմիր էր դառնում, որտեղ Ազնիւը կանգնած էր մի ափին, իսկ սպան՝ միւս, ծով, որ բաժանում էր երկու ժողովուրդներին:

– Խնդրում եմ, մտածէք. վաղը նորից կգամ, – կարողացաւ տագնապահար շշնջալ սպան դռան ետեւից. բայց Ազնիւը անմխիթար լալիս էր՝ շոյելով այրուող այտերը: Մինչ այդ պահը երազների աշխարհում էր, երեխայից՝ երեխայ: Այդ պահից դարձաւ կին:

Արագ տուն մտաւ, մթութեան մէջ սլացաւ աստիճաններով վեր եւ շտապեց նայել հայելուն: Թքով խոնաւացրեց յօնքերն ու թարթիչները, կարմիր թանգիֆի շղարչ քաշեց դէմքին՝ բաց թողնելով միայն աչքերը ու ինքն իրենից գոհ, հիացմունքով երկար դիտեց իր արտացոլումը:

Ծանր, թաւ յօնքերը ուղիղ միացած էին քթի մօտ: Ներքեւում աչքերն այնքա՛ն գեղեցիկ էին, անբնականօրէն փայլուն, արկածից խանդավառ: Ազնիւը մեռնում էր մէկի հետ կիսուելու ցանկութիւնից: Վերոնի[՞]ն, ո՛չ, միգուցէ Սմբատի[՞]ն: Մեծ եղբայրը հեղինակութիւն ունէր, բայց չէր գործադրում իր վրայ, քանզի թուլութիւն ունէր Ազնիւի հանդէպ: «Այդպէս, այդպէս կանեմ», – որոշեց նա: Ապա խոնջացած ու երջանիկ՝ խոր շունչ քաշեց ու մտաւ անկողին իր առաջին համբոյրից յետոյ եւ այդ փոթորկալից գիշերը քնեց խաղաղ ու հանգիստ:

Յաջորդ օրը Ջատիկ էր: Ազնիւը, որն արդէն թողութիւն էր ստացել իր երեւակայական մեղքից («Փոքր-ինչ անխոհեմ եմ վարուել», – ասում էր ինքն իրեն), անհանգիստ էր, մի փոքր մեղաւոր, յատկապէս այն պատճառով, որ սպան ասաց, որ կվերադառնար այդ երեկոյ: Բայց շուտով տարուեց հազար ու մի տօնական հաճելի պարտականութիւններով ու մոռացաւ ամէն ինչ:

Միւս կողմից՝ այլեւս Սմբատի հետ խօսելու ժամանակ

չկար. եղբայրը ձիով վաղ առաւօտեան դուրս էր եկել՝ Ագարակն աչքի անցկացնելու, որ ամէն ինչ պատրաստ լինէր Զատիկի ճաշի համար գետնայարկի սրահում, որը նկարիչ Մելքոնի կողմից վերագործարուել էր ծաղկեպսակներով, մանուկների պատկերներով ու մրգի զամբիւղներով. Մելքոնն ասում էր, որ այդ արուեստը սովորել էր Փարիզում:

Նկարների վրայ ցայտեցրած արեան հետքերը հարսանեկան ուրախ դրասանգների տեսք կընդունէին, իսկ վերելի վարդագոյն ամպերը ինչ-որ մէկը կփորձէր ջնջել ածուխի խոշոր բծերով:

Յարութեան օրուայ աւետումը գեղեցիկ ստացուեց: Իսմէնէն, ամէն տարուայ պէս, առաջինն էր եկել, բերել էր մի զամբիւղ թարմ հազար, վրան շարել էր օրհնուած ձուերը: Բերել էր նաեւ հաց՝ օրհնուած յոյն քահանայ էլիաս Իսակ Խրիստոյաննիսի կողմից: Խեղճ մարդու ծուխը այդ փոքր քաղաքում բազմամարդ չէր, եւ նա միշտ շրջում էր կեղտի բծերով ծածկուած կապոյտ գոգնոցով, ցանցառ մագերն էլ կիպ հաւաքում էր ծոծրակին՝ պոչ անելով:

Երէցկիւնը օրավարձով աշխատող դերձակուհի էր, իսկ միակ որդին մահացել էր երկու տարի առաջ թոքաբորբից՝ չնայած դեղերին ու Սմբատի անձնուէր օգնութեանը: Բայց Իսակը, նրա կին Կատերինան ու Իսմէնէն չէին մոռացել երեսխային տարած խնամքը, եւ թէ ինչպէս էր փոքրիկ Կարոն բռնել նրա ձեռքը վերջին գիշերը՝ անքուն հսկելով նրան:

– Քրիստոս յարեաւ, – ասաց յոյն Իսմէնէն:

– Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի, – պատասխանեց վառվռուն Ազնիւն ու նրան ներս թողեց:

Ապա Ազնիւր մօտեցաւ հայելուն՝ բերանի մէջ ծամակալները սեղմած, քթի տակ երգ մրմնջալով. «Ով սիրուն, սիրուն...»:

Բայց Իսմէնէն կանգ չառաւ՝ աւանդական հաճոյախօսութիւններ բաշխելու, ինչպէս «Վարդի բերան, ինչպէ՞ս քնե-

ցիր», կամ «Բարձր, որի վրայ քնում ես, կարողանայ մտածունքդ երեւան հանել»:

Իսմէնէն դրեց զամբիւղը խոհանոցում, չոր բարեւեց Նուարդին. որ նրան էր նայում դիմացի պատուհանից եւ վազեց սիրեցեալ Շուշանիկի մօտ: Գլուխը լի էր մահուան մտքերով, հայհոյանք էր լսում Յարութեան այս օրը: «Քրիստոս, ո՛վ Քրիստոս մեռած, ինչպէ՞ս յարութիւն կառնես այս տարի»: Այս նախադասութիւնը, որ ողբ ասելու ժամանակ էր օգտագործում, մեխուել էր նրա ուղեղում որպէս չարագուշակ մի բան:

Իսմէնէն շատ բան չգիտէր, բայց կանխագգում էր մտքեր: Նախորդ օրը, երբ ոստիկանապետի՝ ծերութիւնից մահացած մօրաքրոջ շորերն էր պատրաստում, հատուկէնտ մագերը յարդարում եւ Տիրամօրն էր աղօթում նաեւ մեռածի համար (ցածր ձայնով, վնաս չունի), զարմիկը մի պահ եկաւ հանգուցեալին տեսութեան: Նրա անթափանց աչքերը ոչինչ չասացին, բայց Իսմէնէն կարդաց ինչ-որ մտքեր: Մահ կայ, մահ կայ գալիք. աւեր կայ, աւեր կայ գալիք: Բայց ու՞մ համար: Բազմաթիւ են փոքր քաղաքի բնակիչները: Իսմէնէն ցանկանում էր խորհուրդ հարցնել իմաստուն Շուշանիկից, որը միշտ գիտէր, թէ ինչ ասէր նրան՝ ցրելով նրա գլխում հաւաքուած մշուշը:

Ա՛խ, Շուշանիկ, եթէ դու իրօք իմաստուն լինէիր... Բայց Շուշանիկի գլուխն ամբողջովին տարուած էր Զատիկի տօնակատարութեամբ եւ յետոյ գիտէր, որ Իսմէնէն մտքեր էր կարդում, ու քանի՞ անգամ էր նրան մխիթարել: Այս անգամ էլ այդպէս արեց եւ նրան ուրախացնելու համար ճաշին հրաւիրեց հայր Իսակին եւ նրա տխուր կնոջը՝ ասելով.

– Աքեմը փոխել կտաս, զգուշացնում եմ, կարեւոր հասարակութիւն է լինելու, պէտք չէ, որ վատ տպաւորութիւն թողնի:

Իսմէնէն ամէն ինչ մոռացաւ՝ վերսկսելով իր զուտ տնային ու սովորական գործը: Այդ օրն իր համար միանգամայն

երջանիկ կլինէր՝ հաւասարի պէս հիւրընկալուած բազմանդամ ընտանիքի ջերմ գրկում, գրաւելով իր ուրոյն տեղը՝ կազմելու մի ոսկեայ եռափեղկ նկար, որի կողմերի փեղկերի վրայ բոլորուած էին հիւրերն ու բարեկամները, եւ բոլորը գետեղուած էին այնպիսի աւանդական, սուրբ հերթականութեամբ, որ ասես ոչինչ չէր կարող այն խափանել:

Յետմիջօրէն լաւ տրամադրութիւն հաղորդեց Վերոնին, որն, ինչպէս միշտ, գնացել էր Անգլիկան եկեղեցու Պատարագին եւ ուշ հասաւ Ագարակ՝ նստած իրեն մշտապէս մեծարող բժիշկ Գրիգորի կառքը:

Նա ժամանեց, ինչպէս մի տիկին՝ գլխին դրած մանուշակագոյն քօղով նոր գլխարկ, տղամարդու ուղեկցութեամբ, որը խոնարհուեց, երբ ձեռքը պարզեց, որ աղջիկն իջնէր. այս ամէնը խաղաղեցրել էր Վերոնի խոժոռ դէմքը: Նա զգում էր, որ օրուայ ընթացքում քրոջ տրամադրութիւնը վատանում էր, իրենը՝ բարձրանում: Չէր հասկանում, թէ ինչ էր մտածում Ազնիւը, որը երբեք ոչինչ չէր ասում, չէր յարգում իրեն՝ որպէս աւագ քրոջ, որովհետեւ ինքը նրանից աւելի գեղեցիկ էր: Բայց ինչ-որ բան էր պատահել, եւ Վերոնին հաճելի կլինէր նրան խորհուրդ տալ...

Յանկարծ Ազնիւը Օհաննէսին խնդրեց, որ իրեն վերստին քաղաք ընկերակցէր: Բայց Սմբատը տխրեց, չնայած որ աղջիկը պատրաստ արդարացում ունէր, եւ ասաց, որ դեռեւս Օհաննէսի կարիքն ունէր: Ժամանել էր Ժերարը՝ Ֆրանսացի ջութակահարը, որը փոխնեփոխ նուագում էր մի քանի ումանտիկ հատուած հովիւ Հրանտ Յակոբեանի դուդուկի վարպետ կատարման հետ մէկտեղ:

Հարկաւոր էր հրամցնել յետմիջօրէի գովացուցիչ ըմպելիքներն ու կանանց թէյ մատուցել, Confiserie Viennoise-ի թխուածքով վայելելու արեւմտեան քաղցրաւենիքը, որն արդէն երկու տարի էր, ինչ մուտք էր գործել գաւառական այդ փոքրիկ քաղաքը: Օհաննէսը պէտք է Ազնիւին մէկ ժամ

սպասեցնել տար. բայց աղջիկը, որ միշտ աշխոյժ էր ու խանդավառ, այս անգամ հանդարտ տեղի տուեց:

Այդուհանդերձ, սովորականի պէս չմիացաւ երաժիշտներին, չփորձեց պարի քայլեր անել, իր քաղցրահնչիւն, զօրաւոր կոնտրալտո ձայնով չերգեց սրտին ուրախութիւն պատճառող եւ պարելու ցանկութիւն առաջացնող բազմազան երգերից մէկը: Նստած մնաց, կարծես թեթեւակիօրէն մրսած լինէր, լուռ նայելով մայր մտնող արեւին: Նրա կլորիկ, արտայայտիչ դէմքն անշարժ էր ու անհաղորդ, երաժշտութիւնը սահում էր նրա վրայով՝ գոցելով նրան:

Ազնիւը կարծես բացակայ լինէր, նստած էր փոքր-ինչ յոգնած տեսքով. բայց սրտի խորքում տենդագին կրկնում էր. «Ով գիտէ, այսօր կգա՞յ, թէ՛ ոչ: Ես արեցի այն, ինչ կարող էի, միգուցէ աւելի լաւ է այսպէս: Տեսնես իրօք ուզում է ինձ կնութեան առնել, խոստանում է հաւատափոխ չանել եւ ինձ հետ Եւրոպա գնալ: Իսկ եթէ տղան հաւատափոխ լինի՞: Ուրեմն ամէն արգելք կվերանայ...»: Ազնիւն արդէն Լոնդոնի կամ Փարիզի հայկական (կամ թուրք առաջադիմականներին) շրջանակներում էր տեսնում իրեն՝ որպէս կարեւոր մի տիկին, որը կարողացել էր հաւատափոխ անել թուրք սպային:

Երբեք չէր մտածել հեռանալ քաղաքից. հանդարտ աղջիկ էր, սիրում էր բոլորին: Բայց այս պարագան սոսկ պատրուակ էր. այնքան միամիտ չէր, որ չհասկանար, թէ մահամեղական-քրիստոնեայ զոյգի համար Օսմանեան կայսրութիւնում կեանքն այնքան էլ դիւրին չէր լինի: Հաւանաբար առաջին անգամը կլինէր, որ ոչ թէ թուրքն էր առեւանգում քրիստոնեայ աղջկան՝ տանելով նրան իր հարեմը, այլ կոյս հայն էր (ժպտաց ինքնիրեն) այնքան քաջ ու համարձակ գտնուում, որ թուրք տղամարդը ի վիճակի չլինէր չհրապուրուել նրանով:

Բազմիցս լսած սարսափազդու պատմութիւնների, նախագգուչացումների, դեռատի աղջիկներին ամէնուր շրջապատող

ներկայ ուշադրութեան մթնոլորտն ու տագնապալի հսկողութիւնն անորոշ պատկերներ ձեռով սկսեցին յաճել Ազնիւի շուրջը. թեթեւ անձկութիւն էր տիրել նրան, կարծես այդ ամէնը սոսկ երազ էր: Բայց եւ այնպէս անակնկալ սիրահարութիւնը, երբ տեսնում ես մէկի թերութիւնները եւ սկսում ես այլեւս կարեւորութիւն չտալ դրանց, մի կատարեալ տկարութեամբ է քեզ համակում:

Հիմա արդէն այդքան էլ հրատապ չէր քաղաք դառնալը: Ազնիւն այժմ համոզուած էր, որ եթէ տղան այսօր՝ յետմիջօրէին, բախել էր իրենց դուռն ու նրան չէր գտել, ապա, անկասկած ետ կգար գիշերը: Չէր կարող այդ չանել նախորդ օրուայ բուռն սիրոյ տեսարանից յետոյ:

Բայց Ձեւալն արդէն վերադարձել էր ու ապարդիւն թակել պարտէզի դռնակը: Ոչ ոք նրան չէր տեսել, բացի կաղ Նազիմից՝ թուրք մուրացկանից, որ Ձատկի օրն անցնում էր բոլոր հայերի տներով՝ լցնելով լայն գրպանները համով-համով բաներով ու սովորականից աւելի առատ բաշխուած փողով:

Նուարդը նրան լաւ էր վերաբերում, Շուշանիկը եւս. բայց այսօր տանը մարդ չկար. Նազիմը չգիտէր, որ Ագարակում էին տօնում Ձատիկը. կարծում էր, որ բարեկամ ընտանիքներից մէկի մօտ էին՝ փոխադարձ շնորհակտրանքների համար, ուստի սպասում էր դարպասի ներս ընկած մասում: Տեսաւ Ձեւալի գաղտնի այցելութիւնը, լսեց, թէ ինչպէս էր նա Ազնիւին կանչում աղաչական, ապա նուրբ, կտրուկ, յետոյ սաստիկ ձայնով: Ձեւալը կէս ժամ անընդմէջ թակում էր դուռը, եւ Նազիմը շատ աւելին ըմբռնեց, քան տեսածը. բայց լռեց, սեղմուեց պատին: Մուրացկանը չպէտք է խօսի, այլ լռի ու գանձ դիզի: Ամէն փշուր կարող է պէտք լինել:

Այսպիսով, երբ Ազնիւը տուն եկաւ, Ձեւալն արդէն գնացել էր. լուրերով լի Նազիմը եւս՝ իր հերթական պտոյտն աւարտելու: Ձուր էր Ազնիւը նստել երէկուայ տեղը՝ վարդենիների տակ, սիրովէպը ձեռքին. գուր էր համոզում ինքն

իրեն, որ այդպէս աւելի լաւ էր, որ տղան անպայման կփորձէր գալ նաեւ յաջորդ օրը: Չէ՞ որ այսօր Ձատիկ էր: Մի խուլ սարսափ, մի անանուն վախ օձագալար շրջան էր գծում պարտէզում՝ մտնելով նրա ջերմ սիրտը: Չէր կարողանում կարգալ, ուստի սպասում էր գիշերուան՝ կորցրած առիթների կարօտով տարուած՝ այնքա՛ն դառը եւ այնքա՛ն ծանօթ կանանց սրտին:

Մի քանի օր անցաւ: Ապրիլի քսանչորսի առաւօտն էր: Երուանդից նամակ էր եկել: Փոստատար Լեւոն Եակովլեանը վաղ առաւօտ յանձնել էր այն Սմբատին: Երուանդի ծրագրերը մեծանում էին. այժմ մտածում էր նաեւ դաշնամուր ձեռք բերելու մասին, կէս-ազեւոր Heizmann՝ կարմրափայտից եւ ոսկեգօծ բրոնզից պատրաստուած, որ տեղադրէր Ագարակի ընդունելութիւնների սրահում: Գրում էր, որ հաւանութիւն էր տալիս Սմբատի բոլոր նորարարական ծրագրերին՝ ապակեպատ պատշգամբին ու նկարազարդ ապակիներին, թենիսի դաշտին ու վիեննական բազմոց-բազկաթոռին, եւ աւելացնում նաեւ դաշնամուրը՝ ընտանեկան մտերմիկ երեկոնների համար, որպէսզի յիշուի քոյրերի կողմից: Երուանդը սիրում էր անուանագրեր, ուստի կափարիչի վրայ փորագրել կտար իրենց անունների արծաթեայ սկզբնատառերը:

Երուանդը մտածել էր ամէն ինչի մասին: Քանի որ Աւստրո-հունգարիան դաշինքի մէջ էր Օսմանեան կայսրութեան հետ, ընտրել էր վիեննական գործիքը: Դաշնամուրն անմիջապէս կուղարկուէր արտադրողի կողմից, որը եւ կհանգրէր Սմբատին, տեղեկանալու համար, թէ ամէն ինչ կարգին էր Ագարակում: Գործիքը տեղադրելու համար կգար նաեւ մի մասնագէտ, որը կմնար մինչեւ Երուանդի ժամանումը. վերջինս կվճարէր ամէն ինչի համար իր աչքերով տեսնելուց յետոյ: Արդեօ՞ք Սմբատը կհիւրընկալէր այդ աւստրիացուն:

Ի հարկէ, Սմբատը կարող էր եւ ցանկանում էր: Չէր

Համբերում: Ուրախացած վագեց նամակը կարդալու Գրիգորին՝ իր կասկածամիտ ընկերոջը: Առանձնասենեակում, որտեղ տարածուած էր ծխախոտի ու այցելուների տարբեր հոտեր, այս բժիշկը, որին վստահում էր հէնց այն պատճառով, որ ոչ ոքի լուրջ չէր ընդունում, օգտագործում էր քիչ, բայց կտրուկ բառեր՝ թեթեւացնելով իրեն վստահուած չար լուրը, ներողամտօրէն ժպտաց ընկերոջը: Կասկածամիտ ու հեգնական լինելուց առաւել Գրիգորը իմաստուն էր, լի այն արեւելեան իմաստութեամբ, որ ունեն միայն Եւրոպայում ուսում առած ասիացիները, եւ լաւ էր հասկանում Երուանդին:

Գրիգորն արժանի էր Բեռլինում ստացած գերազանցութեան վկայականին: Առաջարկել էին մնալ, կատարելագործուել իր ասպարէզում: Բայց Գրիգորը ծեր մայր ունէր, ամուսնացնելու երեք քոյր եւ անյաղթահարելի ամօթխածութիւն: Ուստի վերադարձել էր իր փոքրիկ քաղաքը եւ այժմ բժշկում էր բոլորին, անաչառ էր ու թերահաւատ. բաժանորդագրուած էր մի շարք լրագրերի եւ կեանքը կտար Սմբատի համար, որի անհոգ նուիրուածութիւնն այնքան գնահատում էր:

– Կարգա՛ յետգրութիւնը, – բղաւեց նա նամակն ընթերցելուց յետոյ, – կարծես թէ քո կոմսուհի հարսն այլեւս չի գալիս:

Սմբատը կարդաց սրտի տրոփիւնով. «Թանկագին եղբայրս, կարծում եմ, որ ինձ հաճելի կլինի առանձնատուն գնել կամ կառուցել Ագարակի հարեւանութեամբ: Դու եւ Օհաննէսը կարող էք հետեւել շինարարութեանը...»:

Տարիներ շարունակ Երուանդը կյիշէր այս նախադասութիւնը թաքուն լացով ու մեղմաձայն աղօթքով. «Ձկառուցեցի այդ տունը իմ կորուսեալ հայրենիքում... այնպէս որ, իմ հարերի Աստուած, քեզ եմ պաղատում, տուր այն ինձ երկնքի հինաւուրց հայրենիքում...»: Եւ ծերանալով կտառապէր մի ահաւոր ներքին կարօտից, որի մասին չէր կարող ոչ ոքի հետ խօսել իր մէջ սանձուած քաղցրահունչ մայրենի լեզուով,

առանց սիրալիր զրոյցի թոռների հետ, եւ որպէս մահամերձ՝ հարուստ ու յանցաւոր, որ վերապրել էր:

Բայց Սմբատն ուրախ էր: Հրաժեշտ տուեց Գրիգորին, դուրս վագեց եւ կառք նստեց: Ուղարկեց Վերոնին, որ իրեն փոխարինէր դեղատանը. շատ յուզուած էր եւ շտապեց տեսնելու (չնայած տեղանքն անգիր գիտէր), թէ որտեղ կարող էր բարձրանալ Երուանդի առանձնատունը: Արդէն որոշել էր վայրը: Լրիւ նոր էր լինելու. Ագարակի մօտ հին շինութիւններ կային, բայց դրանցից եւ ոչ մէկն արժանի չհամարեց եղբօրը:

Սմբատն արդէն մտածում էր Ագարակից քիչ հեռու՝ հինաւուրց քարայրներով փոքր սարահարթում, հողակտոր գնելու մասին, որտեղ ծեր կանայք սամիթ ու կատուախոտ էին հաւաքում, եւ որն ընդհատուած էր ինչ-որ մի տեղ՝ կտրուկ իջնելով դէպի ջրվէժները: Այնտեղ կարելի էր մի ամառային տաղաւար կառուցել, ինչպէս Մարիենբադում, որի նկարն էր տեսել՝ ամբողջովին ծակոտկէն սպիտակ մետաղից: Այն առջեւում կունենար երկար պատշգամբ, որի վրայ կտարածուէին եղրեւանու մանուշակագոյն ու սպիտակ ծաղիկները:

Տունն աւելի ետ ընկած կլինէր, ճակատային մասը կնայէր դէպի ջրվէժների համայնապատկերը, իսկ ետեւի մասը՝ դէպի փողոցը: Այն կառուցուած կլինէր ժամանակակից ոճով, որոշակի հեռաւորութեան վրայ մարգագետինը շուք անող մեծ նոճուց, որը կոչուած էր նաեւ Ասպետների Ծառ: Հին ժամանակներում դրա ընդարձակ ստուերի տակ մի հայ արքայազն պահում էր իր ամառային արքունիքը եւ այնտեղ ընդունեց ու ապաստան տուեց թափառական խաչակիր ասպետների, որոնք կորցրել էին իրենց ճանապարհը, եւ որոնց աւելի էր դուր գալիս Անատոլիան՝ իր ջրառատ, փոքր արքունիքներով ու գեղեցիկ աղջիկներով, քան Հիւսիսի իրենց տխուր երկրները:

Այդ օրհնեալ երկրի արեւն ու Հարստանալու Հնարաւորութիւնը յափշտակեց նրանց: Մոռացան իրենց կանանց, Շամպայնի ու Նորմանդիայի փոքրիկ հողակտորներն ու ապրեցին այնտեղ, թաղուեցին այնտեղ ու թողեցին իրենց շառաւիղները: Քարայրներից երբեմն-երբեմն կանայք ոսկոր ու քարէ կամ մետաղէ դրուագագարդուած կիսաթանկարժէք իրեր էին դուրս բերում (այդ գերեզմանները բազմիցս էին թալանուել):

Երեխաները խաղում էին դրանցով, բայց Գրիգորը յարգում էր այդ մասունքները եւ մի որոշ բան էլ վճարում էր դրանց դիմաց: Խոտ Հաւաքող ծեր կանայք ու երեխաներն էին տարածել այդ լուրերը:

Սմբատն արագ էր վարում կառքը: Պաշտում էր ձիերին եւ երբ հեծնում էր նրանց, լրիւ կերպարանափոխուում էր: Դէմքը դառնում էր վճռական ու վսեմ, ուսերն ուղղուում էին Հպարտօրէն եւ ետ էին բերում հին ժամանակները: Տեսնելով նրա կայծակնային սլացքը կուսակալութեան դիմացի սալա-յատակի վրայով՝ քայմաքամը, որ պատշգամբում սուրճից յետոյ սիգար էր վայելում, ատամների արանքից Փշշացրեց.

– Ինչպիսի՜ մարտահրաւէր: Կարծես ինքը լինի այստեղի տէրն ու տիրակալը: Բայց այս ամէնը շուտով կաւարտուի...

Ամէն ինչ մօտենում էր իր վախճանին: Կոստանդնուպոլսում սկսուած խօսակցութիւններն արդէն ընթացքի մէջ էին թալէաթի, էնվէրի, ոստիկանապետի, Յատուկ կազմակերպութեան պատասխանատուների եւ կուսակցութեան ամէնից հաւատարիմների նեղ շրջանակի միջեւ: Միութիւն եւ Առաջընթաց կուսակցութեան ոչ բոլոր անդամներն էին տեղեակ ծրագրից, հրաւիրուած էին միայն ամէնից նշանաւորները, որոնց մէջ կային մի քանի բարձրաստիճան պաշտօնեաներ: Ներկայ էր նաեւ գերմանական դաշնակից ուժերի գնդապետ Հաուպտմանը:

Հայ զինուորների գինաթափութեան եւ զօրքի Հայ սպա-

ների Հաւաքագրման գործողութիւններն արդէն աւարտուել էին: Զինուորներին հեռացրել էին, բայց այնպէս, որ սպաները չկասկածէին:

– Ներքին անձնագիրը՝ թեսքերէն⁸, արդէն շատերի ձեռքից վերցուած է, բայց պէտք է գործել զգուշութեամբ, – ասաց Սէլիմ էֆէնդին, որն աւարտել էր Սորբոնի Համալսարանը եւ ներքին գործոց նախարարի անձնակազմի գլուխն էր:

– Այսօր, – թալէաթն է խօսում, – հասել է օրը, այստեղ՝ մայրաքաղաքում: Զատիկի տօնակատարութիւնները նրանց ուժասպառ ու մտացրիւ են արել: Այս երեկոյ նրանց կհանէք իրենց տներից, հիւանդանոցներից, թերթերի խմբագրութիւններից: Ոչնչացրէք տպագրական մեքենաները, աւերէք պարբերաթերթերի խմբագրութիւններն ու հրատարակչատները: Իւրաքանչիւր ոչ հայ աշխատողի պէտք է խստօրէն սպառնալ եւ տուն ուղարկել: Եթէ կկարողանան լուել, կառավարութիւնից պարգեւ կստանան: Մի գործածէք բանտերը, այլ զօրանոցները: Արգելէք շփումը, բռնագրաւէք գրքերը եւ, յատկապէս, մի պատասխանէք ոչ մի հարցի: Տարէք միայն տղամարդկանց: Կանանց ձեռք չտաք:

էնվէրը, որ շարունակում էր ծանրակշիռ Հաւանութիւն տալ, այս նախադասութեան վրայ գլուխը բարձրացրեց զարմացած:

– Նրանց հերթն էլ կգայ, – թեթեւակի ժպտաց թալէաթը: – Եօթ նահանգների կանայք ամբողջովին մերն են: Կոստանդնուպոլսի կանանց հետ առայժմ պէտք է զգոյշ վարուել, քանի որ այդ շուայտ գեաւուրները⁹ այցելում են դեսպանատներ ու թղթակցում են նոյնիսկ լրագրերի հետ: Նրանց տղամարդիկ կձերբակալուեն պետութեան դէմ դաւելու եւ ոչ թէ Հայ լինելու համար:

⁸ Թեսքերէ – թրք. արտօնագիր (ծնթ. թարգմ.):

⁹ Գեաւուր – թրք. անհաւատ (ծնթ. թարգմ.):

– Իսկ Զօհրապի Հետ ինչպէ՞ս վարուենք.– կրկին Հարցրեց էնվէրը նուրբ Հեգնանքով Թալէաթի յայտնի ընկերոջ մասին:

– Այսօր նրան ժամը չորսին պէտք է տեսնեմ. մեր Թալի խաղալու օրն է: Միշտ ճշտապահ է, իսկական ազնուական, նուրբ քաղաքական գործչի ու բանաստեղծի գլուխ ունի: Նրան պէտք է անտեսէք: Չպէտք է ձեռք տաք. եթէ ինձ փնտրի, վստահեցրէք, որ ինձ լուր կտաք. թողէք, որ գրի: Իսկ յետոյ դէն նետէք նամակներն այնպէս, որ նա տեսնի:

Այժմ էնվէրն էր ժպտում Հիացած: Չէր մտածել այդքան նուրբ, դիւանագիտական քայլի մասին:

Կոստանդնուպոլիս. 1915 թուականի ապրիլի քսանչորսի երեկոն: Լայնածաւալ, հաւաքական ձերբակալութիւնն սկսուած էր:

Երեխաների եւ յղի կնոջ առջեւ բանաստեղծ Դանիէլ Վարուժանը խիզախութիւն հանդէս բերեց եւ ժպտաց.

– Ապահովութեան համար արուած քայլ է: Պատերազմ կայ: Միջազգային ուշադրութեան կենտրոնում ենք, չեն կարող այլեւս կրկնել Կարմիր սուլթանի տարիների սարսափները (բայց մի չար տեսիլք խափանեց նրա տեսողութիւնը, եւ մի ներքին դող ցնցեց նրա մարմինը):

Կինը պայուսակի մէջ՝ հագուստեղէնի տակ, արագ թաքցրեց հաց, զոլալ ու մի աման անուշ:

– Դրանց կարիքը չէք ունենայ, – ասաց ոստիկանութեան սպան, որ հրամաններ էր արձակուում փոքր խմբին, – միայն կարճ ժամանակով էք բացակայելու:

Բայց նրա բարեկիրթ ձայնից Վարուժանը յանկարծ զգաստացաւ, նայեց նրա աչքերի մէջ, որտեղ եւ մահ կարգաց: Այդժամ պաղ հանդարտութեամբ ողջագուրուեց կնոջ հետ, կարծես սովորական հրաժեշտ լինէր, արագ վերցրեց մի գիրք, գրիչ ու տետրակն այն քերթուածի, որն սկսել էր գրել:

– Ազատ ժամեր կունենամ, վստահ եմ. ինձ Հետ Հացին երգն եմ վերցնում: Եթէ Ալեքսէյին տեսնես, ասա նրան այս մասին:

(Յոյս ունէր, որ կինն իրեն կհասկանար, եւ եթէ հարկ լինէր ապաստան խնդրել, կդիմէր Ալեքսէյ Սեմեոնովիչ Բուրկինին, որը Ռուսական Կայսրութեան դեսպանատան պաշտօնատարն էր, բանաստեղծ եւ թղթակցում էր իր հանդէսին: Իրականում վերջերս վիճել էին բանաստեղծական նորաճութեան հարցի շուրջ, որը Դանիէլը չէր ընդունում: Նրան օտար լեզու էր թւում այդ ամէնը):

Կինը նրան նայում էր փոքր-ինչ զայրացած: Յոգնութիւն էր զգում, երրորդ յղիութիւնը յանկարծ սկսեց իրեն զգալ տալ. թւում էր՝ միայնակ էր տանում այն իր ուսերին: Ինչու՞ էր ամուսինը հեռանում այդքան հնազանդօրէն, հարցնում էր ինքն իրեն եւ ապա զգում էր նրա մարմնի բացակայութիւնն իր կողքին. ահա, արդէն հեռացաւ, եւ օդն էլ այնքան ծանրացաւ, կորցրեց բոյրը: Եւ երբեք էլ այն չի վերագտնի:

Փոքրիկ քաղաքում Զելալը թափառում էր մոլեգնած: Նա գիտէր, որ պէտք էր ամէն գնով փրկել Ազնիւին: Մտածում էր վերադառնալ նոյն օրը՝ յետմիջօրէին, ու իր հետ տանել աղջկան ցանկացած գնով: Սակայն ինչպէ՞ս համոզել նրան, միգուցէ ուժով (նա չգիտէր Ազնիւի մտքերը):

Զելալը չէր ցանկանում փրկել աղջկայ ողջ ընտանիքը: Միայն Ազնիւն էր նրան հետաքրքրում, իսկ փրկել նրան նշանակում էր ազատուել իրեն վերապահուած դաժան յանձնարարութիւնից: Զելալը մի սովորական սպայ էր. երիտասարդ, խանդավառութեամբ յարել էր Միութիւն եւ Առաջընթաց կուսակցութեան ծրագրին՝ Թուրքիան արդիականացնել, դարձնել ժամանակակից, վերացնել սուլթանին: Ժամանակակից դարձնելու գաղափարի մէջ լռելիայն ամփոփուած էր Թուրքիան՝ թուրքերին բացարձակ ճշմարտութիւնը: Վերացնել ստորին ազգերին, որոնք արեւմտեան թշնամու հետ

միշտ դաւեր էին հիւսում եւ նպասում Օսմանեան կայսրութեան մասնատմանը: Դուրս, դուրս քշել հայերին, յոյներին, ասորիներին, սիրիացիներին՝ ստահակ խաթամուժին: Ամէն երկիր՝ իր ժողովրդին, ինչպէս եւրոպական ազատագրական պատերազմներում: Եթէ Յունաստանը յոյներին էր, ինչու՞ թուրքեան չպէտք է լինէր միայն թուրքերինը:

Զելալի գլուխը լի էր այս գաղափարներով, ու նրա մտքով անգամ չէր անցնում, որ հայերն ու միւս ազգերը Անատոլիայի հողում ապրել էին հազարամեակներ շարունակ, որ այն մշակել էին ու բերրիացրել, որ դա էր իրենց հայրենիքը, մէկ ուրիշը չունէին. եւ լինելով հեզ ու անըջալից, իսկ հողն էլ՝ ընդարձակ ու բարեբեր՝ կարելի էր ներդաշնակ ապրել միասին (այդպէս էր երգել բանաստեղծն այն քերթուածի մէջ, որ Երուսաղէմ պահում էր դրամապանակում):

Բայց Ազնիւր, Ազնիւր. նա իր կեանքի կինն էր: Զելալը ձիով անցնելիս նրան պատահամբ տեսել էր բացօթեան մի տօնախմբութեան ժամանակ մրգաստանի մէջ պարելիս, եւ աղջկայ նազանքն ընդմիշտ գերել էր նրան: Աղջկայ համար էր վերագտել աւանդական սիրուն ձօնած բանաստեղծութիւնները, դիմագրաւել ընկերների մեղմ հեզանքը եւ ամիսներ շարունակ գոհացել երազելով ու հետեւելով նրան: Այժմ վճռականօրէն մի կողմ քաշեց Դեղիաեւի՝ իր լաւագոյն ընկերոջն ու տենդագին պատմեց իր յուսահատ ծրագրի մասին:

Դեղիաեւը ռուսական ծագում ունէր, թոռն էր մի կողակի, որը շատ տարիներ առաջ, լքելով Ուկրաինայի սեւ հողը, հաւատափոխ էր եղել եւ կարողացել իր համար ճանապարհ հարթել: Նա եւս սպայ էր, վայելում էր բարեկեցիկ կեանք եւ ի ծնէ հանդուրժող էր ու երազկոտ: Նա էր Զելալին ընկերակցել ծեր Համբարձումի յուղարկաւորութեան օրը, գիտէր նրա խանդավառութիւնը, որը համարում էր ռոմանտիկայով թէեւակիրօքն շաղախուած մի խաղ՝ գաւառում չձանձրանալու նպատակով:

Այժմ յայտնաբերել էր մոլեգին Զելալին, սիրահար ու միաժամանակ վիրաւորուած ընկերոջը, որի յարգալից սիրահետման արտաքին պատեանը գնալով աւելի ու աւելի էր կեղեւահան լինում ամէն բառից, իսկ աւարառուի բնագղը սկսում էր բացայայտուել:

Ազնիւր յիշում ու վերապրում էր այն պահը, երբ դեռեւս երէկ, նա յուզուած ու երկիւղածօրէն ծնկի էր իջել իր առջեւ, իսկ այսօր ցանկանում էր ամէն գնով նրան տանել, նոյնիսկ բռնի ուժով: Մինչդեռ Զելալը հաւատացած էր, որ եթէ Ազնիւր նրան ներս թողեց, նշանակում է՝ աղջիկն էլ էր իրեն ընտրել, եւ բռնութիւն չէր լինի իր արարքը, այլ կհամոզէր, որ նա մի կողմ դնէր իր տարակոյսները, որովհետեւ այլեւս ժամանակ չկար: Պէտք է փախչէին. լաւ գիտէր, որ յետոյ Ազնիւր երեսը քօղով ծածկելու ու թաքցնելու կին չէր լինի, այլ ցուցադրելու արժանի տիկին՝ որպէս թանկարժէք, արգելուած պտուղ:

Դեղիաեւը գուարճանում էր: Լաւ չէր ըմբռնում շտապելու անհրաժեշտութիւնը, բայց առաջարկեց իր օգնութիւնը՝ խոստանալով հօր կառքն ու ձիերը: Խորհուրդ տուեց իսկոյն փախչել՝ հեռու պատերազմի թատերաբեմից, որ սպառնալից կերպով աւելի ու աւելի էր մօտենում. պէտք էր նաւ նստել ու անյապաղ գնալ Զմիւռնիա: Դեղիաեւը կուսակցութեան մէջ չէր, եւ հայկական ծրագրից միայն շուկներ էին հասել ականջին (Զելալը լաւ գիտէր, որ պանթուրքիստական տեսութիւնները ոչ մի արձագանք չէին գտնում նրա մօտ): Բայց երիտասարդ էր ու արկածախնդիր, եւ աղջկան փրկելու այս գաղափարը նրան դուր էր գալիս. եւ ահա պարզուեց, որ Զմիւռնիայում ճանաչում էր մէկին, որն ընկերն էր մաքսաննգութեամբ զբաղող մի յոյն նաւապետի, եւ դահեկանների լուրջ գումարով կարելի էր նրա միջոցով գործը գլուխ բերել: Գումարը, խնդիր չկար, ինքը կտրամադրէր Զելալին: Այս ամէնն ի սէր, մի կողմից՝ քնած ու տխմար քայմաքամի, միւս կողմից՝ Ազնիւրի այնքան զօրեղ ու վշտացած

ընտանիքի գլխին խաղ խաղալու հաճոյքի: Իսկ ո՞վ էր արդեօք այդ իտալացի դարձած պրոֆեսորը, որ ժամանելու էր սպորտային մեքենայով ու դաշնամուրով (լուերն արդէն տարածուել էին, խեղճ Երուանդ):

– Փարիզ-Պեկին մի նոր արշաւ, որ կանգ է առնում Հէնց Անատոլիայում, գիւղի հաւերի ու այծերի մէջ... – մրմնջաց Դեդիաներ:

Մինչդեռ այդ ընթացքում, քայմաքամը գործում էր: Կէսօրին մօտ կաղ Նազիմը նրա մօտ էր եղել: Նազիմը միշտ լրացնում էր իր մուրացկանութեան եկամուտները լաւ վճարուած լրտեսութեան գումարով: Նրա միջոցով էր, որ քայմաքամը ճանաչում էր բոլոր հայերին, եւ նրանց ամէն մի շարժումը գրանցւում էր ու յայտարարւում: Բոլորն անկաշկանդ խօսում էին Նազիմի մօտ, կարծես նա գոյք լինէր՝ լուռ, յարգալից ու միշտ ներկայ: Միայն Իսմէնէին նա դուր չէր գալիս, որովհետեւ երբեք ծառայութիւն չէր մատուցում:

– Նրանցից փող ես վերցնում, չէ՞, ու երբեք չես փոխատուցում:

Բայց Սմբատն ասում էր, որ խեղճը Աստօյ օրհնեալն էր, ու աւելացնում.

– Ո՞վ կլինենք մենք, եթէ ողորմութիւն բաշխելիս տարբերութիւն դնենք քրիստոնեաների ու մահմեդականների միջեւ: Ի վերջոյ, քսաներորդ դարում ենք ապրում, կրօնը եւս արդիականանում է:

Ծիծաղում էր բեղերի տակից Սմբատը, զուարճանում՝ կանանց մեղմօրէն զայրացնելով, եւ չէր նկատում, թէ ինչպէս Նազիմը, մի կողմ կանգնած, թքում քամահրալից:

– Սպայ Զելալի ու դեղագործի քրոջ միջեւ գաղտնի սիրաբանութիւն կայ: Նա ուզում է կնութեան առնել աղջկան ու հաւատափոխ լինել, – շնջաց Նազիմը:

Համեղ պատառ էր՝ որպէս նուրբութիւն, բայց, իրօք, տարօրինակ. սպան կարող էր առեւանգել մի աղջկայ, թաքցնել

իր տանը, նոյնիսկ ամուսնանալ, բայց ո՛չ հաւատափոխ լինել: Նման բան երբեք չէր կատարուել, այն էլ՝ այս օրերին:

Այնուամենայնիւ, քայմաքամը մտածում էր, որ անհրաժեշտ էր խոհեմութեամբ շարժուել: Նազիմը խորամանկ էր, զգուշաւոր, բայց այստեղ խօսքը չէր վերաբերում հերթական հայեր կեղեքելուն. սրանք թուրքեր էին, բանակի սպաներ, եւ չէր ցանկանում միայնակ գործել: Հարցը կփոխանցէր ռազմատենչ գնդապետ Հիքմեթին, որի ձեռքին էր սանձը այս կորուսեալ գաւառում. նրան կասէր, որ Զելալը վարկաբեկել էր մի քուրդ աղջկայ, որի ծնողները նրան էին փնտրում, իսկ Դեդիաները նրան օգնել էր: Գնդապետը, որ Հին դպրոցի ներկայացուցիչ էր եւ հակակրանք ունէր կուսակցութեան դեկավարութեան հանդէպ, առիթը բաց չէր թողնի: Դէ, իսկ, Դեդիանեն էլ անօգուտ անհաւատի մէկն էր:

Պետական մի պաշտօնագրով Զելալն ու իր անբաժան ընկեր Դեդիաները երկու ժամուայ ընթացքում պէտք է ճանապարհ ընկնէին դէպի Դամասկոս: Ծակատ էին ուղարկւում եռապետութեան երրորդ մարդու (էնվէրի ու Թալէաթի հետ միասին)՝ Զեմալ փաշայի հրամանով: Այլընտրանք չկար, քանի որ զինուորների մի փոքր խումբ ենթասպայի հրամանատարութեամբ այնտեղ էր հսկելու նրանց, մինչդեռ գնդապետն անհետացել էր:

Զելալը քարացել էր, յուսահատուել: Դեդիաները ժպտաց եւ գլուխը խոնարհեց: Արդէն մտածում էր, ինչպէս տեղեկացնել հօրը, ինչպէս վարել խաղը: Բայց իրականում այլեւս ժամանակ չկար, ուստի կանչեց յանձնակատար սպային, պատրաստեց ճամպրուկներն ու ողջագուրուեց մօր հետ:

Առաջին գիշերը քնեցին դրսում: Զելալը ցրուած էր, իսկ Դեդիաները ռոմանտիկօրէն մտածում էր գիշերով քառատրոփ ետ դառնալու, դեղագործին դուռը բացել տալու եւ ընկերոջ հետ դասալիք լինելու մասին: Իսկ եթէ միասին գնային Ամբրիկա՞: Միգուցէ մի ուրիշ աղջիկ էլ գտնէին իր համար...

Բայց երբ տեղ հասան, Զելալը յանկարծ թուլացրեց

ձեռքերը, որոնք ձիավարութիւնից յոգնել էին, ու ասաց.

– Ես քաղցած եմ, իսկ դու՞:

Դեղիաեւը համրացած նրան էր նայում, իսկ Զելալը շարունակեց.

– Չե՞ս կարծում, որ անհեթեթ գաղափար էր: Ասում են, որ Դամասկոսը հրաշք քաղաք է՝ գայթակղութիւններով լի:

Այնժամ Դեղիաեւը, կարծես թեթեւացած, թփթփացրեց ընկերոջ ուսին, եւ միասին մտան քարվանսարայ:

Այս ամէնից Ազնիւն անտեղեակ էր: Օրերն անցնում էին, Զելալն այլեւս չէր երեւում: Բոլորը նկատել էին, որ Ազնիւն ամէն երեկոյ գնում էր պարտէզ, նստում հովանու տակ եւ դարձել էր նեարդային եւ ականջը սրած, ասես, հեռաւոր ձայնի էր սպասում: Վերոնը կարծում էր, թէ Ազնիւը նախանձում էր իրեն Կոստանդնուպոլիս կատարելիք այցելութեան համար, իսկ Ազնիւին ձեռնտու էր քրոջ այդպէս մտածելը: Ներսից հոգին կրծում էր աճող կասկածի ու խուլ տազնապի մի անանուն զգացում: Այդուհանդերձ, շարունակ կրկնում էր, որ աւելի լաւ էր այդպէս. ի՞նչ խենթութուն էր մտածածը: «Եւ յետոյ, ես՝ Ազնիւս, իսկապէ՞ս կփախչէի մի տղամարդու հետ, – մտորում էր նա: – Արդեօ՞ք կխաբէի ու կվիրաւորէի Սմբատին ու միւսներին, ողջ ընտանիքին, հայ համայնքին, միթէ՞ կթողնէի, որ բոլորը ծիծաղէին մեզ վրայ: Ի հարկէ ոչ: Բայց նաեւ որքա՞ն կցանկանայի այդ ոչ-ը ասել լալով, որ նա էլ հիանար իմ փոքրիկ ներկայացումով (կամ էլ... կամ էլ... իսկ եթէ, իրօք, հաւատափոխ լինէ՞ր)»:

Մայիս ամսուայ երկրորդ կիրակին էր, Տիրամօրը վարդեր նուիրելու տեսարժան արարողութիւնը: Բոլոր հայ աղջիկները՝ տօնական զգեստներ հագած, վարդի փնջերով գնում էին դէպի Մայր եկեղեցին՝ խորանները զարդարելու, եւ յետոյ, ծաղկաթերթիկներով լի զամբիւղներ բռնած, բաժանուում էին երկու շարքի եւ թերթիկների անուշահոտ գորգով

ծածկում այն ճանապարհը, որտեղով պէտք է անցնէր Աստուածամօր թափօրը:

Բայց այս տարի կարծես ուրիշ էր: Փոքրիկ քաղաքի զօրագնդի գնդապետը, նա որ Զելալին ուղարկել էր դուրս, խորհրդաւոր հեռախօսազանգ ստացաւ իր զարմիկից, որը Արտաքին գործոց նախարարութեան կցորդն էր, եւ խիստ անձնական հրատապ լուր էր հաղորդում (ոչ թէ հեռագիր, որ շատերը կարողանային կարդալ): Զարմիկը յայտնում էր, որ ինչ-որ բան էր նախատեսուում հայերի համար: Մէկ օրուայ մէջ նրանց բանբերները, Կոստանդնուպոլսի համայնքի ամենահեղինակաւոր ներկայացուցիչները՝ բժիշկներ, ուսուցիչներ, լրագրողներ, կարծես անհետացել էին: Լրագրողները լոււմ էին, հայ երեսփոխաններն այլեւս չէին երեւում: Պատրիարքը անտեսանելի էր դարձել, եւ շատ ու շատ դիւանագէտներ զգուշութեամբ հետաքրքրուում էին նրանցով: «Եթէ որեւէ հարուստ հայ ես ճանաչում, որին համակրում ես, զգուշացրու, որ վտանգ է սպառնում նրան, – խորհուրդ էր տուել զարմիկը: – Կարող ես լաւ գին ուզել պաշտպանութեան կամ էլ անցագիր ապահովելու դիմաց»:

Այդպէս էր միշտ եղել երկրում, երբ պայթում էին ջարդերը:

Իրօք, գնդապետը կանչեց Սմբատին ու զգուշացրեց: Նոյն բանն արեց ոստիկանութեան պետը, որին Սմբատը կլորիկ գումար էր պարտքով տուել երկու դուստրերի՝ Զինաիդայի ու Զելմիրայի շքեղ ամուսնութիւնների համար: Մայիսի տասն էր. բայց Սմբատը մէկ այլ նամակ ստացաւ Երուանդից, որը հաստատում էր իրենց հանդիպումը մայրաքաղաքում յունիսի տասին, Ղալաթիայի թաղամասի յայտնի Բերա Փալասում՝ նոր, շքեղ հիւրանոցում, որը յայտնի էր արտասահմանեան բարեկեցիկ աշխարհին: Սմբատի կարծիքով՝ իտալացի եղբայրն ինքնին զօրեղ պաշտպանութիւն էր. բայց ոստիկանութեան պետին ու գնդապետին հաճոյանալու համար խոստացաւ վճարել՝ ի պաշտպանու-

Թիւն իրեն: Հարկ էր խոստափել Աստուածամօր թափօրից, որովհետեւ Օհաննէսը տեղեակ էր պահել նրան Ագարակի ետեւի սարերում բնակուող քուրդ ցեղերի կասկածելի շարժումների մասին. նրանց մօտ երբեք պէտք չէր աղջիկներին ցոյց տալ:

Սմբատը խորհրդակցեց Գուլումճեան սրբազանի եւ Համայնքի այլ ներկայացուցիչների հետ: Բոլորը քաջ գիտէին, որ եթէ որոշէին հանդիսութիւնը բացօթեայ չանցկացնել (որը Ջատկից յետոյ երկրորդ գարնանային մեծ ելքն էր, որի ժամանակ բազմաթիւ ամուսնական միութիւններ էին կնքուում), ապա տազնապի ու զայրոյթի տեղիք կտային: Կանայք ու ծերերը լեզուներին կտային, եւ շուտով մարդիկ խուճապի կմատնուէին, որից տաքգլուխներն ու յիմարները կարող էին տուժել:

Ուստի, ի վերջոյ, անհրաժեշտ էր, որ շքերթը տեղի ունենար: Եւ անմեղ արեւի վառ լոյսի ներքոյ վերջին անգամ այդ դէմքերն ու գեղեցիկ մարմինները ներդաշնակօրէն կպարէին, կենդանի ծաղկեպսակները կթրթռային հրճուանքից եւ յաջորդ անգամուայ սպասումից: Միայն երեկոյեան կողմ ջրվէժների մօտից ժայթքեց տեղատարափ հեղեղ, որը նրանց սգահար հրեշտակների արցունքներն էին:

Դուրսի առանձնատանը Երուանդը խնամքով ժողովել էր այն ամէնը, ինչ հարկաւոր էր ճանապարհի համար՝ քարտէզներ, հեռադիտակներ, արեւային ակնոցներ, մեքենայի գոյնին համապատասխան թեթեւ վերնազգեստներ, կրկնակօշիկներ, ամէն տեսակի լապտերներ, ճանապարհորդական ջրամաններ, փոքրիկ դեղատուն՝ արեան շիճուկով, ասեղներով, եռացուցիչներով ու զտիչներով, մոյկեր, սոնապաններ (երկու զոյգ էլ պատրաստել էր տուել դամասկոսեան կերպասից, իսկական խենթութիւն, եւ խնամքով թաքցրել գաղտնագրով բժշկական ճամպրուկի խորքում՝ երկակի հիմքի տակ, որտեղ զետեղել էր աւստրիական թայերներ, Վիկ-

տորիա թագուհու եւ Կայգերի ոսկեղբամներ ու որոշ գոհարեղէն):

Ընտրել էր երկու վարորդ՝ Անտոնիո Բոսկարինի ու Պինո Վիանելլո, երկու վարպետ, որոնցից մէկը գնացել էր Ռուսաստան ու վերադարձել արքայազն Դէմիդովի հետ: Ամենայն լրջութեամբ երեք տղամարդիկ խորհրդակցում էին պահեստամասերի, վառելիքի, պահեստամանների, օդամղիչների, ծռաբուժականների եւ այլ գործիքների շուրջ, որ մեքենագործը կարող էր պատկերացնել. Երուանդի յոյսը նաեւ երկրների եւ լեզուների իր իմացութեան վրայ էր, որը, միանալով իր դրամին ու Հարկ եղած սառնարիւնութեանը, պէտք է որ փրկէր իրեն ցանկացած վտանգից:

Որդիներից ո՛չ խորհուրդ էր հարցնում, ո՛չ էլ խորհուրդ տալիս նրանց՝ վերջիններիս համարելով թանկագին փաթեթներ, որոնք ոչ մի օգնութիւն չէին կարող ցուցաբերել՝ կոմսուհու այդ նրբին պարոնիկները: Այս պահին սպասողական վիճակի մէջ էին. կինն իր բոլոր ազգականների հետ գործի էր անցել՝ կանխելու համար այդ ճանապարհորդութիւնը: Ամուսինը չոր պատասխանել էր, որ կմեկնի միայնակ, գաւակների հետ՝ առաւել տառապանք պատճառելով կոմսուհուն: Կինը, նեարդացած, ձեռքերը սեղմեց: Թերեզան իրօք, նրանց իրօք սիրում էր: Սիրում էր իր այնքա՛ն տարաշխարհիկ, առնական ամուսնուն, սիրում էր որդիներին...

Որդիները լուում էին: Աւելի ճիշտ, հանդէս էին գալիս որպէս ներկաներ, քանի որ մէկը կիսում էր ուսուցիչների եւ դասընկերների ռազմաշունչ, հայրենասիրական երազները, իսկ միւսն օժտուած էր շեշտուած մանկական հակառակող ոգով, եւ լուրջ չէին ընդունում այն, որ հօր ակամայից սկսած պայքարը ժամանակի դէմ յաղթանակ կտանէր:

Տղաները տարտամ կերպով, անբացատրելիօրէն զգում էին, որ Իտալիան պատրաստուում էր պատերազմի մէջ ներքաշուել. եւ ցաւով մասնակցում էին հօր աստիճանական վերադարձին դէպի մութ անցեալ, դէպի ակունքներ, որի

Համար փոքր-ինչ ամաչում էին. Հայրը խօսում էր առանց քերականական յօդերի, որը միանգամից մատնում էր նրա օտարական լինելը նոյնիսկ անփորձ ականջի կամ բարեացակամ ունկնդրի համար: Արդեօ՞ք կկարողանայ երուանդը մեկնել նախքան Աւստրո-Հունգարիայի սահմանների փակուելը: «Բայց արդեօ՞ք կհասցնի,— իրենք իրենց հարց էին տալիս բարկացած որդիները, որովհետեւ նրանք էլ պատրաստութիւն տեսնելու իրենց բաժինն ունէին: — Եւ յետոյ, ինչպէ՞ս է ստիպողաբար տանելու մեր այնքան փխրուն, զգայուն մօրն այդ վայրի երկիրը»:

Երուանդը չէր լսում եւ չէր տեսնում: Շարունակ գրում էր Սմբատին, բայց կնոջը՝ Թերեզային, եւ գաւակներին չէր ասում, որ ծրագրել էր այնտեղ տուն գնել: «Կանխավճարը կտամ, իսկ մնացած գումարը կփոխանցեմ Իտալիայից»,— մտածում էր նա:

Յետագայ ողջ կեանքի ընթացքում Երուանդը կյիշէր այդ ամիսները՝ որպէս կատարեալ երանութիւն, ճանապարհորդութիւնը կատարեալ կազմակերպած լինելու ուրախութիւն, վերջապէս առանց սպառնալիքի հանգիստը վայելելու զգացում, յուլիսեան խաղողի համը, Իսկուհի մայրիկի մշուշոտ, հեռաւոր, գեղեցիկ դէմքը, վերստին ջրվէժների մէջ ընկղմուելու ցանկութիւն, ի վերջոյ մաքրուելու, վերակենդանանալու իղձ: Իսկական վերածնունդ:

Երուանդի բոլոր մկանները ձգւում էին, եւ իր ողջ երկարամեայ համբերութիւնը հալւում էր՝ ձուլուելով մի նոր, իւրատեսակ խաղաղութեան մէջ: Կարողացել էր յաղթահարել ամէն ինչ, եւ ահա եկել էր հատուցումը: Անքուն գիշերներ, յամառ ուսումնառութեան տարիներ Պաղովայում եւ Փարիզում, ամիսներ շարունակ՝ ծիրանաչիր եւ աղքատների ապուր, ժանտախտով վարակուածներ, առաջին հիւանդանոցների տաքնապ, երեխաների համար բացած առաջին բուժարանը Վենետիկում, Լիդոյի թոքախտաւորներ. նշտարը միշտ ձեռքին, ազնիւ, անխոնջ, հեղինակաւոր բժշկի կերպար: Այս

ամբողջը միախառնուում էր նրա սրտում ու վերջապէս հանդարտուում:

Յանկարծ յիշեց պարտէզի հովանին, թափուող վարդերի բոյրը, ապրիլ ամիսը, մայիսեան Աստուածամօր թափօրը եւ օրիորդներին: Տասներեք տարեկան էր, երբ հեռացաւ տնից. արդեօք ինչպիսի՞ դէմք ունէր այսօր Մադամ Նուարդը՝ իր խորթ մայրը, որը պատճառ դարձաւ նրա փախուստի եւ այն ամէնի, ինչ յաջորդեց դրան: Վերջապէս կներէր նրան:

«Դէպքերը լաւ ընթացք ստացան. Իսկուհին ու Համբարձումը այսօր միացել են երկնքում»,— մտածում էր Երուանդը, որը կրօնը զգում էր բաւականին պարզ կերպով. Հայրենիք, որտեղ ոչ ոք չէր զուարճանում՝ հայերին հետապնդելով, որտեղ ուրիշ տարեկան երեխաները մայր չէին կորցնում:

Իսկ այժմ՝ իր փոքրիկ քաղաքը, ջրվէժներն ու Սմբատը. ինչպէ՞ս դիմանալ այդքան երջանկութեանը:

Դուռ, կիրակի, մայիսի քսաներեք, յետմիջօրէ: Լրագրերի խորագրերը կասկածի տեղիք չեն տալիս: Ձմռան պատճառով դեռեւս փակ բիլիարդի ցուրտ սենեակում էղուարդն ու Քայելը տենդագին խորհրդակցում էին: Հաւանական չէր, որ Հայրը լսէր նրանց խօսակցութիւնը, որովհետեւ գնացել էր Դուլոյի Կոմմեյրչո սրճարանը՝ կիրակնօրեայ աւանդական այցելութեան՝ համաքաղաքացիների բարեւն ու խնդրանքներն առնելու համար: Երկար ու ձիգ շաբաթներ էր, ինչ չէր գնում այնտեղ, եւ այժմ նպատակայարմար էր գտել մեկնելուց առաջ այցելել:

Իտալիան ներքաշւում էր պատերազմի մէջ Յրանսիայի, Անգլիայի եւ Ռուսաստանի կողքին՝ մերժելով Եռեակ Համաձայնութեան դաշնագիրը: Դ՛Անունըսիոն եւ Մուսսոլինին հանդէս էին գալիս հրապարակաւ, թմբկահարում էին երկրի զրգուած երեւակայութիւնը, համոզուած, որ մի քանի ամի-

սը բաւական կլինէր («Տեղտ պատերազմի» յաւերժական ցնորքը) երկիրը հասցնելու մինչեւ իր բնական սահմանները՝ մինչեւ Բրեննեբրո եւ Ալպեր: Իտալիան տենդի մէջ էր, շատերը կամաւոր էին գրւում:

– Ինչպէ՞ս ասննք հայրիկին, – հարցրեց էդուարդը, որին՝ որպէս մեծի, տրուած էր այդ անախորժ առաջադրանքը: Միւս կողմից՝ Քայելն ընդամէնը տասնմէկ տարեկան էր, առաւելագոյնը կարող էր հանգէս գալ որպէս ուշադիր ունկնդիր, բայց սարսափահար էր եղել:

Մայրիկը, որն արդէն տեղեակ էր ամէն ինչից, եղբայրներից էր իմացել (Անդրէան էր յայտնել նրան այդ լուրը), լուռ աղօթում էր՝ ուշաթափուելու պատրաստ: Էդուարդը չգիտէր՝ ինչպէս վարուել, ատում էր հօր սառը ցասումը, որպէս օտարական՝ աշխարհից նեղացած, ինքն իր մէջ քաշուած լինելը:

Եւ ահա այդ պահին ուժգին հնչեց դռան զանգը, լսուեցին խոհարար Լետիցիայի քայլերը, որն շտապեց դուռը բացել: Առանձնատունը՝ տասնիններորդ դարի ցածր, երկարուկ մի շինութիւն, բացուած էր փողոցի վրայ՝ երկաթգծի դիմաց, իսկ ետեւի մասում մինչեւ գետը ձգուող մի հսկայական հնամենի այգի կար: Հարիւրամեայ ծառերը թաւ ստուեր էին գցում: Ճանապարհ ընկնելու պատրաստ երկու մեքենաները, շարք կազմած, կանգնել էին ջրհորի մօտ՝ ախոռի դիմաց:

Տղաներն ասես առաւել զգում էին հօր քայլերը, քան լսում: Կարծես թաթերի ծայրին՝ երուանդը շրջանցեց տունը՝ խուսափելով մտնել այն սրահը, որտեղ Թերեզան անհամբեր սպասում էր: Որդիները որսում էին նրա շնչառութիւնը սրահի դռնից այն կողմ, որը կից էր բիլիարդի սենեակին. ահա հայրը կանգ առաւ, եւ մի պահ թուաց, թէ ներս կմտնէր եւ կգտնէր նրանց մթութեան մէջ լուռ՝ հանդարտ, վախուորած, կծկուած:

Սակայն քայլերը դանդաղ վերսկսուեցին, հասան մինչեւ ետեւի դուռը, որը բացուած էր ետնաբակի սալայատակի եւ

ջրհորի շուրջը շուրջը պարուրող մարգագետնի վրայ: Ապա փափուկ խոտի վրայ կամաց-կամաց նրա քայլերը մարեցին: Տղաները մօտեցան պատուհանին եւ սկսեցին լրտեսել կանաչ փեղկերի միջից. նրանք ետեւից տեսան հօրը, արդէն հեռուում. նա ընթանում էր դանդաղ քայլքով, խոհուն, գուցէ փոքր-ինչ աւելի յոգնած:

«Ամէն ինչ գիտէ», – եզրակացրեց էդուարդը, թեթեւացած շունչ քաշեց եւ «Ամէն ինչ գիտէ» արտայայտութիւնը կրկնեց եղբօրը: Նրան տիրեց մի հաճելի թեթեւութիւն, ինչպէս մէկը, որ կծկուած է իրեն պաշտպանող ընտանեկան բնում, ապա վայելեց մի ներքին չար հրճուանք, որն եղբայրները թաքցնում էին միմեանցից:

Առանց իրար նայելու, թեթեւակի միմեանց հպուելով՝ նրանք դուրս եկան բիլիարդի սրահից. էդուարդը ապաստան գտաւ Կրեյցերի ջուլթակի սղոցող վարժութիւնների մէջ, իսկ Քայելը մօր մօտ՝ որը սկսեց մտահոգուած հարցաքննել նրան:

Բայց նրանցից եւ ոչ մէկը չտեսաւ Երուանդին այդ երեկոյ եւ յետագայ գիշերը: Դրսում մուլթը գնալով թանձրանում էր, իսկ տունը շողշողում էր լոյսերի մէջ: Ընթրիքի ժամն էր: Թերեզան, լուրից զինաթափ, խոհանոցում ծուլարած Անտոնիոյին ու Պինոյին ուղարկեց դուրս.

– Գտէ՛ք պրոֆեսորին, միգուցէ ձեր կարիքն ունենայ:

Ընդարձակ պարտէզում արձագանքեցին թաւ ու վախուորած ձայներ: Մայիսեան չքնաղ երեկոն կարծես սառել էր օդում, որը յագեցած էր կորուսեալ հայրենիքի հովանու վրայ մագլցող կարմիր վարդերի բոյրով:

Ի վերջոյ, Թերեզան կարգադրեց մատուցել ընթրիքը: Տոսկան մօտեցաւ պնակներով, իսկ Լետիցիան, դռանը յենուած, նայում էր: Հոգով-սրտով ցանկանում էր, որ ոչինչ պատահած չլինէր: Ատում էր պատերազմը, խորշում էր քսանամեայ, զինուորագրուել ցանկացող մինուծար որդու խանդավառութիւնից: Բարի տանտէրը օգնել էր նրան

զաւակի հարցում, լաւ ոռճիկ էր տալիս, հոգ էր տանում, երբեմն էլ հարցնում որպիսութիւնը: Վերջերս էլ պատմում էր նրան իր ճանապարհորդութեան ու հեռաւոր հայրենիքի մասին:

Լետիցիայի եղբայրը Ամերիկայում էր, եւ նա լաւ էր հասկանում բժշկին: Այնքան լաւ էր հասկանում, որ նման պահերին սիրտը կարծես կտոր-կտոր էր լինում, եւ չարտասուելու համար ձեռքն էր կծում ու գնում՝ ամանները լուարու:

Մայրն ու երեխաները լուռ աւարտեցին ընթրիքը:

— Այս խոնաւ գիշերին նա դրսում է,— հառաչեց Թերեզան ու լռեց: — Նա այնքան տարօրինակ է,— եզրափակեց կինը:

Դրանից յետոյ այլեւս երբեք տանը չխօսեցին Արեւելքի ձեռնարկի մասին:

Երուանդը դուրս էր եկել այգու ծայրին գտնուող բարձր պատի դռնակից, որ նայում էր գետին եւ փոքր, արծաթագոյն կամրջին, որ կառուցել էր տուել Թերեզայի համար: Դռան ներս ընկած հատուածում կռթնել էր պատին՝ բանալին ձեռքին: Լսում էր ձայներ եւ քայլեր, կծում էր ձեռքը, որ լաց չլինէր, եւ ուժասպառ փռուեց գետնին որպէս մի մուրացկան, որպէս մի օտարական: Պատերազմը երկար կտեւէր: Ինքն ու իր ընտանիքը երկու հակառակ ճակատների վրայ էին: Այցելութիւնը չեղեալ էր համարուել, կորուսեալ հայրենիքը ետ էր ընկրկում եւ մտնում հեռաւոր շրջանակի մէջ:

— Ա՛խ, Սմբատ, եղբայրս,— հեկեկում էր Երուանդը,— գոնէ զաւակներիդ ինձ մօտ ուղարկէիր:

Այս մտատանջութիւնների մէջ անցաւ ողջ գիշերը: Եւ այլեւս երբեք, երբեք չխօսեց իր ճանապարհորդութեան մասին:

Այդ նոյն օրը՝ երեկոյեան դէմ, Սմբատը զգուշաւորութեամբ գնաց գնդապետի մօտ: Ժամադրաւայրը եգիպտոսահի

ձեռնահամայ Մադամ Սեսոստրիսի յարմարաւէտ բնակարանում էր. բոլորը գիտէին, որ կինը բարձաստիճան պաշտօնեայի մշտական ընկերուհին էր: Յայտնի չէր, թէ արդեօ՞ք նա եգիպտոսահի էր, եւ թէ արդեօ՞ք նրա ձեռնահամայութիւնը ճիշտ էր. ինչ խօսք, գեղեցիկ, թխամորթ կին էր՝ նրբիրան, հայեացքի մէջ կրակ:

Սմբատը նրա մասին շատ բան գիտէր (թէեւ ցոյց չէր տալիս), բայց գիտէր նաեւ լռել: Այդ կինը մխիթարութիւն եւ հանգստութիւն էր տալիս թշուառներին, յուսալքուածներին ու ապա խենթութիւններ անում գնդապետի հետ՝ նրան պահելով իր գեղեցիկ ձեռքերի մէջ:

Սմբատը լսել էր տագնապալից ձայներ, շուկներ: Մի հայ երկաթուղային, որը Կոստանդնուպոլսի ճանապարհահատուածի վրայ էր աշխատում, Արեւելքում՝ ճակատային գծում տեղի ունեցող ջարդերի լուրեր էր բերել: Կարծես ուռնները մօտենում էին: Թուրք զօրավարների ռազմավարութիւնը յաջող չէր ընթանում:

Բոլորը սկսում են յիշել 1896 թուականի ջարդերը: Բայց Արդուլ Համիդը կենդանի չէ (անօթ ու կճուճ պատրաստելու հող է դարձել), եւ նոր կառավարութիւնը, իրաւացիօրէն մտածում են դեղատան բարեկամները սիգարի եւ մէկ գաւաթ սուրճի շուրջ, ուրիշ գործեր ունի անելու, եւ հայերին մտադիր չէ հետապնդել: Եւ յետոյ այնտեղ՝ մայրաքաղաքում, երեսփոխաններ կան, պատրիարքը, լրագրերը... Իսկ մեր զինուորները պատիւ են բերում մեզ, մենք հաւատարիմ հպատակներ ենք...

— Հանգի՛ստ, հանգի՛ստ: Բաւ է հանգիստ մնալ,— ասաց բժիշկ Գրիգորը: — մենք ինքներս պէտք է ձերբակալենք կուսակցութիւնների անդամներին, ովքեր քաղաքականութեամբ են զբաղւում, ովքեր ջուր են պղտորում: Ահա մեր ցուցանակը՝ Pharmacie Hayastane: Հայաստանն այն անունն է, որով հայերը կոչում են իրենց կորուսեալ հայրենիքը, Հայքի երկիրը: Իսկ դեղատունն ու Սմբատը յարգուած եւ ճանաչուած

են ամէնքի կողմից որպէս մի լիարժէք հաստատութիւն:

Եւ որքա՛ն նոր դեղորայք էր ներմուծել այդ փոքրիկ քաղաքը... Առաջիններից մէկն էր, որ ասպիրին հայթայթեց:

– Որպէս առաջընթացի եւ քաղաքակրթութեան փարոս, – յանկարծ միջամտեց Լեւոն Թումանեանը, որին բուսաբան էին կոչում, քանի որ տարիներ ի վեր կազմում էր Անատոլիայի բուսական աշխարհի քարտէզը:

Բոլորը ծիծաղեցին, որովհետեւ Լեւոնը երբեք չէր խօսում. բայց այսօր երջանիկ էր, որովհետեւ մի նոր ծաղիկ էր յայտնաբերել ջրվէժների վերելի մարգագետիններում՝ ծիրանագոյն մի փոքրիկ գարնանածաղիկ: Այնուամենայնիւ, Սմբատը փոքր-ինչ անհանգիստ էր եւ խորհրդակցում էր գնդապետի հետ Մադամ Սեսոստրիսի ձեռքը թղթադրամներից կազմուած էջերով վայելուչ փաթեթաւորուած մի «գիրք» տալուց յետոյ, որը յետոյ կինը կյանձնէր զինուորականին: Գնդապետը բարեյօժար, հանդարտ կերպով ասաց այն ամէնն, ինչ գիտէր: Մի քանի տաքգլուխ էր ձերբակալուել Կոստանդնուպոլսում, արեւելեան ճակատում մի քանի զինուոր դասալիք էր եղել՝ ուսաներին միանալու նպատակով («Եւ սա, ինքներդ էլ քաջ գիտէք, որ շատ ծանր է»):

Սմբատը միանգամայն համամիտ էր գնդապետին: Վերջինս ինքնիրեն մտածում էր, որ այդ զօրքերի հրամանատարը պէտք է որ վարպետութիւն չունեցող մէկը եղած լինէր: Ինքը կկարողանար այլ կերպ վարուել: Իր հայ զինուորները երբեք նեղութիւն չէին պատճառել իրեն, եւ չկամութեամբ էր կատարել նրանց զինաթափ անելու եւ դէպի արեւելեան ճակատ աշխատանքային գումարտակ ուղարկելու հրահանգը:

Սակայն ինչ–որ կասկած կար սրտում: Եթէ կարողանար իր մէջ խորասուզուել, առանց վարանելու կհասկանար, որ հայերն ուղարկուել էին այնտեղ, որպէսզի առաւել հեշտութեամբ ոչնչացուէին. ամէն դէպքում Հայկական ծրագրի վերջնական իսկութիւնն, այնուամենայնիւ, վրիպում էր նրա–

նից, չէր կարողանում այն լիովին պատկերացնել: Եւ չգիտէր, որ հէնց այս պատճառով էր ինքը կասկածելի դառնում կառավարութեան ու կուսակցութեան աչքին, եւ սա էր պատճառը, որի համար ինքն ուղարկուեց թիկունք:

Սեսոստրիսը, որ գնդապետից շատ աւելի բան էր հասկանում, կցանկանար ահազանգել Սմբատին, բայց վերջինս նրան այնքան յուսալից ու հանդարտ աչքերով էր նայում, որ կինը շարունակ յետաձգում էր խօսակցութիւնը մի ուրիշ օրուայ, մի ուրիշ ժամի. սակայն արդէն շատ ուշ կլինէր. Մադամ Սեսոստրիսը երբեք չէր մոռանայ այդ աչքերը եւ շատ տարիներ անց Աղեքանդրիայում՝ Ճարուկ թագաւորի քնկոտ եգիպտոսում, երեւելի դպտի մի հարուստի սիրուած ու յարգուած կինը դառնալով, շպարուած, փայլուն վարսերով Սեսոստրիսը կլինէր այն անանուն բարեբարուհին, որ ամէն տարի նաւահանգստի մօտ գտնուող հայկական որբանոցին կյատկացնէր շօշափելի դրամագլուխ՝ խաբելով ամուսնու, որ, իբր այդ գումարը տանուլ էր տալիս թղթախաղում:

Մայիսի քսանչորսին Իտալիան դրօշակներ ծածանելով եւ հայրենասիրական քայլերգի երթով ներքաշուեց պատերազմի մէջ: Մէկ օր առաջ Երուանդը եղբօրն ուղարկել էր յուսահատ մի հեռագիր: Բայց Սմբատը՝ հեռագրերի սիրահարը, երբեք չէր ստանայ այն, որովհետեւ հէնց մայիսի քսանչորսի գիշերը քայմաքամը վերջապէս կստանար Խր հեռագիրը, պաշտօնականը: Փոքրիկ քաղաքում կուսակցութեան բոլոր անդամներն արդէն արթուն էին: Գերմանացի դաշնակիցները զգուշացրել էին լուծութիւն պահպանել մինչեւ վճռական պահը, կարգ ու կանոն սահմանել, կազմակերպուածութիւն ցուցաբերել:

Տնից տուն ճշգրիտ ցանց էր հիւսուել: Բոլոր հանգոյցները տեղում էին, քուրդ ցեղերի պարագլուխներն արդէն զգուշացուած էին, սակայն խստօրէն պարտադրուած՝ առայժմ չերեւալ քաղաքում, եթէ, ի հարկէ, յետոյ ուզում էին ունենալ կողոպուտի իրենց բաժինն ու աղջիկներ ընտրե–

լու իրաւունքը: Քայմաքամը՝ ճարպոտ սարդի նման, ցանցի կենտրոնում էր: Օսմանեան կարգերի ծնունդ էր՝ առանց որեւիցէ արժանիքի, եւ ամէն կերպ ձգտում էր արժանանալ նոր տէրերի բարեհաճութեանը: Այդ իսկ պատճառով էլ որքան բթամիտ, այնքան էլ նախանձախնդիր էր ու վճռական՝ առիթը ձեռքից բաց թողնելու համար:

Քսանհինգի առաւօտեան կաթ բերողն ուշացաւ: Դուրուկի վարպետ հովիւ Հրանտ Յակոբեանն էր ամէն առաւօտ կաթ բերում տիրոջ՝ Սմբատի եւ փողոցի մի քանի ուրիշ ընտանիքների համար: Ամէն անգամ մի կաթսայիկ կաթ էլ շնորհւում էր ութսուն տարեկան պառաւ Երանիկ Զէնջիրջեանին, որը մի քիչ ցնդել էր, որովհետեւ որդին դադարել էր Ամերիկայից գրել: Ամէն անգամ, երբ Ռուբէնից նամակ էր գալիս, ով գիտէ, որտեղից որտեղ իմացած լինելով՝ գալիս էր հարցնելու, թէ արդեօք իր Պօղոսից լուրեր ունէի՞ն:

Երբ հովիւը եկաւ, տեսակցութիւն խնդրեց տիրոջ հետ: Սմբատը բակ դուրս եկաւ տարօրինակ, անհիւրընկալ կերպով: Ո՛չ հաց առաջարկեց, ո՛չ գինի: Լուռ էր, ասես քնից նոր արթնացած լինէր:

Հովիւը պատմեց, որ մի քուրդ ծանօթի էր հանդիպել, որն այսօր հրաժարուել էր իրենից կաթ գնել՝ ասելով.

– Քո անասունները վաղը իմը կլինեն:

– Դրանք իմը չեն, – պատասխանել էր հովիւը, – ես դրանց խնամում եմ դեղագործի համար:

– Աւելի ճիշտ կլինի, եթէ նրան թոյնների մարդ կոչես: Ուզում է բոլորիս սպանել իր այդ դեղերով, – պնդել էր քուրդը:

– Տէր իմ, գնում եմ եղբորս մօտ՝ Վան, – ասաց հովիւը յստակ, վճռական ձայնով, գլխարկը ձեռքին, ակնյայտօրէն փոխելով խօսքը: – Այս գիշեր եղբորս եմ տեսել երագիս մէջ, գիտեմ, որ ինձ է սպասում:

Բայց չասաց, որ եղբորը տեսել էր եկեղեցու աւազ խորանի ետեւում նկարուած հրեշտակապետի տեսքով, թուրը

ձեռքին, շրջապատուած թէժ կրակի լուսաւոր շրջանակով. նա թոռիչք էր գործել ու դուրս եկել շրջանակից, նախքան կրակի շրջանը կփակուէր (թւում էր, որ նրանից խանձուած շորերի հոտ էր գալիս):

Սմբատը նրան բաց թողեց: Գիտէր, որ այդ ծերունին կնոջն ու զաւակներին կորցրել էր 1896 թուականին եւ որ այդ օրուանից ապրում էր մեն-մենակ ու շարունակ խօսում էր հրեշտակների ու առեղծուածային թոպմա եղբօր հետ, որին ոչ ոք չէր տեսել:

– Հրանտ, պէտք է գնաս Աստոնյ ճանապարհով, – ասաց Սմբատը նրան այդ արեւաշող առաւօտը եւ առաջին անգամ ահռելի ծանրութիւն զգաց ուսերին (ա՛խ, կտեսնի՞ արդեօք նա կրկին արեւածագն ու արեւամուտը եւ Երուանդին)...

– Հարկաւոր է փոխել ծերուկ Յակոբեանին, – ասաց Սմբատը կնոջը յաջորդ առաւօտ նախաճաշին: Ապա երկուսով սուզուեցին իրենց բարդ խաղի մէջ, որը նրանց շատ էր զուարճացնում. բեմականացնում էին դրուագներ Երուանդի վերադարձից: Իր բացարձակ միամտութեամբ՝ Շուշանիկը դոյզն-ինչ կասկած չուներ Երուանդի կնոջ վրայ՝ ի տարբերութիւն Սմբատի, որի կասկածներն է՛լ աւելի էին խորանում երեկոյ առ երեկոյ դեղատանը. եւ Սմբատը երախտապարտ էր կնոջը:

Հէց այդ պահին Լեսլին դուրս եկաւ պահարանի տակից: Բոլորն արդէն ընդունել էին, որ դա իր տարածքն էր, ու միայն կանայք էին երբեմն-երբեմն աւլում այդ մասը:

Տղան ձեռքին ունէր սուլիչ ու ածելի: Հանդիսաւորութեամբ մօտեցաւ նստած ծնողներին ու ժպտաց: Բայց Լեսլին միշտ էր ժպտում, անմեղ խորամանկութեամբ, իր այնքա՛ն կարեւոր քթի տակ:

– Լեսլին ձեր միջի ամենատարաշխարհիկ անունն ու ամենահայկական դէմքն ունի, – միշտ ասում էր Սմբատը որդիներին. եւ վերադիր անունը ընդմիշտ մնաց փոքրիկի

վրայ: Հայ Լեսլին միշտ ժպտում էր ու ինչ-որ բան հաւաքում: Ինը տարեկան էր:

Վերոն հօրաքոյրը նրա համար կօշիկի երկու մեծ տուփ էր առանձնացրել ու կտորով պատել. այս փոքրիկն ամենայն ճշգրտութեամբ կողք կողքի էր շարում իր ունեցածը՝ կոճակներ ու փոքր անիւններ, պտուտակներ ու սուլիչներ, կտորի ու ժապաւէնի լաթեր, Իւմէնէի տուած յոյն սրբերի մի երկու նկար («Միւնտյանն է, ես իմ սուրբը չունեմ,— մտածում էր երեխան,— ուստի բոլոր սրբերն էլ իմն են, կարող եմ բոլորին աղօթել»), Գրիգորի նուիրած ատրճանակի փամփուշտը եւ իր ընթացանութեան գիրքը:

Բայց այսօր Լեսլին սովորականից աւելի քիչ էր խօսում: Սուլիչը տուեց հօրը, իսկ փոքրիկ, ժանգոտած ածելին՝ մօրը:

— Դու սուլիւր, իսկ մայրիկը թող քեզ սպանի,— վճռական յայտարարեց նա: Ապա շրջուեց ու մտաւ իր թաքստոցը, արկղերը հրելով պահարանը պահող հաստիկ ու կարճ ոտքերի ուղղութեամբ, որոնք արտաքին կողմից աւարտուում էին առիւծի զօրաւոր ճանկերով: Սա բոլորի կողմից ճանաչուած եւ յարգուած նշան էր. Լեսլին չէր ցանկանում, որ իրեն անհանգստացնեն: Դուրս կգար, երբ քաղցած կլինէր, ճիշտ ճաշի ժամին, հանգիսաւոր պահին, երբ ոչ ոքի չէր թոյլատրուում ուշանալ:

Բայց այսօր նոյնիսկ ճաշն էր ուշանում: Տարօրինակ էր, երեխաները բոլորը տեղում էին, ձիգ կանգնած իրենց աթոռների ետեւում, Սմբատը սեղանի գլխին էր, տիկին Նուարդն էլ՝ նրա աջ կողմում նստած, Վերոնն ու Ազնիւրը եւս այնտեղ էին: Բացակայում էր Շուշանիկը, որը խոհանոցում ինչ-որ մէկի հետ ցածրաձայն խօսում էր:

Անրիեթի համար, որն այդ պահին երեք տարեկան էր, աշխարհը կանգ առաւ: Վրան խրթխրթան խաշխաշ ու քնջութ ցանած ձուածեւ տնական հացի բոյր, երեք լեփ-լեցուն ամաններում մածնի մէջ կտրտած վարունգի թթուաչ հոտ, ուլի մսով եփած սմբուկի զգլխիչ բոյր, ջրվէժների ջրով

ու փրփրուն խնձորօղով լի ջրամաններ. այս ամէնը կթանձրանար նրա մէջ մեղքի, վիրաւորանքի ու չյարմարուելու մշտնջենական զգացումով: Այդ հեռաւոր մայիսեան արեւոտ օրը նա եւ իր ազգականները՝ մեծ ու փոքր, կդատապարտուէին ու մեղաւոր կճանաչուէին, որ... գոյութիւն ունէին, իսկ Աստուած քօղարկուել էր:

Դռների մէջ յայտնուեց բժիշկ Գրիգորը՝ խոսվայոյզ: Ժամացոյցը շեղ կախ տուած, օձիքը դուրս ցցուած՝ վազեց Սմբատի մօտ, թեքուեց նրա վրայ եւ թեթեւակի ծնկի գալով՝ շշնջաց.

— Բոլորիս կձերբակալեն, փախէ՛նք:

— Ու՞ր, ինչպէ՞ս: Եւ յետոյ, ինչու՞: Դեղագործի եւ բժշկի կարիք միշտ կլինի.— պատասխանեց Սմբատը ողջամտօրէն:

— Բոլորս գնանք Ագարակ:

— Իսկ յետո՞յ:

Այդ պահին դէպի խոհանոց բացուող դռան մէջ յայտնուեց Իսմէնէն՝ ձեռքերը թափահարելով: Նրա ետեւից երեւաց Շուշանիկը, որը պարզած ձեռքերում բարձր պահած բերում էր Ֆրանսական ապուրամանը: Շուշանիկը, որն իր ուշագրաւ, նուրբ կարգուսարքով միշտ հաճոյքով ըմբոշխնում էր Ֆրանսական յախճապակու տաքութիւնը, այսօր գրեթէ դժգոհութեամբ ցած դրեց ապուրամանը սեղանին:

Երիտասարդ խոհարարուհի Արաքսին գալիս էր նրա ետեւից՝ արծաթեայ շերեփը ձեռքին. մի պահ կարգ ու կանոնը վերահաստատուեց, եւ բոլորը ենթարկուելով նստեցին՝ վայելելու կակուղ իմրիկը:

— Քայմաքամը հրահանգել է բոլոր ընտանիքների աւագներին ներկայանալ կուսակալութիւն այսօր՝ ժամը երեքին: Մունետիկը շրջում է փողոցներով ու յայտարարում,— ապուրն ուտելուց յետոյ շշնջաց Գրիգորը Սմբատին: — Ես չեմ վստահում սրանց: Եթէ Ազնիւին խնդրենք, որ ձին տանի տան ետեւի նեղ փողոցը, ապա կարող ենք դուրս գալ պարտէզի

դռնակից եւ դուրս սահել Մայր տաճարի ետնամասով ու քո երկանիւ կառքը նստած՝ կհասնենք Ագարակ, որտեղ կմնանք մինչ վաղը: Եթէ ոչինչ չենք իմացել, ուրեմն մեղաւոր չենք, իսկ մինչ այդ Ազնիւն ու Վերոնը ամէն ինչ կիմանան:

Սմբատը հեշտ էր համոզուում: Կարծում էր, որ մարդկանց իրար գլուխ հաւաքելը մի նպատակ ունէր միայն՝ «յատուկ հարկերի» հաւաքում, որպէսզի քայմաքամի գորքերը լաւ երեւան, որպէսզի «մեր զինուորները նեցուկ լինեն», քայմաքամի մէկ այլ քմահաճ պատրուակ:

Բարեբախտաբար, մտածում էր նա, մարդիկ միշտ դեղերի կամ ֆրանսական անուշահոտ իւղերի կարիք ունեն. մի քանի ամիս է, ինչ նա վաճառում էր դրանք խանութի ետնամասում՝ գործասեղանի վրայ, եւ այդ աշխատանքը յանձնուած էր Վերոնի հմուտ ձեռքերին:

Տղամարդկանց մեկնելուց յետոյ ընտանիքը նստած մնաց, կարծես վախենում էր շարժուելուց: Շուշանիկը լուռ աւարտեց ճաշն ու կրկին առանձնացաւ Իսմէնէի հետ, որի տեղեկութիւնները կցկտուր էին ու վախեցնող: Շուշանիկը չկարողացաւ Սմբատին փոխանցել այդ լուրերը ամուսնու մեկնելուց առաջ եւ նրան կրծքին սեղմելով՝ թողեց, որ մեկնի:

Այժմ պէտք է միայնակ գործեր: Հայրը՝ Դաւիթ Ձաքարեանը, առասպելական վաճառականը, որ կտրել-անցել էր բազում ճանապարհներ, հարսանիքի օրը զգուշացրել էր Շուշանիկին. «Իւրաքանչիւր հայ կնոջ կեանքում մի պահ կայ, երբ ընտանիքի պատասխանատուութիւնն ընկնում է նրա ուսերին: Մենք կմեռնենք յանուն այն բանի, որ զերծ պահենք մեր մարգարիտներին, մեր մայիսեան վարդերին այդ բռնից, եւ իրօք մեռնում ենք»:

Շուշանիկը մի պահ յուզուեց եւ արագ-արագ աղօթք շնչացրեց:

– Հայր Աստուած եւ իմ Հայր Դաւիթ, որ նրա հետ ես եւ նստած ես Աբրահամի գրկում, գեղեցկացրէք մեզ համար մեր երկնաւոր հայրենիքը, եւ բոլորիս համար քաղցրացրէք

դէպի վեր տանող ճանապարհը (Շուշանիկի համար դրախտը եւս նունենինների պարտէզ էր):

Ապա ուղեկցեց Իսմէնէին դէպի վերնայարկի իր ընդարձակ ամուսնական սենեակը: Այնտեղ բացեց ֆրանսական ծակոտկէն արկղը, որտեղ պահուում էր տասնութ տարի առաջ կրած հարսանեկան ձեռնոցը, որը շրջելով ճկոյթի մասից դուրս հանեց Ծաթիմայի ձեռքի տեսքով, մանր փիրուզով զարդանախշուած փոքրիկ մի բանալի:

Մօրից՝ գունատ աղջնակ Հայկանոյշից, որին երբեք չէր ճանաչել, ժառանգած մեծ հայելիով հսկայ պահարանի ներսից, ներքին խոռովքը զսպելով, Շուշանիկը հանեց մետաղեայ մի տափակ արկղ, որն ասես անվտանգութեան արկղ լինէր, որտեղ պահուում էր ոսկու եւ գահարեղէնի իր անձնական հարստութիւնը: Լուռ, հաստատակամ, հաշուի չառնելով, որ առաջադէմ ամուսինն ու նրա ընկերները ծիծաղում էին վրան, Շուշանիկը չցանկացաւ արժեթղթեր կամ դրամատնային հաշիւ ունենալ, այլ իր անձնական ամէն եկամուտ, ամէն նուէր, ամէն փոքրիկ վաստակ վերածեց ոսկեդրամների եւ անգին քարերի. եւ այժմ Իսմէնէի հետ մտածկոտ նայում էր իր փոքրիկ գանձին:

Երկուսով խաչակնքեցին, ապա Շուշանիկը մէկ այլ պահոցից հանեց հասարակ կտաւից հաստ տոպրակներ եւ գանձը երկու մասի բաժանեց:

Իսմէնէին վստահեց առաւել խոշոր տոպրակը:

– Իսկ հիմա գնա, Իսմէնէ, – ասաց նա: – Նայիր, լսիր, զննիր այն ամէնն, ինչ կարող ես: Եթէ մեզ հետ նման կերպ են վարւում, ապա յետոյ թերեւս յարձակուեն նաեւ յոյների վրայ, բայց դու Իսմէնէն ես, եւ ոչ ոք չի համարձակուի վատութիւն անել ողբասացին: Եթէ առիթը ներկայանայ, նախ եւ առաջ մտածիր երեխաներիս մասին: Ես լաւ եմ ապրել:

Ինչպէս լքուած մի երեխայ, Իսմէնէն արտասուեց՝ դէմքը հպած Շուշանիկի ձեռքերին: Արտաքուստ դեռեւս ոչինչ չէր պատահել. Շուշանիկը սրբեց նրա աչքերը:

– Իմ հին բարեկամ, հէնց դու ես, որ ընկերակցում ես Հանգուցեալներին: Եւ ոչ ոք մեզ չի խոստացել, որ այս կեանքը յաւիտենական է:

Այդ պահին մի զապտիէ¹⁰ ցնցեց մուտքի դուռը, ապա հրելով ներս մտաւ ու յայտնուեց ճաշասեննակում: Շփոթուած էր, բայց յարձակողական տեսք ունէր. լուում էր՝ սպասելով ընկերոջը եւ չտեսի պէս նայում էր կերակրի մնացորդներին: «Այստեղ են»: Դեռեւս այնքա՛ն բան կար ասելու, այնքա՛ն քաղցր խօսք փոխանակելու, սակայն Շուշանիկն ու Իսմէնէն չգիտէին ինչպէս վարուել: Բայց իւրաքանչիւրը լաւ գիտութիւն պէս կանէր իր գործը: Տոպրակներն անհետացան տարողունակ գրպաններում: Դրամարկըն իր տեղում էր՝ մէջը մի քիչ դրամ:

Աստիճաններով իջնում էին ծիսական կարգով, որպէս տիրուհի ու աղախին, կարծես պարելով իրենց հին, վեհաշուք պարը:

– Եթէ տանտիրոջն ես փնտրում, նա այս առաւօտ մեկնել է, – ասաց Շուշանիկը զինուորներին միանգամայն հանդարտութեամբ: Նրանք կնոջը զեկուցեցին ամուսնու՝ կուսակալութիւն ժողովի գնալու հրամանը: – Երբ վերադառնայ, անմիջապէս կասեմ:

Ոստիկանները զուարճացած նայեցին միմեանց, իսկ մէկն ասաց.

– Միեւնոյնն է, վազն էլ ուշ չի լինի:

Ապա դանդաղ ու ճշգրիտ մի շարժումով երկարացրեց ձեռքը դէպի սեղանի կենտրոնում դրուած ապուրամանը: Մի պահ թուաց՝ փաղաքշում էր այն. ապա շարժումն արագացաւ եւ ապուրամանը շրխկալով յայտնուեց յատակին:

– Օ՛հ, – ասաց մարդը, ապա նորից ժպտաց ու դուրս եկաւ ընկերոջ հետ:

Այդ պահից սկսած՝ ժամանակն արագընթաց վազքի մէջ էր՝ մերթ ընդ մերթ խաբուսիկ դադարներով: Իսմէնէն փորձում էր յուշիկ քայլել երկու զապտիէների ետեւից: Հետեւելով իր կատուային բնազդին՝ յոյս ունէր, որ ցանցով ետ գնալով՝ կգտնէր սարդին: Նրա փոշոտ, սեւ հագուստը անհետանում էր փողոցի անկիւններում: Անէծքներ էր քրթմնջում՝ քաջութիւն վերագտնելու համար:

Մինչ այդ իջնում էր մեռելային լուութիւն, որը չարագոյժ մշուշի պէս պարուրում էր հայկական թաղամասը: Միայն Իսմէնէն չէր, որ շարժում էր երկու զինուորների ետեւից. նրա պէս հողազոյն ծեր կանանց մի ամբողջ պարս՝ տնային ծառաներ, մուրացկաններ, աղքատ այրիներ, մտնում էին ծակ ու ծուկ անկիւնների ետեւում՝ նայելով զինուորներին, որոնք հռչակալով տնից տուն էին անցնում՝ իրենց ետեւից սփռելով մահուան սարսափ:

Անհասկանալի մի զարմանք էր տիրում շուրջըլորը: Մի-ծաղկոտ շուրթերը փակուում էին տագնապի բիւր ճիչերով, մահուան բիւր մտածումներ էին արթնանում եւ միանալով անորոշ տագնապի հետ՝ խելայեղ պար բռնում: Երեխաները, գրպանները քաղցրաւենիք լցրած, թաքնուում էին: Ահ ու սարսափի սուր, ծակող հոտը տարածուում էր որպէս ժանտահոտ:

Այդքան տարուայ մէջ առաջին անգամն էր, որ դեղատուներ փակուում էր: Վերոնին զգուշացրել էին: Երեկոյի ընկերները՝ այն նոյն յանդուգն մարդիկ, որոնք մինչեւ երէկ նրան սիրահետում էին, այժմ յայտնուում էին որպէս ուրուականներ՝ մէկը միւսի ետեւից սահելով պատերի երկայնքով եւ շշնջալով:

– Մեզ ժողովի են կանչել... գալու են խանութները կողոպտեն... կլինի ինչպէս 1896 թուականին... ու՞ր է Սմբատը...

Վերոնը ճիգ էր գործադրում, որպէսզի պատասխանէր հանդարտօրէն, բայց նրանք աղջկան չէին լսում եւ վերստին սահում էին դուրս ապակեայ խելայեղ աչքերով: Այդ օրը ոչ

¹⁰ Զապտիէ – թրք. հսկիչ զինուոր (ոստիկան զինուոր) (ծնթ. թարգմ.):

մի յաճախորդ չերեւաց: Անհուն ամայութեան մէջ քաղաքը կարծես շունչը պահած լինէր:

Վերոնը գիտէր, որ բժիշկ Գրիգորը Սմբատի հետ Ագարակում էր, եւ ինքն իրեն համոզում էր, որ նրանց կայացրած որոշումը ճիշտ էր, եւ անհրաժեշտ էր նրանց միանալ ողջ ընտանիքով: «Միայն թէ երեխաները դէտուզեն գնացած չլինեն», – անհանգստացած մտորում էր նա: Ապա այլեւս չգիմացաւ աճող լուսթեանը, շշուկներին: Ասես երեկոյ լինէր. սկսեց ջանասիրաբար փակել աշխատասեղանին շարուած սրուակները՝ խնամքով տեղաւորելով դրանք դարաններում հերթականութեամբ, իջեցրեց փաթաթուող վարագոյրը, որ պահում էր ներքին կարճ միջանցքը, թոյների սենեակը, եւ բանալիով փակեց ափիոնը, մորֆինը, լաւդանը եւ բանգանիւթը: Վերցրեց առաւօտուայ եկամուտը, ուղղեց աշխատասեղանի վրայի անուշահոտ իւղերը, պտտելով փակեց փարիզեան նորաոճ օձանակիքը՝ l'Eau de Coty, եւ պատրաստուեց դուրս գալ:

Փորձում էր հանգիստ երեւալ՝ մտքում արդարացուցիչ պատճառաբանութիւն գտնելով, եթէ հարցնէին, թէ ինչու էր այդքան շուտ տուն գնում: Սակայն չորսբոլորը ամայի էր: Դրսի դռան ծանր բանալին յանկարծ սահեց նրա խոնաւ ձեռքից, եւ գետին ընկաւ մետաղադրամի զրնգոցով:

Այդ պահին Վերոնը, մի յանկարծակի շարժում անելով, կարծես ինչ-որ բան յիշած, արագօրէն ետ գնաց դեղատուն: Գաղտնի դարակից (այսպէս կոչուած «գաղտնի», որովհետեւ Սմբատի գաղտնիքները բոլորը գիտէին) հանեց ամերիկեան գերժամանակակից մետաղեայ փոքր դրամարկղի բանալին, որ Սմբատն էր անցեալ տարի տեղադրել տուել Լոնդոնից ժամանած մի մասնագէտ դարբնի: Ասես տենդագին երազում լինէր. հեշտութեամբ բացեց բարդ կողպէքը, որին երբեք նախկինում ձեռք չէր տուել, եւ արագօրէն գրպանը դրեց ոսկեդրամների գլանիկները, արծաթով լի տոպրակներն ու թղթադրամները:

Աշխատում էր արագ, ասես վարպետ գող լինէր: Վերջացնելով գործը՝ փակեց եւ բանալին տեղը դրեց: Ապա ծանրացած դուրս եկաւ եւ առանց ետ նայելու՝ արագ սլացաւ: Այլեւս չէր տեսնի Հայաստան դեղատունը: Յետագայ տարիներին թուրքերի մի խումբ յետմիջօրէին սովորոյթ կդարձնէր գալ, նստել կողոպտուած, աւերուած դեղատան երերուն, խունացած ցուցանակի տակ՝ առանց բարձրաձայն արտայայտուելու յիշելով Սմբատի բարութիւնն ու զուարճասիրութիւնը, իսկ Վերոնն ամէն երեկոյ անապատում կյիշէր այն բանալին, որ շրխկոցով գետին ընկաւ: Եւ շնորհիւ այդ ոսկու, այդ դրամի, որ մաս առ մաս կուլ տուեցին՝ փրկելու համար դրանք յաճախակի խուզարկումներից, կյաջողուէր փրկել երեխաներին, հասնել Հալէպ, վերապրել:

Տանը կարծես ամէն ինչ հանդարտ էր: Նուարդը գնացել էր ընկերուհուն՝ կտորեղէնի վաճառական Ջաբելին, այցելութեան, եւ բոլորը թեթեւացել էին, որ չպէտք է դիմակայէին նրա նեարդային ցնցումներին ու յամառ հարցապնդումներին: Վերոնը փնտրում էր Ագնիւին, որը եւս դուրս էր եկել՝ լուրեր իմանալու, ապա Շուշանիկին, որին գտաւ միջնայարկում՝ սպիտակեղէնի պահարանների մէջ մխրճուած, գարնանային լուացքից յետոյ սաւանները հաշուելիս: Լուացքի կտորները շարուած էին ձախ կողմի սեղանին, իսկ մկրատն ու գունաւոր կերպասից ժապաւէնները՝ աջ:

– Որքան ասես ժամանակ ունեմ, – ասում էին Շուշանիկի փոքր-ինչ առաջ կուացած ուսերը, – ահա այստեղ եմ՝ իմ գեղեցիկ տան մէջ, եւ հաշուում ու դասաւորում եմ իմ սպիտակեղէնը: Նուբարը խաղում էր ժապաւէնով նրա ոտքերի մօտ:

Վերոնին պատեցին սպառնալիք, խուժք, սրտակցութիւն, ինչպէս նաեւ յարգանքի խոր զգացում հանդէպ այդ ուսերը, որոնք յանկարծ ասես իրենց վրայ վերցրին աշխարհի ծանրութիւնը: «Ա՛խ, Շուշանիկ, իմ հարս, իմ բարեկամ», – փղձկաց աղջիկը՝ գիտակցելով, որ միայն նա եւ ոչ թէ իր

եղբայր Սմբատը կարող էր իմաստ տալ այն ամենին ինչ կատարուում էր, դեռ աւելին, այն ամենին ինչ կատարուելու էր, վախին, որ կոկորդն էր սեղմում (որովհետեւ դեռ ոչինչ չէր պատահել, գրեթէ ոչինչ. բայց ո՞ր հայ աղջնակը չէր գիտակցում, ջարդերի ու սպառնալիքների մասին):

– Շուշանիկ, ինձ կներես: Փակել եմ դեղատուներ... (եւ չասաց մետաղեայ դրամարկղից հանածի մասին, ինչպէս եւ Շուշանիկը նրան ոչինչ չասաց իսմէնէի հետ կիսած փոքրիկ գանձի մասին. այն, ինչ մարդ չգիտէ, չի կարող վնաս բերել...):

– Լաւ ես արել.– ասաց Շուշանիկը մեղմ ու հանդարտ,– այժմ պէտք է սպասենք, որ ժողովուրդը վերադառնայ կուսակալութիւնից: Իսկ մենք՝ կանայքս, պէտք է պատրասուենք այն...

Այստեղ ձայնը խզուեց, հեռացաւ, ասես տատանուելիս լինէր՝ շարունակե՞լ, թէ՛ ոչ: Ի վերջոյ, Վերոնը երիտասարդ, անփորձ կին էր: Բայց այդ պահին տան մուտքի մօտից լսուեցին ձայներ եւ ոտքերի քսքսոցներ: Բաւականին մարդ կար: Շուշանիկն ու Վերոնը միասին ոտքի ելան եւ միասին իջան աստիճաններից ձեռք ձեռքի բռնած, քոյրերի պէս:

Նախամուտքի մօտ՝ Սմբատի հպարտութիւնը շոյող կադնուց պատրաստուած նստարանի վրայ, կանգնած էին կամ նստած երկու ատաղձագործ եղբայրները՝ ժամկոչ Կարոյի հետ, որը բռնել էր փոքրիկ Կարոյի ձեռքը, եւ միւս ժամկոչը՝ կաթողիկէ Վարդան Առաքելեանն իր որդու՝ արեւմտեան սնափառ անունով Ջեյմսի հետ: Այնտեղ էր նաեւ փոստատար-լուսանկարիչը, յոյն քահանայ Իսակը, (որին չէին կանչել ժողովի, բայց, միեւնոյնն է, վախենում էր), տան ծառայ Յակոբը, նրա ընկերներից մէկը՝ Չախլիկ անունով, եւ պարտիզպան Ներսէսը:

Բոլորը յուսաւառ աչքերով դիմեցին Շուշանիկին: Նա կգիտենար ինչ անել: Բոլորն արդէն, բնականաբար, գիտէին,

որ Սմբատը Ագարակում էր, եւ նրանց մէջ գործում էր ուժեղ մի բնագդ, պաշտպանութեան տանուտիրական խնդրանք, որը պէտք էր ուղղել Սմբատի կնոջը՝ Շուշանիկին: Այս փոքր խումբը հաւատում էր նրան եւ սպասում յարգալից համբերութեամբ: Հայկական հեզ աչքերը նրան էին հետեւում յուսաւառ, աստիճաններն ի վար:

– Մայրիկ, իմ բարեկամները քեզ էին փնտրում,– ասաց Կարոն զրնգուն ձայնով:

Մայրիկ... Շուշանիկը ցնցուեց, Կարոն խօսեց բոլորի անունից: Բայց ոչ միայն այդ հասարակ մարդիկ ու իր զաւակներն էին կախուած իրենից, այլեւ Սմբատը, որն այնտեղ էր՝ Ագարակում: Ամուսնուն վերստին տեսնելու մի անզուսպ զգացում յանկարծ համակեց նրան, մի քօղ մթագնեց նրա խաղաղ աչքերը:

Շուշանիկը մոռացաւ ամէն ինչ՝ տուներ, պահարանները, սպիտակեղէնը: Ահա մահուան հրեշտակը, որի ծանր աչքերը նրան էին յառած. եւ մինչ Շուշանիկը ինքն իրեն համոզում էր (ինչպէս միշտ), որ մշակել էր միմիայն կնոջը յատուկ ռազմավարութիւններից մէկը, հէնց ինքն էլ այս անգամ կդառնար իւրայիշնների ճակատագիրը որոշողը:

– Բոլորս գնանք Ագարակ,– ասաց Շուշանիկը,– այնտեղ ոչ ոք չի համարձակուի ոտք դնել: Բոլորդ մէկ ժամից հաւաքուէք տան ետեւի նեղ արահետում՝ պարտէզի դռնակի մօտ: Այս երեկոյ զբօսախնջոյք կկազմակերպենք՝ ի հակառակ նրանց, ովքեր մեր վատն են ցանկանում: Եւ բոլորս ուրախ-զուարթ կուտենք-կխմենք: Օրերը երկար են, օդն արդէն տաք է: Բերէք նաեւ ձեր կանանց, որ ինձ կօզնեն:

Կսկիծն ու մտատանջութիւնը փարատուեցին ուրախութեան մէջ: Բոլորը վազեցին լցնելու զամբիւղները. ճիշտ է, Շուշանիկի հիւրասիրութիւնը առասպելական էր, բայց եւ հիւրը չէր կարող ներկայանալ ձեռնուռնայն:

Շուշանիկը խոհարար Արաքսիի եւ թաղամասում անօ-

գուտ պտոյտից վերադարձած եւ աւելի հեռուն հարկ եղած համարձակութիւն չունենալու պատճառով չգնացած Ազնիւի հետ հագցնում էր երեխաներին: Նուբարը քմահաճութեամբ հագաւ ժապաւէնագարդ աղջկական զգեստ եւ դրեց քրոջ վարդագոյն գլխանոցը: Նա խելքը թոցնում էր քոյրիկների զգեստների խշխշոցից, որն այնքան հաճոյք էր պատճառում իրեն: Ողջ աշխարհի հանդէպ սիրով լցուած իր մեծ սրտով Կարոն ուրախութիւնից խենթացել էր. մի ամբողջ երեկոյ բոլորի հետ՝ բոլոր բարեկամների, մայրիկի, հօրաքոյրերի, հայրիկի... Պարել Ագարակում եւ վազվզել ջրվէժների տակի մարգագետիններում: Երջանկութեան հոգոց հանելով, Կարոն խոստանում էր իր հրեշտակին, որ ինքը շատ լսող ու խելօք կլինէր:

Մինչդեռ Լեսլին ու Սուրէնը քթները կախեցին: Ձէին ցանկանում, որ իրենց անհանգստացնէին. Լեսլին՝ այն պատճառով, որ արդէն ճաշից առաջ կատարել էր իր ելքը պահարանի տակից, իսկ Սուրէնն էլ անցել էր վախի ու փախուստի սանձարձակ դողի միջով եւ զգում էր տարածուող հսկայական սարդոստայնը: Կփափազէր, կփափազէր ձի հեծնել, սուր ճօճել, հերոս լինել՝ Սասունցի Դաւիթ, Վարդան Մամիկոնեան... Հոգու խորքում կցանկանար նաեւ միայնակ փախչել այս փոքր աշխարհից, որը ոչինչ էր հասկանում եւ չէր տեսնում պատերի վրայի ստուերները:

Բայց Շուշանիկն այս երեկոյ կարծես փոթորիկ լինէր: Նոյնիսկ տիկին Նուարդն էր ենթարկւում նրա աճապարանքին եւ շտապով բարձրացաւ մեծ կառքը երեխաների, Ազնիւի եւ Վերոնի հետ: Շուշանիկը հետեւեց նրանց միւս կառքով՝ մթերքով բեռնուած, Արաքսու եւ մնացածների հետ միասին: Իսակը տանն էր թողել կնոջը՝ Կատերինային՝ չուզենալով անհանգստացնել նրան: Երկու ատաղձագործ եղբայրները, որոնք աւարտել էին գմբէթի ներկելը եւ երկու օրից մեկնելու էին ԱՄՆ, կառապանի դեր էին կատարում: Սա լինելու էր նրանց հրաժեշտի երեկոն, ուստի բերել էին մի շիշ

հնեցուած կոնեակ եւ երաժշտական գործիքներ՝ պարեղանակներ նուագելու համար:

Հայկական թաղամասի ճնշիչ լուռութեան մէջ ուրախ խումբը, մտովի խնջոյքը վայելելով ճանապարհ ընկալ՝ ընդոստ սլանալով կուսակալութեան առջեւից:

Իրօք, ուղեւորներից ոչ մէկին չէր հետաքրքրել ժողովը. նրանց մէջ ընտանիքի աւագներ չկային, բացի երկու ատաղձագործներից, որոնք իրենց արդէն օտարական էին համարում, իսկ քահանայ Իսակն էլ կապ չունէր, քանի որ յոյն էր:

Պահակախմբի՝ սովորականից աւելի շատ զինուորները չհաւատացին իրենց աչքերին: Երկուսը վազեցին լեյտենանտ Իսմայիլ Կիզիլջիկի մօտ, որը մայրաքաղաքից նոր ժամանած սպայ էր եւ ղեկավարում էր զօրախումբը. ճանաչեցին կառապաններին եւ կառքերը եւ հետեւեցին, թէ խումբն ուր էր ուղեւորուել, թէ որտեղ կարելի էր նրան գտնել:

– Այս շուն գեաւուրները մեզ բարկացնում են: Գնում են քէֆ անելու իրենց ամառանոցում: Դաւաճաններ, անամօթներ:

Այդ երկուսը, ձի հեծած, կասկածելի մտադրութեամբ, ճանապարհ ընկան: Նրանց թշուառական մտքում փայլատակել էր չհսկուած տունը կողոպտելը, եւ, յետոյ, աղջիկների ծիծաղկոտ աչքերն այնքա՛ն գայթակղիչ էին: Բայց նրանք միայնակ չէին կարող նախաձեռնել նման գործ:

Սակայն լեյտենանտը եռանդուն իթթիհատական էր, զարգացած մարդ, քաղաքից, որ ձգտում էր պաշտօնի եւ արեւելքի աշխարհ դուրս գալու մասին: Հայերի հաւաքը շարունակւում էր, եւ նա լաւ գիտէր, թէ այն գործնականում ինչ վախճան կունենար: Ու՞ր էր գնում այդ ընտանիքը, ի՞նչ էր դաւում, ովքե՞ր էին այդ մարդիկ, եւ ու՞ր էին գնում այս կառքերը: Գրգռուած ձայները պատասխան էին տալիս: «Արդեօ՞ք դէպի Արտոյտների Ագարակը: Ջրվէժների մօտ»: Իր սպասած առիթը ներկայացել էր, հարկաւոր էր օգտուել

դրանից, առանց կիսելու փառքը մէկ ուրիշի հետ: Մի փոքր երեւակայութիւն՝ գործողութիւնների մէջ, մի փոքր նախաձեռնութիւն... միեւնոյնն է, շուտով այս կամ այն կերպ ազատ ասպարէզ կունենային ... եւ այնքա՛ն գոռոզ այս հայ ժողովուրդը, որն արդէն դատապարտուած էր ոչնչանալու, պատկանում էր բոլորին եւ ոչ մէկին... Այս պարագայում միջամտելը կարող էր դաս լինել, ինչպէս նաեւ ժամանց:

Ուստի Իսմայիլը որոշում կայացրեց: Վստահեց զօրամասն իր ենթակային, որը մի քիչ անտաշ, բայց լաւ մարդ էր, հարցեր քիչ էր տալիս, եւ վագեց իրեն զգուշացրած երկու զինուորների հետ դէպի զօրանոց, որտեղից վերցրեց եւս տասը կամաւորներին՝ ըմբոստներին դաս տալու համար, խոստացաւ նրան հատուցում: Ապա իր փոքր խմբով զինուեց ու ձի հծնեց:

– Եկէք ինձ հետ, – ասաց նա չոր, – կզուարճանանք: Բայց քաղաքից դուրս գալիս չաղմկէք: Պէտք չէ ոչ ոքի տագնապի մէջ գցել:

Այսպիսով, կառքերի ուրախ անցումից մէկ ժամ անց տասներեք զինուած ձիււորները գնացին միեւնոյն ուղղութեամբ, լուռ ու մահազդու:

Բայց Արսինէն՝ լաթերի ծեր վերավաճառողը, աչալուրջ էր: Երկու ժամ առաջ տեսել էր Իսմէնէին, եւ իրար հետ ինչ-որ բան էին շնջացել: Այժմ գտնուում էր զօրագնդի ախոռի անկիւնում եւ սուզուել էր առետրի մէջ ախոռապաններից մէկի հետ. բայց տեսնում էր, լսում եւ հասկանում ամէն ինչ: Միւս կողմից՝ ախոռապանը՝ Հուզնուն, սպաների՝ այս ու այն տեղից թուրած հագուստի կտորների աւելցուկները նրան վաճառելու փոխարէն առաջին անգամ ձրի տուեց եւ թաւ բեղերի տակից սակաւ լոյսի ներքոյ՝ կիսախաւարում, շնջաց «խնճկ կին»:

Արսինէն շտապով վերցրեց լաթերն ու կաղալով վագեց: Գիտէր, թէ որտեղ գտնել Իսմէնէին եւ միւս կանանց՝ Մարաշի ճանապարհի վրայի հին, լքուած քարվանսարայում:

Մինչ այդ հայ տղամարդիկ դեռեւս կուսակալութիւնում էին: Մէկը միւսի ետեւից ներս էին մտել ժամը երեքին, միմեանց աճապարանքով բարեւ տուել՝ մերժելով այն վախը, որ թուխ ամպի նման բազմել էր օդում՝ ջանալով դէպքը նմանեցնել որեւէ ապահովեցնող նախադէպի:

– Որքա՞ն կուզենան, – հարցրեց խռովուած մանրավաճառ Յակոբը դարբին Արշակին:

– Ձերդ Գերագանցութիւն, ի՞նչ կարծիքի էք, – համեստօրէն հարցրեց սրբապատկերների նկարիչ Մելքոնը մեծահարուստ Աշոտ Մենդիկեանին:

Ոչ ոք չէր ցանկանում աւելի վատի մասին մտածել. «Պատերազմի մէջ ենք, ամէնքս էլ պէտք է զոհաբերութիւն անենք»: Եւ բոլորն իրենց գլխում տենդագին հաշուարկներ էին անում. այսքանը՝ սրան, այնքանը՝ նրան... գնդապետը, քայմաքամը, փողոցի ոստիկանը... «Հարկը հարկ է, եւս մէկ անգամ կվերապրենք, եւ յետոյ գուցէ պատերազմն աւարտւի...»

Փիլիսոփայօրէն համակերպուած այս տղամարդկանց միջից, որոնց տարակուսանքն արդէն փարատուել էր, եւ մտածում էին կաշառքից յետոյ տուած ընտանեկան ընթրիքի, իրենց կանանց, երեխաների, օջախի ջերմութեան մասին, առանձնացան Ամերիկայից ժամանած արդիւնաբերողներ, հզօր տնտեսագէտներ, Ֆաբրիկանեան չորս եղբայրները, որոնք դժուարանում էին կրկին հասկանալ այս ամէնը, եւ կարծում էին, որ սա առուծախի, արեւելեան դանդաղ բանակցութեան հերթական դրսեւորումներից մէկն էր:

Բայց նրանց ետեւից քայմաքամի զապտիէներն անսովոր փութաջանութեամբ ծածկեցին դռներն ու շարուեցին նրանց դիմաց: Իսկոյն նկատեցին դեղագործի բացակայութիւնը, բայց այն տագնապ չարթնացրեց. Սմբատն այդպիսին էր, հաւանաբար Ագարակում էր՝ Երուանդ եղբօր ժամանումից առաջ վերջին գործերը կարգադրելու նպատակով, եւ երեւի դեռ չէին հասցրել նրան զգուշացնել: Նրա ցրուածութիւնն

առասպելական էր՝ կապուած այն ամէնի հետ, ինչ չէր վերաբերում իր դեղերին ու Շուշանիկին: Հաւանաբար ուշացումով կժամանէր, բայց ոչ ոք, ինչպէս միշտ, նրա վրայ չէր բարկանայ: Չափից դուրս անմեղ էր, չափից դուրս անհոգ, չափից դուրս սիրուած:

Սմբատն այդ պահին իր դիւրահաւատ սրտով շատ հեռու էր ամէն ինչից եւ վերստին երջանիկ էր: Բարեկամների հետ ժամանած Շուշանիկի մատուցած անակնկալը, ատաղձագործ եղբայրների հրաժեշտի տօնը, աճապարանքից կարմրատակած այտերով քոյրերը, բոլոր գաւակները, Նուբարի ծիծաղելի զգեստափոխութիւնը. այս ամէնը նրան ապահովութիւն էր ներշնչում: Շուշանիկն իր հաստատուն ծառն էր. եթէ նա որոշել էր, որ այդպէս լաւ էր, ուրեմն Սմբատը ցնծութեան մէջ էր:

«Վաղը կմտածենք նոր հարկի մասին, կիմանանք, թէ ինչ էր ուզում քայմաքամը, եւ միգուցէ այդ հանդիպումից առաջ մի վերջին լուրը կգայ Երուանդից»,— մտածում էր նա ցրուած եւ տրուած վերակառուցուած Ագարակում անակնկալ խնջոյք անելու հաճոյքին նախքան Երուանդի ժամանումից յետոյ նախատեսուած պաշտօնական տօնախմբութիւնը:

Մնացել էր միայն թենիսի դաշտը աւարտին հասցնել, բայց արդէն քրիքեթի հոյակապ մականներ էին բերուել Անգլիայից նախորդ շաբաթ, եւ դաշտը պատրաստ էր, ապակեպատ պատշգամբը, գունաւոր ապակիները՝ ամէն քառակուսու մէջ իրարափոխ կապոյտ եւ կարմիր խաչերով, հիւսուած ծղօտէ ճկուած եղէգից պատրաստուած աւստրիական աթոռակները նոյնպէս: Փայլում էին սպասադարաններն ու ապակիները: Սպասում էին նաեւ Վիեննայից դաշնամուրը բերող մարդուն, որ երկու օր առաջ էր մեկնել մայրաքաղաքից: Նախորդ օրն էին ստացել հեռագիրը:

Բացուեցին զամբիւղները, մարգագետինն մեծ սեղան փռուեց: Յետմիջօրէն կուրացուցիչ էր դարձել գոյներից ու

բոյրերից: Խոհանոցում Շուշանիկը վերահսկում էր կանանց ուրախ աշխատանքը, կարգադրում, պատասխանում, մխիթարում: Իր դերի մէջ էր. բայց աճապարանքի վաղանցուկ հրճուանքից յետոյ այժմ սիրտը ծանրացել էր, մատների ծայրերը՝ ընդարմացել, քունքերի թեթեւակի բաբախիւնը գլխապտոյտ էր առաջացնում: Նստեց խոհանոցի մի անկիւնում եւ այդ պահին միայն ընկալեց մի քանի ժամ առաջ իր խոր գրպանում դրած ոսկեդրամների ու գոհարեղէնի ծանրութիւնը:

«Որքա՞ն ժամանակ առաջ էր եւ ինչու՞»,— ինքնիրեն հարցրեց նա կարծես սթափուած: Այդ պահին Սմբատը մտաւ խոհանոց՝ Շուշանիկին փնտրելու, նրան տեսաւ եւ ձեռքը թեթեւօրէն հպեց կնոջ վարսերին:

— Ա՛խ, իմ տիկին, դու միշտ գիտես՝ ինչպէս ուրախացնես ինձ,— ասաց նա ցնծութեամբ եւ մէջբերեց երկար տարիներ մոռացուած իրենց գաղտնի կատակը. — եթէ վարսերդ մարգարիտներ լինէին, իսկ ձեռքերդ՝ աղամանդներ, որքա՛ն հարուստ կլինէի, հոգիս... կարող էինք հեռու փախչել:

Գաղթի ամբողջ անիծեալ ճանապարհին Շուշանիկը կլրկնէր այդ խօսքերը՝ գերագոյն հաճոյք վայելելով: Ինչպէ՞ս կարող է չարը յաղթել, եթէ գոյութիւն ունի բարին. անտեսել ներկան, անտեսել նրա գոյութիւնը, եւ Սմբատի ձայնը կվերադառնայ Աստուծոյ անհունութեան միջից...

Ծիշտ այդ պահին ձիաւոր զինուորների փոքր խումբը կանգ առաւ Ագարակի առջեւում: Դարպասը բաց էր: Մի պահ լոյսերը, ձայները, գոյները նրանց կասեցրին, եւ յանկարծակի շփոթութեան մէջ ընկան: «Վաղը, վաղը», քրթմնջում էր կառքերին մատնած երկու զինուորներից մէկը եւ անվստահ ու շփոթուած շփում ձեռքերը տաբատի վրայ:

Բայց սպան գտաւ գազագելու յարմար պատճառ.

— Բէ՛ֆ են անում գեաւուր շները, մեր պարտութիւններով ուրախանում,— գոչեց նա,— սպասում են ուռաներին...

Եւ ահա, թանձրացող վերջալոյսի մէջ յայտնուեց երեկոյնան սաստղը: Այդ պահին, մինչ մագլցող կարմիր վարդերի ու յասմիկի զգլխիչ բոլոր տարածուում էր օդում, յուեց Հրանտի ձայնը, որ դուգուկն էր ներգաշնակում նուազածունների համար նախատեսուած փոքրիկ բեմի վրայ, որը գտնուում էր մարգագետնի եզրին՝ չինարի երեք բարձր ծառերի տակ, եւ մի երկա՛ր, երկա՛ր, նուրբ մեղեդի ծորաց օդում:

Բայց մեղեդին մարեց խուլ հեկեկոցով: Մարդիկ լուռ ցիրուցան էին եղել ներսում, պարտէզում: Վարպետօրէն գործող մի դանակ կտրեց Հրանտի կոկորդը մի ականջից միւսը: Լեւոն Եակովլեանը՝ վերատեսուչ-փոստատարը, որ պատրաստում էր իր լուսանկարչական մեքենան սեղանից ճշգրիտ հեռաւորութեան վրայ՝ յիշատակ-նկարի համար, միեւնոյն վախճանն ունեցաւ եւ առանց մէկ բառ արտաբերելու՝ շրջուած, սպիտակ աչքերով տապալուեց խոտի վրայ, որը կամաց-կամաց թաթախուեց արեամբ:

Ինչպէ՞ս է տեղի ունենում կոտորածը: Ի՞նչ գինու է վերածուում արիւնը, երբ հասնում է ուղեղին: Ինչպէ՞ս են դառնում արնախոում: Ասում են՝ ով արիւն է համտեսում, այլեւս չի մոռանում այն:

Մի ականթարթում խուժքը վերածուեց որսի դուրս եկած ոճրախմբի եւ կատուի ճկունութեամբ հասաւ բոլոր դռներին՝ մուտքի մեծ դռանը, ետեւի կողմից՝ խոհանոցի դռանը, ապակեփակ պատշգամբով եւ անգլիական ապակիներով սրահի երկու դուռ-լուսամուտներին: Տունը ինքն իրեն անպաշտպան տրամադրեց հիւրին իր անմեղ տիրոջ՝ Սմբատի պէս:

Սմբատն ու Շուշանիկը դեռեւս խոհանոցում էին: Կինը նստած էր, իսկ ամուսինը՝ կանգնած նրա ետեւում: Այդ պահին ամէն ինչ հասկանալի դարձաւ. գինուորները շողշողուն սուիճներով յայտնուեցին դռների մէջ, ինչպէս իսկական սատանաներ: Լեյտենանտը նրանց ետեւից մտաւ տուն, անցաւ

սրահը, ուղղուեց դէպի խոհանոցի դուռը եւ այնպիսի շեշտուած ատելութեամբ նայեց չորսբոլորը, որ բոլորն այն զգացին ապտակի պէս, եւ հրամայեց.

– Դու՛ք, դաւաճան գեւաւուր շներ: Անհնազանդ գտնուեցիք քայմաքամի հրամանին, բայց ես ձեզ գտայ, եւ այժմ կպատժուէք:

Սմբատը նայում էր նրան ու ոչինչ չէր հասկանում. Շուշանիկը գիտակցում էր մահ ու աւեր: Փորձեց տեղից ելնել, որ հիւրընկալութիւն ցոյց տար, որ գինաթափ անէր պաշտօնեային. դեռ չգիտէր, որ Հրանտն ու լուսանկարիչն արդէն սպանուած էին դրսում:

Բայց Իսմայիլը նրան նոյնիսկ չնայեց: Չոր վերսկսեց՝ դիմելով գինուորներին.

– Տարէք բոլոր տղամարդկանց միւս սենեակը:

Ուռկանն ընկած անգոր ձկների պէս դուրս պրծնելու տենդով բռնուած Սմբատին ու ապշահար Գրիգորին, որ անօգուտ փորձում էր գոռալ. «Ես բժիշկ եմ, իսկ նա՛՝ դեղագործ. մեզ չէք կարող դիպչել...», հրեցին դէպի սրահ՝ ատաղձագործ գոյգ եղբայրների, յոյն քահանայ Իսակի եւ մնացածների հետ: Սուրէնը, որ վերին յարկում էր եւ մեղամաղձոտ դիտում էր մայրամուտը, լսելով ժխորը՝ իջաւ ցած զուսպ, լուռ: Կանգնեց հօր կողքին ու սպասեց: Միւս տղայ երեխաները՝ Լեւիին, Կարոն, ժամկոչ Վարդանի որդի Ջեյմսը, պարտիզպանի որդի Ռուբէնը եւս, տարուեցին սրահ, շարուեցին թարմ փակցուած ծաղկազարդ պաստառի զարդանախշի տակ:

Կանանց ու աղջիկներին բիրտ կերպով հրեցին դէպի դիմացի պատը: Շուշանիկն անշարժ նայում էր իր սիրելիներին: Նրա չուած աչքերն անարտայայտիչ էին, գրպանների մէջ մխրճուած ձեռքերը պինդ պահում էին փոքրիկ գանձը: Վերոնն ու Ազնիւը նրա կողքին էին՝ աղջիկներին ամուր սեղմած, եւ Շուշանիկի շուրջն ասես կազմել էին մի հաւաքական խումբ: Ոչ մի կտրուկ շարժում, ոչ մի ըմբոստութիւն.

կարծես կանայք ձգտում էին աներեւութանալ որմնապատառի մէջ:

Միայն Նուարդն էր տապալուած մի անկիւնում. նա միայնակ ողբում էր լուռ, ամուր սեղմած վարդագոյն զգեստով նրբիկ Նուբարին:

Եւ այսպէս, կնքուեց Սմբատի եւ նրա մարդկանց մահկանացուն: Սուրհմները կայծկլտացին, ոռնոցներ բարձրացան, արիւն հեղուեց ամէնուր, եւ մի կարմիր ծաղիկ դրոշմուեց Շուշանիկի փէշին: Ամուսնու կտրուած գլուխը շարտուեց կնոջ գիրկը:

Շուշանիկի փէշի տակ՝ Զատիկի փոքրիկ խաչերով զարդարուն խոհանոցային գոգնոցի տակ, որով Շուշանիկը այնքան հպարտ էր, թաքնուած էր Անրիեթը, որի լեզուն մի քանի ամիս է, ինչ բացուել էր, ու անընդհատ շատախօսում էր, պատմութիւններ անում ու թաքնուած ամէնուր ծվծվան մկնիկի պէս: Այժմ հօր գլխից հոսած արեան մի շիթ գոգնոցի միջից հասաւ աղջկան՝ ողողելով մայրական ապաստանի տաք մթութիւնը: Սուր հոտը ջնջեց միւս բոլոր բոյրերը, աղջկայ բաց բերանը լցուեց տաք հեղուկով, աւելի տաք, քան մայրական կաթը, ինչպէս վարարած մի գետ, որ պատում էր նրա փոքրիկ սիրտն ու քշում-տանում դէպի անյայտ հեռուներ...

Անրիեթն այլեւս երբեք իր մայրենի լեզուով չէր խօսի եւ միւս լեզուներով խօսելիս, ինչպէս նաեւ աշխարհի ցանկացած երկրում ցանկացած լեզուով խօսելիս իրեն կզգար օտարի պէս, կզգար այն անընտանիք մարդու պէս, որը տնից դուրս հաց էր գողանում, նախանձելով միւսների գաւակներին: Մթանը, ինքն իր մէջ կծկուած, կարտասուէր ամէն գիշեր՝ վերապրելով տեսածը, մինչեւ չընկղմուէր հանդարտ թմբիւրի մէջ՝ դառնալով կենդանի կոճղ, որն անյոյս սպասում էր կորուսեալ հայրենիքի վերադարձին՝ Աստծոյ լոյսով ու հօր անմեղ հայեացքով ողողուած:

Կարոն ընկած էր՝ գեղեցիկ ժպիտը դաջուած շուրթերին,

փոքրիկ թաթիկներով պահելով բացուած որովայնը: Լեպլին չորեքթաթ փորձեց մի կերպ պատասպարուել շողշողուն սպասողարանի տակ, սակայն ոտքերից դուրս քաշեցին ու ամբողջ թափով նետեցին դէպի պատը, ու նրա կլորիկ գլխիկը ճգմուեց հասած ձմերուկի պէս՝ արիւն եւ ուղեղ շաղ տալով ծաղկային նուրբ նախշերի վրայ: Ահա այսպէս ծնուեցին հայոց Գողգոթայի արեան ծաղիկները...

Սուրէնը եւս, մահացու վիրաւոր, սրտում միայն մէկ միտք ունէր. ծածկել գլխատուած հօր անպատուութիւնը, որի՝ պատին յենուած մարմնից շարունակում էր արիւն հոսել: Որքա՛ն արիւն կայ մարդ արարածի մէջ... Դեղագործի արտառոց ճերմակ, ժրաջան, փոքրիկ ձեռքերը մեկնուած էին ափերը դէպի վեր՝ կարծես ինչից իջեցուած, զուր խնդրելով գթութիւն, կարեկցանք, որ մի ժամանակ գոյութիւն էր ունեցել: Որդին ի վերջոյ կարողացաւ մօտենալ հօրն ու փարուել նրան՝ միասին մեռնելու, ծածկելով ծնողի գլխատուած մարմինը՝ գրեթէ ներում հայցելով:

Բժիշկ Գրիգորը, որ փորձում էր ըմբոստանալ, մնաց վերջում: Դահլիճները հետեւում էին որոշակի տրամաբանութեան: Նա կարողացաւ նաեւ Իսակին մատնանշել՝ ասելով.

– Նա կապ չունի: Հայ չէ:

(Բոլորն էին հասկացել, որ դրանք աւագակների խումբ չէին, որ կուսակալութիւն կանչուածներին եւս նոյնն էր սպասուում, որ հէնց հայերի համար էր Աստուած քօղարկուել, ու արիւննոտ ամպեր էին արշաւում երկնքում):

Եւ իրօք, լեյտենանտը, որ իր առաջացրած դիակոյտի մէջ շարունակում էր միանգամայն սթափ ու խանդավառ հրամաններ արձակել ու թրի ծայրով զոհերին ցոյց տալ, քահանային դուրս քաշեց անկիւնից, որտեղ պատասպարուել էր, ու մի աքացի տալով՝ դուրս շարտեց նրան անվնաս: Իսակն իր մնացած կեանքի բոլոր օրերին ներում կխնդրէր, որ չէր կիսել իր բարեկամ հայերի ճակատագիրը, որ անգամ կանգ չէր առել՝ նրանց օրհնելու, ինչը իր պարտականութիւնն էր.

ու կատարուածի համար նրա աղօթքներն ամէն օր կբարձրանային առ Աստուած, մինչեւ որ 1923 թուականին պատուով կկնքէր իր յոյնի մահականացուն Իսմէնէի հետ Զիւռնիայի հրդեհի ժամանակ:

Գրիգորին մերկացրին ու զուարճանալով կտրեցին ամորձիները:

– Սիրեկա՞նդ էր, – ծաղրեց լեյտենանտը, երբ Շուշանիկն ու միւս կանայք վայնասուն բարձրացրին. սակայն Գրիգորի հոգեվարքի ճիշը կտրուկ ընդհատուեց, երբ ամորձիքը խոթեցին բերանը: Նրա հեգնական, իմաստուն աչքերը սարսափազդու չռուել էին, իսկ Շուշանիկը հոգեվարքի մէջ մտածում էր, որ երանի զարդասեղ ունենար ձեռքին ու նրան բարեգթօրէն սպանէր:

Բայց Գրիգորը կենդանի էր: Մահացածներին քարշ տուեցին դուրս ու տեղաւորեցին թենիսի նոր փորուած բուրակէտ դաշտում: Կանանց եւս խառափնթոր դուրս թափեցին, որպէսզի նրանք ականատես լինէին ամէն ինչին:

Լեյտենանտը ժպտալով ասաց.

– Նստեցրէք տանտիրուհուն ու հանէք այդ գլուխը գոգնոցի միջից (մինչ այդ Շուշանիկը մեղմօրէն փակել էր Սմբատի չռուած աչքերը): Ապա շարունակեց. – վայրենիներ չենք, կանանց խնայեցինք: Այժմ կզբաղուենք դիակներով, յետոյ կարող ենք ընթրել: Ձեր անարգ ցեղի տղամարդիկ մեղաւոր են ու պէտք է բնաջնջուեն, որովհետեւ եթէ նոյնիսկ մէկը կենդանի մնայ, վրէժխնդիր կլինի: Իսկ դուք կին էք...

Դիակներից ամենատակիրը Սմբատն էր՝ երեսը հողին առած, գլուխը մի կերպ մարմնին մերձեցրած: Վերեւում՝ մէկը միւսի վրայ, դարսուած էին մահուան սարսափով չռուած աչքերով գոյգ եղբայրները, որոնք երբեք չէին տեսնի իրենց երազների Ամերիկան. նրանց հայրը տարիներ շարունակ կզրէր բոլոր վերապրածներին՝ համբերութեամբ յուսալով ու սպասելով զաւակներին, քանի որ կենդանի մնացածներից ոչ մէկը ականատես չէր եղել որդիների մահուանը: Աչքերը

փակ հանգչում էր մեծ Կարոն՝ փոքր Կարոյին գրկախառնուած, որին չկարողացաւ պաշտպանել՝ յուսաբեկ սեղմելով իր զօրաւոր, անօգուտ բազուկների մէջ, որոնց մահն անգամ չկարողացաւ անջատել: Նրա վրայ փոսի մէջ նետուեց ժամկոչ Վարդանը, նրա հետ՝ բացուած կրծքով որդին, որի տարաշխարհիկ անունը, ապահովութեան երաշխիք թուալով հանդերձ, նրան չէր խնայել:

Տենդագին, բայց կանոնաւոր դիզուեցին դիակները. ընթացքում զինուորներից մէկը նկատեց.

– Այնուամենայնիւ, այս անհաւատները լաւ են խնամում իրենք իրենց:

Նրա ընկերը միջամտեց.

– Լաւ էին խնամում մեր շնորհիւ. իսկ այժմ նրանց բուրումնաւէտ կանայք ամբողջովին մերն են:

Ոճրախումբը նախապէս ճաշակեց գալիք բռնութիւնը՝ տուփանքով ու վաւաշտո նայելով կանանց, աղջիկներին ու երեխաներին, ու մտածեց, որ բոլորին էլ բաժին կհասնի: Իսկ յետոյ նրանց դէն կնետեն: Գիշերը երկար էր: Մինչ այդ սկսեցին անխտիր կոտրել ապակեպատ պատշգամբի ու բիւրեղապակեայ սպասքի ապակեղարանի ապակիները:

Ձուր էին Ասպետն ու Գեղուհին արտասովոր գեղեցկութեամբ բոլորին շլացնում իրենց նկարագարդ ապակուց. նրանք եւս քարկոծուեցին որպէս ատելութեան թիրախ: Իսկ կողմնային պատուհանների նուրբ, անգլխական ծաղկանկարներով ապակիները փշրուեցին թրի հարուածներով կամ էլ ցնծութեան աղաղակներով ուղեկցուած եւ յանկարծակի սկսուած մրցոյթում՝ ատրճանակի կրակոցներով:

Իսկ քաղաքում՝ աւերուած առանձնատնից շատ հեռու, Արսինէն, Իսմէնէն եւ միւս կանայք ժրաջան մրջիւնների պէս գործի էին անցել: Իսմէնէն Արսինէից տեղեկացել էր դէպի Ագարակ կատարուած արշաւանքի մասին եւ հասկացել, որ տուներ վերածուել էր մահուան թակարդի: Շատ էր ուզում այնտեղ վազել, ընկերների հետ նախատինք ու անէծք

թափել խուժանի վրայ, վախեցնել նրանց, այդ հրէշներին (ըստ Իսմէնէի՝ անվիճելի ճշմարտութիւն է, որ տղամարդիկ ընդհանրապէս, առանձին-առանձին վերցրած, այնքան էլ խիզախ չեն):

Բայց յետոյ անդրադարձաւ, որ լեյտենանտն իր հեղինակութիւնը պահպանելու համար հաւանաբար անհաւատի եւ ուժեղ մարդու դիրք կգրաւէր՝ կարեւորութիւն չտալով իր անէծքներին. չթերագնահատեց զօրագնդի վայրագութիւնը անպաշտպան մարդկանց վրայ հեշտութեամբ գործադրելու կարողութիւնը եւ գուշակեց զինուորականի անձնական նախաձեռնութեամբ իրականացուած գործողութեան բուն դրդապատճառը՝ հակահայկական տրամադրուածութեան դրսեւորումը՝ ի ցոյց մայրաքաղաքում գործող հզօր եռապետութեան:

Այդժամ նա Ագարակ ուղարկեց միւս բոլոր կանանց՝ ողբասացներին, այրիներին, գերեզմաններում լաց լինող պառաններին, որ վայնասուն բարձրացնէին: Յուսահատ միտքն այն էր, որ մեծ բազմութեամբ ժամանելով՝ կարողանային աղմուկ-աղաղակ բարձրացնել, շփոթեցնել, վկայութիւն տալ: Ինքը՝ Իսմէնէն, վազեց գնդապետի մօտ, որ իրեն ճանաչում էր, ինչպէս բոլորը: Նրան շշուկով մի կողմ տարաւ, բռի մէջ Շուշանիկի գոհարեղէնից մի գեղեցիկ զարդ դրեց եւ զգուշացրեց, որ նրա ենթականերից մէկը՝ լեյտենանտ Իսմայիլը, այդ դրսեցին, թողած իր բանն ու գործը, կուսակալութեան մի խումբ կամաւորների հետ գնացել էր Արտոյտների Ագարակը՝ հէնց իր ընկերոջ՝ դեղագործ Սմբատի մօտ:

— Էֆէնդի, նրանք հարուստ մարդիկ են,— շնչաջ Իսմէնէն,— շատ ափսոս կլինի...

Շատ բան հարկաւոր չէր, որ գնդապետը կատաղութեան հասնէր. նա այդ պահին մտածում էր մէկին ուղարկել՝ Սմբատին գտնելու, որպէսզի վերջինիս հետ շարունակէր մի քանի օր առաջ սկսած իր շահաւէտ գրոյցը. «Ձարմիկիցս ստացած լուրը յարմար առիթ է,— մտածում էր գնդապետը,—

հիմա Սմբատն իրօք վախեցած կլինի, ուստի աւելի հեշտ կլինի նրան կթելը...»:

Նա արդէն գիտէր, որ ծրագրուած էր հայերի ջարդ. բայց լինելով հին մարդ՝ տրամաբանում էր, ինչպէս Կարմիր սուլթանի ժամանակ. չէր հասկացել նոր կացութեան ո՛չ հետեւանքները, ո՛չ էլ ծաւալը եւ դեռեւս հաւատացած էր, որ ոչնչացուելու կոչուած թշուառ եւ այլեւս աւելորդ դարձած հայ ժողովրդի միջից կարելի էր ընտրել ու փրկել մի քանի պարարտ հաւ՝ որպէս իրենց սեփական կեանքի անձնական ապահովագրութիւն... Հայերի հարստութիւնը չէր վրիպել նրա սուր աչքից նաեւ լաւ վճարուած լրտեսների, օրինակ՝ կաղ Նազիմի, օժանդակութեան շնորհիւ: Ուստի գիտէր, թէ որտեղից եւ երբ կարող էր դրամ կորզել:

Իսկ եթէ այդ տխմար, նախանձ Իսմայիլը բռնել էր Սմբատի՞ն... Գնդապետը հրաման արձակեց եւ ձի հեծնեց: Նրան հետեւեց լաւ հանդերձաւորուած ձիաւոր զինուորների մի փոքրիկ գունդ, բոլոր նրանք, ում վստահում էր: Վտանգաւոր ժամանակներ էին, հարկաւոր էր թիկունքը ծածկել: Եւ եղաւ այնպէս, որ իրենց կատաղի մոլուցքի մէջ Իսմայիլն ու նրա տասներկու հետեւորդները անակնկալի եկան գնդապետի ահագու, կտրուկ հրամանից՝ արտաբերուած սարսափելի, սառցային ձայնով, սովորականից միայն մէկ աստիճան բարձր, բայց ուղեկցուած հրացանաձգութեան կատաղի պարպումով: Միեւնոյն դռների միջեւ, ու յայտնուել էին մարդասպանները, այժմ գնդապետի զինուորներն էին, որոնք թէեւ արտաբուստ աւելի վստահելի չէին, բայց, անկասկած աւելի հանդարտեցնող էին: Գնդապետը զինաթափ արեց Իսմայիլին ու նրա խմբին:

«Անհնազանդութեան ամբաստանութեամբ,— մտածում էր նա,— կուղարկեմ բոլորին Դամասկոս այն միւս ապուշին՝ սիրահար լեյտենանտին ընկերակցելու: Այստեղ դեռեւս ես եմ հրամայում: Իսկ միւս տխմարները, հայերն ու՞ր են»:

Նայեց շուրջը եւ ոչ ոքի չտեսաւ: Բայց արեան հոտ

առաւ: Այդժամ դուրս եկաւ ետեւի դռնից եւ տեսաւ Շուշանիկին՝ վիեճակաւ ծղօտեայ նոր, չքեղ աթոռակներէից մէկին քարացած-նստած, իսկ նրա շուրջը՝ ընտանիքի միւս կանանց, որ գինուորականին էին նայում անթարթ աչքերով:

Կանանց ողբերգական անպաշտպանութեան մի նկար, որ անմիջապէս հասկացնել տուեց գնդապետին եղելութիւնը:

«Տղամարդիկ չկան, ուրեմն նրանց արդէն սպանել են...»:

Նրա առաջին հակազդեցութիւնը սոսկ զայրոյթն էր: Ապա հայեացքը սահեցրեց դէպի թեմիսի դաշտի փոսը, դէպի ցիրուցան շարտած մարդիկ, եւ մի անախորժ, քաղցրաւուն հոտ նրան խորապէս տպաւորեց:

Առաջինը գետնին ընկած տեսաւ հարուածից աղճատուած դէմքով, քթի փոխարէն սեւ խոռոչով, մեղմ, շնորհալի, պարկեշտ Լեւոն Թոռնիկեանին, որ բազմիցս նրան ցոյց էր տուել Անատոլիայի բուսականութեան վերաբերեալ կատարած իր յայտնագործութիւնը, ձեռքերը պարզած դէպի երկինք, վերնաշապիկը տաքատից դուրս: Մազերի մէջ սահած անհետեւութեան անվնաս ակնոցը անդրադարձնում էր վերջալոյսը:

Գնդապետը որոշ չափով պարկեշտ էր, որոշ չափով մարդկային, որոշ չափով կաշառակեր: Նրա արհեստը պատերազմն էր, բայց չէր ախորժում ջարդերից: Բաւականին անյագ էր, բայց ոչ մոլեռանդ. մոլեռանդը սպանում է՝ յանուն իր հաճոյքի կամ որեւէ գաղափարի պաշտամունքի, արիւնը նրան քաշում-տանում է այլ արեան: Բացի դրանից, գնդապետը ամաչում էր Մադամ Սեսոստրիսից, որը համակրում էր Սմբատին, եւ որը վստահաբար կմեղադրէր նրան անկարողութեան մէջ. «Քո զօրքերի մէջ, քո թիկունքի ետեւում...»: Հոգու խորքում նաեւ դրանից էր ամաչում որպէս գինուորական. գնդապետը գիտէր հանդուրժողականութեան առաւելութիւնները, հասկանում էր, որ այդ օրը ամենաչարագուշակ օրն էր մի երկրի համար, որն իրեն միաւորուած զգալու համար անհրաժեշտ էր համարում ոչնչացնել իր անմեղ քաղաքացիների մի մասին:

Շուշանիկը քարացել էր, շուրջբոլորը դուստրերն էին, տալերը, ծեր Նուարդը եւ խոհարար Արաքսին. գնդապետը փորձում էր մատուցել ազնուական մարդու իր յարգանքը ազնուական կնոջը եւ արհամարհանքը «այժմէական» գաղափարներով տոգորուած անտաշ լեյտենանտի հանդէպ: Զգում էր, որ ինքը հին վարչակարգի, հին Կայսրութեան մարդ էր, հասկանում էր, որ իր գործունէութիւնն աւարտուում էր սարսափի այս վերջնականում, զգում էր, որ իր սիրտն այլեւ երբեք նոյնը չէր լինելու, եւ ընդունում էր կատարուածը: Ի վերջոյ, համարձակ վարուելու դիրքորոշում ընդունեց, որպէսզի ամէն ինչ կորած չլինէր, քանի որ իր ժողովուրդը չպէտք է ամաչէր իր բոլոր իշխանաւորների համար:

Եւ այսպէս, հին ազնուականին յատուկ մի շարժումով ձեռքը պարզեց Շուշանիկին, քաղաքավարութեամբ բարձրացրեց նրան: Ստիպողաբար ետ դարձնել տուեց կառքերը եւ հայրաբար շնջաց, որ նրանց ուղեկցել կտար դէպի քաղաք:

– Վստահէք ինձ: Նրանց ես կթաղեմ, եկեղեցական կկանչեմ, անձամբ կգբաղուեմ այդ գործով: Իսկ դուք տուն դարձէք, աղէտալից ժամանակներ են:

Շուշանիկը կտրուած սրտով նրան հետեւեց մինչեւ կառքը: Կարտասուէր միայն այդ ժամանակ, ետդարձի ճանապարհին: Իսկ յետոյ՝ այլեւս երբեք: Գաղթի ժամանակ լինելու էր առիծի պէս հզօր:

Միայնակ մնալով՝ գնդապետը, ատրճանակը ձեռքին, մօտեցաւ լեյտենանտ Իսմայիլին, նրան ստիպեց իր գինուորների հետ անձամբ հանել դիակները փոսից, դասաւորել շարքով եզրին, փակել նրանց աչքերը:

Իսկ երբ գտաւ Գրիգորին՝ բոլորի կողմից սիրուած թերահաւատ եւ անկեղծ ընկերոջը, եւ տեսաւ, որ դեռեւս շարժուում էր, նրա զայրոյթը վերածուեց խոր կսկիծի ու ծանր պարտականութեան: Աջ ձեռքով ազատեց նրան այն ամօթա-

լի կապանքից, որ սեղմել էր նրա բերանը, ձախ ձեռքով փակեց նրա աչքերն ու շշնջաց. «Ների՛ր, իմ վաղեմի բարեկամ», ու կրակեց քունքին:

Եւ ասաց Իսմէնէին, որը հասել էր միւս կանանց հետ.

– Ողբացէք, դուք, որ գիտէք լալ: Եւ թող Աստուած ողորմած լինի մեր հանդէպ...

Բ. ՄԱՍ

ՇՈՒՇԱՆԻԿ

Հագիւ Ագարակից դուրս եկած, Իսմէնէի կանայք շրջապատեցին կառքերը եւ սկսեցին բանեցնել իրենց արհեստը եւ սուգ ու շիւան բարձրացրին:

Սմբատի ընտանիքի կանանց գլխին հասած դժբախտութիւնը դեռեւս նրանց չէր վախեցնում. գոռում էին, գոչում, ողբում, միմեանց ուս առաջարկում՝ լացի ու կականի համար: Գերեզմանների ցնցոտիաւոր, բոլորի կողմից անտեսուած պառաւները քիչ հեռու կանգնեցին՝ անկանոն շրջան կազմած, զուսպ լուռթեան մէջ: Իրենց հերթն էլ կգար, ուստի մտածում էին թաղման արարողութեանը պատշաճ ճաշկերոյթի, փորը լաւ կշտացնելու մասին: Աղքատի հորիզոնն այդտեղ է սահմանափակում:

Բոլորը նայում էին Շուշանիկին, բայց Շուշանիկը ոչ ոքի չէր տեսնում. լալիս էր, ինչպէս Նիովբէն՝ քարացած, առանց դէմքը շարժելու, սառած, անհաղորդ: Միայն Ագնիւն էր, մէկ ամսուայ մէջ հասունացած Ագնիւր, որ ցնցուեց ու սկսեց տենդագին հաշուել վերապրեալներին՝ սարսափած, որ յանկարծ որեւէ մէկը առանձնատանը մնացած չլինէր. եւ այդ պահին յայտնաբերեց հեկեկացող, ամբողջովին արնաշաղախ Անրիեթի ետեւում աղջկայ շոր հագած փոքրիկ, ապաշար Նուբարին՝ մետաքսեայ խշխշան զգեստով խորոտիկ աղջնակին, որ եղբօր միակ վերապրած որդին էր:

Ագնիւր երդուեց, որ նրան կփրկէր, հոգ կտանէր. եւ աղջկան դա կյաջողուէր այն ուժի ու կարողութեան շնորհիւ, որ յայտնուեց ու թրթռաց իր մէջ՝ ձգուելով վեր՝ աննկուն ու աներեր:

Ազնիւր ձեռքն առաւ ձիուկի սանձերը, նայեց շուրջը: Այդ պահին տեսաւ Իսմէնէին, որը ժամանել էր իր եղբոր-որդի էորդիոսի հետ, վերջինիս երկանիւ թեթեւ կառքով:

– Մտի՛ր կառքը, մխիթարի՛ր Շուշանիկին,– կարգադրեց նրան Ազնիւրը:

Իսմէնէն անմիջապէս հասկացաւ եղելութիւնը եւ յարգանքով պատասխանեց.

– Հէնց հիմա: Բայց նախ կանանց ներս ուղարկեմ: Ձեր խեղճ սիրելիները պէտք է քրիստոնէավայել թաղուեն, այլապէս ես այլեւս Իսմէնէն չեմ:

Ուրախանալով, որ իրենց հերթն էլ հասաւ, գերեզմանների պառաւներն ու ողբասացները սկսեցին իրենց միապաղաղ ողբերգը եւ շարքով ուղղուեցին դէպի Ազարակի մուտքը: Գիշերային գոյներով մարող վերջալոյսին վառեցին իրենց հնամենի լապտերներն ու յամրաքայլ ընթացան առաջ՝ ողբաձայն երգելով յանուն մարդկային նսեմ ցեղի բոլոր անդամների:

Մի քանի լապտեր շրջապատեց խոտերի վրայ մեկնուած երաժիշտ Հրանտին, մի ուրիշը՝ լուսանկարիչ-փոստատար Լեւոնին: Ողբասացները նրանց մարմինները դասաւորեցին, աչքերը փակեցին, եռանդով ու վարժ փորձառութեամբ տարան տուն, ապա շարեցին միւսների կողքին՝ թեմիսի դաշտի փոսի եզրին:

Այնտեղ կանայք իւրաքանչիւրն իր լապտերով շրջապատեցին կոտորուածներին եւ ձեռք ձեռքի բռնած՝ սկսեցին չգրուած օրէնք դարձած ծէսը: Սմբատն իր իւրայինների հետ կունենար քրիստոնէական թաղում: Մինչդեռ միւս հայերը, որ այն չարաբաստիկ ամիսներին իրենց կեանքը կկորցնէին Անատոլիայի ճանապարհներին՝ խողխողուած, կտտանքի ենթարկուած, ծարաւից ու քաղցից հիւծուած, չէին ունենայ յուղարկաւորութիւն: Աւելի ճիշտ, դրա կարիքը չէր լինի: Զարդից առաջ հանգուցեալը շնչող էակ էր, կենդանի, իսկ մարմինը՝ դիակ՝ մեծարման արժանի: Մինչդեռ այժմ տասը

հազար մեռելը մի հոծ բազմութեան փտող միս է, աղբի կոյտ, ոչնչից աւելի ոչինչ, կեղտոտ իրականութիւն, որից պէտք է ազատուել:

Իսկ այնտեղ՝ Ազարակում, Իսմէնէն յանկարծ աչքի պոչով նկատեց պատշգամբի մութ անկիւններում սահող մի ստուեր եւ ճիշտ նշանակէտին դիպաւ:

– Դուրս արի, տէր Իսակ: Այդ ինչպէ՞ս եղաւ, որ դու կենդանի մնացիր,– կտրուկ դիմեց նրան:

Շանթահար Իսակը պատասխանեց.

– Ինձ բժիշկ Գրիգորը փրկեց: Ասաց, որ հայ չեմ,– եւ ամօթահար ծնկի եկաւ:

Իսմէնէն ժամանակ չուներ նման բաների համար:

– Կենդանի ես, շատ լաւ: Քահանայ ես, շատ լաւ: Ինչի՞ ես կանգնել,– ընդհատեց նա, ապա նայեց քահանայի թշուառ, հնազանդութեամբ լի աչքերին, բռնեց ձեռքից եւ վեր բարձրացրեց:

– Նե՛րս մտի՛ր, Իսակ: Աստուած ամէն ինչ տեսնում է, բայց դու քահանայ ես եւ պէտք է նրանց օրհնես: Թող գոնէ խաղաղութեամբ թաղուեն, նրանց հոգիները մեզ կօրհնեն: Գնդապետը քեզ է սպասում:

Փոքր-ինչ մխիթարուած Իսակը միացաւ ողբասացներին, եւ նրա զօրեղ, ինքնավստահ, գեղեցիկ ձայնը հնչեցրեց հանգուցեալների յուղարկաւորութեան ծէսը.

Թող օրհնուեն նրանք, ովքեր Քո մօտ վերադառնում են մաքրագործուած հոգիներով, ընդմէջ մարտիրոսութեան կարմիր քօղի... նրանք, որոնց անարատ ձեռքերով ստեղծեցիր... Ճաշակեցէք եւ տեսէք, քաղցր է Տէրը... օրհնեցէք Տիրոջը երկնքում, դուք որ այժմ նրան տեսնում էք, դուք, որոնց նա ստեղծել է անարատ ձեռքերով...

Կանանց երգախառն անկանոն, սրտաճմլիկ ողբը շարունակուեց մինչեւ ուշ գիշեր, ապա հետզհետէ հանդարտուեց քահանայ Իսակի հանգստացնող երգասացութեան ներքոյ՝ ներդաշնակելով խիստ վանկատուած մրմնջոցին, որ դարեր շարունակ ողջ քաղաքին ազդարարում էր ողբասացների թափօրի յայտնուելը:

Բայց այստեղ միակ ունկնդիրը գիշերն էր, եւ սգացող կանայք, որոնք կծկուեցին կառքերի ներսում, ինչպէս դողացող մտի մի դոնդող, իրար էին փոխանցում թոյլ ջերմութիւնը՝ վերապրելու համար: Կենտրոնում Շուշանիկն էր՝ պարսպուած իրեն շրջապատող մարմինների մէջ, եւ շարունակում էր անհաղորդ արտասուել՝ սառոյց արտաշնչելով: Անկիւնում Անրիեթն էր՝ մոռացուած ու անտեսուած: Նրա մթամած փոքրիկ սրտից արիւն էր կաթում:

Ահա եւ Իսմէնէն: Գնդապետը սիրայօժար նրան վստահեց յուղարկաւորութեան պարտականութիւնները եւ թողեց երկու զինուոր, որ հնարաւորինս շուտ թաղէին հանգուցեալներին նոր, կարծես յատուկ փորում թնիսի դաշտում: Իսկ քահանայ յոյն Իսակը, որը հայ չէր, բայց ամէն դէպքում քրիստոնեայ՝ օրհնեց հողը՝ սրբազործելով այն:

Բոլորը շտապում էին հեռանալ: Գնդապետը ցանկանում էր օգտագործել իր ունեցած հեղինակութիւնը եւ դատել լեյտենանտին կամ գոնէ հեռացնել նրան: Իսկ ինչպէ՞ս վարուել նրան ընկերակցած խմբի հետ: Չէ՞ որ դրանք իր զինուորներն էին. յարմար չէր նրանց իր դէմ հանել: Հարկաւոր էր ներել, անտեսել եղածը: Ի հարկէ, պէտք էր դրանց կախել, բայց այդ մասին խօսք անգամ լինել չէր կարող:

Իսմէնէն ձգտում էր փրկել այն, ինչ մնացել էր ընտանիքից: Տենդագին, ցնորական ծրագրեր էր կազմում ու ոչնչացնում՝ հետզհետէ աւելի քաջ գիտակցելով, որ ոչ միայն հայերի, այլեւ Թուրքիայի քրիստոնեաների օրհասական ժամը հասել էր: Նա բարձրացաւ կառապանի նստատեղին, Ազնիւր նստեց միւս կառքը, ու առաջ շարժուեցին դէպի քաղաք:

Թաղամասում շշուկները տարածուած էին ու տարածուում: Տղամարդիկ չէին վերադառնում: Պառաւներից մէկն ասաց, որ նրանց տեսել էին Աղի պահեստի՝ տարիներ ի վեր դատարկ մնացած շինութեան դռան առջեւ, շարք կանգնած, դիմացը՝ սուրհմները հրացանների փողերին ամրացուած զինուորներ: Կառքերի ժամանումը առանձնապէս հետաքրքրութիւն չառաջացրեց. ինչ-որ մէկն անմիջապէս եկաւ Շուշանիկի հետ խորհրդակցելու եւ ամէն ինչ իմացաւ: Սահմուկեցուցիչ սարսափ էր տիրում ամբողջ թաղում, բայց ոչ ոք չգիտէր ինչ անել:

Առանց իրենց այրերի մնացած, ծերերի ու երեխաների տագնապի ծանրութիւնից կռացած կանայք պատրաստ էին հաւատալու ցանկացած բարի լուրի՝ տեղի չտալով դառը ճշմարտութեանը, որը մեխուած էր նրանց ուղեղում: Ահա թէ ինչու կառավարութեան ծրագիրն անարգել կատարուեց՝ առանց ըմբոստութեան հանդիպելու այս հլու-հնազանդ, անըջալից ժողովրդի կողմից:

Ուշ երեկոյեան յայտնուեցին հերթական պահակախմբերը՝ մունետիկի ընկերակցութեամբ, որը յայտարարեց, որ հայ ընտանիքներն իրենց տրամադրութեան տակ ունէին երեսուկեց ժամ՝ քաղաքից հեռանալու իրենց բոլոր անդամներով անխտիր, ընդ որում թողնելով իրենց ողջ ունեցուածքը:

– Կառավարութիւնը բոլորիդ տեղափոխում է՝ ձեզ աւելի լաւ պաշտպանելու համար: Ձեր տները, խանութները կվստահուեն բանակին:

– Իսկ տղամարդի՞կ: Ու՞ր են տղամարդիկ, – բղաւեց տագնապած կանանց մի խումբ եւ իսկոյն զղջաց մունետիկի սպառնալից ձայներանգից:

– Դէ՛, դէ՛, հանգի՛ստ, հանգի՛ստ, նրանք ձեզ կմիանան քաղաքից դուրս, որովհետեւ եթէ միասին լինէք, դուք՝ խորամանկ հայերդ, կփորձէք մեզ խաբել, թաքցնել ձեր փողը՝ մեր բոլորի հօրը՝ քայմաքամին, վստահելու փոխարէն:

Բայց իւրաքանչիւր ընտանիքում սկսուեց տենդագին մի

խլրտուք: Փողը կարող էր փրկութիւն նշանակել, միշտ հաւասարագոր էր փրկութեանը: Ամէն տան մէջ, ամէն խոհանոցում թիթեղամանների, հին դրամապանակների, գաղտնի գրպանների միջից դուրս հանուեցին դրամաթղթեր, ոսկեայ եւ արծաթեայ մետաղադրամներ, Մարիա Թերեզայի թաւրերներ, Վիկտորիա թագուհու ստերլինգներ, մինչեւ իսկ հին Ֆլորիններ եւ վենետիկեան հագուազիւտ, կլոր ոսկեդրամներ, երփներանգ թանկարժէք քարեր, շողշողուն գոհարներ, որոնք փոքր-ինչ ջերմացնում, լուսաւորում էին դրանք շօշափող կանանց խոնջացած ձեռքերը:

Այդ մոլեգին գիշերը երեխաները, որ առաջին անգամ տեսնում էին մեծերին այն աստիճան խառնուած, չփոթուած, նեարդայնացած, որ կարեւոր հարցեր էին քննարկում իրենց ներկայութեամբ, ապշահար գմայլուում էին քարերի, ոսկու, արծաթի փայլով եւ միանգամից ամէն ինչ հասկացան, եւ մի համր վախ պաշարեց նրանց սիրտը: Շատ էին ուզում խօսել իրենց հայրերի հետ:

Բայց հայրերը չէին վերադառնում: Արդէն ուշ գիշեր էր, եւ ոչ ոք չէր մտածում քնելու մասին: Երեխաներին, նրանց կամքին հակառակ, անկողին դրեցին, բայց նրանք, բացի ամենափոքրերից, անմիջապէս վեր կացան նորից լուռ, առանց արցունքի, որպէսզի մնային մայրիկների, տատիկների կողքին, որոնց սարսափ, յուսահատութիւն էր համակել: Կանանց արագաշարժ ձեռքերը կարում էին գաղտնի գրպաններ, խորհրդաւոր տոպրակներ, որտեղ տեղ էին գտնում փայլուն քարերն ու շողշողուն ոսկեդրամները: Այլ ձեռքեր չաղախում էին, ընտրում, հաւաքում ուտելիք ու հաց, կլորիկ խնձորներ, տանձի չիր, թուզ ու պաքսիմատներ: Բայց այս պատրաստութեան մէջ ոչ մի ուրախալի բան չկար, եւ երեխաներին չկարողացան խաբել. նրանք զգում էին սոսկում, սպառնալիք, մահ:

Ազնիւր ձեռքն առաւ տան դեկը: Նրանք այլեւս ոչ ոքի չէին սպասում, նրանց այրերն այլեւս չկային: Շուշանիկն ու

Վերոնը գրկախառնուած անշարժ նստեցին կրակի առջեւ՝ բոցերի մէջ տեսնելով իրենց սիրելիների կենդանի պատկերները, փորձելով հանգիստ տալ յուսահատ մտքերին:

Ազնիւր մտովի ծիծաղում էր իր եւ լեյտենանտ Զելալի վրայ, որն իրեն սիրում էր եւ որն այնքան յանկարծակի անհետացել էր: Հիմա էր հասկանում նրա ասածները, իրեն հայրենի եզերքից հեռացնելու սաստիկ փափագը: Այժմ, խոհեմ ու ըմբոստ, տնօրինում էր կենդանի մնացած հարազատների փոքր խմբի ճակատագիրը: Միայն խոհարար Արաքսին էր օգնում նրան, իսկ Մադամ Նուարդը ցածրաձայն հեծկտում էր անկիւնում: Կրակի բոցերը, պար բռնած սրտում, ըռպէ առ ըռպէ աւելի էին զօրանում՝ սնուելով միւսների տկարութիւնից: Ազնիւն իրեն զգում էր Մայր Հայաստանի դուստրը, առասպելների հերոսուհին: Նա կփրկէր իր հարազատներին, քանի որ ունէր ուժ, կարողութիւն եւ համարձակութիւն:

Այժմ դու, Ազնիւ աղջիկ, թող, որ ոսկորներդ պար գան մահուան քամու յորձանքից, որ փրկես երեխաներին եւ Շուշանիկին: Դու քեզ կհրամցնես *ասկեարին*¹¹ ու քուրդ ասպետին, խենթօրէն կքրքջաս՝ պարուրուած այն ոսկեթելերով ու թաւշեայ վարդերով զարդարուն կարմիր մետաքսի մէջ, որ Զարեհն էր ուղարկել քեզ Հալէպից Զատիկի տօնին... Դու, հերոսուհի, վեհանձն արարած, քո առաքելութիւնն աւարտած՝ ապականուած կյանձնուես Հալէպում, ի վերջոյ, մահին, ծանր հիւսքդ ուսերիցդ կախ...

Գիշերն անցաւ, բայց տղամարդկանց հետքն անգամ չերեւաց: Այլեւս ոչ մէկը չէր տեսնի նրանց: Միայն շատ տարիներ անց՝ հայրի չարչարանքի եւ համաշխարհային պատերազմի աւարտից յետոյ, պարտութիւնից բզկտուած թուրքիայում կպարզուէին նրանց վախճանի մանրամասները:

¹¹ Ասկեար – թրք. գինուոր (ծնթ. թարգմ.):

տղամարդկանց դուրս էին բերել Ադրի պահեստից (ուր գնացել էին մի քանի կին՝ իրենց վտանգի մատնելով նրանց Հաց հասցնելու համար, ապա խաղաղուած ետ դարձել), մէկ առ մէկ սպանել Ջրվէժների հովտում, որտեղ սփռուած էին մնացել նրանց անթաղ դիակները՝ դատարկ ակնախոռոչները երկիրք յառած, մերկ, ամէն ինչից, մինչեւ իսկ մահուան հանդիսաւորութիւնից զուրկ:

Այսպիսով, յաջորդ օրը պահեստը դատարկուած էր, ինչպէս հաստատեց Իսմէնէն, որն այնտեղ էր վազել արշալոյսին՝ ողջ թաղը ոտնատակ անելուց եւ իր կանանց ամէնուր նրանց փնտրելու ուղարկելուց յետոյ: Միայն փայտեայ ցցի վրայ, որից հնոււմ կապուած էին աղի փոխադրակառքերը, ճօճոււմ էր օդոււմ Andonian Frères. Robinetteries et Pompes հիմնարկութեանը պատկանող մի թուղթ, որը Իսմէնէն գրեթէ չէր էլ նկատել մինչեւ որ յանկարծազաս թեթեւ քամին նրբօրէն բարձրացրեց այն եւ գցեց հէնց իր ոտքերի առջեւ: Թղթի վրայ մատիտով հապճեպ գրուած էր հետեւեալը. «Եկել են մեզ տանելու: Մուժ գիշեր է: Գնոււմ ենք մեռնելու: Ով գտնի այս թուղթը, յանոււմ ողորմած Աստուծոյ, թող տեղեակ պահի մեր ընտանիքներին եւ աղօթի մեր հոգիների համար»:

Բայց Իսմէնէն հայերէն կարդալ չգիտէր. թուղթը գրպանը դրեց, որ Ազնիւին ցոյց տար, իսկ յետոյ մոռացաւ: Իսմէնէն գրաւոր խօսքի կին չէր: Այնուամենայնիւ, առանց կարդալու անմիջապէս հասկացաւ, որ բոլոր տղամարդիկ մահացել էին, եւ որոշեց ոչ մէկի հետ չխօսել, այլ վերադառնալ Շուշանիկի մօտ: Պահեստում տարածուած էր մահուան սարսափի սուր հոտը:

Սառն, արնագոյն արշալոյսը վրայ հասնելուն պէս հայկական թաղամասի տներում ասես ներթափանցեց մի ընդարմացած անտարբերութիւն: Դրամներն ու զարդերը գիշերուայ ընթացքում անհետացան՝ հնարամտօրէն քօղարկուելով հազար ու մի սրտածմլիկ ձեւերով. կարուեցին իբրեւ հագուստի կոճակներ, բաժանուեցին ու ստորաբաժանուեցին այն-

պէս, որ խնայողութեան մէկ մասի յայտնաբերման հետեւանքով չկորչէր ամբողջը, ամրացուեցին երեխաների զգեստների վրակարի տակ կամ էլ աղջնակների խիտ հիւսքերում տոպրակների մէջ:

Մինչ այդ երեխաներն արդէն յոգնած քուն էին մտել ով որտեղ պատահէր, իսկ մեծերը մի պահ հանգիստ էին առնում, միանում սուրճ ըմպելու, կարծիքներ փոխանակում եւ ջանում յաղթահարել տագնապը՝ քարաւաններ կազմակերպելով: Հաշուի էին առնում նաեւ ծերերի կարծիքը, որոնք եւս պէտք է նրանց հետ մեկնէին («Առանց բացառութեան», – ասել էր մունետիկը) եւ կարող էին վկայութիւններ տալ 1894–96 թթ. ջարդերի վերաբերեալ, օգնել իրենց յիշողութիւններով, սահմանափակել ապագան պարուրած սարսափազդու դատարկութիւնը, խորհուրդներ տալ, կանոններ առաջարկել: Բոլորը շարունակում էին կարծել, որ տարեցների իմաստնութիւնը հաշուի առնելով թուրքական աւանդական քաղաքավարութիւնը նրանց կիսայէր. միգուցէ կկարողանային կանանց եւ երեխաների հանդէպ գուժ եւ ապահովութիւն մուրալ, մինչեւ որ ընտանիքները կմիանային իրենց տղամարդկանց Հալէպի մօտ: Սա էր բոլորի նպատակակէտը:

Իրար մէջ բաժանեցին պարտաւորութիւնները, սահմանեցին գոյատեւելու պահանջներն ու պայմանները: Օրն արագ էր անցնում, իսկ յաջորդ առաւօտեան՝ արշալոյսին, պէտք է պատրաստ լինէին մեկնելու: Ուստի մըջիւնի ժրաջանութեամբ հարկ էր հաշուել ու միաւորել բոլոր փոխադրամիջոցները, դասաւորել կառքերի վրայ ներքնակներն ու վերմակները, կահկարասին, սնունդը, հագուստները. ոչինչ չմոռանալ, հայթայթել հակաճիւղներ ու դեղեր... Բայց այլեւս բժիշկներ չկային, եւ ծեր մանկաբարձուհի Սրբուհին անոււմ էր այն ամէնը, ինչ կարող էր:

Յանկարծ լսելով խոհանոցից Սրբուհու ձայնը, որ խօսում էր Ազնիւի հետ, Շուշանիկը ձգուեց: Մեղմ հալուեց Վերոնի

թոյլ գրկախառնութիւնից, շոյեց նրա մագերը, ապա ոտքի կանգնեց, խաչակնքեց ու ասաց.

– Ես այստեղ եմ: Անցնենք գործի: Որտե՞ղ է Իսմէնէն: Երեխաներին կերակուր տուէք: Ժամը քանիսի՞ն պէտք է մեկնենք: Մինչ այդ գնամ, հագուստս փոխեմ:

Բռնեց Անրիեթի՝ իր հետ Սմբատի արեան սարսափելի փորձառութիւնը կիսած դստրիկի ձեռքը, մեղմօրէն փոխեց նրա հագուստները՝ քնքշագին գգուելով աղջնակին: Անրիեթը, ինչպէս մի անշարժ տիկնիկ, չդիմադրեց: Շուշանիկը հոգոց հանեց եւ համբուրեց նրա ճակատը, ապա իրենց շորերից մի կոյտ պատրաստեց ու նետեց գետնայարկի տարողունակ վառարանը, որ դանդաղ սկսեց վառուել: Ամբողջ տնով տարածուեց ծանր, անախորժ քաղցր, տխուր, բայց եւ հարազատ մի հոտ:

Բոլորը զգացին այդ հոտը, հասկացան եւ շտապ խաչակնքեցին: Սա Սմբատի ու նրա պարզ սրտի հրաժեշտն էր իր սիրած տանը. ծխի մի ստուար, ձիգ գիծ, հին, կորուսեալ հայրենիքը յիշեցնող մի հոտ, որից հնարաւոր չէր խուսափել, որը կպչում էր պատերին ու ծանրացնում շնչառութիւնը, մի յուշ, որից պէտք էր հեռու մնալ, որպէսզի կեանքը շարունակուէր:

Այդ պահին արդէն պղծուած, առանց հսկողութեան մնացած դռների մէջ երեւաց կաղ Նազիմը՝ քայմաքամի մուրացիկ լրտեսը, որին արդէն Իսմէնէն ներգրաւել էր երկակի խաղի մէջ: Դժուար էր ներթափանցել Նազիմի մտքերի մէջ: «Իմանալ ճիշտ ժամանակին խօսել. սա է մուրացիկների ու թագաւորների ճշմարտութիւնը», – սիրում էր կրկնել հեղինակաւոր ձայնով՝ քթախոտ քաշելով իր մաշուած տուփիկից, որ մի ժամանակ Սմբատն էր նուիրել:

«Գրեթէ նոր էր», – յանկարծ յիշեց Նազիմը եւ զգաց, որ իր աշխարհը սասանուում էր, որովհետեւ Սմբատն այլեւս չկար: Եւ գրպանի խորքում զգալով գունաւոր, շողշողուն քարի ջերմութիւնը, որ Իսմէնէն էր տուել եւ այլ քարեր եւս

խոստացել, նրա ծեր, մտատանջ գլխում ուժեղանում էր համր վախն այն բանից, որ կորցրել էր իր ամէնից յուսալի մշտական հովանաւորներից ոմանց եւ որ այլեւս օդի պէս ազատ չէր, քանի որ հայերի այս գաղտնիքը ծանրացած էր վրան, եւ օդում ամէնուր տարածուած էր այդ կպչուն հոտը:

Իսմէնէն նրա հետ ճիշտ ժամանակին էր խօսել: Այժմ Նազիմը, իրեն յատուկ զգուշաւորութեամբ, գնդապետի մօտ գնալու եւ իրականութիւնը հոտոտելու, դէսուդէն ընկնելու փոխարէն եկել էր Շուշանիկի մօտ՝ տեսնելու տիրուհուն, որին, իրօք, գտաւ խոհանոցում կարգադրութիւններ անելիս: Ամբողջ տունը արձագանքում էր նրա խորոխ ձայնին:

– Նազիմ, Աստուած քեզ պահպան, ահա քեզ հաց, – ասաց Շուշանիկը՝ հազիւ նրան տեսած:

Յանկարծ Նազիմի ցամաքած սիրտը թրթռաց. նրան թուաց, որ այդ պահին Աստուած, իրօք, իր հետ էր. բռնեց կնոջ պաղ ձեռքը, մօտեցրեց ճակատին, շուրթերին, սրտին եւ դանդաղ վանկատեց.

– Այս պահից ի վեր քո ծառան եմ, Վալիդէ¹² Հանըմ¹³: Ես փողոցի փոշին եմ, բայց յուսամ, որ լինեմ այն ճանապարհին, որը դու պէտք է անցնես, եւ այն դարձնեմ առաւել դիւրին:

Նազիմը տեղեակ էր հայերի բնաջնջման ողջ ծրագրին. ամէնուրեք ու ամէն ինչի գողունի ականջ էր դրել նա: Բայց այս պահին իրեն զգաց որպէս Հարուն ալ Ռաշիդի ասպետ, հաւատարիմ մարտիկ Երուսաղէմի պատերի տակ, շտկուեց ու անատամ բերանով լայն ժպտաց:

Ա՛խ, Շուշանիկ, անուշիկ հարազատս, եթէ դու Նազիմից խնդրէիր իր հիւղակը (այդպէս փրկուեց Թաշճեանների փոքրը՝ Նշանը). ա՛խ, Վերոն, զուարճալի գլխարկով ոսկի աղջիկ, եթէ թաքնուէիր նրա կանանց մէջ (Նազիմը երկու

¹² Վալիդէ – թրք. մայր (ծնթ. թարգմ.):

¹³ Հանըմ – թրք. Տիկին (ծնթ. թարգմ.):

կին ունէր՝ գէր, աղտոտ ու ծոյլ, ու մի հիւղակ). դու, Ազնիւ, թուխ գեղեցկուհի, եթէ փախած լինէիր քո Զելալի հետ (բայց Զելալը Զեմալ փաշայի սպայակոյտի կենտրոնում էր՝ Հալէպում, եւ զուարճանում էր)...

Մինչ այդ Նագիմը պրպտեց իր լայն գրպաններից մէկն ու դուրս հանեց մի կնքած դեղին ծրար:

– Նամակ է, տիրուհի, քաղաքից է ստացուել: Փոստատարն այլեւս չկայ:

Այստեղ շփոթուեց, չկարողացաւ ասել, որ այն Սմբատին էր ուղղուած: Երուանդի հեռագիրն էր:

Շուշանիկը վերցրեց ծրարը եւ առանց հասկանալու նայեց վրան: Խնամքով բացեց պապիկի սուր թղթահատով, որ միշտ պատրաստ դրուած էր մուտքի մօտ: Երուանդի բաւերն անմբռնելի պար էին բռնել նրա յոգնած աչքերի դէմ. Խտալիան ներքաշուած էր պատերազմի մէջ... Երուանդը չէր գալիս... ամէն ինչ գուր էր, ամէն ինչ... Ապա մտաբերեց այն խաղը, որ դեռեւս երէկ խաղում էին Սմբատի հետ, եւ յանկարծակի, ցաւ պատճառով փղձուկը խեղդեց նրա կողորդը: Նրա հորիզոնը յանկարծ սկսեց նեղանալ, կարծես լուսաւոր հոգին սկսել էր այրուել՝ եզրերից կամաց-կամաց ընկղմուելով սեւ, ստուերոտ անդունդը:

«Տրուել այդ խաղին, այդ ստուերներին», – երազում էր Շուշանիկը, մինչ դաւադիր քունը վրայ էր հասնում, գոցում աչքերը: Այլեւս անելիք չկար: Այլեւս հարկ չկար մտածելու Եւրոպա գնացող Սուրէնի հագուստների, ճամփորդական սնդուկի, Ամերիկա մեկնող երկուորեակ ատաղձագործների միջոցով Ռուբէնին փաթեթներ ուղարկելու, Կարոյի ամերիկեան դպրոցի, Լեւալիին հանդերձաւորելու մասին. այդ բոլորն այժմ հանգրուանեցին բոցավառ հոգու մի անկիւնում, որին դիպչելիս մարդ այրուում է:

Այժմ պէտք էր հագցնել աղջիկներին եւ պատրաստուել ճանապարհորդութեան: Շուշանիկի յոգնած միտքն այժմ

նայում էր Նագիմին՝ առանց նրան տեսնելու: Դրեց հեռագիրը գոգնոցի գրպանը, ապա միտքը փոխեց եւ յանձնեց այն տիկին Նուարդին.

– Ի վերջոյ, միակը Դուք էք, որ ճանաչել էք նրան, – ասաց նա: – Հիմա մեր հերթն է նրանց մօտ գնալու... Պէտք է մի կերպ Զարեհին տեղեկացնենք:

Ազնիւը, որ անկախ իրենից հսկում էր նրան, վրայ հասաւ, վերցրեց հեռագիրը Նուարդի ձեռքից, կարգաց այն եւ ասաց.

– Ես կպահեմ («Որպէս թալիսման, – մտածում էր նա, – որպէս Արեւմուտքից եկող սրբութիւն՝ ապացուցելու, որ այլուր եւս հայեր կան, որոնք ազատ են եւ կարող են նոյնիսկ լուր ուղարկել»): մի լուսաւոր կէտ՝ նրան շրջապատող անհուն սարսափի խորքում):

Մինչ այդ Շուշանիկի մօտ էին գալիս թաղի կանայք՝ շփոթուած ու վախեցած: Ծակատագիրը, որ նրան հարուածել էր, ցաւալի հեղինակութեան կնիք էր դրոշմել նրա դէմքին, որից անհետացել էր ուրախ ժպիտը, եւ շեշտուել էին ծանր, երկրային դիմագծերը:

Բայց չէ՞ որ նա Մայրիկն էր, ինչպէս մինչեւ երէկ (դարե՛ր առաջ) ասել էր նրան քաղցրիկ Կարոն: Ու՞մ դիմել, ումի՞ց ճշտել, թէ արդեօք ամէն ինչ կարգին էր, ու՞մ հաւանութիւնը ստանալ: Եւ Շուշանիկը, որին սիրով հսկում էր Ազնիւը՝ պահակը, իրենից մէկ քայլ հեռաւորութեան վրայ, գործի անցաւ: Ընթացեց փոխադրականները, հաշուեց մարդկանց, բաժանեց ծերերին, երեխաներին, այծերին, ջրի պաշարը, շաքարը, ծածկոցները, ընդհուպ մինչեւ թռչուններով վանդակները:

Նրա գաղափարն էր դեղատուէն ու վիեննական հրուշակեղէնի խանութը դատարկելը. շաքարահատ, արեւմտեան քաղցրաւենիքի բուրումնաւէտ տուփեր, անգլիական պաքսիմատով լի թիթեղամաններ, շուկայարական շոկոլադ, նուրբ ու չոր անուշեղէն: Այս ամէնը հաշուեց եւ բաժանեց:

Թարմ քաղցրաւենիքը երեխաների համար տօն էր, եւ

Շուշանիկը մեղմ ժպտաց միւս մայրերին եւ երեխաներին, ինչպէս նաեւ իր իսկ վերապրած զաւակներին, ձեռքերը չփեց, սեղան պատրաստեց («Այլեւս կարիք չկայ ամանները լուանալու», – մտածեց նա) եւ յանկարծ ուժգին բացեց մեծ սպասադարանն ու հանեց ոսկերիզ, փարիզեան յախճապակուց նուրբ ամանեղէնը, անգլիական արծաթեայ սպասքը, Եէֆիլդ թէյամանը:

«Թող երեխաներն այսպէս յիշեն», – մտածեց նա:

Ազնիւն անմիջապէս հասկացաւ, բացեց դարակներէից մէկն ու փողփողացրեց ֆլանդրիական վուշից այն մեծ սփռոցը, որ ծննդաբերութիւնից վախճանուած տասնիննամեայ գեղեցկուհի Իսկուհին էր ասեղնագործել իր սիրեցեալ Համբարձումի համար: Կանաչով ու նուան կարմիրով որթատունկի շիւեր ու Անատոլիայի խաղող՝ ոսկեայ խիղբերով, որոնք շրջապատում էին կենտրոնի մեծ ու ջերմ արեւը՝ կատարեալ ու համաչափ ճառագայթներով, ամբողջովին ասեղնագործուած մետաքսով ու ոսկեթելով, լայն երիզով վէտովէտուն, գունաւոր կերպասի վրայ. հարազատ ընտանիքին ժառանգութիւն թողած երջանիկ երիտասարդ կնոջ վառ երեւակայութիւն:

Հուրհուրաց երփներանգ գանձը, փայլեցին շողշողուն ափսէները, բաժակները՝ երեխաներն ուրախութիւնից խնթացել էին, մայիսեան արեւը քթթում էր ջերմօրէն ապակիների միջից եւ ցոլում սեղանի կենտրոնում:

– Այսօր ի՞նչ տօն է, Մայրիկ, – հարցրեց այրի Անտոնեանի փոքրիկ տղան՝ կաղ Սարգիսը:

– Չեր տօնն է, – պատասխանեց Շուշանիկը, – որպէսզի ձեզ պատրաստենք այն արկածախնդիր ճամփորդութեան համար, որ շուտով պէտք է կատարենք՝ մեր հայրերին հանդիպելու: Այստեղ վրայ է հասնում պատերազմը, մենք կվարուենք ինչպէս ուհիւրաները Ամերիկայում:

Այս խօսքը խանդավառութիւն առաջացրեց, եւ բոլորը հասկացան: Իսմէնէն եւս ժամանել էր եւ հերթական անգամ պատմում էր իր հանդիպման մասին հնդկացիների առաջ-

նորդի հետ, որին յետոյ կնութեան գնաց, եւ երգում էր շերտքիների երգը: Բայց ոչինչ չկերաւ, Մայրիկը եւս ոչինչ չկերաւ: Միայն Ազնիւն ի յայտ բերեց իր սովորական մեծ ախորժակը: Ծերմակ ատամները շողշողացին ու մխրճուեցին քաղցրաւենիքի մէջ: Եւ երգեց իր երգը. «Ով սիրու՛ն, սիրու՛ն...»:

Այս գիշեր բոլորը քնեցին՝ պատրաստութիւններից ուժասպառ, յուսալով, որ իրենց հլու-հնազանդութեամբ հեռու էին վանել ճակատագիրը:

Եւ բոլորը երազում էին հանդիպել ծովից այն կողմ գտնուող իրենց ազգականներին (բոլորն ունէին), որոնք, ձեռքերը պարզած, կընդունէին փախստականներին: «Կախատեմ, ամէն ինչ կանեմ», – խորհում էին մեծերը: «Կմեծանամ Ամերիկայում», – մտածում էին երեխաները:

Այս հեզ, հլու, խոնարհ ու բազմավաստակ ժողովուրդն արդէն ապաւինում էր ծովի գնացող-եկող ալիքներին: Իրականում ոչ ոք չէր մտածում, որ երբեւէ կվերադառնար իր հարազատ օջախը: Բոլորն արդէն գիտէին ճակատագրի բերումով իրենց շրջապատող մարդկանց ընչաքաղցութիւնը, այն մարդկանց, որոնք «ճիշտ» ցեղից ու կրօնից էին, որոնք կտիրանային իրենց ունեցուածքին, արտերին ու տներին, խանութներին ու փարթամ մրգաստաններին: Այդուհանդերձ, վստահ էին, որ կկարողանային դուրս պրծնել այդ անիծեալ օղակից եւ ամուր բազուկներով, խիզախ հոգիներով կվերակառուցէին իրենց կեանքն այլուր:

Փոքրիկ քաղաքում, Սմբատի ընտանիքի կանանցից բացի, ոչ ոք չէր կասկածում, որ օդում ուրիշ բան կար թաքնուած, չէր ըմբռնում այն հսկայական խաբէութիւնը, այն մահացու վտանգը, այն երթը դէպի կործանում, որն էր ճանապարհորդութեան իրական նպատակակէտը, ոչ ոք չգիտէր, որ տղամարդիկ արդէն կտտորուել էին:

Արեւածագից առաջ թաղամասում արդէն շարք էին

կանգնել փոխադրակառքերը, որոնց ուղեկցում էին կենդանի մնացած տղաները: Մանկաբարձուհի Սրբուհին առաջ էր տանում իր կառքը, որի մէջ ստիպուած էր եղել տեղաւորել մի ծննդկանի, որը գիշերը չէր կարողացել ծննդաբերել: Ծնրմակ մաշկով ու հուժկու բազուկներով լուացարարուհի Արսինէի կառքն առջեւում էր, որին հետեւում էին արհեստաւորների երեք փոխադրակառքերը, որոնց մէջ գետեղել էին իւրաքանչիւրի գործի համար ամէնից անհրաժեշտ երկաթեղէնը՝ գամեր, մուրճեր, պտուտակահաններ, պայտեր, փոքրիկ, շարժական քուրայ (այն, որ ամուսնը տեղաւորում էին անձաւի մէջ՝ ջրվէժների տակ), մեծ ու փոքր սղոցներ, տարբեր չափերի բահեր, լուացքի տախտակ, օճառ, մոխրաջուր... այն ամէնը, ինչ կարող էր պէտք գալ: Արսինէն հպարտանում էր իր ալիւմինէ կաթսաների հաւաքածուով, որ աւագ որդին էր ուղարկել Յրանսիայից. նա, որ Մարսելում ատաղձագործ էր: Արսինէն փաթեթաւորել էր ամէն ինչ՝ սկսած կափարիչներից մինչեւ պղնձնայ փայլուն շերտիք, եթէ նոյնիսկ դրանք շատ տեղ էին զբաղեցնում: Փոխադրակառքի յատակին տեղաւորել էին իր, դարբնի ու պայտառի երեխաներին, որոնց հսկում էին մայրերը՝ տան իմաստուն կանայք: Բոլորը քնաթաթախ էին ու հեկեկում էին: Բայց զապտիէների՝ դրսից եկող ձայները անմիջապէս լուեցնում էին նրանց:

Տեսնելով, որ շարժակառքերը պատրաստ էին, ժողովուրդն էլ տրամադիր էր տները փակելու եւ տուրքերը վճարելու, ոստիկան-զինուորները չգիտէին թէ ինչի վրայ գայրանային, ու թրերը ճօճելով՝ մռայլ շրջում էին թաղի փողոցներով ու անորոշ սպառնալիքներ քրթմնջում: Աչքի պոչով չարակամ գոհունակութեամբ նայում էին կառքերից ներս՝ առանց թշնամական գործողութիւնների. դեռ աւելին, թւում էր, թէ սովորականից աւելի չափաւոր էին ու հանդարտ: Բանն այն էր, որ գիտէին իրենց անելիքը, քանի որ տեղեկացուել էին:

Արտոյտների Ագարակի սպանդի լուրը մի ակնթարթում

տարածուել էր: Գնդապետն անմիջապէս հեռացրեց լեյտենանտ Իսմայիլին՝ քշելով նրան դէպի ռազմի դաշտ. բայց չգիտէր, որ վերջինս զայրացած արդէն մանրամասն տեղեկագիր էր ուղարկել Ռազմի հզօրագոյն նախարար Էնվէր փաշային, որը ողջ արեւելեան Անատոլիայում չափազանց սեղմ ժամանակահատուածում իրականացուելիք հայերի խուզարկութեան ու աքսորի հիմնական կազմակերպիչն էր: Այս ամէնը օրէցօր հսկում էր ամէնից նախանձախնդիր իթթիհատականների ու յատուկ հարկու կազմակերպութեան կողմից, որը հէնց այդ նպատակով էր հիմնադրուել:

Ծիշտ է, լեյտենանտը մեկնեց, բայց նրա հետ ոճիւր գործած զինուորներին գնդապետը միայն հայրաբար սաստեց ու ներեց: Սա, միգուցէ, սխալ էր: Ժամանակները փոխուել էին: Հայկական ինչքին տիրանալու փափագն ու գործած սպանդի յանցանքը նրանց ստիպում էր աւելի բարձր գոչել՝ լուեցնելու ներքին ձայնը: Ինչու՞ գնդապետը նրանց չպատժեց: Նշանակում էր, որ զինուորներն, ըստ էութեան, իրաւացի էին... Ու խօսում էին, խօսում զապտիէներ իրենց գործընկեր ոստիկան-զինուորների հետ, նկարագրում առանձնատան հրաշալիքները, պատկերացնում բոլոր հայերի տներում թաքնուած հարստութիւնները:

Հմայուած զապտիէներն, իրօք, կցանկանային անմիջապէս սկսել իրենց սեւ գործը: Սպանել, վայելել հայ չքնաղ կոյսերին, խուզարկել տները՝ փնտրելով առասպելական, թաքնուած գանձերը: Տղամարդիկ այլեւս չկային: Այլեւս ոչ ոք չէր խափանի իրենց կողոպուտը:

Սակայն ստոյգ հրամաններ ունէին: Գործողութիւնը պէտք է կատարուէր ժամանակակից ձեւով, վիրաբուժական ճշգրտութեամբ: Հարկաւոր էր խուսափել խղճահարութիւն առաջացնող տեսարաններով մարդկանց տագնապի մատնելուց կամ ներգրաւելուց հայերի թուրք հարեւաններին ու բարեկամներին, ամերիկացի քարոզիչներին, հրեաներին եւ ապա յոյներին, որոնք բազմաթիւ էին: Մեկնումը պէտք է ի

կատարած առաջին հաշտեցումները, ոչ ոք չպետք է յիշեր սուլթանի ժամանակների մարդաորսը, երբ սպանուած հայերի դիակները յաղթականօրէն դիզուած էին էրզրումի ու Կոստանդնուպոլսի փողոցներում, եւ կոյտի մօտ կանգնած հրացանին յենուած ինչ-որ մի զինուորի անմահացրել էր արեւմտեան մի լրագրող:

Իթթիհատականները բացատրել էին, որ առանց անձնական քինախնդրութեան այժմ հեռացուած էր ուռուցքը՝ հիւանդ ազգի մարմինը առողջացնելու, մաքրելու նպատակով: Եւ նրանք, ովքեր լաւ կգործէին, ներում կատանային շատ յանցանքների համար եւ ազատօրէն կվայելէին այն ամէնը, ինչ կարելի կլինէր քամել քահանաների ու վաճառականների այս պիղծ ենթացողից:

Միայն թէ հարկաւոր էր պահպանել կարգ ու կանոն, գործել նախապէս սահմանուած օրերին, քաղաքում շատ ասէկօսէներ չտարածել: Նախ եւ առաջ՝ դուրս. տեղահանութիւնը պէտք է կատարուէր խստօրէն, պրոսակական ձեւով:

«Մեր դաշնակիցները կհրճուեն, թէ որքան կատարեալ ճշգրտութեամբ ենք լուծում Հայկական հարցը», – մտածում էր էնվէրը. ու մի կատարեալ, անասելի երանութիւն էր վայելում եւս մէկ քարաւանի մեկնումը աւետող իւրաքանչիւր հեռագրի ստանալուց: Այս ամէնին հետեւում էր իր բուլղարական կաշուով պաստառապատ գրասենեակից, գոյնզգոյն մատիտներով փոքրիկ գծեր քաշելով եւ կարմիր նշաններ անելով Կայսրութեան կապոյտով ու կանաչով գծագրուած իր անձնական քարտէզի վրայ, մինչեւ որ բոլորը կդառնային մէկ գիծ, որն, ի վերջոյ, անհետ կկորչէր սիրիական անապատի մէջ...

Դէպի անապատ կատարուելիք բռնագողթը կուսակցութեան գաղափարախօսների հայեացքին երեւում էր որպէս մաքրագործման արարողութիւն, մորթուած կենդանիների միջոցով քաւութեան զոհ՝ ի պատիւ եւ ի փառս մի աշխարհիկ աստծոյ, որն անզգայ էր ու նախանձոտ:

Ուստի այս անգամ նոյնիսկ զապտիէները կարողացան արդարացնել իրենց. միայնակ մնացած հայուհիների կոյր հաւատն ու յոյսը լրացրին մնացածը: Եւ այնպէս ստացուեց, որ խաղաղ մեկնեցին:

Խեղճ գնդապետը ոչինչ չէր հասկանում այս ժամանակակից գաղափարներից: Նրա Աստուածը (նա մոլեռանդ չէր, բայց կանոնաւոր աղօթում էր) իսկական Աստուած էր, եւ նա կարեկցում էր նրան, ով դեռ չէր լուսաւորուել: Բայց խորապէս զգում էր իր ծառաներին լաւ վերաբերուող եւ հանդուրժող տիրոջ հին հպարտութեան արձագանքը: Ահա թէ ինչ էին քրիստոնեաները՝ ստորակարգ, բայց օգտակար: Մարդիկ, որոնք բանում էին սուլթանի հպարտ ռազմիկների համար, որոնք ծառայասէր էին, որոնց հարկաւոր էր բարեացակամօրէն պահպանել՝ մեկուսացնելով ու վերացնելով միայն նրանց, ովքեր (Աստուած մի՛ արասցէ) ցանկանում էին զբաղուել քաղաքականութեամբ:

Տեսարանը, որին ականատես եղաւ նա, սարսափահար արեց զինուորականին: Նրա բարեպաշտ ու արդար հայրը, որ մեռած էր, բայց կենդանի՝ որդու մէջ, եւ հէնց ինքը՝ այն տղամարդը, որն իր տարերքի մէջ էր Մադամ Սեսոստրիսի հետ, գլուխ էին բարձրացնում, ապստամբում սպանողից յետոյ ժամ առ ժամ աճող խորչանքով ու տագնապով՝ շարունակ մտածելով այն հէգ կանանց խմբի, իր աչքերի մէջ մեխուած եօթ զոյգ մուգ, անշարժ աչքերի, բժիշկ Գրիգորի անտանելի վախճանի մասին:

Իր արտաբերած իւրաքանչիւր նախադասութիւնը պարտաւորեցնում էր իրեն: Ասես ազնուական էր, արդարութեան կողմնակից: Այդ պատճառով գնաց Մադամ Սեսոստրիսի մօտ՝ զիչերն անցկացնելու, եւ միասին յղացան փրկութեան ծրագիր, ի հարկէ, լաւ վարձատրութեամբ. նկատի ունէր, Շուշանիկին, նրա դուստրերին ու ազգակիցներին:

– Բոլորն էլ կանցնեն իմ եգիպտացի ազգականների տեղ, որպէս Աղեքսանդրիայից եկած զպտի գարմիկներ. – ասում

էր Սեսոստրիսը ոգեւորուած, — եւ, նոյնիսկ, եթէ ոչ ոք չէր տեսել նրանց ժամանելը, մի քանի կտոր արծաթով բոլորը կյիշեն նրանց գալուստը, մի տասն օր առաջ: Եւ քանի որ հիմա պատերազմ է, դու նրանց Հայէպ կուղարկես զինուորների մի փոքր խմբի ընկերակցութեամբ:

Բայց սա, ի վերջոյ, այնքան էլ յաջող միտք չթուաց զնդապետին:

«Ինչ-որ մէկը կարող է լրտեսել, հարկաւոր է օգուտը կիսել...», — խորհում էր նա: Միգուցէ աւելի նպատակայարմար էր նրանց տանը թաքցնել, մինչեւ անցնէր թոհուրոհը: Հեռանկարը գայթակղեց ձեռնահամային, որն ակնկալում էր լաւ եկամուտ եւ ջերմ բարեկամութիւն, մուտք դէպի բարձր հասարակութիւն, ինչը միշտ տենչացել էր. բացի դրանից, Սմբատի աչքերը հետեւում էին նրան:

Կանցնէին ջարդերն, ինչպէս միշտ. ընտանիքի հետ կսկսուէր մտերմութեան մի նոր փուլ, իր նոր բարեկեցութեան համար պատկառանքի մի նոր, լուսաւոր շրջանակ, փառաւոր արժանիքների մի ամբողջ շարան՝ բարութիւն անելու անուան տակ. ի՛նչ գայթակղիչ հեռանկար:

Միգուցէ միասին քաղաքից դուրս գնային (միգուցէ Ագարակ. բայց յետոյ սարսափ պատեց նրանց. ի հարկէ, Շուշանիկը երբեք այնտեղ չէր վերադառնայ: Գուցէ կվաճառէ՞ր: Ցածր գնո՞վ, մի բարեկամուհու՞):

Մտքերն արագ էին սահում՝ շահաբեր յոյսերի ցնորքից բռնուած, եւ Սեսոստրիսը (որի իսկական անունը պարզապէս Գարբիէլ էր) արդէն մտածում էր սննեակների վերակարգաւորման մասին: Ապա երջանիկ քուն մտաւ. զնդապետն էլ՝ նրա կողքին՝ յենուած հարճի՝ իրենց այնքան սիրած լայն մահճակալի մետաքսեայ բարձերին: Նա ծխում էր իր անգլիական ծխամորճը՝ սիրտը հանգիստ, ծրագրերը մտքում լաւ գծագրուած, խնամքով մշակուած: Եւ խաղաղուած քուն մտաւ մինչեւ յաջորդ առաւօտ:

Բայց ժամերն անցնում էին չափազանց արագ, իսկ ճակատագիրը հեզնօրէն երես էր թեքել նրանից: Աքսորի իրական պատկերը դիտաւորեալ ծածուկ էր պահուել զնդապետից: Նա զօրանոցում էր, իսկ իր զինուորներն իրենից աւելի շատ բան գիտէին: Նրան արդէն կասկածում էին, իսկ արած քայլերն էլ՝ Ագարակի հանգուցեալների թաղումը, կանանց ազատումը... նրան հաստատել էին որպէս հին վարչակարգի ներկայացուցիչ:

Ոչ ոք նրան չէր ասել, որ Յատուկ կազմակերպութեան ջերմեռանդ իթթիհատական սպաների կողմից ղեկավարուած մի ջոկատ էր ժամանել երեք օր առաջ ու երկար գրուցել քայմաքամի հետ: Ո՛չ ստոյգ հեռագրեր էր տեսել, ո՛չ ստոյգ հրահանգներ ստացել: Միայն տեղեակ էր, որ կանչել էին տղամարդկանց (նա կարծում էր, թէ հերթական հրահանգներից մէկն էր): Ոչինչ որոշակի չգիտէր աքսորի մասին:

Իսկ յաջորդ օրը, երբ նա կանչեց իր ամենահաւատարիմ զինուորների փոքր խմբին՝ տասնապետ Հաբիմի ղեկավարութեամբ, ու կարգադրեց գնալ, տնից հանել Մադամ Շուշանիկին ու միւս կանանց, տեղաւորել փոխադրականքերի մէջ ու բերել Մադամ Սեսոստրիսի մօտ՝ հրահանգելով լուծութիւն պահպանել ու խոստացաւ բաւականին խոշոր գումար բոլորի համար, զինուորները նայեցին զնդապետին, աչքով գողունի նշան արեցին ու լուռ մնացին: Ապա Հաբիմը խօսեց բոլորի անունից:

— Էֆէնդի, քեզ հետ խօսում ենք, ինչպէս մեր հօր հետ, — սկսեց նա վարանելով: — Եթէ կամենում ես, մենք կգնանք: Քոնն է հրամանը: Բայց քաղաքում չար շուկաներ են շրջում, ու վատ բաներ են կատարուում:

Ապա, ի պատասխան զնդապետի խոժոռած յօնքերի, վրայ բերեց.

— Բոլոր Հայ տղամարդիկ սպանուած են, ինչպէս նաեւ քո բարեկամ դեղագործ Սմբատը: Իսկ կանայք ու միւսները մեկնել են այս առաւօտ՝ արեւածագին: Նրանց ասուել է. որ

ուազմական պատճառներով տեղափոխում են, բայց բոլորը գիտեն, չէ՞, — ու մի շրջանցիկ հայեացք նետեց գինուորների վրայ, որոնք լուռ կախեցին գլուխները, — բոլորս գիտենք, որ գնում են մեռնելու: Ոչ ոք, մեզ ասուել է, Էֆէնդի, որ ոչ ոք չպէտք է օգնի ոչ մի հայի: Ո՛չ կին, ո՛չ երեխայ, ո՛չ ծեր: Ով օգնի հայի, մահուան կդատապարտուի:

Ապա նեարդայնացած, մէկ շնչով արտաբերեց.

— Նրանց ծեր վարդապետ Յովհաննէսը մեկնեց մայր տաճարի ոսկեայ խաչով եւ ոսկի ու արծաթ հագած, Պատարագի հողաթափերով: Քայլում էր կառքերի առջեւից եւ մինչ անցնում էր, բոլորը ծնկի էին իջնում, ու մի կին բղաւեց. «Հայր սուրբ, մենք մեղաւոր չենք, օրհնիր մեզ», բայց գինուորները նրան լռեցրեցին: Յետոյ վարդապետը բարձրացաւ Մադամ Շուշանիկի կառքը:

Գնդապետը քար կտրեց եւ դժուարութեամբ վերագտաւ խօսելու կարողութիւնը.

— Նաեւ ծեր վարդապետը՞: Բայց ու՞ր են գնում: Իսկ ի՞նչ գինուորներ են նրանց ուղեկցում, որ ես տեղեակ չեմ:

Նա ասես այսպէս զգում էր իր ուժի եւ իշխանութեան կորուստը, բայց դեռեւս չէր ըմբռնում եղելութեան էութիւնը:

— Էֆէնդի, մեր գինուորները չեն, այլ Յատուկ կազմակերպութեան գինուորները, որոնք հրահանգները ուղղակիօրէն ստանում են քայմաքամից: Մեզ ասուել է, որ մենք յարմար ենք մարդկանց պատերազմի համար, մինչդեռ սա ամենախորամանկ կենդանիների յատուկ որս է, որ պէտք է կատարուի առանց խնայելու, եւ մեծ եկամուտ է սպասուում:

— Իսկ տները՞, ո՞վ կհսկի նրանց տներին, — հարցրեց կրկին գնդապետը՝ սրտի խորքում ահ զգալով:

— Զերդ գերագանցութիւն, արդէն վրայ են հասնում, իջնում են սարերից: Քուրդ ելուզակներն են գալիս, նրանց համար այս անգամ քամին ճիշտ կողմից է փչում, նրանց խոստացել են հայերի տները, եւ ով առաջինը հաստատուի,

նա էլ կտիրանայ, — պատասխանեց տասնապետը մի փոքր վշտացած (վատ չէր լինի, եթէ իրեն էլ հասնէր հայկական յարմարաւէտ տներից մէկը, դէ, իսկ քրդերն էլ մի բարի պտուղ չեն...): — Իսկ թէ հայերն ուր են գնում, յայտնի չէ: ասում են՝ Հալէպ, բայց ամէն մի վիլայեթից¹⁴ գաղթականների քարաւաններ են մեկնում, ինչպէ՞ս կտեղաւորեն այդ բոլորին Հալէպում:

Տասնապետի լայն դէմքը խօսելուց յետոյ պայծառացաւ: Եթէ հայերը մեկնել էին կառավարութեան հրամանով, ի՞նչ վատ բան կար նրանց ունեցուածքից ինչ-որ մի մաս գրպանելու մէջ: Եւ ամբողջ խումբը յուսալի նայեց գնդապետին: Հասկանում էին, որ ոչինչ չգիտէր, ոչնչից տեղեակ չէր, իսկ դա նշանակում էր, որ նրա հեղինակութիւնն այլեւս այն չէր (միթէ՞ պատերազմի ժամանակ գնդապետը չպէտք է ամէն ինչ վճռէր քաղաքում): Այդուհանդերձ, վերագասը միշտ վերագաս էր, իսկ իրենք էլ նրա գինուորներն էին, նրա որդիները...

Գնդապետ Հիքմէթն այդժամ ամէն ինչ հասկացաւ: Առանց պատասխանելու, շրջուեց եւ ուղղելով ուսերը՝ մտաւ իր գրասենեակը, խնամքով փակեց դուռը, հանեց անգլիական ծխամորճն ու սկսեց գննել այն՝ անշտապ խորհելով: Հարկաւոր չէր շատ սպասել: Տասը ըրպէ անց մի զապտիէ վազքով հասաւ՝ ձեռքին մի կնքուած նամակ: Գնդապետը բացեց այն ու առանց զարմանքի կարդաց, որ հեռացուած էր քաղաքի պահապան զօրքի հրամանատարութիւնից եւ իր գումարտակի հետ ուղարկուում էր ռուսական ճակատ: Մեղադրուում էր կասկածեալ թշնամի անձանց օժանդակելու մէջ (խեղճ գլխատուած Սմբատին...): Հրամանն ուժի մէջ էր մտնում անմիջապէս. ժամանակը կբաւականեցնէր միայն որպէսզի վերցնէր չինական մետաքսից կարուած իր խալաթը Մադամ Սեսոստրիսի տնից ու արագ պատմէր նրան եղելութիւնը:

¹⁴ Վիլայեթ — թրք. մարզ (ծնթ. թարգմ.):

– Չեմ խնդրում, որ ինձ հետ գաս,– յուսահատ վերջացրեց իր խօսքը գնդապետը, բայց պարզունակ սրտի խորքում այնքան էլ դժգոհ չէր. նրան թւում էր, որ հեռանալով կազատւէր բազում պարտաւորութիւններից, ստորացուցիչ նուաստացումից, հայերի անէծքներից, ու կսկսէր մի նոր, յարմարաւէտ կեանք: Իսկական գինուոր կլինէր, քաջարի գինուոր, ինչպէս մի ժամանակ. ձի կհեծնէր հպարտ, ինչպէս մի ժամանակ, երբ Սմբատի ու լազերի երկրից եկած իր բարեկամի հետ գնում էին սար՝ որսի, եւ որպէս Օսմանեան կայսրութեան իսկական ռազմիկ՝ կապանէր բաց ճակատով, մարտի դաշտում:

Եւ այդժամ բաժանման պահին, գնդապետին ու Սեսոստրիսին, այս տարօրինակ գոյգին, երկուսին էլ տեսիլք երեւաց. գնդապետը տեսաւ իր հօրը, իսկական տղամարդուն, որ ծանրօրէն նշան էր անում որդուն ու ցոյց տալիս անթիւ ոսկրերից ճերմակացած մի անապատ. մինչդեռ կինն՝ իր մօրը՝ Աղեքսանդրիայի կառավարչի սիրուհի արկածախնդիր իտալուհուն, որն իրեն պարտադրում էր վերադառնալ Եգիպտոս:

– Իսկ ես քեզ չեմ խնդրել դուրս գալ Աստոյ կողմից անիծուած այս երկրից ու հետեւել ինձ,– պատասխանեց Սեսոստրիսն՝ արդէն թեթեւացած. եւ քանի որ բարի էր, հրաժեշտի կրքոտ մի համբոյր դրոշմեց գնդապետի շուրթերին ու իր բարձի տակից հանելով՝ նրան փոխանցեց Սմբատի՝ թղթադրամներից կազմուած գեղեցիկ գիրքը: Իրօք բարի էր. միայն կէսն էր իրեն վերցրել:

Դրօշներով զարդարուն իտալիայում մտախոհ, դառնացած Երուանդն առաջին անգամ գգում էր, որ իր ճակատագրի տէրը չէր: Առաջին անգամ անյազօրէն ընթերցում էր լրագրերը, լսելի կերպով թեթեւացած հառաչում էր ռազմաճակատից եկող առաջին յաղթական լուրերի համար: Բոլորը համամիտ են. կարճ պատերազմ կլինի յատկապէս հիմա, երբ իտալիան վճռականապէս երես թեքեց ու միացաւ Դաշինքին՝ նոր ճակատ բացելով:

«Աւստրիան միանգամից կտապալուի»,– հաւաստում էին անպատկառ լրագրողները՝ միայն այժմ՝ քառասուն տարի անց, համոզուած, որ 1866 թուականին յաղթանակը Իտալիայինն էր. խանդավառուած, որ երեք տարի առաջ խլեցին Լիբիան ու Տասներկու կողիները միեւնոյն Օսմանական կայսրութիւնից, եւ այժմ այն կարելի էր մասնատել:

«Ֆրանսիան, Անգլիան, Ռուսաստանը մեր կարիքն ունեն յաղթելու համար, իսկ մենք էլ ետ կառնենք Տրենտոն ու Տրիեստը»,– երգում էին պատանիները փողոցներում, քարոզում էին բորբոքուած բանախօսներն իռեդենտիստական միութիւնները խճողած կանանց: Երիտասարդներից շատերը կամաւորական էին գրւում, շատերը երազում էին օդային նոր մեքենաներ՝ օդանաւեր՝ հերոսութիւն անելու բաց երկնքում, գեղեցիկ պատերազմ, նոր թնդանօթներ ու հրասայլեր, ցամաքային հրետանու մաս կազմող մեծ Բերթան, մի խօսքով՝ ամէն ինչ մի քիչ խառնափնթոր ձեւով:

Պատերազմը մահաբեր գինովութիւն էր յիսնամեայ խաղաղութիւնից յետոյ: Էդուարդն ու Քայելը եւս կարդում էին, խանդավառուած, արդէն ձանձրալի էին համարում առաջուայ պէս դպրոց յաճախելը յանկարծակիօրէն երիտասարդացած, կենսունակ դարձած եւ ճչացող գոյներով ու բուռն իրադարձութիւններով լի այս աշխարհում: Դէպի Անատոլիա կատարուելիք ուղեւորութիւնը, այնտեղի հօրաքոյրերը, ինչպէս նաեւ նրանց հրապուրիչ, նոր աւտոմեքենան անհետացել էին տղաների ուշադրութիւնից՝ ասես տարալուծուելով մղձաւանջի մէջ:

Բայց Էդուարդը, որ տասնվեց տարեկան էր եւ կարող էր մեքենայ վարել սովորել, շուտով կհրաժարուէր այդ մտքից ու այլեւս երբեք չէր ցանկանայ այդ. ամբողջ կեանքում նրա փոքրիկ, կլորիկ կերպարանքը՝ առեղծուածային գլխարկը գլխին, կերեւար վարորդի կողքին, որին յաճախակի փոխում էր, որովհետեւ քմահաճ էր ու դիւրագրգիռ:

Մինչդեռ Քայելը յուլիսեան մի ձանձրալի օր կվերա-

գտնէր մեքենան ու կսիրահարուէր նրան: Դէպ հեռաւոր ընտանիքը կատարելիք ճանապարհորդութիւնը դարձաւ հէքի-աթային մի արկած, մտացածին մի բան, որի հերոսն էր դառնում ինքն, ոչ թէ իր հայրը: Դառնում էր նաեւ մարագում թաքցուած կարմիր, հզօր Իզոտտա Փրասկինիի սանձահարողը, որը նրա վրայ դարան մտած գազանի տպաւորութիւն էր թողնում: Շուտով, շատ շուտով կգողանար ինքնաշարժի բանալիներն ու կսովորէր վարել այն. եւ ամբողջ կեանքում կլինէր ուշադիր, բայց խիզախ, երբեմն նոյնիսկ անխոհեմ վարորդ՝ յափշտակուած այն արագութեամբ, որ իր ճկուն, վարպետ ձեռքերը կարողանում էին սանձահարել:

Երուանդն այդ չքնաղ մայիսի վերջին կարծես կուրացած լինէր երեխաների, կնոջ, վերջինիս հարազատների հանդէպ: Ամառն անցկացնելու համար բոլորին տեղափոխեց Դոլոյի առանձնատուն: Ամէն առաւօտ մի շերտ հացի հետ կաթով սուրճը ըմպելուց յետոյ շտապով դուրս էր գալիս, մինչդեռ հոգատար Լետիցիան, ոտքի կանգնած, հայեացքով ճանապարհում էր նրան: Նստում էր դէպի Պաղովա զնացող գնացքը, հասնում մինչեւ հիւանդանոց, այստեղ ողջ օրը կլանուած էր լինում աշխատանքով, իսկ յետոյ անյազօրէն փնտրում էր իրեն յուզող նորութիւններ, որոնք այդպէս էլ չէր գտնում:

Գրեթէ ոչինչ յայտնի չէր արեւելեան ճակատից: Այն, որ ռուսներն առաջ էին շարժում, եւ որ էնվէրին ծուղակից փրկել էին հայկական զօրքերը, հին լուրեր էին: Մի ամեհի լուրերին էր տիրում այժմ ողջ Անատոլիայում, ոչ էլ գալիս էր Սմբատի հեռագիրն՝ ի պատասխան մայիսի քսաներեքին իր ուղարկածի: Սա չափից դուրս մտահոգում էր նրան:

Երբեք Սմբատը չէր անտեսել հեռագրեր ուղարկելու առիթը. իսկ եթէ քաղաքը յանկարծակի դարձել էր պատերազմական գօտի՞: Բայց փոքրիկ քաղաքը շատ հեռու էր ռազմաճակատից, եւ ոչ մի պաշտօնագրում նրա անունը չէր ակնարկուել: Սմբատի համար դժուար չէր լինի լուր ուղար-

կել իր դեղատունը մատակարարող այն դեղագործական հիմնարկութիւններից մէկի միջոցով, որոնք գտնուում էին մայրաքաղաքում:

Տագնապից խելագարուած Երուանդն անձնապէս զգաց իրեն սպառնացած, եւ չգիտէր, թէ ինչու: Նրա խուճկայոյզ գիտակցութեան մէջ վերստին յայտնուեցին անձեւ մղձաւանջներ եւ արեան անստոյգ տեսիլքներ, որի մասին ունեցած իր արեւմտեան կեանքի փորձը ոչ մի իսկական ճանաչողութիւն չէր տուել: Ուստի լաւ չգիտէր, թէ իր միտքն օրըստօրէ աւելի մթագնող այս ամպերը իրակա՞ն էին, թէ՞ ցնորական, մեղքի խորհրդաւոր գիտակցութեան (եւ միգուցէ չիրականացուած ցանկութեան) խենթ երեւակայութիւնն էին, թէ՞ իր գիտակցութեան սահմաններում թանձր ստուերի շօշափուկներով թաքնուած մեծ չարիքի իրական ըմբռնումը:

Նորից ուղարկեց մի հեռագիր, այս անգամ Հալէպ՝ նորութիւն ակնկալելով Զարեհից. վերջինս եւս չպատասխանեց. իսկ Թուրքիոյ Բոստոնից շարունակ նոյն հարցն էր տալիս՝ նրա պէս տագնապած:

Այսպէս անցաւ երկու շաբաթ. մինչ այդ Սմբատն արդէն կնքել էր իր մահկանացուն: Ապա ամերիկեան մի լրագրի միջոցով բազում կարճ յօդուածներից մէկից հասաւ առաջին անորոշ լուրը, որը, սակայն, արձանագրում էր ճշմարիտ փաստեր, եւ նոյնիսկ եւրոպականացած հայերի ակնջները զանազանեցին մահուան ղօղանջներ. «*** քաղաքում յայտնի Ամերիկեան վարժարանը փակուել է անորոշ ժամանակով: Շէնքը սեփականազրկել են, աշակերտներին տուն ուղարկել կամ զինուորագրել աշխատանքային գումարտակներում: Տնօրէնն ու ամերիկացի հիւպատոսը դիմադրել են, ուստի նրանց համարում են անբարեյոյս մարդիկ: Դեսպան Մորգենթաուն պաշտօնական բողոք է ներկայացրել թուրքական կառավարութեանն՝ ի դէմս էնվէր փաշայի: Բայց պատասխան չի ստացել»:

Այդ օրից ի վեր առատացան կցկտուր լուրերը՝ սկզբում

պատահական ու կղզիացած, գործակալութեան՝ եւրոպական պատերազմի ընթացքը լուսաբանող պաշտօնագրերի միջոցով, ապա կամաց-կամաց առաւել կարեւորութիւն ձեռք բերեցին, մինչեւ որոշակի մի պատկեր դառնալը, որն անհնար էր անտեսել:

1915 թուականի այդ մութ ամառնամուտին Երուանդը պատերազմական լուրեր էր ընթերցում, այլ ամէն անգամ կարդում էր մի պատառիկ հայկական ջարդերի մասին այն չնչին տեղեկութիւններէ, որոնք արտասահման էին թափանցում: Շատ չէին այդ տողերը, բայց եւ սարսափելիօրէն խօսուն էին:

Թերթերը տպագրում էին դրանք՝ ելնելով աւստրո-գերմանական անիրաւութեան ու անօրինութեան մասին եղած բազում յօդուածներէ. ի վերջոյ, Օսմանեան կայսրութիւնը կենտրոնական ուժերի դաշնակիցն էր: Բայց Երուանդը սկսում էր ըմբռնել, որ խօսքը ո՛չ պատահական ջարդերի, ո՛չ էլ պատերազմական միջադէպերի մասին էր: Սկսում էր դառնօրէն տեսնել մութ պատկերը, մահուան ցանցը, որի մէջ, անշուշտ, ընկել էր Սմբատը, քանի որ իր հեռագրին չէր արձագանքել: Եւ շուտով վրայ հասաւ վերջնական, ներքին համոզմունքը, որ այն աշխարհը, ուր ինքը երեւակայել էր վերադառնալ, այլեւս չկար, անհետացել էր. կարօտով յիշում էր այն պահը, երբ մէկ տարի առաջ մահացաւ ծեր Համբարձումը, ու ինքը թեթեւացած նամակ գրեց եղբօրը՝ հրաժարուելով անդրանիկութեան իրաւունքից ու սկսեց մտածել կորուսեալ երկրի մասին:

Բայց, ուրեմն, Սմբատն այնտեղ էր: Սմբատը միշտ այնտեղ էր եղել Երուանդի համար. Սմբատն ու իր պարզ սիրտը, Սմբատն ու իր հեռագրերը, դեղատուները, նարդին, զաւակները, որոնց նկարը միշտ առջեւն էր՝ գրասեղանի վրայ. ողջ ընտանիքի կենտրոնական պատկերը՝ արծաթաթիւ ծաղկային նախշերով շրջապատուած, հարուստ ծալքերով զարդարուած դազադի մէջ պառկած ծեր Համբարձումի շուրջ:

Սմբատը այն եղբայրն էր, որն ունէր իր սրտի բանալին: Երուանդի սիրտը փակուեց, զմոսուեց առյաւէտ: Անսահման մեղքի զգացումից ճնշուած (որպէս հայ գոյութիւն ունենալու, վերապրելու, յաջողութիւն ունենալու մեղքից) Երուանդն այլեւս երբեք իր կամքով չէր գնայ դէպի իր արմատները, դէպի կորուսեալ հայրենիքի մեղեդային, գունաւոր յիշողութիւնները, երբեք, մինչեւ որ կպատմէր թոռնիկին իր երկրի մասին՝ որպէս հեռաւոր, անհասանելի, երազային մի հէքիաթի:

Ի հարկէ, հոգ կտանէր Հալէպում հանգրուանած երեսաների մասին. նրանց Իտալիա կբերէր, կվճարէր ճանապարհածախսը, նրանց կմեծացնէր, բայց յետոյ նորից դաժանօրէն կբաժանուէր, եթէ նոյնիսկ, Անրիեթից բացի, միւսներին կթողնէր որպէս հայ մեծանալ: Երկուսին կուղարկէր Ամերիկա՝ Ռուբէնի մօտ, Բոստոն, իսկ Նուբարին ու Անրիեթին կբերէր իր մօտ՝ Իտալիա: Իր որդիների համար հին հայրենիքը ընդմիշտ արգելուած կլինէր՝ փակուած իր մշուշապատ յիշողութեան մէջ, որն անհնար էր ջնջել, ինչպէս մի նկար, ինչպէս մի անուն: Իսկ 1924 թուականին իտալական կառավարութեանը խնդրեց պաշտօնականօրէն վերացնել ազգանւան երեք տառերից բաղկացած այնքան շփոթեցուցիչ այն եանը, որը միանշանակ մատնում էր հայկական ծագումը: Կարճուած անունը կարող էր նաեւ թուրքի պատկանել:

Աւտոմեքենաները կշրջէին Վենետոյով. իսկ աւելի ուշ զարմիկ Սարտենաներից ճարպիկ մէկը բիլիարդի սեղանի ներքեւի մասում գտնուող գգրոցի մէջ եղած մոռացուած նուէրներով խելացի առեւտուր կանէր:

Միակ բանը, որ Երուանդն իրեն վերապահեց, ու որը ոչ ոք չէր կարող վիճարկման ենթարկել, եղաւ ծխախոտի հարուստ վաճառական ընկերներին երբեմն-երբեմն Շուեյցարիայում այցելելը, որոնց մօտ գնում էր մի քանի օրով եւ ժամանակ էր անցկացնում՝ ծխախոտ վայելելով, նարդու կամ

Թղթախաղի բուռն մրցապայքարով, սուրճով եւ խոհուն մտքերի փոխանակութեամբ:

Մաստրաֆը նրանցից մէկն էր: Ընկերներին եգիպտական ծխախոտ էր մատակարարում, որ տարին երկու անգամ էր տեղ հասնում՝ գետեղուած հրաշալի փայտեայ արկղի մէջ, որի վրայ անցք կար բացուած, որպէսզի ծխախոտը չնչէր:

Երկրորդ աշխարհամարտը պայթելուց քիչ առաջ Երուսաղէմը որոշեց թողնել ծխելը, դրեց վերջին արկղը պահարանի մի անկիւնում որպէս յուշ: Նոյն տեղում 1945 թուականի դեկտեմբերին աղջնակը յայտնաբերեց այդ արկղիկը՝ փոշոտ ու հրապուրիչ, արեւելեան պիտակներով ծածկուած:

Քաղաքից դուրս գալով՝ ծերուկ Յովհաննէս վարդապետը բարձրացաւ Շուշանիկի կառքը:

— Թարմացիր, մի կում թան խմիր, — ասաց նրան պատաստակամ Ազնիւը, որ, ինչպէս Վերոնը, գլխին դրել էր կիզիչ արեւից պաշտպանող գլխարկ: Ազնիւն ականայ զգաց ծերունուց արձակուող ջերմութեան ու քրտինքի հոտը: Յանկարծ մտածեց. «Ինչպէ՞ս ենք լուացուելու», ու ճանապարհորդութեան սպառնալի հետեւանքները սկսեցին խոնուել նրա ուղեղում: Դէպի հարաւ գնացող ճանապարհին ոչ մի պանդոկ չկար, միայն փոշոտ ու քարքարոտ ճանապարհներ, ամայի տափաստաններ ու լքուած գիւղեր: «Որտե՞ղ մեզ կանգ առնել թոյլ կտան», — անմիջապէս ծնուեց միւս հարցը:

Ազնիւը տենդագին խորհեց, ապա նայեց Շուշանիկին, որի պղտորուած աչքերը կարծես ոչինչ չէին տեսնում, եւ որոշեց որոշ ժամանակ լռել:

Վարդապետը յոգնած քուն մտաւ: Նրա փառահեղ մօրուքը հանդարտ տարածուած էր լայն դէմքի վրայ, որին դրոշմուած տագնապը ցրուեց քնի մէջ:

— Քնիր, հայր մեր, քնիր, — շշնջաց Ազնիւը, եւ նրա փոթորկուած սիրտն անմիջապէս խաղաղուեց: Այդ ամսին

արեւն այնքա՛ն անուշ էր, օդն այնքա՛ն նուրբ էր: Միգուցէ Սմբատին սպանողները համիդիէ սանձարձակ մի հեծելախմբից էին, որոնց մասին բազմիցս լսել էր: Բայց հայ կանայք գիտէին վերապրել, պարտաւոր էին այդ անել: Կարմիր սուլթանի մասին պատմութիւնները գարմանալիօրէն նրան հանդարտեցնում էին. ընտանիքն այնքա՛ն դառնօրէն էր վճարել, որ գոյութիւն ունենալու պարտքը երեւի մէկ անգամ եւս արդարացուած էր, եւ կարելի էր կրկին մտածել ապագայի մասին: Սիրիայում՝ Զարեհի, Բոստոնում՝ Ռուբէնի անուններն անընդհատ տալիս էր Ազնիւը մտքում որպէս փարոս՝ մշուշի մէջ. արդէն մտածում էր, ինչպէս զգուշացնել նրանց: Եթէ Իսմէնէն, ինչպէս խոստացել էր, նրանց հասնէր...

Շուշանիկը տարածուած դաշտավայրն այնքան գայթակղիչ էր, որ յանկարծ Ազնիւն ու Վերոնը, որը, քրոջ կողքին նստած, հմտութեամբ ու զգուշութեամբ դանդաղօրէն վարում էր ձիերը, մտածեցին, որ արդէն բերանը պատառ դնելու ժամն էր, որից ասես օձապտոյտ ձգուող, երկար յուղարկաւորութեան թափօրի նմանուող մասնակիցների դէմքերին ժպիտ կերեւար, ու նրանք փոքր-ինչ կկազդուրուէին:

Բարձր նոճու կողքին՝ ընդարձակ մարգագետնում, մի աղբիւր էր ցայտում, որը երգում էր դարեր շարունակ սերունդների գործածութիւնից մաշուած, գեղեցկանախշ յուճանական մարմարից պատրաստուած ձուածեւ աւազանի մէջ: Երեխաներն այնտեղ լողանում էին, եզները՝ մոռութները թաթախում, աստղերն էլ՝ մէջը արտացոլում: Մշտաբուխ ջրի խողովակի տակ, հազիւ տեսանելի նրան, ով դիտել գիտէ, ինչ-որ մէկը մի ժամանակ փոքրիկ խաչ էր փորագրել: Բոլոր հայերն ու յոյները դրա մասին գիտէին, այդ պատճառով էլ այն անուանել էին Ճգնաւորի աղբիւր: Ասում էին Սբ. Երանոսը կամ Սբ. Աթանասն էր բխեցրել այդ աղբիւրը, երբ քաշուել էր ապրելու վերելի ժայռերում մի այնքան փոքր անձաւի մէջ, որ հազիւ մի երեխայ տեղաւորուէր: Այսօր էլ այնտեղ միշտ մի մոմ կայ՝ ճանապարհորդի համար պատրաստ:

Կառքերը կանգ առան ճանապարհի եզրին: Երեխաները սկսեցին վազվզել մէկը միւսի մօտ, կանայք հաւաքուեցին իրար գլխի՝ հարցուփորձ անելու:

Այլեւս չկային տղամարդիկ, չկային այն կորովի հոգիները, որ հեզնում էին սնապաշտներին եւ գիտէին ինչպէս վարուել: Կանայք անհանգիստ խորհրդակցում էին մեծերի հետ: Ինչ-որ մէկը գնաց անձաւ՝ սուրբ մօմը վառելու:

Քարաւանը քաղաքից դուրս ուղեկցող զինուոր-ոստիկանները, զապտիէները մինչ այդ անհետացել էին: Կանայք անմիջապէս չզգացին այդ, իսկ յետոյ ուրախանալու փոխարէն տխրեցին: Վերջից եկող կառքի մէջ մանկաբարձուհի Սրբուհին հերթապահ էր նշանակել մի կնոջ, ինքն էլ հետեւում էր ծննդաբերող տասնեօթամեայ աղջկան, որը վերջերս էր ամուսնացել, եւ ամուսինն էլ գործերով մեկնել էր մայրաքաղաք:

– Փոքրիկ վարդ, նա քո մասին է մտածում, – շնջաց Սրբուհին՝ թրջելով նրա շուրթերը քացախի մէջ թաթախուած լաթով, – դու ուժեղ ես, երիտասարդ, բան չկայ: Քո փոքրիկ հսկան քեզանից չի ուզում հեռանալ, իրեն լաւ է զգում քո մէջ՝ իր տաքուկ տեղում, այնպէս չէ՞, փոքրիկ վարդս:

Դժգոյն աղջիկը փակեց աչքերն ու ինքն իրեն հաւաքեց:

«Շատ է ցաւում, շատ: Ձեմ կարողանում դիմանալ», – մտածեց աղջիկն ու յանկարծ ոտքերի արանքում հրէ գունդ զգաց, ապա բուռն այրոց, որին հետեւեց մի գիլ ճիչ:

– Ապրես, ապրես, Հռիփսիմէ: Քո սուրբը քեզ օրհնեց, – ասաց Սրբուհին՝ յոյեով նրա քրտնած այտը: – դէ, հիմա օրհնիր նրան՝ յանուն քացակայ հօր, ու անուն դիր:

– Անունը Վարդան է, – հառաչեց աղջիկը ու անսահման թեթեւութեամբ յանձնուեց վարպետ ձեռքերի հոգատարութեանը:

Մինչ այդ եկան նաեւ մնացածները, բոլոր նրանք, ովքեր չէին կարողացել կառք բարձրանալ՝ ամենածերերը, միայ-

նակները, մուրացկանները: Բոլորը զուարթացել էին կանգառի մտքից, աղբւրի սառնորակ ջրից, իրենց պահապան ձգնաւորի օրհնութիւնից նրանց ովքեր կիսմէին այդ ջրից, ու սկսեցին մտածել ուտելիքի, հացի մասին: Արդէն յոգնած էին ու տրուեցին իրենց առաջնորդողների խնամածութեանը:

Բայց իրականում իրենց առաջնորդողը աղջիկների մի խումբ էր, որովհետեւ Շուշանիկը դեռեւս այնքա՛ն հեռու էր թւում, այնքա՛ն բացակայ: Դրանք նախապաշարուամներից զերծ երիտասարդներն էին, ովքեր դպրոց էին յաճախել ու մի քիչ Ֆրանսերէն, պատմութիւն, աշխարհագրութիւն գիտէին, օրիորդները: Խորհրդակցում էին տենդագին: Բայց ոչ պարտադիր անցնելիք ճանապարհի շուրջ. այն միակն էր, որը տանում էր դէպի հարթավայր՝ հետզհետէ ցածրացող բլուրներով: Ապագայի մասին էին խորհուրդ անում, թէ ինչպէս կազմակերպել ճանապարհորդութիւնը, պաշարները միաւորել, կառավարել ճանապարհորդող այս փոքրիկ համայնքը:

Մերերից օգուտ չկար, ասես ձախորդութեան մարգարէներ լինէին՝ տրտունջը բերաններին: Երեխամայրերի միտքն իրենց երեխաներն էին, եւ կարող էին միայն ուտելիք պատրաստել:

Բայց Ազնիւը, Վերոնը, ուսուցչի դուստր Հայկանոյշը, փոստատան ծառայող Վարդուհին եւ երկաթգծում աշխատողը համոզուած էին, որ կկարողանային, եւ սրտի խորքում զգում էին հպարտութեան փոքր-ինչ գրգռիչ մղում: Նրանք, որ միշտ այնքան պաշտպանուած էին եղել, ի վիճակի կլինէին ցոյց տալ, որ կանայք եւս ուղեղ ունեն, եւ որ իրենց կյանքը վերահսկել այդ արտակարգ իրավիճակը: Եւ հաւասարութեան գաղափարով խանդավառուած՝ Հանդիսաւոր խոստացան, որ ճանապարհորդութեան ժամանակ բոլորն, իրօք, հաւասար կլինէին, կենսամիջոցները՝ համընդհանուր, ինչպէս քարոզում էր ուսուցիչ Գէորգը: «Կլինի, ինչպէս Միացեալ Նահանգներում, – ասում էր Վերոնը, – ինչպէս իմ

եկեղեցում»։ Եւ բոլորը հաւանութեան նշան արեցին։

Այսպիսով, բոլորը՝ ծերեր, կանայք, երեխաներ, մուրացկաններ, նստեցին լայնարձակ մարգագետնում. ծեր վարդապետ Յովհաննէսը հնչեցրեց Օրհնեալ է Տէրը ու տեղաւորուեց Շուշանիկի մօտ։ Վերջինս շարունակում էր սքօղուած մնալ իր ամպաշղարչի մէջ, որին խաղաղութեան բարեմաղթանքներ էր շնչում։

Ճիշտ այդ պահին, երբ միջօրէի արեգակը ջերմացնում էր, չորսբոլորը՝ բլուրների կատարներին, յայտնուեցին ջրվէժներից վեր, սարերում բնակուող քուրդ ցեղերից մէկի արագավազ ձիեր հեծած ձիաւորները, որոնք սրընթաց սլանում էին վար։ Դրանք այն քրդերն էին, որոնց խոստացուել էր հայերի ունեցուածքը։ Մի ականթարթում կատաղի գոռում-գոչիւն տարածուեց օդում, թրեր ու կարաբիներ շողշողացին արեւի տակ, եւ առաջնորդուելով թալանչու կենդանական բնագրներով մի քանի անգամ անցան կայանատեղիով՝ գրեթէ առանց որեւէ մէկին վիրաւորելու, բայց ոտնակոխ անելով հացը, շուռ տալով կժերը, կոտրելով ամանեղէնը։ Պարագլուխը կառչեց վարդապետի մօրուքից ու իր ետեւից քարշտուեց փոշու մէջ։

Առաջինների ետեւից յայտնուեցին միւսները՝ ռազմական կոչերով, ու վայրկենապէս շրջապատեցին կառքերը։ Հայերն, անշարժ, քարացած, պահել էին շուշաները։ Անսահմանութիւն թուացող մի ականթարթում ամէն ինչ կանգ էր առել, եւ երկնքի խորքում մենաւոր մի ձայն բարձր ողբում էր՝ աղերս կարգալով Աստծոյ տաճարի ներսում...

Եւ ամէն ինչ վերջացաւ։ Շուտով թարմ խոտն ու սուրբ աղբիւրը թաթախուեցին մորթուած մանուկների արեամբ՝ որպէս մայրերին դաս։ Վարդապետին մերկացրին ու աչքերը հանեցին։ Նա ցածրաձայն արտասուում էր, ինչպէս մի մանուկ։ Ապա սկսեց մերկ երերալ՝ բարձր չինարի ամենաներքեւի ճիւղից կախուած։

Ամէն կառքի վրայ մի զինուոր բարձրացաւ. նա մտրա-

կում էր ձիերին եւ ստիպում նրանց քառատրոփ վազել՝ մի ձեռքում ամուր պահելով սանձերը, իսկ միւսով՝ թափահարելով հրացանը։ Սակայն դիմադրութիւն չկար։ Շուտով կառքերը անկանոն կերպով շարժուեցին՝ իրենց հետ տանելով ուտելիք, ամանեղէն, դեղորայք՝ վերապրելու ամբողջ յոյսը։ Մի ծերունի, որ կառքերից մէկի ներսում փորձում էր դիմադրել, սրախողխող արուեց ու շարտուեց ցած. իսկ շիկահեր Վարդուհին, որ պարսկական արիւն ունէր երակներում ու մի յոյն նշանած, որը խոստացել էր նրան միանալ այդ երեկոյ ձիով, նշարուեց քրդերի պարագլխի կողմից, որը մօտեցաւ աղջկան՝ իր հետ տանելու։ Ընչաց Վարդուհին՝ աչքերը յառած նրան սպառնացող մարդուն, ու նրա ճիչն ի վերջոյ թափանցեց Շուշանիկի թմբի մէջ։ «Ա՛խ, աղաւնեակս, ո՛չ», – կանչեց ապահար նստած Շուշանիկն ու ոտքի ցատկեց։ «Ո՛չ», – ու անմիջապէս ձեռքը տարաւ գրպանի խորքը, մի թանկարժէք քար հանեց ու տուեց քրդին։

Փայլատակեց կարմիր քարը։ Բիրմայից բերուած հրաշալի կարկեհան էր, որը Շուշանիկը նախատեսել էր դուստրերից առաջինի հարսանիքի համար. կարմիր, գերող ընծան կայծակլտաց նրա անշարժ ձեռքում։ Քուրդ պարագլուխը կտրուկ կանգնեցրեց ձին, իջաւ ու խոնարհուեց. նուէրը նրան գայթակղել էր։ Վերցրեց զարդը, բարձրացրեց դէպի արեւը, որն ամբողջովին լուսաւորեց քարը, ու ճչաց ուրախութիւնից։

Ապա, հին սովորութեան համաձայն, վերստին գլուխ տուեց Շուշանիկին, ձեռքով լայն շարժում արեց ու նրան յանձնեց աղջկան։

Չփորձեց ուրիշ ոսկի կորզել, կրկին բարձրացաւ ձին ու կոչ արեց իր մարդկանց, որ զնալու ժամանակն էր։ Անհետացան ճանապարհի երկայնքով թալանչի ձիաւորները, իրենց հետ տանելով նաեւ հայերի կառքերը։

Շուշանիկի քայլը փրկեց շիկահեր Վարդուհուն, ինչպէս նաեւ արհեստաւորների ու Սրբուհու կառքերը, որոնք մի փոքր ետ էին մնացել ու պէտք է վերջում յարձակման

ենթարկուէին: Պարագլխի կանչից բոլոր ձիաւորները հապ-
շտապ շարժուեցին: Այսպէս անհետացան հայերի կենսամի-
ջոցները:

– Շու՛տ, շու՛տ, – ասաց Շուշանիկը, – իջեցնենք քահանա-
յին եւ յանձնենք այս սուրբ հողին:

Լուսցարարուհի Արսինէն իր երկու դուստրերի ու ծեր,
կաղ, բայց դեռեւս ուժեղ Արամի հետ փոս փորեցին ու աղօ-
թեցին: Դաշտավայրով մէկ տարածուեցին աղօթքները. բո-
լորն իրենց որբացած ու միայնակ էին զգում, անդարմանելի,
միայնակ: Լալիս էին մայրերն ու տեղաւորում իրենց զաւակ-
ների փոքրիկ մարմինները ծեր վարդապետի գրկում, իսկ
վերջինիս իրար միացած ձեռքերի մէջ դրեցին կտրտուած
կաշուէ փոկով իր մաշուած խաչը, որը գտել էին չինարի ծա-
ռի տակից: Փակեցին նրա աչքերը, յարդարեցին մօրուքը,
հագցրին հին կապան. Շուշանիկը հրահանգեց Վերոնին ու
Ազնիւին կապոյտ ու մանուշակագոյն ծաղիկներ հաւաքել՝
այնքա՛ն առատօրէն բուսած աւազանի շուրջը, որ շարունա-
կում էր իր հանդարտ, մեղմ քչքչոցը, ու դրանք ջրի մէջ թա-
թախելով՝ շաղ տալ ծերունու ու նրա գրկում պատսպարուած
երեխաների վրայ: Շուշանիկը խաչի վրայ դրեց փոքրիկ ան-
ձաւի մօմը ու վճռական շնչով հանգցրեց այն:

– Այլեւս դրա կարիքը չենք ունենայ, – ասաց նա կտրուկ
ու աւելացրեց. – Ո՛չ մի խաչ՝ գերեզմանի վրայ, այլապէս
այն կկործանեն: Աստուած գիտէ, թէ որտեղ են նրա ծառա-
ները:

Զինուորները կրկին յայտնուեցին՝ քմծիծաղ տալով: Կառ-
քերի պարունակութիւնը կիսել էին քրդերի հետ. այդպէս էր
պայմանաւորուածութիւնը: Թանկարժէք քարի մասին ոչինչ
չգիտէին. վստահաբար, քուրդ պարագլուխը նրանց ոչինչ
չէր ասել: Այսպիսով, Շուշանիկի փոքրիկ գանձն այս անգամ
ապահով էր:

Ապա սկսուեց երկար երթը, անվերադարձ ճանապարհը:

Բաւական հեռացել էին քաղաքից. լքուած քարաւանն այժմ
գինուորների ու նրանց քմահաճոյքների լիակատար տիրա-
պետութեան տակ էր: Վերապրելը դառնում էր դիպուած,
հնարամիտ խորամակութիւն, ուժի փորձառութիւն, զարերի
հեգնական խաղ՝ մահուան մրցանակով:

– Թող ծերերն ու երեխաները նստեն մնացած կառքերը,
որ կարողանանք պահպահել նրանց, – կարգադրեց Շուշա-
նիկը:

Զիւաւոր գինուորները քշում էին ճանապարհի երկայնքով
ընթացող քարաւանը: Զուր քիչ էր մնացել, ամաններ՝ նոյն-
պէս, իսկ արեւն այրում էր: Նրանց առջեւ բացուեց Կենտրո-
նական Անատոլիայի չոր, անողոք հարթավայրը:

Այդ երեկոյ առաջին անգամ դադար թոյլատրուեց: Սկսե-
ցին հաշուել ուժերը: Գիշերը ցուրտ էր: Մի քանի վրան
խփեցին, մի քիչ կաթ բաժանեցին: Օրհնեալ լինես, ամրա-
բազուկ Արսինէ, որ այդքան հեռատեսօրէն դասաւորել էիր
քո կառքերը: Նոյնիսկ հետը երեք այժ էր բերել, որոնցից
իւրաքանչիւրը կապուած էր մի կառքի ետեւից: Բայց եթէ
ծերերն ու երեխաները չլինէին, միգուցէ կանայք թեւաթափ
կնստէին ու իրենց կյանձնէին բախտի քմահաճոյքին: Աս-
պատակութիւնից յետոյ արդէն բոլորը հասկացան, որ, իրօք,
միայնակ էին եւ ընդմիշտ: Փախչել հնարաւոր չէր, դաշտի
չորսբոլորը պահակներ կային, իսկ հեռու՞ քրդեր: Եւ յետոյ
ու՛ր, ու՛ր փախչել: Բոլորը գիտէին, որ այդ անսահման ու
անծայրածիր տարածքը ամայի էր: Փոքրաթիւ, թշուառ գիւ-
ղերը չէին կարող պատսպարան առաջարկել, նոյնիսկ ցան-
կութեան դէպքում (կանայք չգիտէին, որ մահուան սպառ-
նալիքի տակ օրէնք էր դուրս եկել հայերին ապաստան
չտալ): Թալէաթը հեռագրերից մէկում գրել էր. «Ոչ մի
խղճահարութիւն՝ կանանց, ծերերի ու երեխաների հանդէպ:
Եթէ նոյնիսկ մէկ հայ գոյատեւել, յետագայում վրէժխնդիր
կլինի»:

Կանայք ուտելիք տաքացնող չորս փոքրիկ կրակների լոյ-

սի ներքոյ Հաշուեցին եղած-չեղածը, եւ բոլոր ազնիւ սրտերը քաջութիւն էին խնդրում իրենց սրբերից գոյութիւնը պահպանելու:

Թշուառ, թուրքերէնի լաւ գիտակ, Հացթուխ, երբեմն էլ մրգավաճառ կաղ Արամին ընտրեցին որպէս բանբեր (բայց նրա ետեւում Շուշանիկն ու Ազնիւն էին՝ իրենց առաջարկութիւններով): Դեռահասներին ու երիտասարդ աղջիկներին Հարկաւոր էր տեսադաշտից դուրս պահել, ողորմելի ու թշուառ տեսք տալ: Առաջին շարքում ծերերն էին՝ ամենափոքր երեխաների Հետ. ծերերը վախ էին ներշնչում թուրքերին, ինչպէս նաեւ յարգանք, իսկ երեխաները՝ գութ շարժում: Առաւել Հաւանական էր, որ թուրքերը պատասխանէին իրենց մօրն այնքան նման ծեր, խոնարհ կնոջը, քան թէ որեւէ այլ մարդու: Գոյատեւելու փոքրիկ, ողորմելի խորամանկութիւններ...

– Ամէն մէկը վրաներդ մի-մի ծածկոց, մի քանի կաթսայ, մի որոշ պաշար կապէք: Եթէ տանեն նաեւ մեր վերջին կառքերը, գոնէ ամբողջովին մերկ չենք մնայ, – առաջարկեց Ազնիւր:

Այս միտքը խելքին մօտ թուաց. Թանձրացող գիշերուայ ընթացքում ժրաջան մրջիւնների պէս բոլորը գործի անցան եւ կապոցների բաժանեցին ու կիսեցին երկու օր առաջ նախախնամօրէն փրկուած չորս կառքերի պարունակութիւնը:

Քիչուամիչ մնացած թանկարժէք սուրճի տոպրակներից իւրաքանչիւրը կապուեց մէկ երեխայի ուսերից՝ Հազար ու մի նախազգուշացումով: Քաշով թեթեւ էին, բայց ծանրակշիռ նշանակութիւն ունէին...

Այսպիսով, ժամ առ ժամ, օր օրի վրայ ի կատար ածուեց Հայերի գլխին թափուած անէծքը փոքրիկ քաղաքի կանանց, ծերերի ու երեխաների Համար: Իւրաքանչիւր օր իր Հետ բերում էր մի նոր սարսափ, եւ օրէցօր պատիժն ակաւորում էր, իսկ վերապարածները քաշկռտուելով առաջ էին շարժւում

քայլ առ քայլ՝ ակելի թշուառ, ակելի նիհար մարմիններով ընթանալով մահուան դէմ յանդիման:

Կրկին սարերից իջան քուրդ ցեղերը՝ կողոպուտի, իսկ երրորդ անգամ իրենց Հետ տարան գեղեցիկ լուացարարուհիներին ու նրանց կառքերը: Նգովք տեղաց ծեր Սրբուհին նրանց գլխին, բայց կնոջը լուեցնելու Համար ութերորդ օրը մի զապտիէ նրա գլուխը քարով ջախջախեց՝ վրան նստելով:

Սակայն այդ օրերը բաւականացրին, որպէսզի երիտասարդ Հարս Հռիփսիմէն ապաքինուէր ծննդաբերութիւնից ու տեսնէր իր զաւակի շամփուելը սուխի վրայ, որը թուրքը պարզել էր որպէս տիրակալի արհամարհանքի յաղթութեան նշան իր Հպատակի Հանդէպ. բայց Հռիփսիմէն փակեց աչքերն ու տեսաւ իր փոքրիկ Վարդանի ուրախ Հոգին Հրեշտակի նոր թեւիկները փորձելիս: Այդ ժամանակ խնդրեց որդուն, որ երկնքի ընդարձակ դաշտերից, ուր ո՛չ մահ կայ, ո՛չ էլ ցաւ, ցած նայելով բորոտ ու անմխիթար երկրին՝ պաշտպանէր իրեն:

Ու կվերապրէր Հռիփսիմէն՝ խորհելով իր ամուսնու մասին, որին գտաւ շատ տարիներ անց, եւ նրանք նորից զաւակներ ունեցան (սա միակ ուրախ վերջաւորութեամբ պատմութիւնն է, որ աղջնակը յիշում էր տասնչորս տարեկան Հասակում ամուսնը մի շնչով կարդացած Մուսա լեւան արկածային դիւցազներգութեան Հետ):

Կրկին ու կրկին մոլեգնեցին թուրք զինուորները՝ կողոպտելով մարդկանց, փնտրելով թաքնուած ոսկի ու զարդ («Հայերի Հէքիաթային ոսկին», որի մասին դեռեւս առասպելներ էին պատմում Անատոլիայում, իսկ Հովիւները խօսում էին թաքնուած գանձերի մասին): Տիրացան սուրճին, ապա դրամին, զարդերին, գտան Հիւսքերի, լաթերի միջի, փէշերի տակի գաղտնարանները:

Սպանեցին երեխաներին, բռնաբարեցին կանանց, յափշտակեցին աղջնակներին՝ դեռահաս ու մանուկ՝ իրենց Հեռաւոր Հարեմների Համար: Ծերերը Հերթով մահացան՝ հիւծ-

լած, սոված ու տառապած: Իսկ յետոյ՝ օրեր անց, խլեցին մնացածը՝ տապակները, ծածկոցները, գզգզուած այծերը, որոնք այլևս կաթ չէին տալիս, Վերոնի անգլիական պաքսիմատները, վարազոյրի կտորներն ու գլխարկները:

Ժամանակ առ ժամանակ վերելից մի քիչ Հաց էին չարտում ինչպէս շներին, ժամանակ առ ժամանակ կանգնեցնում էին մի աղբիւրի մօտ թոյլ տալով մի քիչ ջուր խմել: Հայերը միշտ պէտք է խմէին թուրք զինուորների ձիերից յետոյ, չորեքթաթ, կենդանիների պէս, զօրքի լկտի գոռումգոչիւնի ներքոյ, որը գուարճանում էր՝ երբեմն որեւէ մէկի ծոծրակին կրակելով, Հէնց միայն ջուրը կարմիր տեսնելու նպատակով:

Կիսամերկ, աղտոտ, հիւանդ, քաղցած, արեւից սեւացած, կեղտոտ հիւքերը մի կերպ կապած, ծուէն-ծուէն եղած Հագուատներով, բզկտուած գլխաշորը գլխներին՝ քայլում էին Հայ մայրերը երկրից երկիր, ինչպէս բորոտներ, ինչպէս ժանտախտաւորներ: Հեռու պահուած այն քաղաքներից, որոնց մօտով անցնում էին, մեկնում էին գետին՝ չիմանալով, թէ արդեօք նորից ուժ կգտնէի՞ն ոտքի ելնելու սգադէմ բացուող յաջորդ օրը, անյոյս, անելանելի չարիքից կախարդուած: Առաջ էին սողում նրանք՝ առանց իմանալու, թէ ինչու, բացի երեկոյեան իրենց զաւակների կողքը պառկելու կենդանական բնազդից:

Քայլելիս Շուշանիկն անդադար տենդագին մտածում էր, մտատանջուած, վերապրելու յոյս փայփայում, եւ այս ամէնն ամփոփում էր վերջալոյսի Հորիզոնում (իսկ կոշտացած, ուռած ձեռքերը շարունակաբար սահում էին դէպի խոր գրպանները, դէպի գարդերի տոպրակն ու խելացնոր շօշափում այն): Մղձաւանջային մտքերն անվերջ սկզբից էին սկսում: Հաշուել ու հաշուել իր փոքրիկ գերդաստանը, երեխաներին պահել Ազնիւի, Վերոնի ու խոհարար Արաքսու միջեւ. Հսկել տիկին Նուարդին, որն ընկղմւում էր Համր անգզայութեան մէջ՝ կարծես մեղադրելով բոլորին այս անհա-

ւատալի աննախատեսելի եղելութեան համար: Նուարդը, իմաստուն ու խոհեմ այդ կինը, որ Համբարձումին ինը զաւակ պարգեւեց, իրաւունք ունէր իր անկողնում Հոգին աւանդելու, իրաւունք ունէր պատշաճ յուղարկաւորութեան, գրեթէ ամուսնու պէս...

Նուարդը վայրագ, ինքնաբուխ հեգնանքով շարունակում էր ինքնիրեն խօսել իր համար այնքա՛ն բաղձալի փառահեղ յուղարկաւորութեան մասին եւ ասես այլևս ոչ ոքի չէր ճանաչում: Անսանձ, մութ ու չարաբաստիկ մի ուժ առաջ էր մղում նրա ճարպոտ, քայքայուող, գրեթէ առանց անդի մնացած մարմինը: Վերոնը միակն էր, որ երեկոյեան մօտեւում էր նրան՝ խոնաւ լաթով փոքր-ինչ խնամք տանելու:

Ժամանակին միշտ յարդարուած ճերմակ վարսերն այժմ խառնիխուռն էին ու գզգզուած՝ մէջը տերեւներ, միջատներ ու փոշի, եւ ուսերին թափուած՝ ծածանւում էին՝ սարսուռ առաջացնելով, իսկ կրճտացող ատամների տակից դուրս էին թռչում կցկտուր բառեր եւ գրեթէ չորացած թուրք: Որպէս թշուառ կատաղութիւն՝ Նուարդը՝ մի քիչ յիմար, մի քիչ չար, կարճամիտ, բայց բարեհոգի այդ կինը, որ անուշ էր եփում ու թխուածք պատրաստում, առաջ էր ընթանում իբրեւ այլակերպուած վախի անգիտակից խորհրդանիշ՝ անխոնջ ու կորացած, կիսափակ, վախուորած աչքերը Հորիզոնին յառած, իր հետ տանելով ճանապարհի ամբողջ փոշին եւ բոլոր Հայուհիների ճակատագիրը:

Նոյնիսկ զինուորները, սնտոխապաշտութիւնից դրդուած, նրան ձեռք չէին տալիս: «Ձախորդութիւն կբերի», – շշնջում էին նրանք: Նուարդն աննկատ մարեց մի գիշեր խորհրդաւոր քամու կանչից, կուրացուցիչ պատրանքից, երբ նրան երեւաց մի տաք խոհանոց՝ տրորուած բարձունքից այն կողմ, այն բարձունքի, որի ստորոտում կծկուած էին Հայերը անվերջանալի յունիսեան երեկոներին:

Միայն Անրիեթը տեսաւ Նուարդի անէսնալը. բայց Անրիեթը չէր խօսում: Բացի դրանից, նա էլ էր տեսել բարձուն-

քի ետեւի լոյսը: Առաջ էր ընթանում Նուարդը, եւ նրա խղճուկ, թշուառ սիրտը մաքրագործուում էր ամէն քայլափոխին: Կեղտի շերտի տակից ոտքերն արիւնում էին՝ թողնելով ցայտուն մի հետք, որը, սակայն, ոչ ոքի չէր յուզում:

Բայց քայլ քայլի ետեւից նրա սիրտը սկսեց բացուել, ուստի ամենավերջում Հէնց Նուարդին՝ այդ պարզունակ կնոջն էր վստահուած ահռելի ուժը մի ողջ ժողովրդի, որը նահատակուում էր, եւ ողբը Աստծոյ, որը նրան ընկերակցում էր. եւ նրա միջոցով կփրկուէին թէ՛ Հայ երեխաները, թէ՛ իր զաւակները, թէ՛ սքանչելի ու նախանձելի Շուշանիկը: Այլեւս չէ՛ր տեսնի իր որդիներ Ռուբէնին ու Զարեհին, գեղեցիկ Հարսներին, հեռուոր երկրները, այսուհետ երբեք չէ՛ր կարողանայ կրկին ողջագուրուել Իսկուհու որդի Երուանդի հետ, որը հեռացել էր, որպէսզի նրան չընդունէր որպէս մայր:

Բայց այժմ Աստուած նրան ներեց, եւ Նուարդը քայլում էր լոյսերի մէջ: Յոյս էր փայփայում գտնել ամուսնուն՝ Համբարձումին, բայց նուաստօրէն կգբաղեցնէր երկրորդ կնոջ տեղը. լաւ գիտէր, որ նրա իսկական կինը շողափայլ Իսկուհին էր:

«Ինչպէ՞ս կարող եմ մրցակցել տասնիննամեայ աղջնակի հետ», – իրաւացիօրէն հարցնում էր ինքնիրեն: – Ձէ՞ որ ես ծեր եմ եւ այնքա՛ն աղտոտ եւ այնքա՛ն յոգնած...»: Ապա շանթահար ծառի պէս գետին տապալուեց:

Մօտակայ գիւղից մի ջորեպան գտաւ նրան արեւածագին: Բարեպաշտ մարդ էր, եւ քանի որ նրան ոչ ոք չէր տեսնում, արագ-արագ ջորուն բարձեց Նուարդի խոշոր, զազրելի, արդէն նեխած մարմինը եւ թաղեց առուակի մօտ՝ աղօթք շնչալով առ Աստուած կենդանի, որ սուրբ է բոլորի համար:

Նուարդի պէս միւս ծերերն էլ հերթով անհետացան երթի ժամանակ. մէջտեղից վերանում էին՝ պարզապէս կանգ առնելով: Ոչ ոք նրանց չէր փնտրում, ոչ ոք նրանց չէր խնդ-

րում շարունակել: Երբեմն մի գինուոր նրանց Հէնց տեղում սրախողխող էր անում ողորմածօրէն, երբեմն պարզապէս լքում էին, եւ ոչ ոք չէր շրջում: Կծկուած էին ճանապարհի երկայնքով թշուառ անշարժ մարմինները՝ որպէս յաւերժութեան պահապաններ. ու նրանցից իւրաքանչիւրի ետեւում անտեսանելի կանգնած էր հրեշտակը՝ պատեանից հանած սրով: Խոր գիշերին Անաստղիայի գիւղերի թշուառ հիւղակներից նրանց էին մօտենում այրեր ու կանայք: Նրանք տեսնում էին այդ բարկացած հրեշտակներին ու վախենում նրանց ցասումից. ուստի հասնում էին ճանապարհի երկայնքով տարածուած ցնցոտիների խրճերին ու գաղտնի թաղում՝ ոտքերն ուղղած դէպի Արեւելք, որպէսզի կարողանային լսել Յարութեան շեփորները, Ահեղ Դատաստանի առեղծուածային յարութիւն մեռելոցը: Ձէին կարող օգնել կենդանի մնացածներին, ոչ իսկ Հաց ու ջուր տալ, ուստի թաղում էին մեռելներին՝ նրանց վստահելով իրենց ճնշող անբացատրելի մեղքի փրկանքը, ապա կրկին լծում առօրեայ գործերին...

Նուարդի հանգչելու յաջորդ գիշերը Շուշանիկը, Ագնիւն ու Վերոնը խորհրդակցում էին խոհարար Արաքսու հետ: Ամէն մէկը սրտում իր գաղտնիքն ունէր. Շուշանիկին տիրել էր մահուան փափագը, որ նրան չէր լքում, ու ներքին երկխօսութեան մէջ էր ընկղմուում Մմբատի հետ, որին օր օրի պատմում էր իր մասին, ու թւում է՝ դրանով մխիթարուում էր ու զգում ամուսնուն իր կողքին: «Քիչ մնաց, թանկագինս, – աղերսում էր նա, ապա, – ինչու՞ երեխաներին չեմ լսում: Ինչու՞ ինձ նրանց հետ խօսել չես տալիս»:

Այժմ Շուշանիկը խորապէս գիտակցում էր այն ուժի առեղծուածը, որն առյաւէտ միացնում էր, շղկապում տղամարդուն եւ կնոջը: «Որտեղ դու ես, այնտեղ էլ ես եմ»: Իրօք, ոչ ոք չէր կարող ընդմիջել երկու սիրեցեալ սրտերի զրոյցը, ոչ էլ քանդել նրանց միահիւսող կապը:

Վերոնը կարծում էր, որ եթէ իրեն յաջողուէր Հալէպ

Հասնել, գուցէ կկարողանար այս ամէնի մասին տեղեկացնել մեթոդիստ հովիւ Հերբերթ Լյուիսին, որը եկել էր աղջկան մկրտելու, երբ վերջինս դաւանափոխ եղաւ: Պատկերացնում էր իրեն նրա ոտքերի մօտ ուժասպառ ընկնելիս, բայց ոչ որպէս կորուսեալ ոչխար, այլ որպէս աղտոտ ու քաղցած գառնուկ, ու տեսնում էր Վերոնը, թէ ինչպէս այդ բարձրահասակ, նիհար, մետաղեայ մոխրագոյն, փոս ընկած աչքերով ու խնամուած մօրուքով հոգեւոր հովիւը հակուում էր դէպի իրեն, բարձրացնում, որպէսզի թանձր կաթնասուերճ տար առատ հացով... Վերոնի մտքի երեւակայական թռիչքը կաթնասուերճի համից այն կողմ էր անցնում: Ամէն անգամ, երբ հասնում էր այդ տեղին, աչքերը թրջուում էին, ու կոկորդը կծկուում էր:

Մինչդեռ Ազնիւը մտածում էր միայն նրանց բոլորի ու օրուայ վերջին հասնելու մասին: Իր խենթ ժպիտով, կոլոլուած Ջարեհի ուղարկած կարմիր մետաքսի մէջ, երթի հինգերորդ երեկոյին տրուեց մի զապտիէի, որը մօտեցել էր նրանց փոքրիկ խմբին: Զինուորին հետամուտ էր եղել Հէնց ինքը՝ հասկացնել տալով, որ իրեն հարկաւոր էր բռնի ուժով տիրանալ, եւ մի փոքր էլ շողոքորթել էր նրան ժպիտով ու այն քնքուշ Հնազանդութեամբ, որով տղային ընդունել էր իր մէջ:

Շոյուած էր զապտիէի տղամարդկային հպարտութիւնը. այս հայուհիները, որ գերադասում էին ինքնասպան լինել, քան յանձնուել (զինուորնների մէջ տարածուել էր Վանի քարաւանի պատմութիւնը, երբ կանայք, երգելով, իրենց դուստրների հետ նետուել էին Եփրատը), այս հպարտ անհավատները, որ գիտէին գրել ու խաբկանք հիւսել... ահա այժմ թուրք զինուորը տիրել էր նրանցից մէկին, եւ թուում է՝ աղջիկն էլ էր ուրախ եւ լաւ էլ սիրաբանում էր: Ուստի իր հացից բաժին հանեց նրան... Ազնիւը ոչինչ էր խնդրում, միայն ժպտում էր: Եւ մահուան այդ յուսաբեկ աշխարհում նրա ժպիտը զինուորին թուում էր այդքան հոգսաշատ կեանքի միակ ուրախութիւնը, միակ հատուցումը:

Նա գիւղում կին ունէր, բայց Ազնիւը նրան ասել էր, որ հաւատափոխ կլինէր ու կամուսնանար նրա հետ ճանապարհորդութեան աւարտին (զինուորը չգիտէր, որ Ազնիւը չէր ուտում իր տուած հացը, այն փոխանցում էր Շուշանիկին, Վերոնին ու երեխաներին. ու չէր տեսնում, որ Ազնիւի վարդայտերը այժմ ջերմից էին փայլում):

Ոչ ոք չէր նայում Ազնիւի աչքերին, բոլորն իջեցնում էին հայեացքները, բայց անյագօրէն վերցնում նրա տուած հացը: Բանն այն էր, որ այլեւս ոչինչ չկար ուտելու: Խոհարար Արաքսին դեռեւս ուսերին կապած ունէր մի շերտի, մի կաթսայ ու պղտոր ջրով լի մի թիթեղաման՝ կողքից տարուբերուող. բայց երեկոյեան միայն խոտ էր եփում, իսկ երեխաներն էլ լալիս էին: Նա կցանկանար իր մի ձեռքը կտրել ու նրանց տալ, կցանկանար, որ իր հիւսքը ուտելիք լինէր, ու անզօր նայում էր իր ուժեղ ու անխմաստ հմուտ բազուկներին:

Նրա վերջին պաշարը մի տոպրակ պիստակն էր, որը երկու գիշեր առաջ կարողացել էր թուցնել իրեն տիրող զապտիէի ձիու թամբից: Զեւի համար մի քիչ բղաւել էր, ապա տենդագին աղօթել, ու մինչ տղամարդը ետ ու առաջ էր անում նրա վրայ, Արաքսին չորսբոլորն էր նայել ու նշմարել տոպրակը: Կարեւոր չէր, թէ պարունակութիւնն ինչ էր, ուտելիք էր եւ վերջ: Մինչ այժմ փոքրիկների համար սնունդ հայթայթելն իր գոհունակութիւնն էր եղել. Նուբարը կարծես լաւ էր զգում իրեն, դեռեւս աշխոյժ էր, փոքրիկ աղջիկները դեռ չէին հիւանդացել, ոչ էլ զինուորներից որեւէ մէկը նրանց վերցրել էր, որպէս զուարճանքի առարկայ. շատ էին փոքրիկ, բացի Արուսեակից, որը տասնմէկ տարեկան էր, բայց, բարեբախտաբար, լուսկեաց էր ու մի քիչ էլ տգեղ:

Կրակ չէին վառել, ու ոչ ոք իրականում քնած չէր: Իւրաքանչիւրը, իր աղքատիկ եղած-չեղածին հակուած, կծկուած պառկած էր մթան մէջ: Որը հառաչում էր, որը տրտնջում, որն էլ ջանում էր հանգիստ տալ տառապած ոտքերին:

Գողոունի ստուերներ էին անցնում դաշտով. զապտիէներն էին, որ կին ու առասպելական ոսկի էին փնտրում: Ժամանակ առ ժամանակ մի դանակ էր կայծկլտում եւ ուժեղ մի ճիչ էր օդը սղոցում:

Շուշանիկն ու միւս կանայք, երեսաների վրայ թեքուած, շնջում էին ցածրաձայն: Ի՞նչ կերպ օգտագործել փոքրիկ գանձը, որպէսզի չյափշտակուէր, բայց միգուցէ եւ իրենց էլ կսպանէին՝ այն թաքցրած լինելու համար: Ինչպէ՞ս ուտելիք հայթայթել: Հարկաւոր էր մի որեւէ գիւղ հասնել, խօսել վախեցած գիւղացիների հետ, բանակցել ու հատ-հատ ցոյց տալ գոհարեղէնն ու փողերը: Եւ սա պէտք է տեղի ունենար նախքան լոյսը բացուելը:

Բայց ո՞վ ուժ ունէր այս ամէնն անելու: Չպէտք է ներկայանալ իբրեւ մուրացիկ, ցոյց տալ դողդոջուն ձեռքերը, սովալլուկ դէմքերը: Այդ անմխիթար տարածքի թշուառ գիւղացիները սարսափում էին հայերի ուրուականներից ու խորշում ճանապարհի երկայնքով գետի պէս հոսող թշուառների շարքերից:

Արաքսին շտկուեց, թքով մագերը յարդարեց ու ասաց.

— Ես կգնամ: Աւելի տրամաբանական է, որ խոհարարը ուտելիք փնտրի. դա իմ գործն է, ոչ թէ տիրուհիների:

Ու ծիծաղեց՝ մերկացնելով նիհար դէմքի վրայ ճերմակին տուող ատամները: Շուշանիկը հազար ու մի զգուշաւորութեամբ դուրս քաշեց յայտնի տոպրակը, հանեց երեք ոսկեդրամ, երկուսն էլ աւելացրեց ու ասաց.

— Գնա՛, Արաքսի, եւ թող Աստուած քեզ պահապան լինի: Բայց լա՛վ լսիր. եթէ քեզ յաջողուի փրկութեան ելք գտնել, փախչել մեր բոլորի ճակատագրից, գնա՛, ետ մի՛ նայիր, փրկուի՛ր: Միայն թէ մեզ չմոռանաս: Ամէն ինչ կիսել ենք, նաեւ ճակատագիրը. Արաքսի, աղջիկս, եթէ մեզ խեղդող ցանցի մէջ մի անցք բացուի, գնա՛: Օրհնում եմ քեզ: Հետեւիւր մեր հայրերի բռնած ուղին:

Շուշանիկը գիտէր, որ Արաքսին խելացի էր, ուշիմ, ուժեղ

ու հաւատարիմ, գիտէր, որ եթէ Հնարաւոր լինէր, անպայման ուտելիքով կվերադառնար: Բայց դա այնուսալի առաքելութիւն էր. եթէ նոյնիսկ կարողանար դուրս պրծնել զապտիէների՝ իրենց սեղմող օղակից, պէտք է գիւղացիներին համոզէր ու վերադառնար մինչեւ արեւածագը: Իսկ եթէ կարողանար դուրս սողալ ու կողմնորոշուել դաշտերի մէջ, գուցէ եւ փրկուէր: Արաքսին կրծքերի արանքի փոսիկից դուրս հանեց պիստակի տոպրակը, մի բուռ վերցրեց ու սահեցրեց գրպանը, ապա հանդիսաւոր յանձնեց այն Շուշանիկին, խաչակնքեց ու օձաձկան պէս, լուռ, գողունի դուրս սահեց եղէգնուտի միջով:

Հնտանիքից ոչ ոք այլեւս նրան չտեսաւ: Բայց իմ բարի ընթերցողին ասեմ, որ դիւրահաւատ ու մշտաժպիտ Արաքսին գոհ անցկացրեց իր կեանքը Աղեքսանդրիայի անառակատներից մէկում: Այդ գիշեր դաշտի մօտակայքում ոչ մի գիւղացի չբացեց դուռը նրա շնջոցին, իսկ շներն աղեկէզ ոռնացին: Աստղերն էլ, վէրքեր դարձած, սպառնալից իրեն էին նայում:

Արաքսին աւելի հեռու գնաց՝ մոլորուելով գաղտնախորհուրդ ու թշնամական թանձր մթութեան մէջ:

Լքուած մի մարագում նա նոր ծնդաբերած մի կատու տեսաւ եւ ահաբեկուած ու սովահար կենդանու պէս մարտնչեց կատուի հետ, տիրացաւ նրա երկու ձագերին, սպանեց նրանց իր փոքրիկ զմելիով, մորթագերծեց ու դեռեւս տաքտաք կերաւ նրանց՝ խմելով արիւնը: Ապա կշտացած քուն մտաւ մի անկիւնում՝ կոլոլուած պարկի կտաւի մէջ, ու քնեց ուժասպառ այդ գիշեր, յաջորդ ամբողջ օրն ու գիշերը:

Ապա իրեն առոյգ զգալով՝ մեն-մենակ, ինչպէս երբեք չէր եղել, դաւաճան ու երզմնագանց, թափառեց գիշերներով՝ անցնելով մի ժամանակաւոր պատասպարանից միւսը, խմելով անասունների գուռից, սերմեր հանելով յարդի միջից, աշխոյժ, ուշիմ, ինչպէս մի կենդանի՝ արագաշարժ եւ՛ փախչելիս եւ՛ թաքնուելիս:

Մի անգամ մի կնոջ մի քիչ դրամ տուեց գառան աղի-
ներից պատրաստուած տաք ապուրի համար: Նրա պէս այլ
փախստականներ եւս անցնում էին գիշերային արահետնե-
րով. պատանիներ, յատկապէս երեխաներ, որոնց յուսահատ
մայրերը դուրս էին մղել մահուան քարաւաններից՝ օգտուե-
լով զինուորների հազուադէպ անուշադրութիւնից, գիշերուա-
նից կամ էլ գլխասիրտ մի գիւղացու ողորմածութիւնից. սո-
վալլուկ, ճարպիկ, փոքրիկ սատանաներ, որոնք ուղղութիւն
էին վերցրել դէպի արեւելք՝ դէպի առաջացող ռուսական
բանակը, կամ էլ դէպի արեւմուտք՝ դէպի ծովը, հետեւելով
բնագրի անսխալական կողմնացոյցին:

Գիշերը մի քանի շուն էր հաչում, որոնցից մէկին Արաք-
սին սպանեց՝ տիրանալու նրա ուտելիքին: Տների ներսում
կողպուած գիւղացիներն այլեւս գիշերով դուրս չէին գալիս
այդ սարսափելի ամռանը, խուսափում էին որեւէ մէկին տես-
նելուց, որեւէ բան լսելուց: Ժամանակ առ ժամանակ մի դիակ
էին վերցնում, մերկացնում, ոսկի ու գոհարեղէն փնտրում.
միւսները, որոնք բարեսիրտ էին, դրսում՝ խաչմերուկներին,
մի քանի կտոր հաց ու մի քանի դոյլ ջուր էին դնում:

Ի վերջոյ Արաքսին հասաւ ծովին, հասաւ Զմիւռնիա: Ոչ
ոք նրան չէր նշմարել, ոչ ոք նրան չէր նկատել: Օգոստոս-
եան մի արեւածագի նաւահանգստի անտեսուած ցնցոտիա-
ւորների միջից աննշմար սահեց դէպի մեծ քաղաքը եւ առա-
ջարկեց իրեն որպէս խոհարար յունական ճաշարաններից
մէկում: Տիրուհին՝ ճարպոտ էլեֆտերիան, նրան նայելով,
ծիծաղեց. Արաքսին եւս ժպտաց ու ասաց.

– Տիկին, թոյլ տուէք՝ ինձ լուամ եւ տեսքի գամ: Մեծ ըն-
տանիքի խոհարարուհի եմ եղել: Ամէն ինչ գիտեմ պատրաս-
տել, նոյնիսկ ֆրանսական սուֆլէ:

Եւ էլեֆտերիան հասկացաւ, որ հայ էր ու կտրուկ ասաց.

– Փորձենք: Տաշտն այնտեղ է: Բայց, աղջիկ, նախ եւ
առաջ այնտեղից մի փսսէ վերցրու:

Ու նրա խոր պնակի մէջ լցրեց մի շերեփ շոգեխաչած

ոչխարի միս: Արաքսին ծնկի իջաւ լեցուն ափսէի առջեւ ու
արտասուեց:

Զմիւռնիայում հայերին չէին արտաքսում: Քաղաքի
հրամանատար գերմանացի Լիման Փօն Սանդերսը թոյլ
չտուեց ոչ մի հայի դիպչել: Զմիւռնիայի վերջը կգար քիչ
աւելի ուշ:

Բայց Արաքսին այլեւս այնտեղ չէր լինի: Նա սիրահար-
ւեց էլեֆտերիայի եղբօրը՝ բարակ բեղերով, ժպտուն Ստաւ-
րոս Անաստասիոպուլոսին, որը նաւահանգստի ճարպիկ կա-
ւատն էր: Աղջիկը նրան կամովին հետեւեց մինչեւ Աղեք-
սանդրիա, մինչեւ Մադամ Լուլուգակիի անառակատունը,
որից տղան բաժնեմաս ունէր: Արաքսին նրա հետ աշխարհի
ծայրն էլ կգնար: Ստաւրոսը նրա համար դարձաւ հայր, սի-
րեկան, տէր, տաք ապաստան՝ լցնելով նրա հեզ սրտի բոլոր
բացերը: Նուրբ սրտով հեզ անառակ, որ չէր կարող եւ չէր
ցանկանում ոչ ոքի մերժել:

Միայն երբեմն Ստաւրոսը ստիպուած նրա համար նամակ
էր գրում, միշտ նոյնը, իտալական քաղաքում ապրող բժիշկ
Երուանդին: Ստաւրոսը բարեխղճօրէն գրում էր, բայց երբեք
չէր ուղարկում այդ նամակները. իսկ Արաքսին ուշ գիշեր-
ներին, երբ չէր աշխատում, լալիս էր ու դրամ տնտեսում՝
Իտալիա մեկնելու ու նրան անձամբ տեսնելու համար: «Շատ
բան ունեմ նրան պատմելու, շատ բան, որ պէտք է իմանայ, –
հեկեկում էր՝ կծելով բարձը, քանի որ Ստաւրոսը, որն այն-
քան բարի էր աղջկայ հանդէպ, տանել չէր կարողանում նրա
արցունքները, – եւ պէտք է վերադարձնեմ նրան Մադամ
Շուշանիկի դրամները: Եւ յետոյ պէտք է իմանամ Նուբարի
մասին»:

Արաքսին լաւ էր յիշում Համբարձումի մահուան օրը եւ
համոզուած էր, ըստ գուշակութիւնների, որ Նուբարը ողջ
էր:

Երբ Շուշանիկն զգաց, որ Արաքսին այլեւս ետ չէր գալու,

մի պահ մոլորուեց: Ուրեմն, իրօք, ոչ մի յոյս չկար: Պիստակների տոպրակը իրենց ունեցած վերջին ուտելիքն էր. երեսխաներին բաժանեց երեքական հատ պիստակ, մէկ հատ էլ իր բերանը դրեց: Յոյս ունէր, որ ամէն ինչ շուտով կաւարտուէր, բոլորը միասին կ'մեռնէին: Եւ դժուարութեամբ առաջանում էր լուսաբացի գորշութեան մէջ:

Մի քանի ժամ անց նրան միացաւ վերապրեալ ծեր կանանցից մէկը, Պերճուհին, ամերիկացիների վարժարանի անհոգ ժամանակների կոկիկ մաքրուհին: Պերճուհին անընդհատ ծխախոտ էր ծամում, որից դեռեւս մի քանի փշուր ունէր գրպանում, եւ որը խառնում էր պատահական խոտերի հետ: «Ամէն դէպքում նողկալի է», – անընդհատ կրկնում էր նա որպէս նախաբան անկասելի շատախօսութեան, որի մէջ տարօրինակօրէն միաձուլւում էին անցեալն ու ներկան, երջանիկ ժամանակների բամբասանքներն ու քարաւանի ճղճիւմ, թշուառ չարամտութիւնները:

– Ուշադիր եղիր, Շուշանիկ, – շնջաց նրան այս անգամ, – տեղի չտաս: Տես, հասնում ենք Կոնիա – Կոնիա, սուրբ քաղաք, դերուհիների քաղաք:

Իրօք, զապտիկները կատաղած էին. այսօր արշաւում էին աքսորեալների շարքերին աւելի մօտ (ընդհանրապէս որոշակի հեռաւորութիւն էին պահում գաղթականներից տարածուող գարշահոտի պատճառով), կոպտօրէն առաջ էին մղում առաջին օրուայ համեմատ բաւական բարակած երկարածիգ շարքի վերջին մնացորդներին: Մէկ ամիս առաջ էր, փոքրիկ քաղաք, երջանկութիւն... բայց մարդիկ խուսափում էին գէթ մի պահ մտածել այդ մասին: Գաղթականները վերածուել էին դէպի գետին կռացած խմբերի. որոնցից իւրաքանչիւրը խորշում էր միւսից, տարբեր ընտանիքներից վերապրած անդամները սեղմւում էին միմեանց՝ ցանկացած բանի հանդէպ անտարբեր, անզգայ, եթէ դա ուտելիք, ուտելիքի որեւէ մնացորդ կամ թէկուզ անորոշ կերպով ուտեստեղէն համարուող որեւէ նիւթ չէր: Երեսխաները պրպտում էին

ձիերի կղկղանքը՝ չմարսուած սերմեր փնտրելով, երբեմն բռնում էին մողէսներ, անյագաբար ուտում որդեր: Անհաղորդ, անթափանց աչքեր՝ սուր ու մտատանջ:

Բայց այսօր երեսխաները եւս մի պահ մոռացան ներսից այրող քաղցի զգացումը: Քարաւանի ճանապարհն սկսում էր կենդանանալ. մի ինչ-որ կառք, մի ինչ-որ տուն էր նշմարւում հեռւում, մի ինչ-որ օազիս, ինչ-որ ծառ շրջակայքում:

Մի պահ բոլորի սրտում աղօտ յոյս ծագեց. «Ինչ-որ մէկը մեզ կտեսնի, ինչ-որ մէկը կհասկանայ, թէ մեզ հետ ինչպէս են վարւում»: Բայց ճանապարհներին երեւացող մարդիկ կարծես նրանց չէին տեսնում, անցնում էին ապակեայ աչքերով կամ նկատելի զգուանքով մի կողմ քաշւում: Եւ շուրջը կրկին դատարկութիւն էր տիրում:

Ձապտիկները, որ գնում էին առջեւից՝ այս ու այն կողմ ցատկուտելով, բղաւելով ու գէնքերը թափահարելով, սպառնալից ուղեկցում էին փոքրիկ խմբին դէպի քաղաքի պարիսպները երիզող մերկ հովիտը: Ձառիվար տեղանքում տեղ-տեղ չորացած խոտ կար, երկու թերած ծառ ու մի աղբիւր:

– Չարժուէ՛ք, – հրահանգեց զինուորների պարագլուխը՝ կանգառ յայտարարելով, թէպէտ դեռ երեկոն վրայ չէր հասել: – Կարող էք այստեղ հանգիստ առնել: Քիչ անց ձեզ հաց կտրուի:

Ակնյայտ էր, որ նա ձգտում էր խուսափել շփումից քաղաքի մարդկանց, ինչպէս նաեւ այնտեղ բնակուող օտարականների հետ: Սակայն հնարաւոր չէր շրջանցել ճանապարհի այս պարտադիր հատուածը, ինչպէս մինչ այդ արել էին միւս բնակավայրերի պարագայում, ուստի պարագլուխը որոշեց, որ աւելի լաւ էր մի քիչ հաց տալ, կանգնեցնել խումբը աղբիւրի մօտ՝ արօծելով, որ գոնէ այս անգամ անարգել ջուր խմէին:

Հացը, առանց առանձնայատուկ ջանքի, ձեռք բերուեց բնակավայրի գիւղացիների համեստ տներից. կանանց մի

չարք մօտեցաւ հովտի թշուառներին ու գետնին դրեց մի քանի խոշոր հաց:

Բայց հայուհիները, կանանց տեսնելով, բղաւեցին: Բղաւեցին, ինչպէս խելագարներ՝ վտիտ ձեռքերով վեր պարզելով նորածիններին, այնպէս բարձր բղաւեցին, որ օդը լցուեց նրանց արձագանքով: Զինուորները հրացանների կոթերով հարուածում էին նրանց, բայց կանայք բղաւում էին ու բղաւում: Եւ ինչպէս հրաշք՝ հնամենի պարսպներից դուրս նայեցին բնակիչները. նախ մի քանի դեռահաս, յետոյ իրենց հեղինակութիւնն ընդգծող հագուստների մէջ կոլոլուած ծերերը, սուրբ քաղաքի հոգեւոր առաջնորդ իմամները, ապա երեսները քօղով ծածկած կանայք, Գերմանիայի հիւպատոս Հէր Հայնրիխ Միւլլերը, վաճառականներ, արհեստաւորներ, ընդհուպ մինչեւ երկաթագործն ու արքեպիսկոպոստը:

Հեծեծանքներով լի գիշերուայ մէջ բղաւում էին հայերը, լալիս էին նրանց փոքրիկները վերագտած ձայնով, ցածրաձայն ողբում էին սակաւաթիւ ծերերը: Կոնիայի բնակիչները հասկացան ամէն ինչ, նրանց պարզ դարձաւ: Նաեւ ընդամէնը մի քանի օր առաջ տեղահան արուած իրենց հայերին բաժին ընկած ճակատագիրը:

Յանկարծ դերուիչների առաջնորդը երկինք պարզեց ձեռնափայտն ու հօր ձայնով գոչեց. «Սա Մարգարէի կամքը է՛, օրհնեալ լինի նրա անունը: Մնէք եւ հիւրընկալէք այս ժողովրդին, որի գոռում-գոչիւնը իջնում է մեզ վրայ Բարձրեալի երկնքից եւ անէծք թափում»:

Այսպէս եղաւ, որ փոքր քաղաքի վերապրեալ հայերի դառն ճակատագիրը մի պահ ընդմիջուեց, եւ իսմէնէն գտաւ Շուշանիկին:

Իսմէնէն, քահանայ իսակն ու նրա կիւնը՝ Կատերինան, հայկական կառախմբերի մեկնումից յետոյ ողբասացների ու կաղ Նազիմի հետ շրջել էին ամէնուր՝ լուրեր հաւաքելու: Եւ նրանց արիւնը սառել էր, քանի որ բոլոր տեղեկութիւնները

միայն մահուան մասին էին խօսել: Յատուկ կազմակերպութեան արիւնուշտ վայրագ թուրքերն էին հաստատուել հայերի տներում, ոչ թէ քրդերը, որոնք հապճեպ, բայց կանոնաւոր թալանից յետոյ վերադարձել էին իրենց սարերը՝ տանելով ասեղնագործուած սպիտակեղէն, գորգեր, վարագոյրներ, ճոխ ու արտակարգ կահկարասի: Իսկ քսան տարի անց Դիարբեքի մօտակայքում քիմիկոս Գէորգ Մենդիլեանի՝ համալսարանի աւարտական ծաղկազարդ վկայականը՝ իր խնամքով պատրաստուած, անաղարտ շրջանակով, կառանձնանար քուրդ պարագլխի վրանի ամէնից արժէքաւոր իրերի մէջ:

Հայերի բանջարանոցներում հասած ծիրանները թափուած էին, իսկ փարթամ աճած եղինջներն ու մոլախոտերը ծածկուած էին Շուշանիկի պարտէզի լաւ խնամուած արահետները:

Սմբատի տան ընդարձակ սրահում ջարդուած բազմոցները յօրանջելով նայում էին կոտորուած շրջանակներին ու փշրուած բիւրեղապակեայ սպասքին: Իսմէնէն իր իւրայինների հետ ականջ էր դնում ու լրտեսում: Յանկարծ անլուսին գիշերով դատարկ տան մէջ ստուերներն արագ-արագ նիւթականացան, հաւաքեցին ծածկոցներն ու նկարները, բարակ աւելով անցան կահոյքի տակով ու գտան Լեսլիի արկղերն ու արծաթեայ փոքրիկ օձաձեւ մի զարդ՝ շափիւղեայ աչքերով, եւ հրաշալի մի տուփիկ, որ Շուշանիկը սիրով փայփայում էր՝ Սմբատի վիեննական նուէրը:

Այն ամէնը, ինչն արժէքաւոր էր ու թեթեւ, ամփոփուեց Իսմէնէի տարողունակ գրպաններում, Նազիմի կեղտոտ բակեղաթի մէջ: Դրանց մէջ էին նաեւ Նուարդի Ն եւ Ա սկզբնատառերը խնամքով ասեղնագործուած բեհեզէ թաշկիւնակները, վերջին ծնուած զարմուհի Անահիտի՝ թափանցիկ թղթով փաթածուած եւ դեռեւս չօգտագործուած շուրջաւրական տիկնիկը՝ մանուշակագոյն տուփի մէջ, Վերոնին Իտալիայից վերադարձին հօրաքոյրերից մէկի բերած տօսա-

խից զարդատուփը Ricordo di Pompei գրութեամբ եւ Տիրամօր փոքր-ինչ զարմացած դէմքի շուրջ փորագրուած անմոռուկի գեղեցիկ շրջանակով: Իսմէնէն գտաւ նաեւ փոքր դարակի կրկնայատակում Կայսրութեան մեծ փոխատուութեան կտրօնները բաժանորդագրուած Սմբատի կողմից որպէս հաւատարիմ հպատակ («Հրեշտակս, հարկի պէս մի բան է, – յանկարծ յիշեց Իսմէնէն Սմբատի բացատրութիւնը Շուշանիկին, – հարկաւոր է ցոյց տալ, որ դրանք գնել ես...»): Իսմէնէն գրպանը դրեց արժեթղթերը, ապա մի պահ յապաղեց ու վերստին տեսաւ սրահը կենդանացած, Մադամ Նուարդին՝ իր սիրած անկիւնում՝ բազկաթոռի մէջ, ասեղնագործելու պատրաստ մետաքսեայ կծիկները կարգի գցելիս, Վերոնին՝ Erhard դաշնամուրով մոցարտեան մեղեդի նուագելիս, Շուշանիկին՝ հաշուարկ անելիս ու Սմբատին՝ Նուբարը ծնկներին, հանդարտ ծխամորձ վայելելիս, կապոյտ ամպիկներ բաց թողնելով:

Վերոնի նուագը յանկարծ ընդհատուեց, որովհետեւ Սմբատը ոտքի ելաւ ու գործի դրեց նորագոյն ձայնագրիչը, որը վերջերս էր բերուել մի կոյտ արեւմտեան ձայնասկաւառակների հետ մէկտեղ: Տարածուեց Կարուզոյի արտակարգ ոնգային, հրաշալի ձայնը, եւ Սմբատը, միանգամայն գոհ, շփեց ձեռքերը:

Իսմէնէն ժողովեց այս բոլոր յուշերն ու խնամքով տեղադրեց դրանք իր յիշողութեան մէջ՝ կարմրամորթ ամուսնու միւս պատկերների կողքին: Զգուշութեամբ կարգի բերեց նաեւ կտրուած ձայնագրիչը (գինուորական կօշիկի հետք կար վրան): Այս ամէնը կտեղակայուէր իր անցեալի բոլոր յիշատակների հետ, հէնց իր կողքին, իսկ ինքը՝ Իսմէնէն, կմահանար դրանք պաշտպանելիս Զմիւռնիայի հրդեհի ժամանակ:

Բայց Իսմէնէն այդ պահին իր ամբողջ հոգով մտածում էր կառախմբին հասնելու մասին: Գիտէր, որ օրէնքն արգելում էր հայերին օգնել, ուստի պէտք է գետնի տակն անցնէր ու

ընդլատակեայ գործեր, բայց խանգարիչ հանգամանք էր այն փաստը, որ բոլորը քաղաքում գիտէին այդ ընտանիքի հետ ունեցած իր բարեկամութեան մասին:

Մինչդեռ Նազիմի մասին ոչ ոք ոչինչ չգիտէր, ոչ էլ Շուշանիկի հետ նրա հանդիպման մասին: Այսպիսով, բոլորը, քայմաքամի գլխաւորութեամբ, նրան համարում էին հաւատարիմ լրտես, որ շատ ծառայութիւն էր մատուցել. մինչդեռ նա կառչած էր Շուշանիկի ու նրա կորուսեալ աշխարհի պատկերից եւ ողբում էր նրանց ճակատագիրը. ինչպէս իրենը:

Նազիմը մի օր ականջ դնելով ժամանող, փոքր-ինչ յոգնած երկու ձիււոր գինուորներին, որսաց քայմաքամի քարտուղար, բեղաւոր Ալի Սուլէյմանին հաղորդուած մի քանի արագ նախադասութիւն.

– Դեռեւս երկու հարիւր մարդ կլինեն այդ անիծեալները: Շուտով Կոնիա կհասնեն, եւ չգիտես... – ապա գինուորը ցածրացրեց ձայնը, ու Նազիմը պինդ սեղմուեց պատին՝ փակելով աչքերը:

Նրանք անցան Նազիմի մօտով եւ, ինչպէս միշտ, անգամ չնկատեցին նրան: Միայն կուրծքը ցցած քարտուղարը փնջացրեց.

– Ոտքի տակից մաքրուի, մուրացիկ, – մի բան, որից Նազիմը, իրօք մուրացկան լինելով, չէր վիրաւորոււմ. բայց չէ՞ որ քարտուղար Ալին մուրացկան չէր, եւ, այդուհանդերձ, բարեպաշտ հաւատացեալի իր պարտքը չկատարեց նրա հանդէպ:

Նազիմը դուրս սահեց՝ տալով փայտեայ սկահակը որդու ձեռքը (գործը մնում էր գործ), որն, իրօք մուրացկանի տաղանդ ունէր, ու շտապեց Իսմէնէի մօտ, որին գտաւ շուկայում ցածրաձայն խօսելիս:

– Հարկաւոր է մի կառք վարձել ու անհետանալ առանց աղմուկ բարձրացնելու, – ասաց Նազիմը:

– Անհնար է, ես ու դու՝ կառքի մէջ միասին: Երկու

մեծահարուստների պէ՞ս: Իսկ ի՞նչ բացատրութիւն տանք: Ու՞ր ենք գնում: Նոյնիսկ թեսքերէ չունենք, եւ, յետոյ, պատերազմ է, – մոլեգնած պատասխանեց Իսմէնէն, որի սրտում մահուան ժամացոյցի զարկեր էին հնչում:

Ապա գլխում մի միտք ծագեց: Քահանայ Իսա՛կը: Նա, իրօք, կարող էր կառք վարձել եւ այլ քաղաք մեկնելու պատճառ ունենայ: Այսպիսով, յանպատրաստից կերպով Իսակը յօրինեց իրեն զարմիկ մի եպիսկոպոս, կինն էլ՝ եպիսկոպոսի հետ ժամանող աչքի զարնող ազգականներ: Տեղեակ պահեցին իսկական եպիսկոպոսին, որը, թէեւ փոքր-ինչ դժկամօրէն, այդուհանդերձ համաձայնեց համագործակցել. տրամադրեց եկեղեցու կառքը, որի մէջ սննդամթերք լցրին: Ամէն ինչ կատարուեց գիշերուայ ընթացքում, ամէն ինչ տեղափոխուեց եղբրամայրերի ու դերեզմանների կանանց ընդարձակ վերնազգեստների տակ թաքցրած: Իսակը դուրս հանեց երկու շիշ օղի, որ մի կողմ էր դրել որդու ծննդեան օրը: Ապա իր փոքրիկի ու Սմբատի յիշատակի համար ծնկի իջաւ ու տենդագին աղօթեց Տիրամօրը, որպէսզի արչաւանքը յաջող անցնէր:

Այգաբացին եպիսկոպոսական հին գինանշանը դռներին դաշուած կառքը ճանապարհ ընկաւ երկայնամօրուս վանականի ուղեկցութեամբ, որն իրականում կերպարանափոխուած ու լաւ վարձատրուած վարպետ կառապան էր: Իսակը, մաքուր շորեր հագած, աւելի հեղինակաւոր տեսք էր ընդունել: Իսմէնէն Նազիմի հետ մի անկիւն էր քաշուել, իսկ Կատերինան, տօնական հանդերձների մէջ, նստել էր փոքր պատուհանի մօտ հանդարտ, անխռով տեսքով:

Ճանապարհի ամէնից վտանգաւոր մասն այն հատուածը կլինէր, երբ շեղուէին յայտարարուած ուղուց՝ Տաւրոսի դժուարանցանելի վերելքը յաղթահարելու համար, որպէսզի ամենակարճ ճանապարհով հասնէին Կոնիա:

Ճանապարհին սարսափ պատեց նրանց: Հովիտներից մէկում, որտեղ կառապանն ասաց, թէ կարող էին հանգիստ

առնել մշտահոս աղբիւրի մօտ, որի կողքին լճակ կար, տեսան սարսափազդու մի վայր՝ ամբողջովին ծածկուած նեխած դիակներով, աղբիւրն էլ՝ ապականուած:

Տագնապահար յաղթահարեցին սաստիկ անախորժ հոտը, որպէսզի գննէին հանգուցեալներին, բայց նրանք մէկ այլ քարաւանից էին, եւ ոչ ոքի չճանաչեցին. սակայն մի բան պարզից էլ պարզ էր. բոլորն էլ հայ էին:

Մեռեալները, մեկուսի պառկած, սպասում էին Յարութեան շեփորներին, բայց ոչ ոք չէր աղօթել նրանց համար:

Իսակը կուզենար կանգ առնել, բայց Իսմէնէն դիմադրեց.

– Խնեթ քահանայ: Միգուցէ ելուզակները դեռեւս չըջակայքում են: Խաչակները, ու գնացինք:

Եւ իրօք, մենաւոր կառքն ամենեւին էլ ապահով չէր, իսկ օրերն անցնում էին հազաբացող տագնապով, մինչդեռ լքուած, կիսանեխ դիակները գնալով շատանում էին: Միայն Նազիմն էր անխռով, որ աղօթում էր Մարգարէին եւ իրեն զգում որպէս Հարուն ալ Ռաշիդի ասպետ: Նա գիտէր, որ հասնելու էր Շուշանիկին, եւ որ կնոջ փրկութիւնը իրեն էր վստահուած. երաշխիքը՝ Դրախտն էր, որ իրեն էր սպասում:

Գիշերով արագ անցան ճանապարհի վերջին հատուածն ու արեւածագին հասան Կոնիա: Քօղարկել էին կառքի դռների գինանշանները, որովհետեւ անցնում էին քրդական տարածքով, իսկ նրանց համար միեւնոյնն էր, աչք չէին փակի: Վերջապէս կանգ առան մի հանդարտ վայրում: Իրականում, Կոնիայում չկար յոյն եպիսկոպոս, ուստի ճամփորդներն այժմ Նազիմի ձեռքերում էին:

Նազիմն իջաւ ու մի ոտքի վրայ թեքուելով արագ անհետացաւ: Մուրացկանների եղբայրակցութիւնն ամէնուր անդամներ ունի, եւ Նազիմը խորհրդակցեց մի հացագործի հետ, որը նրան մի խոշոր, խրթխրթան հաց տուեց՝ ի սէր Աստուծոյ: Այնուհետեւ շտապ քաղաք գնաց: Կառքի մէջ մնացած երեքը տագնապի պահեր ապրեցին ու յաճախակի կուսկում խմում էին օղու շիջ:

Արեւն արդէն կիզակէտում էր: Իսմէնէն որոշեց ի ցոյց հանել քահանային: Կոնիան շատ կրօնապաշտ քաղաք էր, յոյն քահանաներն էլ յաճախ էին շրջագայում այնտեղ, ինչպէս ճարպիկ գործարարները: Իսակը նստել էր գետնին՝ քահանայի իր շորերը հաղին, գլխարկը գլխին, ու այնպէս էր յենուել կառքին, կարծես քնած լինէր (բայց արթուն, գողունի աչքերը լրտեսում էին):

Այս ամէնը խիստ տարօրինակ տեսարան էր, բայց չէ՞ որ նա կրօնաւոր էր, իսկ կառքի՝ վերստին յայտնուած զինանշաններն էլ պաշտպանում էին նրան հանդարտ գիւղացիների աչքերում, որոնք իրենց գործին էին գնում: Թարմ հացի բոյրը հաճելիօրէն թափանցում էր նրա քթանցքները, բայց իսակը, որը նախաձեռնող չէր, չէր համարձակուում շարժուել տեղից ու լուռ շարունակում էր նստած մնալ:

Այսպէս անցաւ երեք ժամ: Իսակն ու Իսմէնէն անհամբեր շչնջում էին ու պատրաստուում շարժուել, երբ մի ցածր խշխշոցի ձայն հասաւ նրանց երկու հրաշալի եզներով լծուած յարդի սայլից, որ դանդաղ մօտեցաւ նրանց ու կանգ առաւ փոքր-ինչ այն կողմ: Սայլապան գիւղացին անխռով նայում էր անորոշ մի կէտի: Յարդի միջից յայտնուեցին Նագիմն ու նրա ծանօթը՝ նրանից աւելի կեղտոտ ու զզուելի, միաչքանի, խայտաբղէտ ցնցոտիներով:

– Հայերը հասնելու վրայ են, – ասաց նորեկը, – մի քանի ժամից այստեղ կլինեն: Սարսափելի վիճակում են, աւելի սարսափելի, քան մուրացկանի մօրուքի ոջիւր: Իսկ նրանց օգնելն արգելուած է:

– Գիտենք, գիտենք, – պատասխանեց Իսմէնէն, – բայց նրանց մէջ իմ հարազատները կան, ու եթէ նրանց գտնեմ, – հանեց երկու ոսկեղրամ ու մի պահ դրանք շողշողացրեց, – բոլորին էլ լաւ բաժին կհասնի:

Տարիկը (այդպէս էր միաչքանու անունը) բարձրացրեց ձեռքերը հանգիստ, բարեկիրթ շարժումով:

– Ձեզ նրանց մօտ հասցնելու համար պէտք է խօսեմ

պահակախմբի զապտիէների հետ: Իսկ այս օրերին ոչ ոք ձրի չի խօսում:

Իսմէնէն իսկոյն մի տարօրինակ շարժումով աճաբարբի պէս գրպանից հանեց իր յայտնի գունաւոր թաշկինակներից երկու-երեքը, որոնցից մէկի մի անկիւնում ոսկեղրամ կար:

– Սրանով քսան զապտիէ կոհաջնես, – ասաց նա, – քեզ էլ մի բան կմնայ: Իսկ յետոյ կվճարեմ ու լաւ կվճարեմ, երբ գործը գլուխ բերես:

Յարդի միջից դուրս եկան եւս չորս ցնցոտիաւորներ, որոնք արագ-արագ սկսեցին դէսուդէն նետել պարաններով ամուր կապկպած յարդը, որի միջից յայտնուեցին չորս ամուր արկղեր՝ կողք կողքի շարած, խորանարդ կազմած. դրանց տակ կային դէպի դուրս նայող այլ արկղեր եւս: Մաքսանենգութեան արուեստի այս հրաշալիքի առջեւ լուռ կանգնած՝ յոյները հիացմունքով դիտում էին, մինչ Տարիկը, ոգեւորուած խանդավառութեամբ, գործի անցաւ, բաց արեց տարողունակ արկղերը, որոնցից իւրաքանչիւրը նախատեսուած էր մի տեսակի ապրանքի համար:

– Ապրել է պէտք, – բացատրեց նա, – յատկապէս պատերազմի օրերին: Այս ձեւով կարող ենք սրանք արագ լցնել ու դատարկել. միւս կողմից էլ՝ ոչ ոք մեր կողմը չի նայում: Զինուորները վճարուած են: Սայլը դանդաղ է շարժուում, բայց ապահով է: Երբ տեղ հասնենք, արկղերը կդատարկենք, իսկ այնտեղ փոխանակութեան համար պատրաստ այլ արկղեր կլինեն:

Խումբը մի վայրկեանում դատարկեց կառքը: Կատերինան լուռ կծկուեց իր ուսնոցի մէջ ու մի կերպ դուրս սահեց, քանի որ շատ ու շատ իրեր դասաւորուած էին նստատեղերի տակ: Հայերի համար նախատեսուած ուտելիքը լցուեց մի քանի արկղի մէջ, միւսներում տեղ գտան գործիքներ, ծածկոցներ, կաթսաներ: Ապա ամբողջն արագ փակուեց, յարդի կապոցները գրաւեցին իրենց նախկին տեղերը: Ու ոչինչ չէր երեւում, բացի մի քանի զոյգ պարաններից: Յարդի մէջ յատուկ

փորձում անցքերում անհետացան չորս օգնականները, ու կառքը, փոքր-ինչ առաջանալով, վերջնականապես կանգ առաւ բարձր չինարի տակ, որտեղից ջրի բարակ մի շիթէր հոսում:

Գիւղացին արձակեց եզներն ու տարաւ նրանց խմելու. ապա թողեց, որ արածեն մօտակայքում. կարծես աշխարհիս երեսին այլեւս ոչ մի ուրիշ մտածմունք չունէր: Յետոյ հանեց կարճ ծխամորճը, նստեց չինարի տակ ու ընկղմուեց խեղդող ծխի կապտաուռն քուլաների մէջ: Ի՛նչ երփներանգ պատկեր-մի կողմում՝ յոյն Եպիսկոպոսութեան զինանշաններով սեւ կառքը, քահանան՝ եպիսկոպոսական մեծ լանջախաչով, աչքի զարնոց գլխարկով ու մագերի ամուր կապած կարճ պոչիկով. քահանայի պստիկ կինը՝ կծկուած սեւ ուննոցի մէջ. Իսմէնէն՝ գնչուի իր մեծաշուք օղերով, խոշոր աչքերով ու սուր քթով. կաղ մուրացիկը՝ հաստատուն դիրքով. բոլորը խժուում էին Փէթայով¹⁵ ու ձիթապտղով թարմ հացը: Օղու շիշը դանդաղ ձեռքից ձեռք էր անցնում: Միւս կողմում յարգով լի սայլն էր՝ իր խաղաղ սայլապանով, որ հանգիստ ուտում էր Տարիկի հետ ու խմում աղբիւրից բխող սառնորակ ջուրը:

Մինչդեռ ներսում ամէն ինչ եռում էր. իւրաքանչիւրի գլխում վիտում էին վախի ու պարծանքի, ընչաքաղցու-թեան ու մահուան մտքերն ու ծրագրերը: Միւսները յարդի մէջ լուռ ընկղմուած էին, ինչպէս դարանակալած գազաններ:

Մինչ մարդիկ յագեցնում էին իրենց ծարաւը, Իսակն էլ շտկում էր մօրուքը, եկաւ մի ոստիկան՝ իշուկի վրայ նստած: Իսմայիլ Մուզաֆերն էր՝ ուլեմաների պահակախմբի պետը, Նագիմի ընկերոջ ընկերը:

– Արդէն հասնում են, – ասաց նա, – ու նրանք կանգնելու են Միծեռնակների հովտում՝ քաղաքից ոչ հեռու: Հովիտը բոլոր կողմերից փակուած է զառիվայր իջնող մարգագետին-ներով, միայն մէկ ճանապարհ է թափանցումայնտեղ: Առատ

ջուր կայ: Պէտք է աղմուկ չբարձրացնեն. նրանց հաց կտան, հանգիստ կպահեն, իսկ վաղն արեւածագին վերստին կմեկ-նեն: Մինչեւ Հալէպ դեռ երկար ճանապարհ կայ անցնելու, – ու զուսպ ժպտաց՝ փոքր-ինչ սուլելով ցանցառ ատամների արանքից:

Յոյների կառքը ետեւի կողմից արագ-արագ մօտեցաւ սայլին, ձիերին ազատ արձակեցին ու կապեցին չինարի մօտ: Գիւղացին վերստին գրաւեց կառապանի տեղը, սեղմեց նստարանի տակ թաքնուած մի լծակ, ու յարդի մի մասը առաջ սահեց՝ ծածկելով յոյների կառքի վերնամասը, որն այժմ կարծես սովորական մի սայլ լինէր: Յարդի մէջ թաքնուած չորս մուրացիկները դուրս թռան ու ճարպիկ շարժումներով շտկեցին եղած-չեղածն ու վերադասաւորեցին կառքում մնացած յարդը: Գործում էին համբերաշխ, մեծ արագութեամբ, ու մի քանի րոպէի ընթացքում ամէն ինչ կարգաւորուեց:

Կատերինան պէտք է մնար գիւղացու հետ չինարի տակ՝ ձեւացնելով, որ վերջինիս կինն էր: Կառապանը, որը թէեւ դրա համար չէր վարձատրուել, մեկնուեց քնելու ծառի հա-ճելի զովութեան տակ: Իսակը մնացել էր վերնաշապիկով, հանել էր կապան ու գլխարկը եւ նստել դրանք կառքի մէջ, իսկ այժմ փորձում էր թաքցնել մագի պոչիկը կարճ գլխար-կի տակ: Նագիմը հագից հանեց աղտոտ բաճկոնակն ու հանդիսաւորութեամբ զցեց քահանայի ուսերին: Իսմէնէն կերպարանափոխման կարիք չունէր. ցանկացած մարդ կհաս-կանար, որ ողբասաց էր, ու ոչ ոք չէր համարձակի նրա ճա-նապարհը փակել:

Նագիմն անցաւ սայլը վարելու, ու եզները դանդաղ մօ-տեցան: Նա չափազանց դանդաղ էր շարժում՝ ի տարբերու-թիւն օգնութեան հասնողների անձկալի անհամբերութեան, բայց Տիրոջ ջրաղացը ճիշտ ժամանակին է աղում, եւ սայլը առաջ ընթանալով, դրսի պարսպների երկայնքով հասաւ հովիտը հէնց այն պահին, երբ թշուառների թափօրը եկաւ

¹⁵ Ֆէթա – յունական պանրի տեսակ (ծնթ. թարգմ.):

Հիւսիսիւայն ճանապարհով, փոշու ու ձիւաւոր զապտիէնների բղաւոցների ուղեկցութեամբ:

Սայլը, որ նման էր հարիւրաւոր այլ սայլերի, կանգ առաւ փշոտ, խիտ թփերի ետեւում: Բայց տեսանելիութիւնը հոյակապ էր:

Իսակը, Իսմէնէն ու Նազիմն իջան ու սկսեցին շուրջը դիտել: Ականատես եղան մի խղճալի տեսարանի. կանայք առաջ էին գալիս ամէն կողմից՝ դուրս պրծնելով փոշու միջից, քերծելով բոբիկ ոտքները, գլխահակ, կորացած ուսերով: Տեսան կմախքի վերածուած երեխաների, որոնք եւս, դէմքները գետին յառած, նայում էին ճանապարհին, եւ յանկարծ հասկացան, որ ցնցոտիաւոր այդ սակաւաթիւ արարածները, որ գետնին գոյութիւն չունեցող ուտելիք էին փնտրում, այն ամէնն էին, ինչ մնացել էր այն հազարաւորներից, որոնք, կառքերի մէջ նստած, մեկնել էին քաղաքից մէկ ամիս առաջ:

Իսակը, Իսմէնէն ու Նազիմը դիտում էին ու լուռ արտասուում: Ոչ ոքի չճանաչեցին, բայց յանկարծ հասկացան, որ այստեղ դիմակայելու էր դրուած իրենց ուժերից վեր մի խորամանկութիւն, որ դժուարանում էին ըմբռնել. բայց պարզ մարդու բնազդային իմաստութեամբ գիտէին, որ պէտք է խորամանկ ու չափազանց խոհեմ վարուէին:

Լուռ, շունչները պահած՝ լսեցին կանգառի հրահանգները, տեսան ուժասպառ գետին տապալուող հայուհիների անասելի յոգնութիւնն ու դէմքի խելայեղ արտայայտութեամբ երեխաներին, որոնք շտապում էին ջուր խմել: Ապա տեսան հաց բերող կանանց ու լսեցին ծայր աստիճան տկարութեան հասած թշուառների զօրաւոր գոռում-գոչիւնն ու ուլեմայի միջամտութիւնը:

Իսմէնէն անմիջապէս գիտակցեց, որ սպասուած պահը եկել էր. բայց ինչպէ՞ս նրանց հասցնել ուտելիք, ինչպէ՞ս դատարկել սայլը: Այդ պահին նկատեց Նուբարին ու ամէնից առաջ ճանաչեց նրան հոգու աչքերով. իր գուարճալի

մարդուկին, որն իր հետ երգել էր Համբարձումի յուզարկաւորութեան ժամանակ հազար տարի առաջ:

Կարծես Նուբարը վատ չէր: Նրա փոքրիկ դէմքը դեռեւս կլորիկ էր, բայց խոշորացած աչքերը վայրենու հայեացք էին ստացել: Եթէ մանուկը կար, ուրեմն ընտանիքի միւս անդամներն էլ պէտք է լինէին, — հանգստացած շունչ առան Իսմէնէն ու Իսակն ու ինչ-որ բան շնջացին Նազիմին, որն արագ-արագ արդէն մի քանի արկղ միս ու կաթի փոշի էր դատարկել:

Բայց ահա, խրախուսուած Աստոյ մարդու կանչից, Կոնիայի բնակիչները մուտք գործեցին ձորակը կաթի ամաններով, սպեղանիներով, գինով: Մոլեգնած զապտիէների հանգիստ, բայց վճռական կերպով մի կողմ հրեցին, որոնք, այժմ խմբով մեկուսի կանգնած, գաղտնաբար խօսակցում էին: Ի վերջոյ նրանցից մէկն առանձնացաւ, հեծնեց ձին ու քառատրոփեց, անտարակոյս, հրամաններ ստանալու:

Այսպիսով, Իսմէնէն, Իսակն ու Նազիմը (նրանց ոչ ոք չէր ճանաչում) խառնուեցին ամբոխին ու սկսեցին անսահման ուշադրութեամբ նայել կանանց ու երեխաների դէմքերին՝ ձգտելով հասնել Նուբարին: Սակայն ուտելիքի հասնելուն պէս խմբերը բնազդօրէն վերամիաւորուել էին, եւ Նազիմն առաջինը հեռուից նկատեց Շուշանիկի գլուխը:

Թուաւ նրա մօտ, որը, մի ծառի տակ մեկնուած, գրեթէ ակամայ հաց էր կրծոտում, ծնկի իջաւ կնոջ առջեւ ու մի շնչով ասաց.

— Վալիդէ Հանըմ, այստեղ եմ: Ես եմ: Այլեւս չանհանգստանաս, — ապա հապշտապ համբուրեց կնոջ ուռած, աղտոտ ձեռքերը:

Շուշանիկը ապշահար նրան էր նայում ու լուում: Նրա շուրջը՝ Վերոնը, Ազնիւը, դատրիկներն ու Նուբարը, բոլորը լուռ էին: Շուշանիկը փոքր-ինչ շտկուեց, կարծես ականաւիտ ջրերից դուրս ցայտած մի պատկեր լինէր, ու բարի գալուստի իր անկրկնելի շարժումով նրան պատասխանեց.

– Նագիմ, բարի եկար: Բայց չենք կարող քեզ առաջուայ պէս ընդունել:

Իսմէնէն արդէն Շուշանիկի մօտ էր ու ջրի մէջ թաթախած մաքուր թաշկիինակով մաքրում էր նրա քրտնապատ ճակատը, դէմքն ու աչքերը: Ապա շշնջաց.

– Ուտելիք ենք բերել, այստեղ ենք: Իսական էլ է եկել:

Ապա յորդորելով ստիպեց նրան ջուր խմել, ուտել, խնամեց ուռած, մաշկագերծ ոտքերը: Շուշանիկն ընկղմուեց երանելի ընդարմուլթեան մէջ ու մէկ ամսուայ ընթացքում առաջին անգամ հանգիստ քուն մտաւ:

Այնուհետեւ աղջիկներին խնամք տանելուց յետոյ Իսմէնէն սկսեց խորհրդակցել նրանց հետ: Իսական ու Նագիմը գնում-գալիս էին՝ ուտելիքով, գինով, հագուստներով բեռնաւորուած, ճարպկորէն խոստանաւելով դաշտի խառնաշփոթում: Աղջնակներն ու Նուբարը եւս կերել էին, բայց ոչ շատ, ինչպէս զգուշացրել էր Շուշանիկը, քանի որ աւելի վատ բան չկար երկար ժամանակ քաղցից յետոյ, որքան շատ ուտելը, եւ այժմ ուժասպառ քնած էին. խղճահարուլթեան արժանի մի խումբ՝ իրար մէջ կծկուած (արդէն գիտէին, որ այդպէս պէտք է վարուէին որպէս փոխադարձ պաշտպանութեան միջոց):

«Բերածս ապրանքների մեծ մասն այս մարդիկ չեն կարող փոխադրել, նրանք պէտք է քայլեն, – մտածեց Իսմէնէն: – Կօշիկներն ու հագուստները կարող են հագնել, բայց չպէտք է ուտիկանի ուշադրութիւնը հրաւիրել, ուստի հարկաւոր է հագնել գարշահոտ ցնցոտիների տակից, որոնք պէտք չէ դէն նետել»:

– Մեր վերջին պաշտպանութիւնն են, – դառնօրէն ժպտաց Ազնիւրը:

«Ետեւներից էլ չեն կարող ճամպրուկ քարշ տալ, որովհետեւ ուժասպառ են, բացի դրանից, հէնց յաջորդ օրը ամէն ինչ նրանցից կյափշտակեն», – անդրադարձաւ Իսմէնէն ինքնիրեն:

Փրկութեան հազար ու մի ցնորային վարկածներ անցան

նրա մտքով, բայց ոչ մէկը ընդունելի չթուաց նրան: Մինչ այդ ժամանակն անցնում էր, ու երեկոն՝ իջնում: Աքսորեալներն ընկած էին այս ու այն կողմ կոտորուած տիկնիկների պէս՝ անշարժ, ուժասպառ:

Կոնիայի բնակիչներն արդէն գնացել էին: Հնագանդուել էին ուլեմային, կվերադառնային յաջորդ օրը: Եկաւ Գերմանիայի հիւպատոսը՝ Հէր Միւլլերը՝ վիրակապերով ու դեղորայքով, մաքուր հագնուած բուժքրոջ հետ: Խիստ անհաստականութիւն էր, բայց ոչ անմարդկային: Սարսափով մտածում էր հայերի տարագրութեան մասին, բայց չուներ անձնական նախաձեռնութիւն: Այժմ կամովին հետեւում էր ուլեմային՝ մտածելով, որ այս թշուառ ժողովուրդն, իրօք, բուժուելու կարիք կունենար:

Բայց հոգ տանել երկու հարիւր հոգու մի քանի վիրակապով ու մի քիչ եօդով հաւասարագօր էր գրեթէ ոչնչի: Սրանք անցել էին բոլոր սարսափներով, խմել ապակիանուած ջուր, պրպտել ձիերի, ինչպէս նաեւ իրենց կղկղանքը: Ազնիւրը վայրի կերպով ծիծաղում էր այդ անհեթեթ տեսարանի վրայ ու ասում.

– Եկել ես տեսնելու անասունների հաւաքատեղի՞ն: Զգոյշ մնա, վարակիչ ենք...

Հէր Միւլլերը վերապահօրէն ծնկի իջաւ մի ծեր կնոջ առջեւ, որի ծնկից վեր թարախոտ խոց կար, արագ մաքրեց վէրքն ու վիրակապեց: Ապա հանեց ջրամանն ու մօտեցրեց կնոջ կապտող շուրթերին: Վերջինս անյազօրէն մի կում արեց ու ընկաւ մեռած: Խեղճ Պերճուհին էր, որ վերջապէս մի կուշտ փորով հաց ուտելուց յետոյ հանգստացած պառկել էր, իսկ խոցն էլ այլեւս չէր ցաւում: Այդ ժամանակ զօրաւոր ջերմութիւն էր զգացել ու երեկոյեան վերջալոյսի մէջ տեսել էր որդուն՝ շատ տարիներ առաջ մեռած Դաւթին, որը նրան ջուր էր պարգում: Իրականում Միւլլերին էր տեսել՝ որպէս հրեշտակ: Պերճուհին նրան յանձնուեց վստահութեամբ ու հոգին աւանդեց խաղաղութեամբ:

Վրայ հասաւ Իսակր, փակեց նրա աչքերն ու տեսաւ կնոջ նուրբ հոգին՝ հրեշտակի թեւերը փորձելիս, որ վերջապէս թողութիւն ստացաւ:

Միւլլերի ժամանումը Իսմէնէի ու նրա խմբի համար օգտակար եղաւ: Աքսորեալներն արդէն սկսել էին նշմարել ինչ-որ անսովոր բան, ինչը որ անցանկալի էր: Բայց անմիջապէս նրանց ուշադրութիւնը շեղուեց դէպի Միւլլերը, եւ Իսմէնէն գիտակցեց, որ քիչ ժամանակ ունէր հեռանալու: Արդէն զապտիկները սկսել էին վերստին սպառնալից մօտենալ, սակայն Միւլլերը, որ դաշնակից էր ու գերմանացի, յարգանք ցոյց տուեցին: Բարեբախտաբար, գերմանացին ճշգրիտ մարդ էր, ու ոչինչ նրան չէր կանգնեցնի, մինչեւ որ չաւարտուէին դեղորայքն ու վիրակապերը:

Բայց նրա բուժքոյրն ինչ-որ բան էր հասկացել ու լռութեամբ մօտեցել Իսմէնէին, նրա ձեռքի մէջ սահեցրել մի գրուածք՝ շննջալուով:

– Այս երեկոյ տասից յետոյ եկէք այստեղ ինձ տեսնելու:

Ապա շտապ հեռացել էր:

Իսմէնէն կցանկանար Շուշանիկին հրաժեշտ տալ, բայց վերջինս խոր քնած էր, նրա յոգնած դիմագծերն այնքա՛ն կարիք ունէին հանգստի: Իսմէնէն խոր հառաչեց, ողջագուրուեց Վերոնի (Ադնիւր արագ ետ քաշուեց) ու Նուբարի հետ, որը նոյնպէս խաղաղ քնած էր: Ամէն ինչ շատ հանդարտ էր թւում: Մայրամուտի մէջ փայլում էր երեկոյեան աստղը, եւ քաղաքի պարիսպներն իշխում էին որպէս պաշտպան:

Իսմէնէն աղջիկներին տուել էր հագուստների տակ թաքցնելու ուտելիքի մի քանի տոպրակ, երկու լիքը ջրաման, մի քիչ դրամ ու ընտանեկան արժէքաւոր լուսանկարների մի փաթեթ՝ Շուշանիկի շափիւղեայ աչքերով զարդատուփի հետ:

– Եղածը սա է, աղանեակներս, – հառաչեց նա ու խոստացաւ, – ասում են՝ ձեզ Հալէպ են տանելու. ես կգնամ այն-

տեղ ու ձեզ կսպասեմ բժիշկ Զարեհի հետ: Միջոց կգտնենք՝ ձեզ խմբից դուրս բերելու:

Ապա խուլ հեկեկաց ու վազեց տխուր՝ առջեւից հրելով Իսակին: Նազիմին չտեսաւ, բայց եւ չանհանգստացաւ, որովհետեւ մուրացկանը կարող էր ինքն իր գլխի ճարը տեսնել:

Եւ, իրօք, Նազիմը բանակցութեան մէջ էր մտել զապտիկներից մէկի հետ, որին ճանաչել էր որպէս հին բարեկամ, որը մի քանի տարի առաջ բանտ էր ընկել, ապա փառքով դուրս եկել՝ հայերի դէմ պայքարելու պատրուակով: Միացել էր յատուկ կազմակերպութեանն ու դարձել չարչարանք ու բռնութիւն իրականացնող լաւ կատարածու: Բայց Նազիմը լաւ էր յիշում այդ մարդու անգութ ընչքաղցութիւնը: Անհնար էր, որ անհետացած լինէր:

Եւ ընդունելով նախկին խորամանկ մուրացկանի կերպարանք, ինչը, իրօք, այդպէս էր, շննջաց զապտիկին, որ ինքն ուղարկուած էր դրամի անսահման կարողութիւն ունեցող մի աղայի կողմից՝ մի ընտանիք փրկելու, որի հանդէպ նա պատուի պարտք ունէր: Բայց քանի որ աղան չէր ցանկացել երեւալ, այդ պատճառով էլ իրեն էր ուղարկել:

Փայլեցին զապտիկի աչքերը: Այդ թշուառներից այլեւս ոչինչ չես կարող ակնկալել, բացի նրանց մեռնելը տեսնելու հաճոյքը. ինչու՞ մի բան չչորթել, եթէ, ի հարկէ, հնարաւոր է: Իսկ եթէ հնարաւոր լինէր գումարը նախօրօք ստանալ, չէ՞ որ կարելի էր, միեւնոյնն է, սպանել, թերեւս վերջին պահին. երբ արդէն կարծում են, որ փրկուած են. բաւական է յայտնել լեյտենանտին...

Բայց Նազիմը երէկ չէր ծնուել ու մի ամբողջ կեանք էր անց կացրել լրտեսելով. իսկոյն հասկացաւ դիմացինի երկդիմի մտքերն ու ժպտաց: Բայց ձեւացրեց, որ չէր կռահում:

– Ովքե՞ր են քո պաշտպանեալները, – հարցրեց մարդը կեղծաւոր մտահոգութեամբ:

– Կիմանաս, երբ ժամանակը գայ, – պատասխանեց

Նազիմը անորոշ կերպով: – Հին բարեկամս, խաղի մէջ մի կոյտ դրամ կայ, իրար մէջ կկիսենք: Դու աշխատիր ոչ ոքի չսպանել: Ես առայժմ լեզուս կողպած կպահանջեմ, բայց մօտից կհետեւեմ քարաւանին: Մինչ այդ վերցրու սա, – ու նրան պարզեց Վիկտորիա թագուհու շողշողուն ոսկեդրամը:

Զինուորը լուց ու արագ թաքցրեց դրամը: Իրօք, սատանայ են այս հայերը, որ կարողանում են շահոյթ բերել նոյն-իսկ այս վիճակում...

Հասնելով կառքին՝ Իսմէնէն ու Իսակը ի վերջոյ իրար աչքերի մէջ նայեցին յուսալքուած, վհատուած: Ինչպէ՞ս վարուել մնացած ապրանքի հետ: Ուրիշ ի՞նչ էր հնարաւոր անել Շուշանիկի ու ընտանիքի միւս փրկուած անդամների համար: Իրենք պէտք է վերադառնային, կառքը վերադարձնէին եպիսկոպոսին, իսկ յետո՞յ: Եւս մի քանի օր, ու այդ թափօրն այլեւս գոյութիւն չէր ունենայ, այդ թշուառ ժողովուրդը կվերանար: Թուում էր՝ նրանցից ոչ մէկը ի վիճակի չէր լինի դիմակայել ճանապարհի վերջին՝ սարսափելի հատուածը: Իսմէնէի ու նրա ընկերների սուր աչքերից չէր վրիպել հայերի մարմնական ծայրայեղ տկարութիւնն ու մտաւոր խանգարումը: Իսկ Ազնիւի վայրի աչքերը նրանց մտքից չէին հեռանում: Իջնող խորհրդաւոր մթութեան մէջ Իսակն ու Իսմէնէն դառնօրէն արտասուեցին:

Ինչ-որ խշշոց ու համաչափ թխկթխկոց նրանց իմաց տուեց Նազիմի գալը: Իսմէնէն սարսուռաց: Դեռեւս չէր կարողանում նրան լիովին հաւատ ընծայել (Իսմէնէն տեղեակ չէր, թէ մայիսեան այն երեկոն Նազիմը ինչպէս էր վարուել Ազնիւին սիրահետող երիտասարդի հետ. նա շարունակ սքողում էր այդ մութ գաղտնիքը քրքրուած մտքերով ու ամէն օր թաղում այն ինքն իր մէջ): Աղօտ լոյսի տակ Նազիմը նշմարեց երկու յոյներին՝ իրար մօտ նստած անմխիթար լաց լինելիս, ու յանկարծ մտածեց. «Ես նրանցից աւելի խորամանկ եմ: Ես կփրկեմ Վալիդէ Հանըմին: Ես փոքր մարդ չեմ», – եւ նոյնքան յանկարծակի զգաց բոլորին եղբայրաց-

նող մարդկային իսկական խիղճը, մեծ խիղճը. ծնկի եկաւ նրանց մօտ՝ դժուարութեամբ ծալելով վիրաւոր ոտքը, ու գրկախառնուեց նրանց հետ: Նրանք երեքն էին, երեք միայնակ մարդիկ՝ Մեծ չարիքին ընդառաջ:

Ապա Նազիմն արագ պատմեց եղածն ու ասաց.

– Ետ չեմ գնայ: Որդիս կարող է մօրն ու երկրորդ կնոջ հոգ տանել: Ես անելիքս արդէն որոշել եմ: Կփրկեմ նրանց, մուրացկանութիւն կանեմ Հալէպում կամ քարշ գալով կգնամ մինչեւ Մեքքա ու կմեռնեմ այնտեղ:

Բայց նախ եւ առաջ հարկաւոր էր ետ տանել սայլը, վերցնել կառքն ու Կատերինային: Տարօրինակ էր, բայց ոչ ոք չէր անհանգստանում Կատերինայի համար, որը մի քանի ժամ էր, ինչ մենակ էր: Նա ուրիշ աշխարհում էր ապրում ու անընդհատ երկխօսութեան մէջ էր հանգուցեալ որդու հետ. իրօք, վերադարձին նրան գտան կրկին միեւնոյն ծառին յենուած, միեւնոյն դիրքով նստած: Իսակը մօտեցաւ նրան, նրբօրէն հպեց ձեռքը կնոջ այտին, որպէսզի ցնցէր նրան, ինչպէս ընդհանրապէս անում էր զգուշօրէն: Բայց Կատերինան չարձագանքեց, ընկաւ մի կողմի վրայ: Սառն էր, մեռած էր...

Իսակը ոչինչ չասաց, իր տաք ձեռքով փակեց նրա աչքերը, պառկեցրեց գետնին, ձեռքերը խաչեց կրծքին: Ապա հանեց խաչը, որ թաքցրել էր գրպանում, ու անցկացրեց կնոջ պարանոցը: «Իմ խեղճ ու կրակ, սարսափած կին. քանի՞ տարի է, ինչ միասին էինք», – մտածում էր Իսակն ու գուշակում, որ լուսկեաց կինը ոչինչ չէր ասել, բայց հետեւել էր նրանց գաղտնաբար ու երբ տեսել էր մահամերձ հայերի թափօրը մահամերձ երեխաների հետ, մտածել էր, որ աշխարհն, իրօք, դաժան տեղ էր, ու այլեւս չէր ցանկացել մնալայնտեղ: Ուստի վերադառնալով կրկին նստել էր ծառի տակ, հրաժեշտի փոքրիկ, սրտաշարժ ժպիտ ուղարկել իր թանկագին Իսակին ու թոյլ տուել, որ սիրտը պատուէր, ու ինքը հասնէր Դիմիտրակիին՝ իր մեռած զաւակին:

Զգում էր Իսակը, թէ ինչպէս էր նրա փոքրիկ հոգին սա-

լառնում օդում ու հրածեշտ տալիս ամուսնուն. «Ինձ չես դաւաճանել, իմ թանկագին Կատերինա, մի վախեցիր, — ասաց Իսակը հանդիսաւորութեամբ, — քեզ վստահում եմ Սբ. Գէորգին, որ յաղթում է վիշապին, ու քեզ նա կողակցի մեր փոքրիկի մօտ Աստծոյ պարտէզի վարդերի միջով: Այնտեղ հաւատարմութեամբ ինձ սպասէք ու աղօթէք ինձ համար, թանկագիններս: Մի փոքր էլ պէտք է մնամ այստեղ իմ մեղքերի, իմ անմիտ կոպտութեան համար: Բայց եթէ դուք երկուսդ ինձ օգնէք, շուտով կփրկուեմ»:

Այժմ Իսակը նոյնպէս ոչ ոք չունէր, Իսմէնէն էլ թուշուհի պէս ազատ էր: Ուստի անմիջապէս ծրագիրը կազմուեց Իսմէնէի մտքում, իսկ Իսակը բարձրաձայն արտայայտեց այն.

— Կթաղենք Կատերինային ծառի տակ հէնց այս գիշեր, ու ես նրան կօրհնեմ, իսկ դու, Իսմէնէ, մի կարճ ողբ ասա. Կատերինան այդքանով կգոհանայ: Նա քչախօս էր: Կինս հիմա երջանիկ է: Ապա Նազիմի ընկերներին, որոնք մեզ օգնեցին, կվաճառենք կառքի մնացած ապրանքն ու կձեւացնենք, որ վերադարձի ճանապարհին մեզ վրայ յարձակուել են բաց դաշտի մէջ: Նազիմի հաւատարիմ ընկերները ետ կտանեն կառքը, շուռ կտան այն, ձիերն էլ կգողանան: Մենք երեքս կանհետանանք: Կվարձենք երկու էջ ու կամաց-կամաց կշարժուենք դէպի Հալէպ որպէս յոյն ծեր ամուսիններ ու մի մուրացկան. պատահական ընկերներ, որոնք ուղեւորում են դէպի մեծ քաղաքը: Կկիսենք փոքրիկ գանձը, որ դեռուս քեզ մօտ է, որպէսզի եթէ մեզանից որեւէ մէկին բռնեն, միւսները կարողանան ճամփան շարունակել:

Իսմէնէն խոժոռուեց, բայց գիտէր, որ գաղափարը ճիշտ էր: Բացի դրանից, Շուշանիկից վերցրել էր նաեւ համարեա այն ամէնը, ինչ կինն ունէր գրպանում, որպէսզի կարողանար պաշտպանել ու հսկել դրսից: Յարզը կրկին բացուեց, արկղը դատարկուեց, պարունակութիւնն էլ շարուեց գետնին՝ Նազիմի հսկողութեան տակ: Ապա դատարկուած սայլը դանդաղ հեռացաւ իր անխռով վարողի հետ, որ կայծեր էր

թողնում ծխամորճից: Իսմէնէն, կռացած Կատերինայի համար արագ փորուած գերեզմանի վրայ, ջերմ բառեր փսփսաց, օրօրոցային երգեց: Մօտակայ աղբիւրի ջուրը հանդարտ քջքչում էր՝ հոսելով խոտերի միջով. Իսմէնէն մոռացաւ Կարմիր խաչի բուժքրոջ հետ ունեցած պայմանաւորուածութիւնը: Շատ տարիներ անց նրանք կհանդիպէին Զմիւռնիայում, որտեղ բազում ճակատագրեր էին խաչում: Բայց դա մի ուրիշ պատմութիւն է:

Նազիմն ու Իսակը գործի անցան: Բայց արդէն Նազիմն էր հրամայում, ու Իսակը, որ հագուստների հետ դէն էր նետել քահանայական արժանապատուութիւնը, արեց վերջին զոհաբերութիւնը. վազեց Իսմէնէի մօտ ու կտրել տուեց մազերի մատնիչ պոչիկը: Այդ կերպ, հանդէս գալով որպէս մուրացիկի նուաստ օգնական, կարող էր առաւել օգտակար լինել:

Այսպէս անցաւ գիշերը: Ինչ-որ ստուերներ էին շուրջը լորը վիտում: Շշնջոցների ու փսփսուքների մէջ Մուրացկանների Եղբայրակցութիւնը զբաղւում էր ամէն ինչով: Մի ճարպիկ, բարձրահասակ մուրացկան ձեռքն առաւ սանձերը, կառքի մէջ անկանոն նետեց Իսակի հագուստներն, ու մթան մէջ կառքն անձայն շարժուեց առաջ:

Նազիմը երկու աղօտ լապտերներով լուսաւորուած գիշերուայ մէջ մտացածին աճուրդի էր հանել այն ամէնը, ինչը հնարաւոր չէր բառնալ երկու էջերի վրայ, որոնք արդէն եկել էին ու համբերութեամբ սպասում էին մեծ չինարի մօտ:

Կաթի փոշու տուփերը, երշիկը, ծածկոցներն ու խնձորի չրի տոպրակներն արագ ձեռքից ձեռք էին անցնում: Բաժնեմաս էր նախատեսուած թուրք պահակների համար, որոնք օրուայ ընթացքում տեսել էին չինարի տակ կանգ առած մաքսանենգների՝ յարդի առասպելական սայլը ու գիտէին, որ մինչեւ միւս առաւօտ պէտք է հեռու մնային: Իր լայն գօտու տակ Նազիմն առանց հաշուելու, միայն թեթեւակի շօշափելով դասաւորեց վերցրած դրամները: Նրա մատների թմբիկներն այնքան զգայուն էին, որքան դաշնակահարինը.

եւ նոյնքան օգտագործուած: Եւ բացի դրանից, ոչ ոք նրան այստեղ չէր խաբէի: Նրա ընկերները չվիճարկեցին Նազիմի ընտրութիւնը եւ յետոյ մի տեսակ անորոշ խղճահարութիւն էին գգուած հայերի հանդէպ, որոնք այսօր իրենցից աւելի թշուառ վիճակում էին ու հետապնդուած անաստուած նոր կառավարութեան կողմից: Հասկանում էին մուրացիկները, որ այս անաստուած աշխարհում նրանց արհեստը եւս գնալով դժուարանում էր, իսկ ողորմութիւնը՝ սակաւանում: Եւ բացի դրանից պատերազմ էր. միթէ՞ աւելի լաւ չէր դիմակայել արտաքին թշնամիներին, քան թէ ներսում թշնամի վաստակել: Արեւելքում առեւտրականների ու մուրացիկների դարաւոր իմաստութիւնը միշտ ուղեկցուել էր կէս ճանապարհին գիջման գնալու դժուարին կարողութեամբ:

Ամէնուր ծաղկուն, լաւ կազմակերպուած իւրաքանչիւր հասարակարգի հիւսուածքի հակառակ երեսը կազմող Աւագակախմբի Հրաշքների Արքունիքում, թէպէտ վայր ի վերոյ, ամէն ինչ իր տրամաբանութիւնն ունի. այստեղ առաջնային են ընչաքաղցութիւնը, վայրագութիւնը, խորամանկութիւնը, սովից փախուստը, բայց ո՛չ մոլեռանդութիւնը: Ինչու՞ վերացնել հայերին, եթէ նրանք հարուստ էին ու շօշափելի ողորմութիւն էին բաշխում (ինչպէս ցանկացած կրօնական հասարակութեան, այնպէս էլ Օսմանեան կայսրութեան մէջ ողորմութիւնը երաշխաւորում էր հարստութիւնն ու այն արդարացնում...)

– Ոչխարին խուզում են եւ ոչ թէ սպանում, – մրթմրթում էին իրար մէջ մուրացկան եղբայրները, որոնց հայերի ունեցուածքի վայրագ ասպատակութիւնից միայն փշուրներ էր հասել, եւ այլեւս չէին ստանում մշտական առատ ողորմութիւնը եկեղեցիների ու տների առջեւ, ինչպէս նաեւ քրիստոնէական մեծ տօների ժամանակ:

Նրանցից ոչ ոք չէր մատնի Նազիմին. եւ բացի դրանից յաջողակ գիշեր էր: Պարագլուխը՝ Հասան Մուստաֆան, միայն վերջում առաջ եկաւ: Յաղթանդամ մարդ էր. վրայի

երփներանգ ցնցոտիները, ի վկայութիւն իր մասնագիտութեան, կրում էր բնածին արժանապատուութեամբ:

– Նազիմ, ուշադիր եղիր քո եւ ընկերներիդ նկատմամբ, եւ թող Ալլահը ձեզ պահապան լինի: Վերցրէք այս անասուններին, – ու նրանց յանձնեց մի փայտ ու մի պարան, որին կապուած ցատկոտում էին երկու գիրուկ այծեր:

– Այսպէս աւելի լաւ է, յետոյ էլ կաթ կունենաք:

Երեւաց այգաբացի առաջին շողը: Նազիմը բարձրացաւ մի էշի վրայ, Իսմէնէն՝ միւսի ու քողարկեց դէմքը: Իսակը ձեռքն առաւ փայտն ու պարանը ու գնաց նրանց ետեւից՝ երկու այծերի հետ:

Այսպիսով, բացուող լոյսի հետ այդ փոքրիկ խումբը շարժուեց դէպի հարաւ՝ հայերի թափօրից փոքր-ինչ առաջ անցնելով, առանց ծրագրեր կազմելու, խռովեալ սրտերով, բայց եւ խաղաղուած հոգիներով:

Յունիսեան այդ տաք օրերին Երուսանդը վերջապէս նամակ ստացաւ Ջարեհից՝ Հալէպից: Տարօրինակ էր, որ նամակը Ֆրանսերէնով էր շարադրուած: Ջարեհը գրում էր, որ պատերազմը յաջող էր ընթանում Կայսրութեան համար, բայց լաւ օրերն արդէն վերջացել էին, հիւպատոսարանները փակուած էին, թէյրմպումներով ու բրիջով ուղեկցուող երկար յետմիջօրէնները դարձել էին հագուադէպ: Նորութիւններ էր ուզում իմանալ, խօսում էր ծանօթ բամբասանքների շուրջ: Ապա նամակում երեք տող ջնջուած էր, միայն մի «Ա» տառ էր թափանցում: Միգուցէ, մտածում էր Երուսանդը, Սմբատի անուան առաջին տառն էր: Նամակի վերջում ողջոյններն աւելի պատահական էին թւում, քան սիրալիր. «Մի-րելի եղբայրս, յուսով եմ՝ շուտով քեզանից լուր կունենամ, կամ կտեսնուենք, որովհետեւ ուզում եմ, որ ինձ տեղեակ պահես ականջի վիրաբուժութեան վերջին նուաճումների մասին: Իմ հիւանդներին դրանք կարող են օգտակար լինել»:

Երուսանդը նայում էր նամակին ու տենդագին փորձում

կռահել, թէ ինչ էր գրուած եղել ջնջուած տողերի տակ՝ պահելով այն լամպի ուժեղ լոյսի տակ: Ապա քերեց, ճմռթեց, մինչեւ որ անցք բացեց թղթի վրայ: Բայց ոչինչ չկարողացաւ հասկանալ:

Այդ երբուանի՞ց էր Զարեհը վերաբոյժ դարձել: Նա թերապետ էր, առաւելագոյնը՝ թարախոտ ուռեցք կարող էր հատել: Ի՞նչ իմաստ ունէր նամակի այդ տարօրինակ վերջաբանը: Իսկ ինչու՞ էր գրուած Փրանսերէնով: Ի՞նչ էր ցանկանում իրականում ասել Զարեհը: Նամակի թուացեալ թեթեւութիւնն ու խօսակցական երանգը իրենը չէին. ականջ էին ծակում, կեղծ հնչում, ինչ-որ տագնապալից մի բան կար իւրաքանչիւր տողի արանքում:

Երուանդը հասկանում էր, որ նամակը, թէպէտ քողարկուած, բայց ինչ-որ լուր էր հաղորդում, ու իր աշխատասենեակում փակուած՝ խելացնոր կերպով ընթերցում էր ու վերընթերցում եղբօր գրած մի քանի տողը: Արդեօք ստացե՞լ էր իր հեռագիրը: Ինչու՞ այդ մասին չէր յիշատակում: Իսկ ու՞ր էր Սմբատը, իսկ նրա ուրախ Շուշանիկը՞, գաւակները՞, իսկ քոյրերը՞, զարմիկները՞:

Մի քանի օր էր, ինչ Երուանդը, հազիւ քուն մտած, լսում էր ուղեղի մէջ դղրդացող քայլեր. միշտ նոյն քայլերը, միշտ նոյն, անվերջանալի քայլերը: Հէնց աչքերը բացում էր, քայլերը դադարում էին, կանգ էին առնում: Դեղ ընդունեց, հին կոնեակ ըմպեց, որոշեց գնալ տեսակցելու մի հիւրընկալ կնոջ, որն իր համար միշտ ժամանակ ունէր, սիրտն ու մարմինն էլ՝ միշտ պատրաստ. բայց անօգուտ:

Այդ օրը մոլեգնօրէն մի որոշում ընդունեց: Արագ վերցրեց նամակն ու զանգը հնչեցրեց: Յայտնուեց սպասուհին, որը նրան մատուցեց սպիտակ վուշից կարած բաճկոնը, տուեց ձեռնափայտն ու գլխարկը:

— Պրոֆէսոր, կվերադնառնա՞ք ընթրիքին, — հարցրեց հնազանդօրէն: Քաջ գիտէր, որ ստոյգ պատասխան չէր ստանալու, բայց թերեզայի կամքն էր, որ հարցնէր:

— Չգիտեմ: Ասէ՛ք կոմսուհուն, որ ինձ չսպասի, — պատասխանեց կոպտօրէն, ինչպէս շատ անգամներ, եւ արագ դուրս եկաւ տնից:

Երուանդը որոշել էր վերադառնալ ընկերուհու մօտ, որը միակն էր, որ կարողացել էր կարգալ իր ներսը, տեսել էր նրան խռովեալ ու յուզուած: Ինչ-որ բան էր ակնարկել: Մարիա Ճերրոնատոն խելացի այրի էր, որը լրացնում էր իր սակաւ եկամուտը մի քանի լաւ ընտրուած յաճախորդներով եւ շատ լաւ ունկնդիր էր: Այս անգամ Երուանդը նրան տեղեակ չէր պահել ոչնչի մասին, բայց կիսն անմիջապէս հասկացաւ ու միանգամից ընդունեց նրան: Նա փափկանկատ կերպով ուղարկեց խոհարար էսթերին՝ մէկ այլ ժամադրութիւն չեղեալ անելու, ու գունաւոր մարգարիտներով լամպի ներքոյ, կիսն ու պրոֆէսորը գլուխ գլխի տուած սկսեցին ընթերցել նամակը:

— Չեմ հասկանում, ոչինչ չեմ հասկանում, — պայթեց Երուանդը, ու յանկարծ դառն արցունքներ առատօրէն հոսեցին այտերից ցած: — Ի՞նչ պէտք է անեմ:

Երեխայի պէս կառչեց այրուց: Նրան երբեք ոչ ոք չէր տեսել այդպիսին՝ վախեցած, անպաշտպան իր տագնապի մէջ, որ սերնդէսերունդ փոխանցուած՝ գալիս էր հեռաւոր վախից, ընաջնջումից, մարդաորսից:

Նրա ճերմակ պաշտօնական բաճկոնը թրջուեց արցունքներից: Այդ ժամ Մարիան բռնեց Երուանդի ձեռքերը, մօտեցրեց նրան իր կրծքին ու օրօրեց մարգարիտներով լուսամփոփի մեղմ լոյսի ներքոյ: Մինչ այդ վերցրեց նամակը նրա ձեռքից, ուշադրութեամբ հարթեցրեց ու ընթերցեց Զարեհի սահուն Ֆրանսերէնը:

Նրան թուաց, թէ ընկղմուած էր վէպի ընթերցանութեան մէջ. պէտք է, որ այն գաղտնի իմաստ պարունակէր: Բրի՞ջն էր դա. ոչ-ոչ, իսկ հիւպատոսարանը՞ այո. ահա ստացուեց: Իսկ վերջին մասն էլ յուշում էր միջոց:

Մարիան իրեն առիւծ զգաց ու աւելի խելացի:

– Եթէ մենք՝ վեներոլոգներս, չլինէինք, այս արեւելցիները ոչինչ չէին հասկանայ. – շնջաց վեներոլոգի բարբառով վստահելի խոհարարուհուն, որը մինչ այդ վերադարձել էր ու խոհանոցից գլուխը դուրս հանել, ու պատուիրեց երկու գաւաթ թունդ սուրճ ու նարնջի օշարակով մի մեծ բաժակ ջուր բերել, ինչպէս դուր էր գալիս պրոֆէսորին:

– Հիմա քեզ կբացատրեմ, – ասաց այրին սուրճն ըմպելուց յետոյ, – կարծես թէ հասկացայ: Հիւպատոսարանի յիշատակութիւնը շատ կարեւոր է. եղբայրդ Ֆրանսական հիւպատոսարանի բժիշկն է, այնպէս չէ՞: Ուստի նա քեզ առաջարկում է գրել այնտեղ եւ ոչ թէ իր տան հասցէով, եւ, հաւանաբար, կարծում եմ, որ պէտք է դիւանագիտական փոստով նամակն ուղարկես. դեսպան չե՞ս ճանաչում:

Երուանդը կարծես շփոթուեց, բայց թեթեւացած շունչ քաշեց: Ինչ-որ բան անել. հէնց դա էր նրա ուզածը:

– Եւ յետոյ, – շարունակեց Մարիան, – կարծում եմ, որ նա քեզ յուշում է գաղտնի գրել: Ինչ-որ բան ուղարկիր նրան, որ կասկած չյարուցի. օրինակ մի բժշկական գիրք, որի մի քանի էջը կարելի է փոխել: Հնարաւոր է անել տպարանում կամ էլ նոր տպագրական մեքենաներով:

Երուանդը, որ միշտ ժամանակի առջեւից էր քայլում եւ սիրում էր ամէն ինչի նորն ու առաջադիմականը, իրօք, ունէր տպագրական մեքենայ՝ Անգլիայից բերուած մի հրաշալի Ռեմինգթոն: Եւ նրա համար ոչինչ էր վերցնել Revue de Otorhinolaryngologie ամսագրի վերջին համարը, միջից հանել երկու թերթ, փոխարինել դրանք պատշաճ տառերով գրուած Ֆրանսերէն նամակով:

Երկու օրուայ մէջ արագ-արագ ձեւափոխուած ամսագիրն արդէն պատրաստ էր, լի յուզախուով ու նեարդային հարցերով (բայց իրականում Երուանդն արդէն գիտէր շատ պատասխաններ...):

Անուշիկ Մարիան ստացաւ հրաշալի գարդենիաների մի փունջ (Երուանդի նախասիրած ծաղիկներն էին), իսկ ծաղիկ-

ների մէջ աչքի էր զարնում ոսկեգօծ մի տուփիկ՝ մէջը արծնապատուած նրբագեղ մի մեղալիտն՝ վրան փորագրուած ալպիական բնապատկերով: Երուանդը գիտէր, որ կինը սիրում էր Շուեյցարիան եւ մի անգամ իր հետ տարել էր նրան Ցիւրիխ:

Բեռլինում նախկին դեսպան կոմս Ջուստո դելլի Ադիմարին, որի որդուն փրկել էր Երուանդը յաջող վիրահատութեամբ, չնայած նրան արդէն մահացած էին համարել ականջի պտկածել ելունի բորբոքման պատճառով, ճնշող հեռախօսազանգ ստացաւ ու շտապեց օգնել իր ականաւոր ընկերոջը. ամսագիրը Հալէպ կուղարկուէր մի քանի օրուայ մէջ:

Կոմսն էլ իր հերթին վիրաբոյժ ընկերոջը հաճոյանալու համար զգուշութեամբ հետաքրքրուեց թուրքիայում կատարուող անցուդարձի մասին դրսից: Եւ այն, ինչ իմացաւ, նրան սահմուկեցրեց: Տրապիզոնից հիւպատոս Գորինին ուղարկում էր նամակ նամակի ետեւից նախարարութիւն ու միջամտելու անկարող ականատեսի տագնապով պատմում եղելութեան սարսափելի դրուագներ: Իր անձեռնմխելիութիւնը եւս վտանգի տակ էր. այդուհանդերձ, մի քանի հայ երեխայ էր պատսպարել հիւպատոսարանում:

«Տրապիզոնի բոլոր հայ տղամարդկանց, – գրում էր Գորինին, – վերացրել են՝ խեղդելով սեւ ծովում»: Նա տեսել էր, թէ ինչպէս էին շղթայուած մարդկանցով լի նաւակները մղուել հեռու, իսկ յետոյ խորասուզուել ոստիկանների կողմից, որոնք ափից կրակահերթ էին արձակել նրանց վրայ: Տեսել էր աքսորեալների թշուառ թափօրը, կանանց, ծերերին ու երեխաներին, որոնք անցել էին Իտալիայի հիւպատոսութեան փակ, լաւ պաշտպանուած պատուհանների տակով ու գթութիւն հայցել: Իսկ գիշերը, իր սեփական նախաձեռնութեամբ, Ջակոմո Գորինին քաղաքից դուրս էր շտապել՝ հակառակ պարէտային ժամին, ու փորձել օգնութիւն հասցնել:

Այն ամէնը, ինչ կարողացել էր անել, յուսահատ մայրե-

րից մի քանի երեխայի խնամակալութիւնը ստանձնելն էր: Բայց յետագայ օրերին հիւպատոսարանը խուզարկուել էր, ու երեխաներին էլ տարել էին, բացի երկու փոքրիկից, որոնց իր կիսնն ամուր պահել էր գրկում՝ յայտարարելով, որ իր գաւակներն էին:

Խուզարկութիւնը դեկավարող սպան աչք էր փակել ու գնացել: «Բազում հազարաւորների դիմաց ի՞նչ են երկուսը, — հաւանաբար մտածել էր սպան, — եւ յետոյ, ի վերջոյ, իտալացի կմեծանան եւ ոչ թէ հայ. ամէն դէպքում, նպատակին հասել ենք»:

Ջուստո դելլի Ադիմարին արագ գործի անցաւ: Հեռագրերով ումբակոծեց նախարարութիւնն ու շուտով ի վիճակի եղաւ Երուանդին առաւել ստոյգ, թէեւ սահմուկեցուցիչ տեղեկութիւններ հաղորդել: Նրբօրէն նրան մի գրութիւն ուղարկեց ու ժամադրեց Պեդրոկկի սրճարանի սրահներից մէկում: Ապա, առնելով նրա ձեռքերն իր ձեռքերի մէջ, սկսեց խօսել:

«Ողջ հայկական Անատոլիայից կառախմբեր են շարժուել. բոլոր բնակավայրերից, քաղաքներից ու գիւղերից հայերի անվերջանալի խմբեր են շարժուում դէպի հարաւ՝ Տաւրոսի դժուարանցանելի լեռնաշղթայի միջով:

Սիրիական Հալէպ քաղաքը պաշարուած է: Օտարերկրեայ հիւպատոսները չարագուշակ շշուկներով անհրաժեշտ հրահանգներ են հայցում իրենց նախարարութիւններից, ու ոչ ոք չգիտէ ինչպէս վարուել:

Հարաւի զօրքը տեղաւորուած է հէնց Հալէպում՝ պատրաստ Ձեմալ փաշայի հրամաններին, որի մտադրութիւնները ոչ ոք չի կարողանում մինչեւ վերջ հասկանալ: Յայտնի է նրա մրցակցութիւնը եռապետութեան երկու անբաժանելի կոստանդնուպոլսեցիներ էնվէրի ու Թալէաթի հետ, սակայն հայկական հարցի վերաբերեալ նա յստակօրէն չի արտայայտուել, միգուցէ միտումնաւոր, որպէսզի շարժուելու լուսանցք թողնի արաբական մի քաղաքում, որն իր հերթին

եւ է գալիս թուրքական գրաւման տակ, ու որտեղ ապրում են շատ քրիստոնեաներ:

Փոքրիկ քաղաքը տեղահանութիւնների խաչմերուկներից մէկն է: Բնականաբար, ընտանիքից ոչինչ յայտնի չէ, բայց քաղաքը դատարկուել է իր հայ բնակչութիւնից: Հալէպում իտալիայի հիւպատոսից շտապ կիսնդրուի ուշադիր լինել»:

Երուանդը քարացած լսում էր: Սարը քրտինքը նրա պարանոցից հոսեց մէջքն ի վար, իսկ քիչ անց նա ամբողջովին կորեց քրտինքի մէջ. կարծես ամբողջ մարմինը ողբում էր եղբօր համար, որին, վստահ էր, այլեւս երբեք չէր տեսնելու:

Այսպիսով, երեք ճանապարհներ, երեք առանձին ուղիներ սկսեցին միահիւսուել: Շուշանիկի ու Իսմէնէի ճանապարհը զուգահեռ էր ընթանում. մահուան ճանապարհը հատոււմ էր կեանքի ճանապարհի հետ, բայց արդիւնքն անորոշ էր: Շատ փախուստներ էին հնարաւոր, շատ առեղծուածներ էին մթագնում տեսիլքը:

Երրորդ ճանապարհը՝ Երուանդինը, կղզիացած էր ու մենաւոր: Նա, որ անհամբեր մարդ էր, արագաշարժ վիրաբոյժ, պէտք է ետ վարժուէր արեւելեան սպասումին, ստացուող նորութիւններից կախուած լինելուն, բայց ստիպուած էր ոչինչ չանել: Այլընտրանք չկար, միայն սպասել ու տեսնել, թէ ինչպէս էր կամաց-կամաց մեռնում հպարտութիւնը: Եթէ վերադառնար, կլինէր անճարակ, անիծուած, ինչպէս միւսները... Վիրաւորուած պատերազմը գովաբանողների դատարկ ինքնավստահութիւնից՝ այդ մահաբեր ամուսնը Երուանդը խորապէս զգաց իր ներքին տարբերութիւնն ու դադարեց ինքն իրեն յարգելուց:

Շուշանիկը, երեխաներն ու աղջիկները շարունակում էին տառապանքի ուղին: Տաւրոսի լեռնաշղթան ահարկու կերպով նրանց դէմ էր խոյանում: Կոնիայի ժողովրդի ու Իսմէնէի՝ հրաչքով հասցրած մխիթարութիւնը, օգնութիւնը՝ խնամքով օգտագործուած մինչեւ վերջին փշուրը, փոքր-ինչ

պահում էր նրանց. բայց առաւելապէս գորանում էր վերածնունդ թոյլ յոյսը, որ պէտք էր հաստատ հասնել Հալէպ:

— Այնտեղ մեր հրեշտակները մեզ են սպասում, այնտեղ մի կուշտ կուտենք,— շնջում էր Շուշանիկը երեխաներին. իսկ Նուբարը հանդիսաւորութեամբ դնում էր բթամատը բերանն ու լրջութեամբ լսում: «Ուտեի չեմ ուզում»,— ասում էր նա միշտ ու երբեք ոչինչ չէր հարցնում, չէր բողոքում:

Տաւրոսի լեռաշղթայի առաջին ճիւղաւորումների ստորոտի դաշտավայրում, միախառնուեցին ուժասպառ քարաւանների մնացորդները: Քանի՛-քանիների ոսկորներն արդէն ճերմակին էին տալիս արահետներում, քանի՛ ուռած դիակներ էր տեղափոխում Եփրատը:

Որքա՛ն երեխաներ, որքա՛ն աղջնակներ էին անհետ կորել ճանապարհին... Փոքրիկ քաղաքի վերապրեալների խումբը անուժ պատսպարուեց չոր ծառերի տակ, իսկ մի բազէ բարձր սաւառնում էր ջինջ երկնքում: Գուցէ յուլիս ամիսն էր, ո՞վ գիտէ: Ոչ ոք այլեւս օրերի հաշիւը չէր անում:

Ու՞ր էին Կիլիկիայի բերդերը, ու՞ր էր Լուսինեանների խաչակիր թագաւորութիւնը: Մշուշի, կուրացնող տապի մէջ այդ հպարտ ժողովրդի թշուառ մնացորդների մտապատկերներում թափառում էին Բագրատունեաց տոհմի անյաղթ նետաձիգների ուրուականները՝ ոսկեվառ դրօշը քամուն պարզած:

Մահուան մեղմ զեփիւռը շոյում էր տառապեալների քրտնած այտերը, այրուած երեսները՝ բերելով զովութիւն, լքուած անշարժութիւն եւ սփոփանք. իսկ Շուշանիկը տեսնում էր պատերազմող գեղեցիկ, գօրեղ հրեշտակներ, որոնք, ձին հեծած, գալիս էին իրեն տանելու Սմբատի հետ, որն այնքա՛ն գեղեցիկ էր, երբ գնում էր իր լազ ընկերոջ հետ որսի:

Բայց մի ամուր ձեռք նրան ցնցեց՝ կանխելով նրա վերացումն այս աշխարհից: Նազիմն էր, որ չէր լքում իր Վալիդէ Հանըմին, ինչպէս խոստացել էր: Թշուառներից թշուառը սո-

ղոսկել էր յուսահատների հաւաքատեղին արեւածագին եւ այժմ կերակրում էր Շուշանիկին, նրան խմեցնում այժի տաք կաթ, վիրակապում արիւնոտ ոտքերը: Ապա բարեգթութեան օրհնաբանութիւններ շնջալով՝ օրօրում ձեռքերի մէջ առած կնոջ գլուխը:

Կաշառուած զապտիէն ձեւացնում էր, թէ ուրիշ կողմ էր նայում, մինչդեռ երեխաները կերակրում էին քիչու՛միչ եւ խիստ գաղտնի, որպէսզի ոչ ոք գլխի շընկնէր: Յուսահատների մէջ կատարած դաժան գատողութիւն... Բայց, ամէն դէպքում, ապագան ոչնչութիւնն էր, վաղ թէ ուշ այս բոլորն էլ պէտք է մահանային՝ լինէր այստեղ թէ Այնթաքում, Հալէպում թէ Դէր-Չօրում, որի մասին շուկներ կային, որ դա էր վերջնակէտը. ի՞նչ կարեւոր էր: «Նոյնիսկ անգթութիւն է,— խորհում էր զապտիէն,— երկարացնել նրանց կեանքը»: Գայթակղութիւն ունեցաւ մատնելու այդ անճոռնի, կաղ մուրացկանին, որն ահա վերադարձել էր՝ օգնելու այդ կնոջն ու նրա ընտանիքին: Բայց Նազիմը եկաւ ու կեղծաւորութեամբ նրան նշմարելի դարձրեց եւս մէկ ոսկեղրամ՝ ատամների միջից շչալով. «Սա եւ եւս տասը կունենաս, եթէ հասնեն Հալէպ», եւ զինուորը հնազանդուեց:

Նազիմը գիտէր, որ Շուշանիկը Տաւրոսի դժուար շեռնաշղթան անցնելու ժամանակ կրկին միայնակ պէտք է լինէր: Ինքը կաղ էր, իսկ Իսմէնէին ու Իսակին մէջտեղ հանելն էլ վտանգաւոր: Եւ այսպէս, եռեակը կառաջանար ամենակարճ ճանապարհով, բայց ոչ առանց խնդիրների. լուսնեակ գիշերին Իսմէնէն փորձել էր գայթակղել Իսակին ու մերժուել էր: Ոչ կտրականապէս, բայց մերժուել էր: Այս եղելութիւնը տհաճ մթնոլորտ էր առաջացրել: «Անկարող քահանայ»,— փսփսաց Իսմէնէն, բայց Նազիմին փորձելն անգամ մտքով չէր անցնում: Ամէն դէպքում երեքն էլ կապուած էին իրար. առաջին անգամ հերոսները գլխաւոր դերակատարներն էին մի սարսափելի պատմութեան: Արկածախնդրութեան ոգին պատել էր խմբակին, որը բաւական կասկածների առիթ էր տալիս,

եւ նոյնիսկ բանտարկութեան փտանգի առաջ կանգնեց արաբական մի գիւղում փոքր-ինչ անյարմար նկատուած նրանց երգերի պատճառով, որ արթնացրին ողջ համայնքը: Ստիպուած եղան հեւիհեւ փախչելու, բայց իրականում ոչ ոք նրանց չհետապնդեց. փորձանքով լի ժամանակներ էին:

Մեծ թուով չթաղուած դիակները համաճարակի բոյն էին, իսկ պատերազմն էլ անյաջող էր ընթանում: «Հայերի վրէժն է», – ինքնիրեն խոստովանում էր Ջեմալը, որը բնաւորել էր Հալէպում ու կատաղած էր, քանի որ էնվէրի ու Թալէաթի մեծ ծրագիրն իր վրայ էր թափում աքսորեալների յորձանքը, կմախքացած ամբոխը, որ քարշ էր տրուում դէպի քաղաք ու շրջապատում այն ամէն կողմից:

Հալէպի հայերը, իրենց գեղեցիկ տներում փակուած, մտահոգ էին ու շշնջալով էին խօսում: Բոլոր օտարականները՝ եւրոպական հիւպատոսները, քարոզիչները, Բարոն հիւրանոցի բոլոր բնակիչները նոյնպէս շշնջում էին: Ջեմալն ինքն էլ էր իրեն պաշարուած զգում. լեարդն էր ցաւում, ու արթնանում էր՝ ստամոքսում ծանրութեան զգացումով ու լեզուն քիմքին կպած:

*** Հիւանդանոցի կոկիկ հազնուած հիւանդապահուհիները հայեր էին թաքցնում: Դիւանագիտական նստավայրերը հայեր էին թաքցնում: Անապատի բեղուիկները գնում էին կին ընտրելու աքսորեալ հայուհիների միջից («Բաւ է լուանաս, կերակրես, նրանք արդէն քոնն են»), մի բան, որ նոյնիսկ իրենց ամենայանդուզն երազներում անգամ չէին կարող երեւակայել: Անառակատան տէրերը եւս գնում էին ընտրելու, եւ մայրերն իրենք էին յանձնում իրենց աղջիկներին, որոնք, միեւնոյնն է, արդէն կոյս չէին: Սուքի¹⁶ մէջ՝ Միջնաբերդի ստուերի ներքոյ, ամենաբազմազան գործարքներ էին եռում:

Նազիմը, Իսմէնէն ու Իսակը քաղաք հասան երեկոյեան

մօտ ու սկսեցին գիշերելու տեղ փնտրել իրենց եւ անասունների համար: Գտան բաւականին յարմարաւէտ մի ախոռ: Հարկաւոր էր խոսափել աչքի ընկնելուց, յատկապէս յոյներից, որոնք շատախօս էին ու խռովուած, իրենք իրենցից վախեցած ու երկակի խաղի միտուած. միւս կողմից՝ բոլոր խաչմերուկներում հրամանագիր էր փակցուած՝ մատնելու քաղաքի այն հայերին, որոնք կփորձէին փրկել աքսորեալներին:

Նազիմն անմիջապէս կապի մէջ մտաւ իր Եղբայրակցութեան հետ: Պարզուեց, որ մեծ խմորում էր տեղի ունենում, ու բոլորի սրտում ահ կար: Պատերազմ էր՝ ոչ այնքան հեռու խնդիր, հայերը կային՝ մօտ խնդիր: Քաղաքը ճնշման տակ էր: Պարսիպներից դուրս տեղաւորուած աքսորեալների առողջական վիճակը սարսափելի էր: Ըստ էութեան, ոչ ոք չէր կարող ներս ու դուրս անել. մինչդեռ գործնականում ինչ-որ մէկը կարող էր ինչ-որ բան անել, եթէ Հարկաւոր էր:

– Ասում են՝ ժանտախտ ու տիֆ է տարածուած, բայց... – շշնջաց Նազիմին մուրացկանների առաջնորդը, – մի քանի օրուայ ընթացքում ամէն ինչ կկարգաւորուի: Հայերին բռնի ուժով կտեղափոխեն ու կուղարկեն երկաթգծի երկայնքով, անապատի միջով մինչեւ Դէր-զօր կամ Ռաս-ուլ-այն, որտեղից ետդարձ չկայ: Իսկ դու, թուրք, ի՞նչ ես անում այս կողմերում: Ինչու՞ ես այդքան շատ հարցեր տալիս, – հարցրեց նրան առանց համակրանքի՝ կարծես զղջալով իր տուած տեղեկութիւնների համար: – Դեռ էլի՞ հայ ունես կողոպտելու:

– Ես երդմանս համաձայն եմ այստեղ, – պատասխանեց Նազիմը հանդիսաւորութեամբ, – իսկ հայերն ինձ բոլորովին չեն հետաքրքրում: Բայց չպէտք է բոլորին սպանէին:

– Մեզ համար ահաւոր է, – համաձայնեց միւսն ու հառաչեց: – Թէեւ դեռ կարողանում ենք շահաբեր գործեր անել: Հայերին այստեղից պէտք է անմիջապէս տեղահան անեն, բայց ես չեմ կարծում, – քմծիծաղեց նա բեղերի տակից, – ճակատը հեռու չէ, իսկ արաբները...

Ապա նայեց Նազիմին ու լռեց: Ճիշտ է, Եղբայրակցու-

¹⁶ Սուք – արաբական շուկայ (ծնթ. թարգմ.):

Թիւնը եղբայրակցութիւն է, բայց թուրքը թուրք է, արաբը՝ արաբ:

Նազիմը շատ լաւ էր հասկանում դիմացինի վերապահութիւնն ու իր հերթին լուում: Ապա խօսքի անտարբեր երանգով հարցրեց.

– Արդեօք դեռեւս Հալէպում է բնակուում Ձարեհ Արսլանեան անունով մի բժիշկ: Նրա հարազատներն իմ համաերկրացիներն են: Եթէ նրան թարմ նորութիւններ հաղորդեմ, վստահ եմ, ինձ լաւ կ'վճարի:

– Կհետաքրքրուեմ, – չոր պատասխանեց արաբը, – բայց մահուան լուրերն ընդհանրապէս եկամուտ չեն բերում, – աւելացրեց նա գործնական կերպով:

– Ինչ-որ հիւպատոսարանում է աշխատում, – աւելացրեց Նազիմը. եւ, իրօք, իր իմացածն այսքանն էր:

Ապա արագ հեռացաւ: Վախենում էր, որ Իսմէնէն ու Իսակը միայնակ չկարողանային գործել: Վախենում էր, որ Շուշանիկն արդէն հասած լինէր կամ ընդհանրապէս հասած չլինէր, այլ մահամերձ ընկած լինէր ճանապարհին՝ ինչ-որ մի տեղ: Վախենում էր, որ մուրացկանի իր թշուառ խորամանկութիւններն այս անգամ ի գորու չլինէին դիմակայելու, ու ինքնիրեն զգում էր մերկացած, մեղաւոր՝ Ամենակարողի առջեւ: Լաւ կլինէր թաքնուել ինչ-որ տեղ, թաքնուել, անհետանալ... Բայց ո՛չ ետ դառնալ, երբե՛ք:

Այդ պահին հացի սուր բոյր զգաց անկիւնադարձի նեղ փողոցից: Հետեւեց հոտին ու հեռուում նշմարեց Միջնաբերդի պարիսպները. ճանապարհի կէսին մի տկար լոյս ցոյց էր տալիս հացագործի խանութը:

Հէնց այդ պահին բացուեց դուռը, թեթեւակիօրէն հնչեց զանգակն, ու ելքին յայտնուեց Ջելալը, այն լեյտենանտը, Ազնիւի սիրահարը, իր դաւաճանութեան պտուղը, որ խորժակով հաց էր վայելում: Եւ Նազիմը հասկացաւ, որ դա նշան էր: Աստուած պատասխան էր տուել նրան:

Շեղակի, բայց արագ մօտենալով՝ ճանաչելու մի դրուագ

խաղաց ուրախ գարմանքով, օգնութեան աղերսով, րնդհանուր յիշողութիւններով: Լող էր տալիս իր արհեստի մէջ, ինչպէս Դրախտի թռչունն ոսկեայ քարանդրների թռչնարանում՝ հիւսելով օդում խաբկանքի ու պատրանքի մի նուրբ ցանց:

Ջելալը՝ Աստոյ աղքատի, մուրացկանի հանդէպ դիւթւած եւ բարեկիրթ («Սա հաւանաբար ուխտագնաց է դէպի Մեքքա», – մտածեց նա), ընդունեց հանդիպումը, ընդառաջեց նրան, յիշեց: Առատ նուիրաբերութիւն տուեց ու շրջուեց՝ գնալու: Բայց Նազիմը սրտի թրթռոցով միւս կողմից ճամփան կտրեց ու օդի մէջ կախարդանքով գծագրեց այն գեղեցիկ աղջկայ պատկերը, որին Ջելալն այդքան հետապնդել էր՝ ժպտադէմ Ազնիւին: Յանկարծ վերստին տեսաւ լեյտենանտն այդ ժպիտը, քունքին խրած խորդենու ճիւղն ու աղջկայ արագ շարժումները: Ի՞նչ եղաւ Ազնիւր:

Անցեալի ու ներկայի միջեւ սարսափի ծով էր տարածուած, որին Ջելալն ականատես էր ամէն օր. իր զօրավար Ջեմալ փաշայի աճող ջլագրգռութիւնը, աքսորեալների ճամբարները, մեռած մարմինների գարշահոտութիւնը, փողոցներում թափւած դիակները, հրովարտակները, մայրաքաղաքից հասնող հեռագրերը եւ պատերազմը, որ կարծես բախտի քմահաճոյքով չէր ընթանում յօգուտ Կայսրութեան: Ջելալն ամէն օր տեսնում էր կմախքացած երեխաների, որոնք թափառում էին ամէնուր ու այլեւս հաց չէին խնդրում, միայն թափառում էին ու աչքերը չուած՝ նայում մարդկանց, այն բոլոր երեխաները, ովքեր այս աշխարհում ապրելու էին կոչւած: Այս ամէնն արդէն Հալէպի կեանքի մի անխուսափելի մաս էր կազմում:

Ջելալը երբեք այս ամէնը չէր կապել Ազնիւի հետ: Դեռ աւելին, նոյնիսկ փոքր-ինչ նեղուել էր աղջկանից, որ իրեն մերժել էր: Այժմ յանկարծ սարսափը պատեց նրան, պարուրեց բոլոր կողմերից, ու նա Ազնիւի հետ յայտնուեց անպատում. հիմա աղջկան, իսկապէս, յաւիտեան կորցրեց:

Նազիմը հետեւում էր նրա մտքերին, որոնք կարծես գրա-

տախտակի վրայ գրուած լինէին, ու նրան մի քանի նախադասութիւն նետեց Սմբատի մահուան, ընտանիքի կանանց տագնապի ու աքսորի պայմանների մասին:

– Ո՞վ գիտէ, – աւարտեց նա, – միգուցէ նրանցից որեւէ մէկը փրկուել է ու հասել Հալէպ: Նրանք, ովքեր մեռած չեն, արդէն բոլորն էլ այստեղ են:

Վերջապէս այդ պահին նրանք երկուսով նայեցին միմեանց ու հասկացան իրար: Աստծոյ կամքն էր, որ նրանք հանդիպեցին՝ ամէնքն իր սուրբ առաքելութեամբ. Ջելալը հարցեր չտուեց, Նազիրն էլ ոչինչ չբացատրեց, այլ միայն ասաց.

– Որտե՞ղ էք բնակուում: Վաղը երեկոյ՝ ժամը տասին, կգամ ձեր տուն:

Մնում էր գտնել միայն Ջարեհին, եթէ, ի հարկէ, դեռեւս քաղաքում էր: Հալէպի շատ հայեր ամբողջ ընտանիքներով փախչում էին, քանի դեռ կարող էին. շատ ու շատ մարդիկ, որոնք միշտ ապրել էին Հալէպում: Բայց միթէ՞ հնարաւոր էր, որ Ջարեհն անտարբեր լինէր իր ընտանիքի հանդէպ: Ինչ-որ բան իմացած կլինէ՞ր: Ինչպէ՞ս էր շարժուում: Նազիրն էր հասկացաւ, որ այդ պահին Իսմէնէն իրեն հարկաւոր էր: Կինը կասկածելի չէր թւում հայերի աչքին, եւ Ջարեհն էլ ճանաչում էր նրան, այն Ջարեհ եղբայրը, որ աղջիկներին դամասկեան կերպաս էր ուղարկում:

Կացարանում Նազիրը տեսաւ Իսակին ու Իսմէնէին՝ անասունների մօտ կծկուած:

– Դու էլ ես անասուն, անկարող քահանայ, – մրթմրթում էր Իսմէնէն, բայց առանց չարութեան: – Չլինի՞ թէ սուգ ես պահում խեղճ Կատերինայի համար. միեւնոյն է, մի քանի օր յետոյ նրան կմիանանք:

Բայց մինչ այդ սկսեց պատրաստուել: Իսմէնէն նաեւ աճպարար էր. ընտանիքի աղջիկներն այդ լաւ գիտէին ու պաշտում էին երփներանգ թաշկինակներով արած նրա ճարպ-

կութիւնները: Քիչ բան էր հարկաւոր, որ գնչուի նման զարդարուէր. ահա մի գրպանից դուրս եկան ամերիկացի ամուսնու նուիրած կլոր ականջօղերը, միւս գրպանից՝ փայլուն ապարանջանները. վերջում ի յայտ եկաւ մէկ սրուակ յատուկ իւր՝ փայլեցնելու համար ծայրին կարմիր ժապաւէն կապած եւ խնամքով հիւսուած վարսերը:

Իսմէնէն աւելի ծեր, աւելի տգեղ ու աւելի յուսահատ էր երեւում, կարծես ողբերգական դիմակ հագած լինէր: Բայց այդ ընթացքում գիշերները քաղաքում շրջողներն այնքան էլ ուշադիր չէին, մինչ Նազիրն բերանը հիացմունքից բաց մնաց:

– Այ դու մազաթափ եղած անճոռնի շուն, երբեք ամերիկուհի չե՞ս տեսել, – ծիծաղեց Իսմէնէն ու պատրաստուեց դուրս գալ կացարանից:

Նազիրն ամենեւին չվիրաւորուեց ու նոյնպէս ծիծաղեց:

– Գտիր Ջարեհին ու փորձիր հետը խօսել: Աշխատիր մինչեւ արեւածագը վերադառնալ:

Գիտէր, որ Իսմէնէն գիշերային կին էր, գիշերը նրան ոչինչ չէր պատահի, մինչդեռ ցերեկը վախնում էր պարեկներից ու զինուորներից: Իսմէնէն ու Իսակն առանց փաստաթղթերի էին ու պաշտպանուած չէին Մուրացկանների եղբայրակցութեան կողմից:

Քայլում էր Իսմէնէն գիշերուայ մէջ ու հրաշք աղերսում: Ո՞վ գիտէ, որտե՞ղ էր Ջարեհը. անկասկած, տանը պատսպարուած կլինէր. բայց որտե՞ղ էր բնակուում այս հսկայ քաղաքի մէջ: Իսմէնէն եռանդով աղօթեց ու անծանօթ սպառնալիքներ ուղղեց քողարկուած Աստծուն, որ կարծես նրան չէր լսում: «Չափազանց շատ է, չափազանց: Չափազանց շատ չարիք կայ նրանց գլխին: Չե՞ս կարծում, որ բաւական է, – մրմնջում էր նա՝ երբք անգամ խաչակնքելով: – Գոնէ Իսակին լսի, որ քո ծառան է: Տե՛ս, նա էլ է քեզ աղօթում»: Բայց Իսակը միայնակ եւ ուժասպառ ննջում էր, իսկ Նազիրն, հացի մի կտոր ծամելով, լուռ ծխում էր դռան մօտ:

Իսմէնէն առաջանում էր գիշերուայ մէջ, մէկ սրճարանից միւսը մտնում, յուսահատ ներսը գննում. ամէնուր տեսնում էր նարդի խաղացող մարդկանց, որոնք հանդարտ ծխում էին ու զրուցում: Բնականաբար, սրանցից ոչ ոք հայ լինել չէր կարող: Այս օրերին հայերը գիշերները չէին թափառում:

Այդուհանդերձ, ինչ-որ բան դիւթում էր Իսմէնէին խաղացող մարդկանց նայելիս, մի յիշողութիւն, որ տարտամօրէն երեւում ու չքանում էր, Ազնիւի մի խօսակցութեան արձագանք, որ չէր կարողանում մտաբերել: Վստահ էր, որ դա խաղի հետ կապ ունէր, բայց ի՞նչ:

Միջնաբերդի մօտ՝ միւսներից աւելի լաւ լուսաւորուած մի նեղ փողոցում, Իսմէնէն որոշեց մի գինետուն մտնել, որ նրան յուսական թուաց: Եւ չսխալուեց: Տէրը Մեթոնից էր, նրան մի անկիւն ցոյց տուեց՝ տեղաւորուելու. համար: Իսմէնէին բերեց թանձր թացանով ոչխարի մսով կերակուր: Եւ ուտելով Իսմէնէն լսեց իր թիկունքում խօսող մարդկանց կարճ նախադասութիւններն ու խաղաթղթի կանոնաւոր խշխշոցը: Երջուեց ու տեսաւ թղթախաղով տարուած չորս տղամարդկանց. որոնք երեւի ռուս էին կամ իտալացի: Այդժամ յանկարծ մտաբերեց ու օրհնութիւն շշնջաց սրբուհի Պարասկեւիին, իր դիմած վերջին սրբուհուն:

Զարեհը թուղթ էր խաղում: Զարեհը բրիջ էր խաղում՝ ժամանակակից անգլիական այն խաղը, որի մասին Ազնիւը հազար տարի առաջ պատմում էր, թէ ուզում էր մեկնել Հալէպ՝ եղբօր մօտ, որպէսզի սովորէր այդ նրբաճաշակ խաղն ու նախանձից պայթեցնէր քաղաքի ընկերուհիներին:

«Հարկաւոր է Ֆրանսացիներին գտնել», – իրաւացիօրէն մտածեց Իսմէնէն ու հարցրեց գինեպանին, թէ որտեղ կարելի էր նրանց փնտրել:

Այդ պահից սկսած՝ կարծես ամէն ինչ դիւրին դարձաւ: Շատ վայրեր չկան, որտեղ կարելի էր Ֆրանսացիներ հանդիպել. դրանք դեսպանութեան ընդունելութիւններն էին, որ այժմ հայերի համար բողոքի պատճառով դադարել էին.

բայց այս պահին բոլոր օտարականները գտնուում էին Մագլումեանների նոր պանդոկում (մինչեւ որ նրանք էլ հեռանային, չէ՞ որ հայ էին), Հալէպի ամենանոր ու ամենաչքեղ Բարոն հիւրանոցում: Զեմալ փաշան եւս իր ընդունելութիւններն այնտեղ էր անցկացնում:

– Գնա այնտեղ, այստեղից հեռու չէ, մտիր խոհանոցների կողմից. իմ զարմիկ Եօրդոսը քեզ կարող է օգտակար լինել: Այնտեղ աշխատում է որպէս աման լուացող, – շշնջաց գինեպանը:

Իսմէնէն համբուրեց նրա ձեռքը, շնորհակալ եղաւ ուտելիքի համար ու շտապ դուրս եկաւ: Լսեց, թէ ինչպէս արեւմտեան մի տարօրինակ մեղեդի էր տարածուել փողոցում: Զայնին հետեւելով՝ շրջուեց առաջին անկիւնը, ապա միւսը եւ ահա յաղթական բարոկկո ոճով, լոյսերով ողողուած սանդուղքներով ու համազգեստ հագած դռնապանով՝ նրա առջեւ բարձրացաւ արեւմտեան ոճի այն շքեղ հիւրանոցը, որի մասին երազում էր ողջ Արեւելքը: Իսմէնէն շլացած վեր նայեց: «Ի՛նչ գեղեցիկ է, – մտածեց նա: – Պէտք է որ Դրախտն այսպիսին լինի», եւ զգուշութեան համար ստուերում թաքնուեց:

Այդ պահին երեւաց մի աւտոմեքենայ: Վարորդը կանգ առաւ ու խոնարհուելով բաց արեց դուռը: Մի սպայ իջաւ ու ձեռքը պարզեց մի գեղեցիկ, հոլանի ուսերով տիկնոջ, որի կօշիկները շողշողում էին փայլուն քարերից: Մեսաքսեայ նուրբ շղարշը ծածկում էր նրան. օժանելիքի բոյրը տարածւեց օդում: Սկսեցին դանդաղ բարձրանալ՝ շարժելով բոլորի հիացմունքը:

– Գերմանացի զօրավար է, – ասաց Իսմէնէի մօտ կանգնած մէկը: – Հաւատա, ի զուր է նրանից ողորմութիւն խնդրելը: Ոչ ոքի ոչինչ չի տալիս:

Ապա անձանօթ մուրացկանը յարմար տեղաւորուեց վերջին աստիճանի վրայ:

Իսմէնէն, ինչպէս միշտ, գայթակղուած էր այն ամէնով,

ինչը փայլուն էր ու պսպղուն, ու մի պահ ցանկացաւ սոսկ հետեւել տեսիլքին: Բայց յետոյ հետեւեց մեքենային, որը, ինչպէս կռահեց, տարուեց ախոռ: Լուռ սահեց ազնուազարմ ձիերի ու կառքերի միջով: Համազգեստով վարորդը ողջունեց արտապաններին ու կառապաններին, որոնք, շրջան կազմած, գետնին նստոտած ծխում էին, ու շտապեց շարժիչի վրայ մի ծածկոց գցել, ինչպէս վարուում էին քառատրոփ վազքից քրտնած ձիու պարագայում:

Այդ աւտոմեքենան առասպել էր քաղաքում, ու մարդիկ խմբուում էին շուրջը՝ դրանով հիանալու, իսկ վարորդն այն խնամում էր կենդանի արարածի պէս: Ախոռում գրեթէ մուկ էր, ու Իսմէնէն երկիւղածօրէն հպեց ձեռքը փայլուն մեքենային:

– Ի՞նչ ես թոյլ տալիս քեզ, պառաւ գնչու, – բղաւեց վարորդը, որ նրան տեսել էր, ու Իսմէնէն, կարծես այրուած ետ քաշեց ձեռքը:

– Ոչ մի վատ բան չէի անում, – պատասխանեց կինը. նրա բնածին հպարտութիւնն անմիջապէս վերականգնուեց: Մէկ քայլ առաջ եկաւ:

– Տես, հա՛, ուշադիր եղիր, աշխարհի բոլոր անէծքները գիտեմ:

Նրա ողբերգական դիմակը պայծառացաւ, լուսաւորուեց, ու շրջապատի մարդիկ զգացին, որ կինը կրում էր աշխարհի բացարձակ չարիքի, սարսափի կնիքը: Ու ամէն ինչ հասկացան:

– Դու հայ չես, – ասաց աւագ ախոռապանը, – բայց դու նրանց՝ հայերին, տեսել ես: Ի՞նչ ես ուզում մեզանից:

Իսմէնէն վայրկենապէս որոշեց, որ նրանց պէտք է վստահել: Եւ ասաց իրականութեան մի մասը միայն.

– Հալէպի մի հայի եմ փնտրում, մի բժշկի, որն իմ տիրուհու ազգականն է. անունը Զարեհ է: Պատերազմից առաջ յաճախ ֆրանսացիների հետ էր: Ինձ ասացին, որ միգրացէ այստեղ՝ հիւրանոցում կարող է լինել (հիւրանոց բառն ար-

տասանեց մի այնպիսի ցանկալի հաճոյքով, երկարացնելով, ինչպէս մէկը, որ մտածում է արեւմտեան արգելուած հաճոյքների մասին. մինչդեռ, խեղճ Իսմէնէն, այդ պահին ոչինչ այնքան հեռու չէր նրանից, ինչքան հաճոյքը):

– Նրան գտնողին մեծ վարձատրութիւն է սպասուում: Ես այլեւս ոչ ոք չունեմ: Նրան պէտք է պատմեմ իր ընտանիքի անդամների մասին, թէ ինչպէս են զոհուել, ու պէտք է յանձնեմ նրան լուսանկարներ: Իսկ յետոյ, միգրացէ, նա ինձ ծառայ կընդունի: Երիտասարդ չեմ, բայց ամէն ինչ գիտեմ անել:

– Ի՞նչ ես ասում, – ծիծաղեց ախոռապանը, – Ի՞նչ երիտասարդ: Բայց եւ այնպէս ուզում եմ քեզ օգնել: Յոյն ես, այնպէս չէ՞: Որտեղի՞ց ես:

Իսմէնէն, որ այրուում էր անհամբերութիւնից ու տենդազին ենթագիտակցօրէն լսում Շուշանիկի, աղջիկների ու երեխաների մօտեցող, ուժասպառ, ծանր քայլերը, եւ սարսափելի վախենում էր, որ ժամանակն չհասնէր, որ նրանց անմիջապէս Հալէպից դուրս ուղարկած լինէին, որտեղ ոչ ոք այլեւս չէր կարողանայ նրանց ետեւից հասնել, իրեն ստիպեց հերթական անգամ ժպտալ, դերի մէջ մտնել՝ յիշելով հնդկացի ամուսնուն ու նրա երգերը, աղաչանքները, պաղատանքներն ու կիրքը: Այս կերպ հմայեց բոլորին՝ ինչպէս միշտ, բայց ձայնը խուպոտ էր, արցունքներն՝ իսկական:

Աւագ ախոռապանը բաւարարուած կկոցեց աչքերն ու կարճ հրահանգ տուեց.

– Մանուկ, վեր բարձրացիր: Դոնապան Եաննակիից տեղեկացիր այս Զարեհի մասին:

Իսկ Իսմէնէն ասաց.

– Ինձ դրամ տուր: Ես քեզ կծառայեմ՝ ի սէր Աստծոյ ու քո գեղեցիկ պատմութեան համար, բայց Եաննակին վախ չունի ո՛չ Աստծուց, ո՛չ էլ սրբերից եւ ուզում է նախօրօք վճարուած լինել:

Իսմէնէն մի դրամ տուեց տղային: Վերջինս բացեց ներ-

քին սանդուղքից վեր՝ դէպի տնօրէնի աշխատասենեակը տանող դուռը: Երաժշտութեան ու լոյսերի մի ալիք ողողեց ախոռը: Մանուկը կրկին կամաց փակեց դուռն ու դուրս սահեց:

– Այժմ դու պէտք է միայն սպասես, – ասաց մարդը, – ու աղօթես, եթէ ի վիճակի ես. կամ էլ ցոյց տաս կախարդանքներիցդ մէկը:

Իսմէնէն շնորհակալութիւն յայտնեց նրան ու սաստիկ յոգնած՝ փակեց աչքերը: Մի պահ քուն մտաւ, ու թուաց, թէ տեսնում էր ժպտացող Սմբատին՝ Շուշանիկի ձեռքը բռնած: Բայց Սմբատի գլուխը վատ էր ամրացուած պարանոցին, ու սարսափից սառած Իսմէնէն տեսնում էր, թէ ինչպէս էր այն կամաց-կամաց կախուում մի կողմի վրայ, կարծես մարմնից անջատուելու վրայ էր, իսկ Շուշանիկը չէր նկատում ու շարունակում էր խօսել տարտամ կերպով: Երազի մէջ Իսմէնէն հետապնդեց նրանց Իսակի ու Կատերինայի հետ՝ բղաւելով, բայց չէր կարողանում բռներն արտաբերել, ու չէր յաջողւում նրանց հասնել: «Չարագուշակ կարճ մղձաւանջ», – մտածեց Իսմէնէն:

Նրան թւում էր, թէ անվերջանալի ժամանակ էր անցել. շուրջը նայեց. մարդիկ խօսում էին ցածրաձայն, իսկ վարորդը գնացել էր: Միթէ՞ Իսմէնէին մատնելու: Իսմէնէն ափսոսեց, որ նրա հետ կոպիտ էր վարուել, իսկ յետոյ ափսոսեց իր ափսոսելու համար, փորձեց ոտքի ելնել, ինչ-որ բան կմկմաց. գլուխը ծանր էր, սուր ցաւ էր զգում ձախ ձեռքում: «Միգուցէ մեռնում եմ», – մտածեց նա: Բայց այդ պահին դուռը բացուեց ու յայտնուեց մտահոգ, նեղուած մի մարդ՝ հայեացքը գետին յառած:

Իսմէնէն միանգամից ճանաչեց նրան: Զարեհն էր՝ ընտանիքի անչփոթելի մեծագլուխը՝ Սմբատի քթով ու կլորիկ մատներով փոքրիկ, ճերմակ ձեռքերով: Զարեհը կիմանար ինչպէս վարուել, եւ Իսմէնէի երկարատեւ տազնապը սկսեց մեղմանալ: Մինչ այդ պահը բժիշկը դեռեւս ազատ էր:

Շուրջբոլորը հաւաքուած մարդիկ հետաքրքրութեամբ

նրանց էին նայում՝ պատրաստ լսելու խորհրդաւոր հանդիպման պատմութիւնը:

– Ձեզանից որեւէ մէկը հիւանդ է, որ ինձ շտապ կանչեցիք, – հարցրեց Զարեհը նեարդայնացած, – ինձ ասացին, որ մի կին է:

Մինչ այդ Իսմէնէն արդէն մէկ ուստիւնով մօտեցել էր ու բարձր ձայնով ասաց.

– Ես եմ, բժիշկ, Իսմէնէն եմ: Ձեր եղբայր Սմբատից ու նրա ընտանիքից լուրեր ունեմ: Միայնակ եմ եւ ուժասպառ. ի սէր Աստծոյ, ինձ որեւէ բան կտա՞ք ուտելու:

Յոյս ունէր, որ Զարեհն իրեն միանգամից կհասկանար ու շատ հարցեր չէր տայ: Ի հակադրութիւն իր համեստ խօսքերի՝ յանդուգն նայեց բժշկի աչքերի մէջ՝ փորձելով վստահեցնել վերջինիս, որ ծուղակ չէր: Զարեհն իր հետ բերել էր մաքուր հագուստի, թանկարժէք օձանելիքի, որակեալ սիգարների բոյրը, ու Իսմէնէի սիրտը կծկւում էր՝ մտաբերելով անցեալը: Զարեհը եւս երկիւղով յիշեց անցեալը, (նախորդ օրն էր ստացել Երուսաղէի ուղարկած ամսագիրը, եւ եղբօր պէս ինքն էլ էր տազնապով լի): Բռնելով Իսմէնէի ձեռքը՝ շշնջաց.

– Քեզ չեմ ճանաչում, բայց եթէ նորութիւններ ունես, բարով եկար: Պէտք է հրաժեշտ տամ ընկերներին, սպասիր ինձ չքամուտքի մօտ՝ աստիճանների ներքեւում, ու թող քեզ ոչ ոք չտեսնի:

Զարեհը նայեց շուրջը, նայեց ներքեւից իրենց լրտեսող հետաքրքրասէր դէմքերին ու մի դրամ նետելով՝ մեծ ճիգով արտաբերեց.

– Ահա, սա ձեզ, կենացս կիսմէք:

Ապա դէմքը կնճռոտեց ու աւելացրեց.

– Արժէ տօնել, միգուցէ ընտանիքիս միակ փրկուածն եմ: Իսկ եթէ ձեզ որեւէ բան է հարկաւոր, կամ եթէ հիւանդ էք, այս պահին ասացէք: Ձեզ պարտք եմ:

Ու անհետացաւ: Իսմէնէն եւս անհետացաւ, որքան հնա-

րաւոր է արագ՝ մէկ դրամ եւս տալով աւագ ախոռապանին:
Մտահոգ էր վարորդի անհետանալուց, այդ իսկ պատճառով էլ ասաց նրան.

– Բերաններդ փակ կպահէք: Իսկ վարորդն ու՞ր չքուեց:
Ախոռապանը ծածուկ մատը դրեց շուրթերին ու կամացուկ շնչաց.

– Ես այդ մասին կհոգամ: Անհոգ եղիր, ու թող Աստուած քեզ օգնական լինի:

Իսմէնէն Հապճեպ մտաւ մոռտքի շքեղ սանդուղքի տակ ու կրկին սկսեց սպասել: Ոչ ոք նրա վրայ ուշադրութիւն չդարձրեց. նա սոսկ մի պառաւ գնչուհի էր բազում թափառաշրջիկների մէջ, որոնցով լի էր Հալէպը: Բայց խուսափեց այն մուրացկանից, որին սկզբում Հանդիպել էր, որպէսզի ստիպուած չլինէր շատախօսել հետը: Այդ պահին ամէն ինչ նրան վախեցնում էր, ու ջերմագին աղօթում էր իր իմացած բոլոր սրբերին, ինչպէս նաեւ Ալլահին, որը չէր կարող չարիք գործել: Իսմէնէն խորապէս համոզուած էր, որ աշխարհի երեսին գոյութիւն ունի շարը, բայց նոյնքան հաստատուն հաւատում էր Դրախտին, որտեղ բոլոր ճանապարհները խաչում էին, ու Աստուած ժպտում էր ամէնքին:

Քանի՛-քանի՛ անգամ ողբասացի դերում նրան թուացել էր, որ տեսնում էր երկնքի փառահեղ կիսափակ դռները, ու յանկարծ ցանկութիւն էր ունեցել գնալ այնտեղ, որտեղ ժամանակ գոյութիւն չունի, եւ որը լի է անակնկալներով: Դրախտը պատկերացնում էր արեւով, մխիթարութեամբ եւ ուտեստներով ողողուած. արեւը՝ կիզակէտում, ու ջրերը՝ պաղպաղուն, արտոյտների դայլայլ ու ոչխարի հիւթեղ մի ազդը: Իսկ արծնէ ու ապակէ երկնքում ընդմիջտ դրոշմուած են Քրիստոսի ու համբերատար Տիրամօր վեհաշուք դէմքերը:

Այսպէս մխիթարուելով՝ Իսմէնէն սպասեց ու կրկին քուն մտաւ: Վերստին տեսաւ Շուշանիկին՝ Սմբատի հետ, բայց նրանք այժմ Դրախտում էին, որի մասին մտածում էր Իսմէ-

նէն արթուն ժամանակ, եւ երբ արդէն մօտեցած Ջարեհը նրան ցնցեց, կինը, Հանդիսաւոր պահերին յատուկ այն անմիջականութեամբ, հասկացաւ, որ տեսածն իրական երագ էր եւ որ շուտով Շուշանիկը կմիանար Սմբատին: Բայց միաժամանակ հասկացաւ նաեւ, որ կենդանի էր ու հասել էր Հալէպ:

Այս ամէնը եւ ուրիշ շատ ու շատ բաներ Իսմէնէն տենդագին հաղորդեց Ջարեհին. խօսում էր, խօսում, լալիս էր ու շարժում այնպէս թեթեւացած, որ գտել էր նրան ու այլեւս մենակ չէր կրում պատասխանատուութիւնն այն ամէնի, ինչ մնացել էր ընտանիքից: Սկզբում Ջարեհը նրան արագ տուն տարաւ ամայի փողոցներով ու նրբանցքներով ու նրան ներս մտցրեց ետեւի դռնից: Թէեւ Հալէպի Հայերին դեռեւս ձեռք չէին տուել, բայց խստիւ արգելուած էր օտարներին հիւրընկալելը, ներառեալ ազգականներին, եւ զգուշանալ քաղաքը կամաց-կամաց շրջապատող մարդկանց յորձանքից: Նոյնիսկ բժշկի իր մասնագիտութիւնը չէր կարող պաշտպանել Ջարեհին. բաւական էր մի քմահաճոյք, մի պատահական հրաման, եւ նա եւս կմիանար այդ թշուառներին: Իսմէնէն գլխով անցածը պատմում էր խոհանոցում՝ անյագօրէն կուլ տալով ուտելիքի մնացորդները, որ Ջարեհն էր նրան տուել: Իսմէնէն միշտ քաղցած էր: Ացետիլենի լամպի Հանդարտ լոյսի ներքոյ նրա նկարագրած սարսափելի տեսարանները կարծես նիւթականանում էին, ու եղբօր, ընկերների, փոքրիկ քաղաքի ամբողջ ժողովրդի Հալածեալ ուրուականները խեղճացած խմբում էին՝ ամէն մէկը փորձելով իր պատմութիւնն անել:

Ապա Իսմէնէն պատմեց նաեւ Նազիմի եւ Իսակի մասին, որոնք սպասում էին ախոռում: Ջարեհի համար վտանգաւոր էր նրանց մօտ գնալը. կապը պէտք է Իսմէնէն պահէր, որը հրամանի էր սպասում ու նայում բժշկին հաւատարիմ շան հայեացքով, որով միշտ նայել էր Շուշանիկին: Ինչպէ՞ս մոտք գործել աքսորեալների դաշտը եւ, յատկապէս, ինչ-

պէ՞ս գտնել նրանց ու դուրս բերել այնտեղից, հէնց նրանց եւ ոչ թէ ուրիշներին, հէնց պահակների քթի տակից:

Զարեհն իսկոյն մի քիչ դրամ տուեց Իսմէնէին ու պայմանաւորուեց տեսնելու նրան յաջորդ օրը՝ նոյն ժամին, նոյն վայրում՝ հիւրանոցի շքեղ սանդուղքի տակ: Պանդոկում էր լինելու թղթախաղի հերթական ժամանցի համար. պէտք չէր կասկածների տեղիք տալ:

Զարեհը երբեք խորագգաց մարդ չէր եղել: Կեանքին միշտ նայել էր ուրախ, մակերեսօրէն: Բայց այժմ գիտէր, որ յանկարծ դարձել էր ընտանիքի աւագը: Սմբատը մահացել էր, Երուանդը բացակայ էր, ուստի նա էր պատասխանատու ընտանիքի պատուի համար: Զգուժ էր վճռական ու հաստատապէս: Փոքր-ինչ քնեց ու յաջորդ օրը՝ վաղ առաւօտեան, գնաց Ֆրանսական հիւպատոսարան՝ խորհրդակցելու իր քնքուչ ընկերուհու՝ Մադամ Մարի-Ժոզեֆինի հետ, որը հիւպատոսի կինն էր:

Մարի-Ժոզեֆինը, իսկապէս, նրա քնքուչ, խարտեաչ ընկերուհին էր, որն ի խորոց սրտի նուիրուած էր երիտասարդ հայ բժշկին: Նրան առաջարկել էր նաեւ պատասպարուել հիւպատոսարանում, եւ Զարեհը՝ որպէս վստահելի բժիշկ, կարող էր այդ անել: Մինչ այդ Զարեհը, սպասելով ընտանիքից նորութիւնների, չէր ցանկացել. եւ յետոյ՝ նրա արեւելեան հպարտութիւնը նրան թոյլ չէր տալիս. դեռ վաղ էր:

Բայց հիմա վազեց նրա մօտ՝ խորհուրդ հարցնելու: Բացատրեց կնոջն ամէն ինչ. Իսմէնէի եռեակը պէտք է գտնէր վերապրեալների իսկական տեղը, նրանց որոշ մխիթարութիւն տար. սա կարելի էր անել նաեւ անուղղակիօրէն: Բայց ինչպէ՞ս մուտք գործել այնտեղ ու դուրս գալ: Ողջ առաւօտը Զարեհն ու Մարի-Ժոզեֆինը կոմս Մոնտէ Քրիստոյին վայել խելայեղ ծրագրեր էին կազմում. մտածում էին մի քանի քուրդ վարձել, որոնք կատաղի կրակոցներով կմտնէին դաշտը, կամ էլ գայթակղել (սա պէտք է Մարի-Ժոզեֆինն

անէր) Զեմալ փաշային ու անցագիր վերցնել եւ կամ կաշառել բեդուինների մի ցեղախմբի...

Միակ կէտը, որին երկուսն էլ համաձայն էին, դաշտ թափանցելու միջոցն էր. հարկաւոր էր առանց այլեւայլութեան օգտագործել հիւպատոսարանի կապոյտ, կարմիր եւ ոսկեգոյն կառքը՝ Ֆրանսիայի ականերեւ զինանշանով երկու դռների վրայ, ու փարիզեցի կառապանին, որը, Ֆրանսերէնից բացի, ուրիշ լեզու չգիտէր, բայց պատրաստակամ էր, արագաշարժ ու նուիրուած: Եւ ունէր երկու ատրճանակ: Նրա համար արաբները, քրդերն ու թուրքերը նոյնն էին. բայց պարոն Զարեհի քոյրերին ու զարմիկներին փրկելը, ասում էր նա, կլինէր առանձնայատուկ հաճոյք:

Մինչ այդ խոտը վերածուեց հաւաքատեղիի: Նազիմն ու Իսմէնէն խորհրդակցում էին. Իսակը հսկում էր: Նախ եւ առաջ հարկաւոր էր Շուշանիկի խմբին գտնել այն բազում հայերի միջից, որոնք շարունակում էին Հալէպ հասնել՝ տասնորդուած փոքրիկ խմբեր, միայնակ երեխաներ, ինչ-որ կանայք, մի քանի խելայեղ ծերեր, որոնք չէին յանձնուում մահուանը: Իսակին կրկին տուեցին հաց ու մի աման ջուր, ու նա շարունակեց հսկել. երկու էշերը թանկարժէք ինչք էին, ուտելիք էլ քիչ թէ շատ ունէին:

Նազիմն ու Իսմէնէն լուսաբացին միասին դուրս եկան ու գնացին հակառակ ուղղութիւններով, որպէսզի չըջէին պարիսպների մօտակայքում, ապա վերստին հանդիպէին: Վերնազգեստների լայն գրպանները լի էին դրամով եւ ուտելիքով, բայց արտաքին տեսքը համեստ էր իրենց նմանների պէս:

Նեխածութեան ու մահուան հոտը զագրելի չնչի պէս լճացել էր ողջ քաղաքում: Յուլիս ամիսն էր, ժանտ էր բարձրանում այդ լքուած մարմիններից, այդ ձեւերից, որոնք այլեւս երկինք չէին պարզուում: Անտարբեր զինուորները հսկում էին հեռուից՝ ջանալով շատ չմտննալ: Յնցոտիւաւոր մանուկները շրջում էին վերացած հայեացքներով: Իսմէնէն լուռ խմբից խումբ էր անցնում, ականջ դնում, հաց տալիս

եւ ամէնուր լսում միեւնոյն պատմութիւնները՝ սով, ծարաւ, բռնաբարում, բռնութիւն: Նրան նայող դէմքերը զարմացած էին, որ դեռեւս կենդանի էին:

Մինչ այդ Նազիմը մօտեցաւ պահակային զինուորներին ու ողորմութիւն խնդրեց: Ապա ի միջի այլոց հարցուփորձ արեց, թէ որտեղից էր գալիս այս կամ այն խումբը: Նազիմի այդ առաքելութիւնն ընթանում էր դանդաղ ու ապարդիւն էր թւում:

– Ի՞նչ ես ուզում մեզանից, ծերուկ,– հարցրեց նրան մի գապտիէ,– գնա դրանց մօտ: Այդ անիծեալները ինչ-որ տեղ փող կուռնենան պահած:

Այդ պահին մերկ ու կմախքացած մի ծերունի դանդաղ ձգուեց պատն ի վեր, որի վրայ քիչ առաջ յենուած էր, ու բղաւեց գերազանց թրքերէնով.

– Եկէք, եկէք, Աստուծոյ օրհնեալներ: Ճաշկերոյթը պատրաստ է, բայց Աստուած մահացել է,– ու սուր, անմարդկային ծիծաղից լայնօրէն բացեց չորացած արեան կեղեւով պատուած բերանը, որն ասես դժոխքի շների երախ լինէր:

Նազիմը, կոյր բնազդով շարժուելով, մօտեցաւ: Վայրի մօրուքի միջից երեւաց պարզամիտ, շատախօս ու անվնաս հացագործ Սեդրակի այլանդակուած դէմքը: Վերապրելու անգուժ ցանկութիւնը նրան վերածել էր խաղալիքի. զինուորները մարդուն կենդանի էին թողել՝ նրանով զուարճանալու համար. աքացի էին տալիս ու ժամանակ առ ժամանակ պոկում-հանում մէկական ատամ, ինչպէս նաեւ աքսորեալների մօտ որոշ նուաստացուցիչ ծառայութեան էին ուղարկում: Այլեւս մարդկային ոչինչ չուէր. միայն երբեմն-երբեմն բղաւում էր, ինչպէս այժմ...

Բայց սա նշան էր Նազիմի համար, որ փոքր քաղաքի վերապրեալները հեռու չէին: Եւ ահա, իրօք, ծերունու ետեւում գետնին, մի կոյտ լաթերի տակից երեւացին թաղկած ծամեր, իսկ լաթերի վրայից՝ Նուբարի կլորիկ աչքերը, որոնք դեռեւս պահպանել էին հետաքրքրասիրութեան փայլը: Նազիմը մի

կտոր հացով նրան անմիջապէս հանգստացրեց: Ապա մեղմօրէն շօշափեց գգգոուած վարսերի խուրճն ու ցաւով բարձրացրեց դրա տակ ծուարած գլուխը. բայց այն տարօրինակօրէն այս ու այն կողմ ճօճուեց: Վերոնն էր, մահացած էր... Այլեւս ոչ ոք նրա համար չէր երգի Վերոն, Վերոն, վրէ փոմփոն, իսկ նրա գլխարկը բզիկ-բզիկ էր եղել Տաւրոսի բարձրաւանդակում: Ամէն ինչ փոխանակուել էր կամ վաճառուել՝ ներառեալ Ազնիւի դամասկեան յայտնի կարմիր կերպասը:

Վերոնը սովամահ էր եղել: Բերանի շուրջը դեռեւս նկատելի էին խոտի կանաչ հետքերը, որ իր վերջին օրերի միակ ուտելիքն էր եղել, ջղաձգումներից այլափոխուած էր դէմքի արտայայտութիւնը, մատները պրկուած էին: Վերոնն այլեւս չէր հանդիպի իր բողոքական հովուին: Այժմ բոլորի Հովին էր առաջնորդում նրան դէպի կանաչ արօտավայրերը, դէպի իսկական սէրը: Նազիմը նրան նրբօրէն տեղաշարժեց, հեռացրեց վարսերից կառչած Նուբարի ձեռքերը, փակեց աղջկայ աչքերն ու պառկեցրեց գետնին: Ապա դաշտում փնտրեց երեխաներին, Շուշանիկին ու Ազնիւին: Վերջապէս տեսաւ նրանց հեռուում՝ գետնին ընկած մի կարտոֆիլի համար միւս կանանց հետ վիճելիս:

– Իմն է, բոլորս կուտենք,– բղաւում էր Շուշանիկը՝ անկասելի դողով բռնուած. իսկ նրա մօտ լուռ ու մոլազար սեղմուած էին նրա դստրիկները:

Նազիմը միջամտեց՝ շնջալով.

– Վալիդէ հանրմ, ես այստեղ եմ, վերջ ամէն ինչին, այժմ քեզ կփրկենք:

Չգիտէր, թէ ինչպէս, բայց առայժմ կարեւորն այն էր, որ կնոջը մի կողմ քաշէր, կերակրէր ու սկսէր նրան պատրաստել փախուստի:

– Չեմ տեսնում իմ բարեկամ գապտիէին, միայն օտար դէմքեր են, որոնց չեմ վստահում, պատրաստ են դաւաճանելու,– կրճտացրեց Նազիմը: Հային օգնած մարդուն մատնողի փոխհատուցումը շատ հրապուրիչ էր:

Նազիմը փափագում էր կողքին ունենալ Իսմէնէի Հանդարտ Համազործակցութիւնը, բայց ստիպուած էր միայնակ գործել: Շատ շտապ էր հարկաւոր ամէն ինչ անել, ժամանակ չկար: Դաշտում տարածուած հոտը սարսափելի էր, եւ երեւում էր, որ բոլորի գլխին ոջիլ կար: Մինչ այդ գաղտագողի հաց բաժանեց, ապա նայեց շուրջը, իր հսկայական գրպաններից մէկից հանեց ջրամանն ու յագեցրեց Շուշանիկի ու երեխաների ծարաւը: Ապա ինչ-որ կերպ ծածկեց նրանց ու պատուիրեց, որ լուռ ու միաւորուած մնան՝ Նուբարն էլ իրենց միջեւ:

Ազնիւր, որ գնացել էր իր գինուորին փնտրելու, ճիշտ այդ պահին վերադարձաւ՝ դէմքը հարուածներից ուռած: Մարաշի գինուորն արդէն յոգնել էր աղջկանից ու թէեւ տիրանում էր նրան ամէն գիշեր, սկսել էր ծեծել ու այլեւս հաց չէր տալիս, այլ միայն վախ: Ազնիւի աչքերը չոռւած էին, շնչառութիւնը ծանր էր: Նազիմը մեղմօրէն դիպաւ նրան, նստեցրեց գետնին, կերակրեց, պատմեց նրան Զելալից ու Զարեհից, որ Հալէպում էին, որ այդ երեկոյ նրանց երկուսին էլ կտեսնէր, որ ընդամէնը մի փոքր համբերութիւն էր հարկաւոր...

Ազնիւր կարծես նրան չէր լսում: Ազահօրէն խմեց ու քրթմնջալով անմիջապէս թաքցրեց Նազիմի տուած հացը:

Նրա գեղեցկութիւնը թառամել էր, դիմացի երկու ատամները չկային: Յետոյ ուշադիր նայեց Նազիմին, ճանաչեց, եւ իրականութեան ծանրութիւնը յանկարծ ճնշեց նրան:

— Ո՞վ ես դու, բարեկամս, որ ինձ յիշեցնում ես մեռածների երկիրը, — հարցրեց նա անասելի յստակութեամբ: — Մի քիչ էլ ջուր տուր: — Ապա ցածրաձայն շնջաց. — Ինձ հետ չպէտք է Զարեհի կամ մէկ ուրիշի մասին խօսես: Ես այլեւս ոչ ոք եմ: Երեխաներին փրկիր:

Նազիմը խորհում էր այդ երիտասարդ, ծաղկուն գեղեցկութեան կորստի, այդ ժպիտի մասին («Աւելի լաւ է նրան կնութեան առնել, աւելի լաւ է մուրացկանի կին դառնայ», —

չշնջում էր մի ծաղրական ձայն հոգու խորքում), այն անպատիւների մասին, որոնք քամուն տուեցին Կայսրութեան շատ ու շատ բարի բնակիչների ունեցուածքն ու կեանքը: Բայց լեյտենանտին ոչինչ պէտք չէր ասել այս ամէնի մասին. միայն հարկաւոր էր թարմացնել նրա երբեմնի երազն ու ստիպել, որ գործէր:

Դաշտի միւս կողմում այդ պահին գնազան բաներ էին տեղի ունենում: Իսմէնէն պտոյտն աւարտելուց յետոյ յայտնւեց ու ամէն ինչ հասկացաւ: Բայց տեսաւ նաեւ ձին հեծած մի սպայի, որի մօտենալուն պէս պահակախմբի բոլոր գինուորներն անմիջապէս ձգուեցին ու սկսեցին հրամաններ արձակել աքսորեալներին: Տեսաւ նաեւ Նազիմին՝ ինչ-որ մէկի վրայ կուցած մխիթարելիս, ինչպէս նաեւ նկատեց, որ սպայի աչքերը առանձնացրել էին նրան: Եւ երբ սպան ձին ուղղեց դէպի մարդը ու բարձրացրեց մտրակը, Իսմէնէն ակնթարթօրէն կառչեց սանձից ու սկսեց բղաւել եղբրամայրերի ծածկաբարբառով եւ որպէս կրկներգ՝ հայհոյանքի խօսքեր տեղալով:

— Ո՞վ է այս խենթը, — բացականչեց սպան, որը բոլորի նման չէր ախորժում եղբրամայրերի անէծքներից եւ նրանց աշխատանքի հանդէպ տածում էր սնոտիապաշտ յարգանք:

— Յոյն եմ, էֆէնդի, — պատասխանեց Իսմէնէն համարձակ: — Կարծես իմ եւ իմ նմանների կարիքն ունէք, բայց մեզ անհրաժեշտ կլինի աւելի շատ վճարել, — եւ անամօթաբար ծիծաղեց:

— Կի՛ն, չկատակե՛ս, — սպայի դէմքը խոժոռուեց, — հնարաւոր է, որ քո հերթն էլ գայ:

Բայց Իսմէնէն ձիգ կանգնեց, պիրկ, ուղիղ, երփներանգ ցնցոտիների մէջ, հայեացքը յառեց սպայի աչքերին, ու չարտասանուած անէծքը սկսեց պտոյտ գալ երկուսի միջեւ: Մարդը յանկարծ սկսեց կաշուի վրայ զգալ իրեն շրջապատող բոլոր կենդանի մեռելների շունչն ու հայեացքը:

— Ի՞նչ էիր փնտրում այստեղ, — միայն հարցրեց նա:

– Ամուսնուս, այդ սովամեռին, – բացականչեց Իսմէնէն յաղթանակած ու արագ հասաւ Նագիմին:

Շուշանիկի անտարբեր բռան մէջ փող դնելով՝ նա հասցրեց շնջալ. «Այս գիշեր: Այս գիշեր գայիս ենք ձեզ տանելու: Բոլորդ միասին մնացէք: Այս գիշեր»:

Բայց սպան շարունակում էր անորոշ կասկածով նրան հետեւել.

– Այդ երկուսին դաշտից դուրս քշէք, – ասաց նա երկու գապտիէներին: – ոչ ոք, ասացի, ոչ ոք չպէտք է այստեղ մտնի այսօր: Իսկ ինչ վերաբերում է սրանց, – պարզեց մտրակը ճամբարի վրայ, – թող բոլորը պատրաստուեն Դէր-գօր մեկնելու: Հնարաւորինս շուտ պէտք է նրանց ուղարկենք:

Նագիմն ու Իսմէնէն, խմբից հրմշտուքով դուրս նետուելով, կանգ առան բոլոր ճամփորդներին քաջածանօթ վիթխարի չինարի ետեւում, որը Արեւելեան դարպասի մօտ միշտ զովութիւն էր պարգեւում անգործներին ու յոգնածներին: Բնագրային համբերատարութեամբ սպասեցին, որ ձիաւոր սպան մեկնէր: Արդէն հասկացան, որ նա այն մոլի իթթի-հատականներից էր, որոնք հսկում էին տեղահանութիւնները. բայց, վստահաբար նա չէր ճամբարի հրամանատարը:

Ձինուորականների մէջ Հալէպում տարակարծութեան ձայներ էին պտտում: Քիչ անց սպան նորից եկաւ, բայց նրանց ստուերում չտեսաւ, մտրակեց ձին ու արագ հեռացաւ. այժմ Նագիմն ու Իսմէնէն կարող էին անցնել գործի:

Ապա յայտնուեց մի գապտիէ՝ Նագիմի պէս կաղ: Պատե-րազմի հաշմանդամ էր, եւ նրան յանձնարարուած էր այդ ծառայութիւնը:

– Բարեկամներ, որեւէ մէկի՞ն էք փնտրում, – եւ անմիջապէս հարցրեց. – գտա՞ք:

Նագիմը հետաքրքրուեց, թէ որտե՞ղ էր իր ծանօթը, որի

հետ բանակցել էր Տաւրոսն անցնելուց առաջ. բայց նոր բարեկամը ոչինչ չգիտէր:

– Միգուցէ այն մէ՞կն էր, որին սպանեցին քրդերը աւարի բաժանման ժամանակ, – ասաց աճապարանք: – Բայց այժմ ինձ հետ գործ ունէք: Այս սարսափի մէջ ես միակն եմ ճամբարի հրամանատար հազարապետ Սէլիմից յետոյ, որ դեռեւս գիտէ զանազանել ու գնահատել մի զոյգ ոսկեղրամների զնգզնգոցը:

Իսմէնէն առաջին անգամ անվստահութեամբ նայեց Նագիմին: Ամէն ինչ կախուած էր այս պահից: Շրջակայ աշխարհն ասես շունչը պահել էր: Նագիմը շուրջը նայեց՝ ողբնչուելու համար. ծառի տակ տեսաւ երկու կծկուած մուրացկանների, որոնք սրել էին ականջները՝ խօսակցութիւնը լսելու համար: Եւ կայծակնային արագութեամբ որոշեց:

– Բարեկամս, մենք քեզ կվստահենք ու շատ լաւ կվճարենք քեզ ու քո հրամանատարին: Բայց չփորձես երկակի խաղ խաղալ: Տեսնու՞մ ես ծառի տակ նստած այն երկու մուրացկաններին: Եղբայրակցութիւնն է նրանց ուղարկել: Եղբայրակցութիւնը պատուոյ պարտք ունի մի ընտանիքի հանդէպ, որի վերապրեալները ճամբարի ներսում են: Մենք նրանց այս գիշեր կազատենք: Բայց Աստուած ձեզ օգնական, եթէ մեզ խաբէք: Մի մուրացկան ու մի դանակ ամէնուր կգտնուեն:

Նագիմը մեծ վտանգի դիմեց: Իսմէնէն վերջապէս նայեց նրան հիացմունքով («Ա՛խ, որքա՛ն խաղաղ կապրէինք մենք ու դուք այս օրհնեալ հողի վրայ, – մտածեց նա: – Սկզբում մենք՝ յոյներս ենք, յետոյ՝ մնացածները... Բայց բոլորին էլ Աստուած է ստեղծել»):

Կաղ գապտիէն ասաց.

– Հարկաւոր է արագ գործել: Վաղը շատ ուշ կլինի: Ուղարկում են անապատ, Դէր-գօր, իսկ այնտեղ, – ձեռքով որոշակի նշան արեց, – փոսեր կան, որոնք բացուած են

Եփրատի մէջ, եւ միայն Նրանք, կուսակցութեան անդամները կզբաղուեն այդ գործով: Մեզ դուրս կուղարկեն: Չափից աւելի փափուկ սիրտ ունենք:

Իրօք, նրա թուլութիւնը միայն դրամն էր: «Բայց լաւ է դրամ սիրել, քան արիւն»,— մտածեց Իսմէնէն:

Իսմէնէն, Նազիմն ու պահակը արագ բաժանուեցին՝ ժամադրուելով ցերեկուայ ժամը երկուսին չինարի տակ. սիրիական ամառուայ այդ ժամին, բացի մեռելներէ, ոչ ոք չէր շրջում փողոցներում, ինչպէս յուշում էր ասացուածքը:

Չապտիկն պէտք է ստանար հրամանատարի թոյլտուութիւնն ու գաղտնի զգուշացնէր Շուշանիկին, որ նա պատրաստ սպասէր նշուած վայրում: Պէտք է նաեւ ինչ-որ կերպ թաղեր Վերոնին. Իսմէնէն Հաննց պարանոցից խաչը, բարեպաշտօրէն Համբուրեց այն ու Հազար ու մի զգուշացումով յանձնեց մարդուն:

— Ընդամէնը մի մահացած Հայուհի է, մի յուզուելիք,— ասաց Չապտիկն, որի անունը Սելջուկ էր, բայց յետոյ վրդովմունք կարդաց Իսմէնէի աչքերի մէջ ու լոնց:

Իսմէնէն մի փոքր խառնակեց իր ցնցոտիները՝ Նազիմի կիներ երեւալու նպատակով, եւ միասին որոշեցին անմիջապէս գնալ Ջարեհի մօտ: Ժամադրութեան նշուած պահը չէր, գուցէ վտանգէին իրենց, բայց Նազիմն ու Իսմէնէն պէտք է ամէն ինչ փորձէին. եւ գրեթէ մոռացան Իսակին, որը նոյն իսկ արգելք էր այդ պարագայում: Այդ պատճառով էլ նրան թողեցին, որ այծերին հսկէր ու աղօթք անէր:

Մինչ այդ Ջարեհն ու Մարի-ժողեֆինն արդէն պատրաստել էին կառքն ու պատուիրել կառապանին, թէ ինչ պէտք է անէր: Մարի-ժողեֆինը դատարկել էր խոհանոցն ու նորմանդուհի խոհարարի հետ վիթ-վիթ¹⁷ սննդամթերքի մեծ պաշար ու մի կրակարան տարել Ջարեհի տուն: Այդ թշուառներին հարկաւոր էր մառանում տեղաւորել, մահճա-

կալ, սպիտակեղէն, կահկարասի Հայթայթել... Մարի-ժողեֆինը լի էր բարութեամբ ու անհամբերութեամբ:

Բայց Ջարեհի տան պարսպից հապճեպ դուրս գալով՝ գրեթէ չէր նկատի ստուերում մեկուսացած երկու մուրացկաններին, եթէ նրանցից մէկը (իսկ ո՞վ, եթէ ոչ՝ Իսմէնէն) ցածր, բայց հեղինակաւոր ձայնով չասէր.

— Մադամ, մեզ ուղեկցէք բժշկի մօտ: Շատ կարեւոր է:

Այդ ձայնն իր արձագանքն ունեցաւ Մարի-ժողեֆինի մօտ: Կնոջը թուաց, թէ կրկին լսում էր իր բրետոն ստնտուին, ինչպէս մի տատիկի, որին չէր կարելի չհնազանդուել:

— Եկէք ինձ հետ,— պատասխանեց նա կարծես երազում ու նրանց կառք բարձրացրեց ի զարմանս կառապանի՝ իր հետ տանելով մինչեւ հիւպատոսարան:

Ջարեհն անգործ խաղալիքի պէս միայնակ նստած էր բակի մի անկիւնում: Նա եւս սպասում էր, ուրիշ գործ չունէր, պէտք է սպասէր միւս բոլոր Հայերի նման:

«Լաւ արեցի, որ խորհրդակցեցի Մարի-ժողեֆինի հետ»,— խորհում էր նա. ի՞նչ լաւ բան է Փրանսացի ծնուելը, Մարսելիեզով պաշտպանուած լինելը...

Այդ պահին կառքը մտաւ ախոռ: Մարի-ժողեֆինը կարմրատակած, տենդազին դողով ցած թռաւ ու հիւրընկալ շարժումով ձեռքը պարզեց ներսի ստուերում գտնուող մէկին: Ջարեհը անհանգստացած նրան էր նայում: Եւ ահա յայտնուեց Իսմէնէն, իսկ նրա ետեւից՝ կեղտոտ, կաղ մէկը՝ անորոշ, երկդիմի Հայեացքով: «Թուրք մուրացիկն է,— եզրակացրեց Ջարեհը,— յայտնի Նազիմը, ողջ ծրագրի առանցքը»: Անվստահութեան անզուսպ մի զգացում յորդումի. սրտխառնոցի պէս սեղմեց նրա կոկորդը. բայց ինքն իրեն տիրապետեց:

Մարի-ժողեֆինը շտապ ուղեկցեց նրանց դէպի փոքրիկ սրահն ու զովացուցիչ ըմպելիք հիւրասիրեց որպէս կարեւոր հիւրերի: Հիացած էր մեղսակցի իր դերով, երջանիկ էր գլխաւոր հերոսներից մէկը լինելով մի դաւադրութեան, որ

¹⁷ Vite-vite — Քր. արագ-արագ (ծնթ. թարգմ.):

միտուած էր օգնելու ոտնահարուած ճշմարտութեանը՝ կոխուտելով այդ անտանելի թուրքերից մի քանիսի ոտքը: Զանձրոյթն անհետացաւ. այստեղ կեանքի ու մահուան խնդիր էր: Այդ պատճառով էլ հարկաւոր էր ճարպիկ լինել ու չափազանց արագ գործել:

Ճամբարում ժամադրութիւնը ժամը երկուսին էր նշանակուած, բայց ժամանակն անցնում էր, ու ոչ ոք յստակ ծրագիր չունէր. նախ եւ առաջ հարկաւոր էր ուժերը հաշուել. Զարեհը, Մարի-ժոզեֆինը, կառքն ու կառապանը կազմում էին փրկութեան գործողութեան անհրաժեշտ միութիւնը, բայց ինչպէ՞ս դուրս հանել այդ թշուառներին ճամբարից: Ու արդեօք միայն նրանց:

Բոլորը քննարկում էին, վարկածներ առաջ քաշում («Իսկ յետոյ, — մտածում էր Նազիրը, — չէ՞ որ Զելալը կայ, որ իրեն է սպասում այդ երեկոյ՝ ժամը տասին, եւ որին հարկաւոր է հաղորդել մի ստոյգ ծրագիր ու մի քանի տեղեկութիւն տալ Ազնիւի մասին: Լաւ կլինէր աղջկան նրան վստահել, որպէսզի նա թաքցնէր, իսկ յետոյ միգուցէ նաեւ ամուսնանար»): Նազիրը լաւ էր յիշում այն երեկոն, երբ Զելալը թակում էր ու թակում դարպասը, փնտրելով իր աղանեսակին, որի համար ամէն ինչի պատրաստ էր: Բայց խոհեմօրէն ոչինչ չասաց իր այս ծրագրի մասին Իսմէնէին ու Զարեհին):

Մինչ այդ արդէն ժամանակն էր պահակին հանդիպելու: Այսպիսով, ժամը երկուսին Արեւելեան դռան մօտ՝ չինարի շուքի տակ սպասող գոյգն այժմ շատ աւելի յուզուած էր ու շփոթուած, քան մի քանի ժամ առաջ: Արեւը կիզում էր, Իսմէնէի ու Նազիրի սիրտը կծկւում էր. զգում էին մահուան հոտն ամէնուրեք, իսկ կաղ զապտիէն չկար ու չկար: Տարագիրները ճամբարները ձգւում էին անծայր ու անվերջ, մահուան գարշահոտութիւնը թանձրացած լճացել էր: Այս ու այն կողմից ծուխ էր բարձրանում:

Եւ ահա հեռուում ինչ-որ բան շարժուեց: Կաղ զապտիէն էր, որ գաղտագողի ու շեղակի քայլերով գալիս էր: Նրա ետեւից,

կարծես պատահամբ, առաջանում էր գէր ու անխնամ տեսքով մի սպայ՝ ծանր շնչառութեամբ: Հրամանատարն էր:

Վերջապէս ամէն ինչ կենդանացաւ. հէնց նրա, այս հասուն սպայի (որն ակնյայտօրէն չէր ախորժում իրեն յանձնարարուած ծանր պարտականութիւնից ու ջանում էր օգտագործել պատեհ առիթը) գլխում էր ծագելու աւելի յստակ մի գաղափար՝ պարզ, դիւրին, իրագործելի, բոլորի համար շահաբեր: Երբ Իսմէնէն նրան յայտնեց, որ դիւանագիտական կառք կար պատրաստ, որովհետեւ Ֆրանսիայի հիւպատոսի կինը մտերիմն էր մի հայ բժշկի, որի տարագրուած ազգականներին հարկաւոր էր փրկել, հրամանատարը հարթեց ճակատն ու որոշեց.

— Բժիշկը կգայ ինձ բուժելու: Լեարդի ցաւն, իրօք, ինձ հանգիստ չի տալիս: Յանձնակատարս, որ մոլեռանդ իթթի-հատական է, հէնց ինքը կգնայ իբր իմ վաղեմի բարեկամուհու՝ հիւպատոսի կնոջ մօտ՝ իմանալու մի լաւ բժշկի հասցէ, որն այս գիշեր՝ ժամը մէկի մօտ, ինձ պէտք է քննի ճամբարում: Դուք կժամանէք հիւպատոսութեան կառքով, որի մէջ կրկնակի յստակ պատրաստած կլինէք: Մինչ բժիշկն ինձ կքննի, դուք կթաքցնէք այդ մարդկանց, որոնց ով լինելն ու քանակը չեմ ցանկանում իմանալ: Աղմուկ, տազնապ, հարցեր չլինեն. այլապէս բոլորիս կբռնեն: Լեարդս ցաւում է, եւ լաւ բժշկի կարիք ունեմ. միայն սա գիտեմ, եւ միայն սա է ինձ հետաքրքրում: Վաղը, երբ ամէն ինչ աւարտուած կլինի, հինգ հարիւր ստերլինգ (ինչպէս տեսնում էք, էժան գին. եմ ասում, արդէն ծեր եմ, ապրանքն էլ աւերուած է) կյանձնէք կնոջս՝ Լեյլային, որ բնակուած է ձկան շուկայի մօտ գտնուող ժամանակակից երկյարկանի առանձնատանը: Բոլորը գիտեն այդ մասին: Ես այս մնացած դժբախտներին հետ ճամփայ պէտք է ընկնեմ: Ցանկացած այլ մանրամասնի համար պայմանաւորուէք այստեղ Սելջուկի հետ: Նրա հասանելիքը տալը ոսկեղրամ է:

Արտխառնոցի (միգուցէ թախծի կամ մեղքի) մի արտայայ-

տուժիւնն ի յայտ եկաւ այդ պահին սպայի գէր դէմքին. նա կարծես ինչ-որ բան էր ցանկանում աւելացնել, բայց յետոյ անմիջապէս շրջուեց ու հեռացաւ՝ ծխախոտ վառելով, կարծես մի երկու քայլ անելիս լինէր մարսողութեան համար: Իրօք, դէմքը դեղնաւուն էր, աջ ձեռքը ամուր սեղմել էր լեարդին:

«Միգուցէ, — մտածում էր Նազիմը, — իրօք հիւանդ է»: «Միգուցէ, — մտածում էր Իսմէնէն, — կարելի էր սակարկել հինգ հարիւր ստերլինգի շուրջ»: Բայց հիմա ուշ էր որեւէ բան քննարկելու համար: Ժամանակը վազքի մէջ էր:

Իսմէնէն, Նազիմն ու Սելջուկը կասկածամտօրէն նայեցին չորսբոյրը, ապա նստեցին ծառի տակ: Հեռատես Իսմէնէն հանեց երկու թուզ, մի մեծ հաց ու մի շիշ ջուր: Ուտելու եւ զրուցելու ընթացքում ձեռքից ձեռք փոխանցուեց հինգ ստերլինգը:

— Միւս հինգը՝ վաղը, բարեկամս, — շնչաց Նազիմը: Գնա Հալէպի Եղբայրակցութեան առաջնորդի մօտ ու նրանից ստացիր:

Սելջուկը ծանրօրէն համաձայնութեան նշան արեց: Ամբողջ Կայսրութեան մէջ առասպելական էր Մուրացկանների Եղբայրակցութեան վստահելիութիւնն ու գաղտնապահութիւնը: Նրանց գործերը կարող էին մուր լինել, բայց տուած խոստումը միշտ յստակ էր: Սելջուկը կարող էր մատնել եւ գուցէ աւելի շատ շահէր: Բայց մշուշոտ կերպով զգում էր, որ ինքը՝ Աստուած էր իրենց այս գործը յանձնարարել, իրենց՝ այդ երկու կաղերին, աշխարհի դիրտին, իրեն ու Նազիմին՝ դաշտի վերջին զինուորին ու մուրացկանին: Եւ յետոյ, Նազիմից վախենում էր, բայց եւ համակրում էր, մինչդեռ երփներանգ լաթերի մէջ կոլոլուած Իսմէնէի մէջ տեսնում էր երկաթեայ վճռականութիւն:

— Երեք ժամ անց նորից կգաս այստեղ, — ասաց Իսմէնէն: — Իսակ անունով մի մարդ քեզ կսպասի: Այս առաւօտ նրան ոչ ոք չի տեսել ճամբարում, բայց Մադամ Շուշանիկը նրան լաւ գիտէ: Դու նրան քեզ հետ կվերցնես՝ ասելով, որ զար-

միկդ է, ու կտանես տիկնոջ մօտ: Կինը գիտէ, թէ ով է նա, ու վստահում է նրան: Մի փոքր ջուր ու հաց կտաս Շուշանիկին, երեխաներին ու Մադամագել Ազնիւհին, եւ ուրիշ ոչինչ, որպէսզի ոչ ոք չկասկածի: Իսակը նրանց կխնամի ու քեզ կօգնի վճռական պահին: Ասա, որ համր է կամ Լուսթեան Ուխտ է արել, բայց չխօսեցնես, թէ չէ բոլորը կհասկանան, որ յոյն է:

Իսկ հիմա հարկաւոր էր վագել Զարեհի մօտ, որ երկու փողոց այն կողմ՝ կառքի մի անկիւնում կծկուած, սպասում էր: Մի փոքր վտանգաւոր էր, եւ կարող էր կասկած յարուցել այն փաստը, որ Յրանսիայի հիւպատոսութեան կառքը երկար ժամանակ անշարժ կանգնած էր արեւի տակ, կառապանն էլ առերեւոյթ համարեա քնած էր. բայց ուրիշ ելք չկար: Ուրիշ ոչ մի կերպ Զարեհը ապահով չէր լինի, իսկ Մարի-Ժոզեֆինն էլ չէր կարող նրա հետ երեւալ հասարակութեան մէջ. պատուի հարց էր, առաւել եւս Յրանսիայի համար, որը պատերազմի մէջ էր հէնց նոյն Թուրքիայի հետ:

Կառապան Ժան-Ֆիլիպ Օրբըրը՝ միանգամայն արթուն, մինչեւ աչքերն իջեցրած կլոր գլխարկի տակից չորսբոլորն էր զննում: Անհանգիստ էր, թէ եւ ամէն ինչ կարծես կարգին էր: Երբ տեսաւ անկիւնը շրջանցող Իսմէնէին ու նրան շնչասպառ հետեւող Նազիմին, ձիերին արագ սլացքի մէջ դրեց՝ առանց Զարեհին զգուշացնելու: Կտրուկ կանգ առաւ յոյն կնոջ առջեւ. Զարեհն իր խոր թմբիրից ցնցուեց ու հասկացաւ, որ հարկաւոր էր շտապել, ու բաց արեց դռնակը, երբ կառքը դռուս շարժման մէջ էր: Իսմէնէն ներս ցատկեց, ապա դուրս թեքուեց, ու Զարեհի հետ ճիշտ ժամանակին ներս քաշեցին Նազիմին: Իսկ երբ կառքը շրջանցեց անկիւնը, ճանապարհի միւս ծայրին յայտնուեցին երեք զինուոր, որոնց կանչել էր մօտակայ տների բնակիչներից մէկը, երբ ետեւի դռնից տեսել էր կառքը:

Բարեբախտաբար, ցերեկուայ թիթեւ քնի ժամն էր, ու տղան, որ գաղտնի ուղարկուած էր կուսակալութիւն, մեծ

դժուարութեամբ կարողացաւ իր ետեւից բերել զինուորներին, որոնք այժմ լուռ էին հեռացող կառքի ձայնը միայն, եւ ոչինչ չէր կարող նրանց ստիպել վազելու կառքի ետեւից յուլիսեան այդ օրը հիւանդագին տաքութիւնից խեղդող ժանտախտի վտանգով լի քաղաքում:

Իսմէնէն ու Նազիմը կարողացան Ջարեհին ամէն ինչ պատմել ու շնչասպառ, յուսահատ շտապեցին Մարի-Ժողեֆինի մօտ: Այժմ Փրանսուհին դարձաւ իրավիճակի տէրը: Վիթ-Վիթ բացատրեց ժան-Ֆիլիպին, որ տախտակ, մեխ ու մուրճ հայթայթէ՛ր՝ կառքը ձեւափոխելու համար: Կինը, Ջարեհը, ժան-Ֆիլիպը Վիթ-Վիթ փորձեցին կառուցել կրկնայատակը, որն այնքան էլ դիւրին չէր: Գիրուկ նորմանդուհի խոհարարը, որ ոչ ոքից վախ չուներ ու հինգ մատի պէս գիտէր Հալէպը, Իսմէնէի ու Նազիմի հետ Վիթ-Վիթ գնաց Իսակին պատրաստելու ու ճամբար տանելու: Խոհարարուհին պէտք է մնար այծերի ու էջերի հետ: Նա ուներ մի խոհանոցային դանակ ու մի հաստ գաւազան, որից երբեք չէր բաժանուում, ու որը նրան օգնում էր գնումներ կատարելու ժամանակ շուրջը խմբուած հետաքրքրասէրների ամբոխը ցրելու՝ յատուկ ճարպկութեամբ բանեցնելով այն:

Իսակն իր դերը ստանձնեց՝ ուրախ լինելով, որ վերջապէս կարող էր ինքն էլ օգտակար լինել, ու նախանշուած ժամին Իսմէնէի ընկերակցութեամբ ուղղուեց դէպի չինարի բարձր ծառը: Մինչ այդ Նազիմը Մուրացկանների Եղբայրակցութեան պարագլխի մօտ էր, որին այժմ պէտք է ամէն ինչ պատմէր ու վճարէր՝ իրենց պաշտպանելու համար:

– Գտայ հայ բժշկին, – սկսեց նա, – բայց քեզ երէկ ճամար-տութիւնը չասացի:

– Գիտեմ, որ երկու յոյների հետ ես, բարեկամս, – ասաց պարագլուխը: – Հաստատ, ինչ-որ պատճառ կար ինձ ճիշտը չասելու համար: Բայց հիմա պէտք է ինձ ամէն ինչ ասես: Այդպէս է պէտք:

Եւ այսպէս, Նազիմն ամէն ինչ պատմեց Հալէպի մուրաց-

կանների ծեր պարագլխին. պատմեց նաեւ իր սկզբնական մեղքի, լրտեսի արհեստի, ինչպէս նաեւ Շուշանիկին նուերուած լինելու մասին: Եւ երբ աւարտեց, ծերունին փոքր-ինչ լուելուց յետոյ ասաց.

– Հանգիստ եղիր, մենք քեզ կօղնենք: Հինգ ստերինգ տուր կազ զինուոր Սելջուկին ու վճարիր Եղբայրակցութեանը՝ ցուցաբերած օգնութեան համար: Իմ մարդկանցից տասը կէսգիշերն անց՝ կսպասեն պարսպի մօտ: Նրանց չփնտրես, այնտեղ պատրաստ քեզ կսպասեն եւ կմիջամտեն, եթէ պէտք լինի: Իմ մտերիմը կլինի Ջեմալ փաշայի մօտ՝ իր տեղում, որպէսզի ինձ տեղեկացնի, եթէ չնախատեսուած ինչ-որ բան տեղի ունենայ: Վարպետ ատաղձագործներից մէկը՝ որդիների հետ, մէկ ժամ անց կլինի Փրանսական դեսպանութիւնում:

– Բարեկամս, եւս մէկ ծառայութիւն, – ասաց Նազիմը: – Հարկաւոր է գտնել հինգ հարիւր ստերինգ՝ ճամբարի հրամանատարի կնոջը յանձնելու համար: Կարո՞ղ ես օգնել, որպէսզի ոսկէ ստերինգի վերածենք մեզ մօտ եղած դրամը, թանկարժէք քարերն ու զարդերը:

– Կարող եմ եւ կանեմ, – պատասխանեց մուրացկանների պարագլուխը, որը ճանաչում էր քաղաքի բոլոր լուսայափոխներին, – եւ քեզ լաւ ծառայութիւն կմատուցեմ: Այս պատմութիւնը պէտք է լաւ վախճան ունենայ: Եւ որպէսզի քեզ ցոյց տամ իմ բարեացակամութիւնը, կսկսեմ ստերինգները հաւաքել՝ դրամն ու թանկարժէք քարերն ինձ յանձնելուց առաջ:

Նազիմը շրջեց գրպաններն ու առանց հաշուելու նրան տուեց մօտի եղածը, ապա, թեթեւացած, ծերունու հետ ափիոնով ծխամորճ վայելեց, ու իրենց զգացին Հարուն ալ Ռաշիդի ասպետներ:

Ապա, Վիթ-Վիթ, անվերջանալի օրը վերստին սկսեց սուրայ: Ատաղձագործը որդիների հետ անցաւ Մարի-Ժողեֆինի, Ջարեհի ու ժան-Ֆիլիպի սկսած խառնակ գործին:

Լուսթեամբ, մի քանի ժամուայ ընթացքում վարպետօրէն ամուր կրկնայատակ պատրաստեցին, որը մոտք ունէր դէպի կառքի ետեւը, դրսի կողմից էլ ծածկեցին որթատունկի ճիւղերով: Բազմաթիւ անցքեր բացեցին նոր յատակի վրայ, որոնցից իւրաքանչիւրը հմտօրէն թաքցուած էր աւելի մուգ գոյնի փայտեայ շարժական շեղանկիւններով, որոնք մի անկիւնում կծկուած իսմէնէն պէտք է անմիջապէս բացէր, երբ փախստականներն արդէն ներսում լինէին:

Կրկնայատակի վրայ վերստին տեղաւորեցին կաշուէ փառահեղ նստատեղերը, քաշմիրի շքեղ շալերը, որոնցով Մարի-ժոզեֆինը առաւել ֆրանսական տեսք էր տալիս կառքին, թէյի ճանապարհորդական սպասքի արկղիկը, որի մէջ կար մէկ թերմոս՝ զօրացուցիչ խմիչքով, մէկ ուրիշն էլ՝ սուրճով լի, եւ մի տուփ պաքսիմատ:

Ջարեհի բժշկական ճամպուրակը՝ պաշտօնական առիթը, դրուեց նստատեղերից մէկի վրայ. բայց յետոյ աւելի նպատակայարմար գտան, որ Ջարեհն այն իր հետ տանէր Մարի-ժոզեֆինի կանչին պատասխանելու ժամանակ, ինչպէս վայել էր ամէն մի լաւ բժշկի:

Իսակին ու Իսմէնէին ընկերակցեց մուրացկանների պարագլուխը, որպէսզի դատարկէր նրանց գրպանները: Բայց Իսմէնէն խոհեմօրէն առանձնացրեց թանկարժէք քարերով ու զարդերով լի մի տոպրակ՝ վաղուայ օրուայ համար: Մուրացկանների պարագլխի հետ, որն ամէն ինչ հասկացել էր, իրար աչքերի մէջ նայեցին ու բազմախորհուրդ լուեցին:

Ջարեհն ու Մարի-ժոզեֆինը դեռ ու դէն էին վազվզում իրարից չհեռանալով: Յաւերժ կյիշեն այդ օրը՝ որպէս իրենց երջանկութեան գագաթնակէտ: Կարծում էին, որ ամէն անկիւնում տեսնում էին միայն իրենց հաւանական ձախողման տագնապն ու յուսահատ սարսափը, ինչպէս նաեւ ամէն ինչ հարկ եղած ժամանակին անելու չկարողանալու վտանգը եւ չէին նկատում, որ այդ վտանգներից, այդ տագնապներից նրանց կեանքը իմաստ էր ստանում. եթէ Ջարեհը դառնում

էր ասպետ, ապա Մարի-ժոզեֆինը դղեակի տիրուհին էր, գուսանների երգած ժոֆրէն ու նրա սրտի դիցուհի Մելիզենդան:

Յաջորդ դանդաղընթաց տարին կմեղմէր նրանց սրտերն ու ցոյց կտար տարբերութիւնը պատերազմը յաղթող Ֆրանսիայի դուստր գեղեցկուհու ու պարտութեան դրոշմը կրող հայ նուաստ բժշկի միջեւ. ազգութեամբ՝ հայ, հպատակութեամբ՝ թուրք. եւ դեռ աւելին, յանկարծ ծանրաբեռնուած գաղտնի մի ընտանիքի սարսափելի պատասխանատուութեամբ:

Միւսները՝ Իսմէնէն, Նազիմը, Իսակը, նորմանդացի խոհարարուհին, ֆրանսացի վարորդը, մուրացկանները, կաղ զապտիէն, ամէնքն իրենց վերապահուած գործին էին հրաշքի ակնկալիքով...

Ժամը ութի մօտ ամէն ինչ հանդարտուեց: Այժմ հարկաւոր էր միայն սպասել, որ ճամբարի հրամանատարն իր խոստումը կատարէր: Որոշեցին, որ նրա կողմից ուղարկուած սպան, երբ հասնէր դեսպանութիւն, պէտք է աշխոյժ եռուզեռի մէջ գտնէր այն, նոյնիսկ ուշ գիշերին: Բրիջի խաղ յօրինեցին, մի քանի մարդ հրաւիրեցին, որ երկու սեղան գրաւէին, իսկ բարեացակամ հիւպատոսն էլ սկսեց անցուղարձ անել սրահում:

Բենուայ դը Սէն Լազարը շատ աւելի մեծ էր Մարի-ժոզեֆինից եւ ներողամիտ ու ժպտադէմ էր կնոջ հետ, ինչպէս խորամանկ աղուէս տանտէրը՝ թուրքերի ու քաղաքի արաբ բնակիչների հետ: Համակրում էր Ջարեհին ու յարգում որպէս բժշկի: Իսկոյն դեսպանատուն բերուեցին Սիկիլիական անուշեղէնի սրահի լաւագոյն պաղպաղակով սկուտեղները, ինչպէս նաեւ արեւելեան քաղցրաւենիք ու ժամանակի նորոյթը համարուող թիւուածք՝ փխրուն «Կատուի լեզուներ», սեխի շաքարապատ խորանարդիկներ, նշածաղից պատրաստուած փոքրիկ ձմերուկներ, իսկ սպասաւորների համար՝ հորում սառեցրած ձմերուկ ու սեխ:

Ամօթ չէ ուտելը, երբ մարդն ինքն իրենից գոհ է: Մտալուստ գիշերուայ տազնապն ու սպասուամբ գրգռում էր բոլորի ախորժակը, լաւատեսութեան մեղմ հովն սկսում էր տարածուել:

Մինչ այդ, Իսակը սպասում էր չինարի տակ: Հնագանդորէն սպասում էր եւ անելու էր այն ամէնը, ինչ որ Իսմէնէն էր իրեն պատուիրել: Նա լաւ էր կարողանում մխիթարել: Նեարդայնացած պրպտեց գրպանները, շօշափեց ջրամանն ու հացի կտորները: Յոյս ունէր, որ կկարողանար գործը գլուխ բերել: «Լաւ է, որ լուելու եմ, ապա թէ ոչ՝ յիմարութիւններ դուրս կտամ»,— մտածեց նա: Այս անորոշ, տարտամ քահանայից քարոզ ասող դուրս չէր գայ. իրեն էլ մեղաւոր ու դատարկուած էր գգում: Այրիութիւնն իր համար չէր, մտածում էր նա, յետոյ էլ արդէն կապուել էր Իսմէնէին: Կարո՞ղ էր արդեօք քահանան ամուսնանալ եղբրամօր հետ: Այս հարցն էր այդ ընթացքում պտտում նրա դատարկ գլխում, ինչպէս յարդի շիւղը ատամների արանքում:

«Երբ այս ամէնն աւարտուի (նա եւս օդում լաւատեսութեան նշաններ էր տեսնում եւ մտածում, որ դրանք գալիս էին բարի Կատերինայի ու Դիմիտրակիի մօտից, որոնք, վերջապէս, երջանիկ էին միասին), եւ ես էլ արդէն ներում ստացած լինեմ, ուզում եմ վերադառնալ տուն, նորից կապույտ պատմուճան հագնել, պոչիկս երկարացնել ու նորից քահանայութիւն անել: Պատերազմից յետոյ ծիսակատարութեան կարիքը շատ կլինի. ես էլ լաւ ձայն ունեմ ու բոլոր երգերը գիտեմ»:

Այդ պահին եկաւ կաղ զապտիէն ու նրան յանձնեց կեղտոտ համազգեստի պէս մի բան:

— Հագնուիր, գնում ենք,— շշնջաց նա: — Ժամանակ չկայ: Բարեկամներիդ կասես, որ հանգիստ լինեն ու արթուն մնան մինչեւ գիշեր: Բարեբախտաբար, մարդ չկայ մօտերքում. քեզ նրանց մօտ կտանեմ, բայց պէտք է շտապես: Ամբողջ ճամբարն իրար է անցել, իսկ առաւօտուայ սպան կարող է ամէն վայրկեան վերադառնալ:

Իսակը հաւանութեան նշան արեց. արդէն համրի դերի մէջ էր մտել:

— Հայերն ապստամբում են,— շարունակեց զապտիէն: — Շատ ժամանակ անցաւ, մինչեւ որ այդ կծծի խանութպանները հասկացան, որ փախուստ չկայ, որ գնում են դէպի մահ: Բայց վաղը նրանց մեկնելուց առաջ մի լաւ տղայ կընտրեմ ու ինձ հետ կվերցնեմ: Հիմա, որ մի քիչ դրամ ունեմ, ուզում եմ գնալ: Այսպիսով, նաեւ բարի գործ արած կլինեմ:

Իսակը չպատասխանեց: Սարսափելի վախ ունէր, ինչպէս այն ահաւոր գիշերն Ագարակում. բայց այս անգամ պատրաստ էր, Իսմէնէից էլ շատ էր վախենում: Յետոյ, աւելի խոր մտածելով, կրկնեց. «Այլեւս ոչինչ չունեմ կորցնելու», եւ փորձում էր համոզուել, որ, իսկապէս, այդպէս էր. յամենայն դէպս գրպանի մէջ ունեցած փոքրիկ Միքայէլ Հրեշտակապետն անպատճառ կօգնէր իրեն:

Գիշերը հիւսեց փրկութեան պատրանքի որոգայթը: Իսակը գտաւ Շուշանիկին արթուն, աչալուրջ, երեխաների վրայ կիսապառկած, խելացնոր հրահանգներ շշնջալիս: Երեխաներն այլեւս չէին հնազանդուում, անվերջ թափառում էին ճամբարում՝ անօգուտ փնտրելով հացի կտոր, սերմ, որեւէ մոռացուած կճեպ: Աշխարհը փակուել էր իրենց վրայ, ու գոյատեւում էին՝ գետինն անհամբերութեամբ փորփրելով ու պրպտելով: Պէտք չէր աչքերը բարձրացնել դէպի երկնքի դատարկ կամարը, դէպի հեղձուցիչ, անշարժ տապը. պէտք չէր նկատելի դառնալ վերեւից նայող անողոք Աստծոյ կողմից, որ իրենց ուտելիք չէր տալիս (փրկուելուց յետոյ երեխաներն ամիսներ շարունակ չէին յոգնի իրենց հացից. նուբարն ու Անրիեթը շարունակ տիկնիկի կվերածէին այն):

Շուշանիկին օգնում էր մեծ դուստրը՝ Արուսեակը՝ հանդարտ, փոքր-ինչ տգեղ դեռահաս մի աղջիկ, որը լուռ տարաւ իր կրած բռնաբարութիւնները, որոնց մասին երբեք չխօսեց. հաւանաբար քիչ հաճոյք էր պատճառել իրեն

տարած գինուորին, բայց չէր էլ զայրացրել նրան: Զապտիէն աղջկան ետ էր բերել՝ ասելով, որ բանի պէտք չէր:

Ազնիւը առանձին էր նստած, ինքնամփոփ, դատարկ Հայնացքով: Իսակը նախ նրա մօտ գնաց, ջուր ու Հաց տուեց, որը աղջիկն արագ շարժումով վերցրեց: Սակայն ոչ մի ձեւով չարձագանքեց նրա խօսքերին: Տխուր Հառաչելով, Իսակն այնուհետեւ վագեց Շուշանիկի մօտ, նրան տուեց ջրամանն ու Հացի մնացորդը:

– Մայրիկ, այս գիշեր Սելջուկն ու ես ձեզ դուրս կհանենք այստեղից: Քո տագր Զարեհը կառքով կգայ:

Շուշանիկը լսեց ու իր մոռացուած ժպիտից մի նշոյլ պարգեւեց Իսակին:

– Ի՞նչ հաւատարիմ ես, Իսակ: Երեխաներն ու ես քեզ երախտապարտ ենք, բայց յատկապէս Սմբատն է քեզ շնորհակալ իմ միւս որդիների հետ:

Մեկնումը կազմակերպող սպայի հրահանգով քարաւաններն այժմ առաւել խիստ հսկողութեան տակ էին: Հալէպը եռում էր դժգոհութեան ու խռովքի մէջ: Արաբները յուզուած էին ու բորբոքուած: Նրանց դուր չէր գալիս այն, որ շրջապատուած էին անբացատրելի ողբերգութեամբ, զգում էին այդ սարսափը, չորսբոլորը տարածուած մահուան հոտը, եւ ոչ ոք ի զօրու չէր միջամտելու: Զապտիէները միեւնոյն դաժանութեամբ ետ էին պահում Հետաքրքրասէրներին ու կարեկցողներին:

Այսպիսով, Սելջուկն արագ դուրս քաշեց «զարմիկ» Իսակին ու նստեցրեց գետնին՝ որպէս իր էշին պահակ: Իսակը լուռ էր: Արդէն նրա համար սովորութիւն էր դարձել օրեր շարունակ լռելիայն մնալ էշերի հետ. վատ էլ չէր: Աղօթում էր ու ննջում:

Մինչ այդ Նազիմը տեղեկացրեց Իսմէնէին Զելալի հետ ունեցած իր ժամադրութեան մասին: Իսկ Իսմէնէն լաւ չէր հասկանում, թէ Նազիմն ինչու էր ցանկանում Զելալի հետ հանդիպել. կարծում էր, թէ սպայի մշտական յաճախորդնե-

րից էր: Բայց արդէն վստահում էր նրան: Ամէն պարագայում Նազիմը պէտք է ճիշտ ժամանակին հիւպատոսարան վերադառնար եւ մտածում էր, որ Զելալի հետ հանդիպումով Աստուած իրեն բաւականին ճիշտ ճանապարհ էր ցոյց տուել: Այսպիսով, փոխ վերցրեց մի հնազանդ ջրի ու մարդկանցով վիտացող գիշերային Հալէպով ճանապարհ ընկաւ՝ հիւսելու փրկութեան եւս մէկ ցանց: Բայց ի՞նչ ասել Զելալին: Որքա՞ն բան պատմել:

Նազիմի ողջ միտքը սեւեռուած էր սիրային այն հեռաւոր աղերսանքների վրայ, որոնց ունկնդիր էր եղել գաղտնի: Բայց այն պահից ի վեր, աւա՛ղ, ժամանակի ու արեան մի անդառնալի գետ էր հոսել...

Զելալն արդէն սպասում էր ճանապարհին: Նախորդ օրուանից սպասում էր Նազիմին՝ որպէս ճակատագրի կողմից ուղարկուածի: Զելալը սնապաշտ չէր, ժամանակակից մտածողութիւն եւ կորովի ու քաջ հոգի ունէր, բայց երբ հայնացքն հայնացքի առաւ մուրացկանի հետ, ինքն իրեն դատապարտեց:

Ինչպէ՞ս կարողացաւ լքել իր աղանեակին, նրան, որի ձեռքերն էր բռնել այն հոտաւէտ թփերի հովանու ներքոյ: Սարսափելի, իրական պատկերները ծանրանում էին նրա սրտին: Ա՛յ՛ որ աղջիկն իրականում չէր մերժել նրան, կոյսի ամօթխածութիւնն էր, որ նրան ստիպել էր ոտքի ցատկել ու ետ ընկրկել: Աղջիկն իրականում նրան «ոչ» չէր ասել: Մինչդեռ Զելալը լքել էր, յանձնել նրան՝ իր ամբողջ անպաշտպան գեղեցկութեամբ, գինուորներին, զապտիէներին...

Այն ամէնի գիտակցումը, ինչն, անկասկած, տեղի էր ունեցել գաղթի ճանապարհին, երկաթեայ մամլիչի պէս ճզմում էր նրա սիրտը: Իր աղանեակը, իր մայիսեան վա՛րդը... Յանկարծ յիշեց հովանու վարդերի թաւշեայ մուգ գոյնն ու բոյրը: Ինչպէ՞ս կարող էր մոռանալ այդ ամէնն ու անհետանալ Հալէպում: Ինչպէ՞ս էր նա հիմա եւ, յետոյ, կենդանի՞ էր արդեօք:

– Այո, կենդանի է, – անմիջապէս ասաց Նազիմը՝ մօտ գալով: – Ազնիւր կենդանի է, – կրկնեց նա (Ջելալը չէր մտածում նրան հարցնել, թէ որտեղից գիտէ այդ ամէնն այդքան մանրամասնութեամբ): – Կենդանի են նաեւ Մադամ Շուշանիկն ու նրա դստերը (վերապրեալ որդու՝ Նուբարի մասին ցանկալի էր առայժմ չխօսել): Նրանց գտել ենք: Փոքրիկ քաղաքից քչերն են այստեղ հասել:

Այդ պղծուած աղջկայ հանդէպ Ջելալն անսահման խղճահարուածութիւն, բայց եւ գաղտնի թեթեւութիւն զգաց, որովհետեւ կարող էր նրա փրկիչը լինել, սուրացող ձիով փախցնել նրան, սնել, խնամել եւ յետոյ ամբողջովին տիրանալ՝ առանց հպարտութեան յանկարծակի տատանումների, հնազանդ ու երախտապարտ: Ի վերջոյ, կին էր: Այլեւս ոչ ոք ու ոչինչ չկար, որ արգելք հանդիսանար Ազնիւին տիրանալու, թէեւ նրան կնութեան առնելու ու միասին Փարիզ փախչելու երազները Ջելալին արդէն թւում էին առաւել անպատշաճ, քան միամիտ:

Հնազանդ կանանց (ինչպէս նաեւ ողջ քաղաքը) նուաճողի հպարտութիւնը վերստին երեւաց արեւմտեան ջնարակի ներքոյ, ու Ջելալն անմիջապէս հրաժարուեց իր փշրուած, ռոմանտիկ երազից:

Նազիմն այս ամէնը կարդում էր նրա դէմքի վրայ ու համամիտ էր: Ջելալի տունը, նրա կարծիքով, ապահով պատուպարան էր, եւ շատ հայ աղջիկներ էին այդ կերպ փրկուել: Ուստի կտրուկ որոշեց յայտնել, որ ընտանիքի վերապրեալները ճամբարից այդ գիշերը դուրս կբերուէին ազգականներից մէկի կողմից: Եթէ Ջելալն ուզում էր Ազնիւին, ապա թող կէսգիշերից յետոյ Արեւելեան պարսպի մօտ գտնուող չինարի տակ, մի քանի ընկերների ու ձիերի հետ ծածկոց ու զօրացուցիչ խմիչք վերցրած, սպասէր: Երբ գար պահը, ինչ-որ կերպ նրան կտեղեկացնէր:

Առանց նրանից պատասխանի սպասելու՝ Նազիմն անհանգիստ հոգով, կտրուկ շրջեց ջորին ու արագ հեռացաւ:

Ջգոււմ էր Ազնիւի անշարժ աչքերը, որ ծանրանում էին իր վրայ, վախենում էր Իսմէնէից ու նրա հետաքննիչ աչքերից, բայց եւ ուրախ էր, որ ամէն ինչ կազմակերպուեց, ու գոհ էր իր ունեցած դերից:

Այսպիսով, աւարտին հասաւ այդ անվերջանալի օրը: Արագ իջաւ յուլիսեան երեկոն: Կառքը պատրաստ էր, Իսմէնէն ու Նազիմն էլ՝ ներսը լուռ կծկուած, մինչդեռ ժանֆիլիպն ախորժակով ճաշ էր վայելում: Էշերն արդէն քնել էին, իսկ խոհարար նորմանդուհին ժամանակին վերադարձել էր, որպէսզի ճաշի սեղանը յարդարէր:

Ջարեհն ու Մարի-ժոզեֆինը ոչինչ չէին ասում հիւպատոսին, բայց նրանց մեղսակից մտերմութիւնը հասկանալի էր դարձնում մարդուն, որ ինչ-որ բան էր տեղի ունենում: Բենուան թոյլ ժպտաց՝ համոզուած, որ Մարի-ժոզեֆինը պէտք է փոքր-ինչ ցրուէր, զուարճանար՝ պատերազմով ու հայերի սարսափով պաշարուած այդ ահաւոր քաղաքից դուրս գալով: Այդուհանդերձ, համոզուած էր, որ կինը ոչինչ չէր անի իր եւ Ֆրանսիայի հեղինակութեան դէմ, ուստի գերադասեց ոչինչ չիմանալ: Մտածեց ինչ-որ փոքր խաբէութեան մասին. բայց նոյնիսկ հեռուոր պատկերացում անգամ չէր կարող ունենալ, թէ ինչի էր ծառայելու իր կառքն այդ գիշեր:

Սկսուեց բրիջի խաղը: Բոլորն արտաքուստ ուրախ էին ու անհոգ. բայց իրականում այդպէս չէր: Մահուան գարշահոտութիւնը ճնշում էր քաղաքը: Կերան, խմեցին, կատակեցին: Նախանշուած ժամից փոքր-ինչ առաջ եկաւ թուրք սպան ու հարցրեց Մարի-ժոզեֆինին, ընծաներ յանձնեց նրան իր հրամանատարի կողմից, «որին, Մադամ, Դուք շատ լաւ էք ճանաչում: Այժմ վատ է զգում իրեն, լեարդի սուր ցաւ ունի: Շատ է տառապում ու վստահում է Ձեզ, գիտէ, որ Հալէպի լաւագոյն բժիշկներին էք ճանաչում»:

– Ահա լաւագոյնը, հէնց իմ կողքին է նստած, – ասաց Մարի-ժոզեֆինն ու առաջարկեց. – չէ՞ք ցանկանում մեզ

Հետ սեղան նստել ու մի գովազուցիչ խմիչք վայելել:

Սպան շոյուած տատանուեց, բայց ստոյգ հրահանգ ունէր. «Ի վերջոյ, Ֆրանսիան մեր դէմ է պատերազմում»: Իսկոյն մի միտք անցաւ նրա գլխով. «Ինչու՞ է հրամանատարը օգնութիւն խնդրում հէնց սրանից»: Ուստի մերժեց հրակէրը: Զարեհը ոտքի կանգնեց, վերցրեց իր ճամպրուկն ու ասաց.

– Մեզ կներէք: Գնացինք,– ու այնպիսի մի դող անցաւ նրա մարմնով, ասես այնտեղ՝ ճամբարում լինէր, ինչպէս ցանկացած մի հայ:

– Իսկ եթէ ես էլ գա՞մ,– ասաց Մարի-ժողեֆինը՝ կարծես մտազբաղ:

– Ո՛չ, ո՛չ, ի՞նչ էք ասում, Մարգամ. այդ ճամբարները Ձեր տեղը չեն,– վրայ բերեց սպան, իսկ Բենուան կնոջ վրայ մի կարծ, գրեթէ արեւակաւ հայեացք նետեց: Զարեհը չէր կարող նրան իր հետ տանել. չէ՞ որ արդէն Ֆրանսիայի կառքը սիրայօժար տրամադրել էին:

Այսպէս դուրս եկաւ այս պատմութիւնից Մարի-ժողեֆինը՝ այդ անուշիկ թիթեռնիկը, առանց որի ոչինչ Հնարաւոր չէր լինի անել: Զարեհը, որ նրան իր հետ էր ուզում տանել, չէր պատկերացնում, թէ ինչ սարսափելի նուաստացում կլինէր Շուշանիկի, Ազնիւի ու աղջիկների համար իր կողքին Արեւմուտքի գեղեցիկ, բուրումնաւէտ դստեր, այն էլ՝ Ֆրանսուհու ի յայտ գալը:

Կառքը արագ սլացաւ, հիւպատոսարանում էլ ակարտուեց բրիջի խաղը: Յուսահատուած կնոջ համակրանքից՝ Բենուան գրաւեց Զարեհի տեղն ու ժպտաց նրան:

Մինչ այդ Իսմէնէն ու Նազիմը կծկուած նստել էին կառքի մի անկիւնում: Ժան-Ֆրիլիպը հաւատացնում էր, որ կատուի պէս տեսնում էր մթանը եւ պատրաստ նստած էր կառուպանի տեղում:

«Ինչպիսի՜ կազմակերպուածութիւն,– կասկածանքի մի

ալիք անցաւ սպայի մտքով, բայց յետոյ, յիշելով իր հրամանատարի դեղնաւուն դէմքը, մոռացաւ ամէն ինչ ու ընկղմեց հաճելի մտքերի ծովը: Երանի այս բոխչը նրան հանգիստ նշանակի. այդ դէպքում ինքը կկարողանայ ստանձնել հրամանատարութիւնը, մտածում էր նա, ու լաւ ծառայութիւն կմատուցի մայրաքաղաքին: Այս տարեց ծառայողները չեն ախորժում այսպիսի «կեղտոտ» պաշտօններից, նրանք կցանկանային լրջօրէն մարտնչել իսկական թշնամու դէմ»: Նրա կարծիքով՝ հայերի բնաջնջումը սովորական յանձնարարութիւն էր, ինչպէս մէկ ուրիշը, նոյնիսկ կարիք չկար անմիջական միջամտութեան. բաւ էր հրամաններ արձակել: Այս ստորակարգ, երկչոտ ցեղերը պէտք է անհետանան՝ ի շահ Կայսրութեան: Այդպէս էլ կլինի:

Սուրում էր կառքը սպայի ձիու ետեւից՝ անցնելով արդէն ծանօթ արահետներով: Իսմէնէն ու Նազիմը գաղտնի, ցածրաձայն խօսակցում էին՝ առանց յստակ ծրագրեր կազմելու: Երբ պահը գար, կկողմնորոշուէին: «Բայց Զարեհը,– մտածեց Իսմէնէն,– չափազանց գունատ է, գլուխն է ցնցում, ձեռքերն է կոտրատում՝ արագօրէն վեր ածուելով ցանկացած մի հայի՝ մորթուելու պատրաստ»:

– Բժիշկ Զարեհ,– ասաց այդժամ Իսմէնէն՝ բռնելով նրա ձեռքերը,– նրանք զգում են վախի հոտը: Դուք չէք վախենում, բժիշկ Զարեհ, Դուք Հայէպում էք: Հիմա էլ ընտանիքի ղեկավարն էք: Մտածէք Ձեր եղբայր Իուրէնի մասին, որ դեռ ոչինչ չգիտէ. մտածէք Իտալիայի պրոֆէսորի մասին: Նրանք Ձեզ են վստահում, նաեւ Մարգամը: Դուք Մարգամի ասպետն էք, բայց այժմ նաեւ Շուշանիկ Մայրիկի դու Ձեր քոյր Ազնիւի: Կենդանի է նաեւ Նուբարը,– եւ իր անսանձ ոգու թրթիռով աւելացրեց,– այդ բոլոր անիծեալ շներին կխաբենք: Ես գիտեմ, որ Աստուած մեզ հետ է:

Զարեհն այլայլուած նայեց նրան ու ապաւինեց ողբասացին: Յուզուած սեղմեց կնոջ ձեռքերն ու այլեւս չցնցուեց: Դեռ աւելին, ուղղուեց ու պատուհանից նշան արեց կառքը

դանդաղեցրած սպային՝ ճանապարհը մատնանշելու համար. հեղինակաւոր նշան, յուսաց նա: Վարպետ բժշկին վայել նշան:

Ճամբարի մուտքի մօտ սպան թեթեւակիօրէն դանդաղեցրեց ընթացքը, ետեւի կառքը՝ եւս: Սպան իջաւ ձիուց, Զարեհն էլ՝ կառքից. վերջինս, առանց շրջուելու, գնաց՝ բժշկի իր օգնութիւնն ու խորհուրդը առաջարկելու:

Աղօտ լոյս էր շուրջբոլորը: Մի քանի զապտիէներ, յապտերները ձեռքներին, ուշադիր հսկում էին ճամբարը, որպէսզի որեւէ փախուստ չլինէր յաջորդ օրը նախատեսուած մեկնումից առաջ:

Կառապան ժան-Ֆիլիպը, պայմանաւորուածութեան համաձայն, իջաւ նստատեղից՝ ձեւացնելով, թէ փակում էր Զարեհի բաց թողած դռնակը: Նրա բարձրահասակ մարմնի ստուերում իսմէնէն ու Նազիմը սողացին ցած ու անհետացան կառքի ետեւում՝ չմոռանալով բացել ետեւի ծպտուած դուռն ու վերստին նրբօրէն վրայ դնել՝ յետագայում զգոյշ բացուելու պատրաստ:

Իսակն ու Սելճուկը պատրաստ կանգնած էին ստուերում: Կառապանը անտարբեր յենուած կառքի դռնակին, գրպանից հանեց ծխախոտն ու սկսեց անխռով ծխել՝ գլխարկի տակից նայելով չորսբոլորն ու անէծքներ ծամելով: Կիսամթան մէջ տկար հեծեծանքներ էին լսում, քայլեր, գաղտագողի շարժումներ եւ ժամանակ առ ժամանակ՝ մի ճիչ: Մահուան ու ապականութեան գարշահոտը կոկորդ էր խեղդում:

Ապա ամէն ինչ շատ արագ ընթացաւ: Մի թանձր ստուեր օրօրուէց կառքի ետեւում: Մանկան կարճ լաց, անզգոյշ մի շարժում: Ճամբարի միւս ծայրից երկու մարդ սկսեցին վազել, աւելի ուժեղ մի լապտեր լուսաւորեց շրջապատը: Եւ ամէն ինչ կորած կլինէր, եթէ Ազնիւր՝ քաղցրիկ բոլորիկը, որ վերջինն էր ընթանում դէպի փրկութիւն տանող ճանապարհը, հասկանալով ամէն ինչ, իր վրայ շատ արագ չկենտրոնացնէր ուշադրութիւնը:

– Ով սիրու՞ն, սիրու՞ն, – սկսեց երգել՝ Հպարտօրէն կանգ առնելով ու յանկարծակի զոհաբերութեան մէջ վերագտնելով իր անմեղ, հանդարտ ինքնավստահութիւնը, – Ով սիրու՞ն, սիրու՞ն, անիծեալներ, ես ձեզ ատում եմ: Զէք կարողանայ բոլորիս սպանել:

Մի ալեկոծ քամի անցաւ ճամբարով մէկ: Միւս կանայք եւս սկսեցին բոլորը միասին բղաւել՝ ձեռքերը երկինք պարզած, ինչպէս վրէժ պահանջող թօշնած ծաղիկներ: Անակնկալի եկած զապտիէները շտապեցին դէպի Ազնիւր, լուսաւորեցին միայն նրան, որ շարունակում էր երգել, մինչեւ որ թրի մի հարուածով կտրեցին նրա գլուխը:

Մնաս բարով, քաղցրիկ Ազնիւ, մնաս բարով Հայաստանի աղաւնեակ...

Մթան մէջ Շուշանիկն ու երեխաները մղուեցին դէպի կառքի կրկնայատակը: Ետեւում բացուած դուռը փակուեց. իսմէնէն, իսակն ու Նազիմն արագօրէն թաքնուեցին կառքի մէջ՝ տարածուելով յատակին, բացեցին փայտեայ տախտակները, որպէսզի օգ թափանցէր եւ շնջացին մխիթարութեան մի քանի խօսք: Հիւղակից դուրս եկաւ գունատ Զարեհը, որ զննել էր հրամանատարին, սեղմեց նրա ձեռքը, վերջին զգուշացումներն արեց ու դանդաղօրէն, ինչպէս նրան պատւիրուած էր, կառք բարձրացաւ:

– Ամէն ինչ կարգին է, – թեթեւացած շնջաց նրան ժան-Ֆիլիպը՝ ցուցադրական փակելով կառքի դուռը: Մի թռիչքով իր տեղը գրաւեց, մտրակեց ձիերին, ու արագ դուրս եկան ճամբարից:

Իսկ դրսում Զելայն էր սպասում ընկերների հետ: Նազիմը սարսուաց, բայց պէտք է նրան տեղեկացնէր ամէն ինչ, որովհետեւ յայտնել էր փախուստի մասին: Սակայն կառքն այժմ կանգնեցնելը քննարկումից դուրս էր. իսմէնէն հետ անհնար էր խօսել, ժան-Ֆիլիպն էլ սուրում էր քամու արագութեամբ: Իսկ երբ անցնում էին քաղաքի պարսպի մօտով,

Նազիմը պարզապէս սահեց դէպի Ջարեհը, բացեց դուռն ու գունդուկձիկ եղած՝ նետուեց դէպի դատարկութիւն: Ջարեհը ինքնաբերաբար փակեց դուռն ու մեկնուեց ամբողջ: Իսմէնէն մտտեցաւ նրան, վերստին բռնեց ձեռքերն ու պատմեց Ազնիւի մահը, նաեւ այն, որ նա անապատում քնում էր՝ Ջարեհի նուիրած դամասկեան կերպասի մէջ պարուրուած, եւ որ հոգին աւանդեց ըմբոստ, իր երգը երգելով:

«Ա՛խ, քոյրիկս», — կցանկանար արտասուել Ջարեհը, բայց ժամանակ չկար: Կառքի կրկնայատակի թշուառներն իր խնամքի կարիքն ունէին...

Եւ այսպէս, համբերատար ընթերցող, հասանք այս ճանապարհորդութեան եւ այս պատումի աւարտին: Սմբատի դուստրերը վերապրեցին, Նուբարը եւս, ինչպէս գուշակել էին: Մի ամբողջ տարի Ջարեհը նրանց թաքցրեց իր տան մառանում եւ ի վիճակի չէր լինի նրանց կերակրել առանց Մարի-ժողովների եւ Իսմէնէի փութաջան օգնութեան, ինչպէս նաեւ հալէպցիների եւ Հալէպում բնակուող օտարերկրացիների՝ հայերին օգնելու միացեալ ցանկութեան:

Ապա Ջարեհը նրանց նաւ նստեցրեց եւ ուղարկեց դէպի Վենետիկ, դէպի Երուսաղէմ, որը նրանց վերցրեց իր հոգածութեան ներքոյ: Շուշանիկն ապրեց այդ ամբողջ երկար տարին, բայց յետոյ ուժերը լքեցին, եւ նա մահացաւ նաւի վրայ հէնց առաջին գիշերը, երբ ի վերջոյ, իր փոքրիկ գերդաստանի հետ նաւարկելով դէպի Իտալիա, կարողացաւ մի կողմ թողնել վախն ու կրկին ժպտալ Սմբատին: Իսկ ի՞նչ տեղի ունեցաւ իր զաւակների, Երուսաղէի եւ նրա կոմսուհի կնոջ, Էդուարդի եւ Քայելի հետ: Սա էլ մի առանձին պատմութեան նիւթ է...

Իսմէնէն ու Իսակը մնացին Հալէպում՝ Շուշանիկի հետ մինչեւ վերջինիս մեկնումը, ապա միասին գնացին Ջմիւռնիա: Սա եւս մէկ այլ պատմութեան նիւթ է...

Նազիմը մնաց Հալէպում՝ Ջարեհի հետ՝ յետաձգելով իր

մեկնումը: Բայց օրերից մի օր նա, իրօք, անհետացաւ, մի գուցէ գնաց Մեքքա՝ իր մասնագիտութեամբ զբաղուելու: Եւ այլեւս չվերադարձաւ...

Նազիմն այն յայտնի գիշերը հանդիպեց Զելալին, եւ պարզ չէ, թէ ինչ սասց նրան: Բայց մի քանի օր անց Զելալն ու Ջարեհը պատահաբար հանդիպեցին ու միասին արտասուեցին, սուրճ խմեցին ու նարդի խաղացին: Հէնց Զելալն էլ ապսպրեց նաւն ու գերմանական անձնագրերը Շուշանիկի փոքր գերդաստանի համար: Եւ կրկին նա՛ էր, որ վկայութիւն տուեց հայկական ջարդերի վերաբերեալ 1919 թուականին Կոստադնուպոլսում կայացած դատավարութեան ժամանակ...

Ոչ ոք, համբերատա՛ր ընթերցող, այլեւս երբեք չվերադարձաւ իր փոքրիկ քաղաքը...

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՕՍՔ

Երախտապարտ եմ շատերին, սակայն առաջինը շնորհակալութիւն կյայտնեմ նրանց, ովքեր ուղղակի թէ անուղղակի հաղորդակցուեցին ինձ հետ՝ Սմբատին ու Շուշանիկին, Իսմէնէին ու Իսակին, մուրացկան Նազիմին ու Երուանդին՝ իր պիրանդելեան խնամուած մօրուքով: Ապա Ազնիւ ու Վերոն հօրաքոյրերին, որոնց այդպէս էլ չեմ ճանաչել, ճատիկպատիկ Անրիեթին, որն ինձ շփացնում էր, առասպելական հօրեղբայրներ Զարեհին ու Ռուբէնին: Շնորհակալութիւն համարձակ ու քմահաճ մօրս, որն ինձ մեծացրեց առանց գիջումների, հօրս՝ լուրջ ու ինքնամփոփ Քայելին, որին անհանգստացնում էր ամէն ինչ, էղուարդ հօրեղբօրս, զարմիկներ Երուանդին, Էրմաննոյին ու Թերեզային, եղբօրս՝ Կարլոյին, ինչպէս նաեւ իմ իւրայատուկ, սիրեցեալ միւս եղբայրներին ու զարմիկ-զարմուհիներին:

Պարտական եմ հրաշալի ընկերուհուս՝ Սիոբհան Նաշ՝ Մարչալին՝ գիրքը գրելու դրդման համար. հերոսներն ինձնից առաջ նրա հետ էին հաղորդակցուել. Պօղոս Լեւոն Զէքիեանին՝ եղբայրական բարեկամիս, որի շնորհիւ խինդով յայտնաբերեցի արմատներս: Պառլոյին՝ առաջին պատմութիւններիս ունկնդրին, արթուն հսկիչիս ու հին սիրուս. քաղցրիկ դստերս՝ փոթորկուն Չեչիլիային՝ ըմբռնման համար. Դարիո Զանգուղեան-Յակոբեանին՝ հայի ինքնութիւնը ինձ հետ միասին կիսելու եւ Pharmacie Hayastane անուան համար. Կիարա Հայկանոյշ Մմիկեանին եւ Աֆո Հեմմաթ Սիրաքիին, որոնք իմաստուն կերպով բառ առ բառ ինձ ուղեկցեցին Դանիէլ Վարուժանի հրաշքէ քնարերգութեան՝ միջով:

Բոլոր նրանց, որոնց տարիներ շարունակ պատմել եմ իմ պատմութիւնները. շնորհակալութիւն ունկնդրելու համար: Campel Alto-ի մարտական թիմին (Մարթա, Յրանչեսկո, Անջելոմարկո, Մարիասիլվիա եւ Անդրէա). իմ alter ego Աննա Յոլլիին եւ Պիերսանդրո Վանցանին. Մարիոյին եւ Ֆիորենցային. երկու Լուիզաներին (եւ Լիմպոպոյին). Զովաննա Լա Պեկորային, Մարինային, Կարլոյին, Յրանչեսկոյին եւ Ալեսանդրո Պիկկոլոյին. Միմինային, Լաուրային, Զեզիրային եւ Նատալիային. Լուիջինային եւ Բետտինին. Ազրիանային ու Մարիգային. Լինային, Ստեֆանիային, Սոնիային եւ Ռոբերտոյին. Զաննային, Պառլոյին, Լէոյին (Կրետա), Յրենսիսին (Տոլո), Անդրէային (Լիդո), Լուկային (Կապալբիո). այնույետեւ Մարգերիտային, Աննալիզային, Մանուէլային, Դոնատելլային, Ֆլաւիոյին, Էլիզային, Վիկտորիային, ինչպէս նաեւ միւս անուշիկ ուսանողներս, Ալեսանդրո Գրանդէին եւ Սիլվիային, Յաբիոյին եւ Կարլային, Մարիա Տերեզային եւ Կլարային. բոլոր նրանց, որոնց անունները չգիտեմ, գնացքներում եւ հանրակառքերում հանդիպած բոլոր անծանօթ բարեկամներին...

Նաեւ սրտիս փոքրիկ էակներին՝ Վանանային, Լեֆանտինոյին, Տէրսո Լեֆանտէին ու Բամբինա Լեֆանտէին, Տէրսո Լեֆանտէ Բամբինոյին ու Տենբերդո Օսկուրո Զունիորին, որը, սերմեր հաւաքելով, ովկիանոսներ անցաւ, Կուելլա Կոն Լյի Ստիւալիին, Անդատա Վիաին, Ասպետներին, բոլոր նրանց, որոնք յաճախ այցելում են ու ինձ երբեք մենակ չեն թողնում:

Շնորհակալութիւն նաեւ Պադովայի հայածէս¹⁸ Պատարագի ու հայկական փոքրիկ երգչախմբի բարեկամներին ու ընկերներին, որոնց հետ ես էլ եմ կարողանում երգել ամբողջ կոկորդով:

Շնորհակալութիւն վաղեմի հաւատարիմ բարեկամիս՝ Անջելո Գուերինիին. մեղսակից ընկերուհիներիս՝ Ռոբերտա

¹⁸ Հեղինակը գործածել է արեւելածէս բառը (ծնթ. թարգմ.):

Բրիւտոյին եւ Սանդրա Կոստուին. Աննամարիա եւ Պիետրո Քիւչիւկեաններին, Ֆերնանդա Դի Մոնտէին, Լաուրա Պիգանելլոյին եւ Բեպպէ Դէ Սանտիսին, Ջո.Լու.ին, Արմինէին ու Անահիտին, որոնք տարբեր եղանակներով ինձ մղեցին գրելու այս պատմութիւնը. շնորհակալութիւն բոլոր հեզ ու անըջալից հայերին, որոնք Միլանից Հոոմ ու աշխարհի չորս ծագեցրում ինձ ընդունել են ու սնել հնամեայ իրողութիւնների պատկերներով ու յանկարծակի յայտնաբերուած ազգակցական կապով՝ նուիրելով անգին յուշեր:

Շնորհակալութիւն Ադելէ Սարաւալլէին, Ռենատո Պարէնցոյին, Դարիոյին եւ Աիդա Ֆոային, Աքիլլէ Վիտերբոյին, որոնք տարբեր ձեւերով օժանդակեցին ինձ իրենց երբայական թանկագին իմաստութեամբ. հայկական հարցերին քաջատեղեակ, զարգացած ու հետաքրքրասէր բարեկամներ Սուրէն Մովիկեանին ու Ալդո Ֆերրարիին. Վարդուհի Բամպակեանին, որի շնորհիւ յայտնաբերեցի հայկական ժանեակների ու ասեղնագործութեան արուեստը. Ռութ Թոմասեանին, կորուսեալ հայրենիքի լուսանկարների վեստեան պահպանին. Լիւսի Տէր Մարտիրոսեանին ճարտարապետական սքանչելի տեսարանների համար. նաեւ հոգեբան եւ հոգուս խորհրդաւոր եղբայր Հայկազ Գրիգորեանին:

Ի վերջոյ, պարտական եմ ցեղասպանութեան վկաններին ու պատմաբաններին, այդ թւում՝ Կլոդ Մութաֆեանին, Վահագն Ն. Տատրեանին, Ռոբերտ Մելսոնին, Դոնալդ եւ Լորնա Միլլերներին, Ռիչարդ Գ. Յովհաննիսեանին, որոնց շնորհիւ կարողացայ խորքից ըմբռնել ողբերգական իրադարձութիւնների էութիւնը, որի հիմնան վրայ հիւսուեց ճշմարտութեան եւ ճշմարտանմանի ոստայնը:

Շնորհակալութիւն միւս մայր ցամաքում գտնուող բարեկամներիս՝ Թէոդոլինա Բարոլինիին, Թիմմի Վիցին, Վենդոլին Լերդերին, Ջո Քոթերսքիին, Մերիին եւ Թոնային, Մարիային եւ Վիտոյին, Ուսուէին, ինչպէս նաեւ այն քաղաքներին, որտեղ այս պատմութեան մի քանի հերոսներ դարձան

իրական՝ սիրեցեալ Նիւ Եորքին՝ գետի վրայ բացուող պատուհանով, զբօսանաւերով ու մուգ սառոյցի մեծ կտորներով. Եւանգելյոսին ու Թիւզոր Սիթիում գտնուող նրա Tudor Grill ռեստորանին, Կենտրոնական մեծ կայարանին, Վայր, որն ինձ Պաշտպանում է. Ջարո'սի մաֆիննսով նարնջի հիւթին, Մինեսոթայի Մնթ Փոլին, որի Farmer's Market հրապարակում գտնուող մի շէնքի վրայ ԺԹ. դարի տառատեսակով գրուած Crane գեղեցիկ գրութիւնն ինձ միշտ յիշեցնում էր հայ պանդուխտների կարօտի Կռուկ երգը. The Black Dog սրճարանի թանձր ու համեղ ապուրները:

Շնորհակալութիւն Մինեսոթայի՝ իմ լճային դրախտավայրի բարեկամներին՝ Կոկոյին ու Ջոաննին, Մասիսին ու Շաքէին, Քեթին ու Ջաֆարին, վերագտած զարմիկներ Քարտաշեաններին, Լու Էյն Մարտիրոսեանին, ասորի Հաննա Կերկինիին ու վարպետ կօշկակարին. Մնթ Թոմաս Համայսարանի ուսանողներին՝ Ահարոնին, Ջիմին, Ռեյչլին, Մոլլին, Ռուչինային, Բեթին, Քեթրինին:

Երախտապարտ եմ ու զգացուած Մարիլիգա Անդրետտայից ու Վարդան Մարտիրոսեանից: Շնորհակալութիւն Ռոբերտո Սանտակիարային իր հրաշալի ունկնդրութեամբ ինձ պարգեւած հաճոյքի համար. Ալէին, Լաուրային ու Քրիսին՝ իրենց վաւեր օժանդակութեան համար, ինչպէս նաեւ Ռիցցոլի հրատարակչատան ճաշարանին՝ riso in bianco¹⁹-ի ու բացառիկ ձուածեղի համար:

Ի վերջոյ, շնորհակալութիւն Տորինոյի Աւտոմեքենայի թանգարանի աշխատակցուհի Դոնատելլա Բիֆինեանդիին՝ արժէքաւոր ու վաւեր խորհրդատուութեան համար, որն ինձ օգնեց ու հաստատեց իմ մանկական յիշողութիւնները. բոլոր նրանց, ովքեր սրտիս մէջ են, բայց վրիպել են մտքիցս:

Ա.Ա.

¹⁹ Riso in bianco – իտ. եփած սպիտակ բրինձ առանց որեւէ թացանի (ծնթ. թարգմ.):

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

<i>Թարգմանչի կողմից</i>	<i>5</i>
<i>Ընթերցողին հետ՝ պատուամի սեմին</i>	<i>9</i>
<i>ԱՌԱՋԱԲԱՆ</i>	<i>17</i>
<i>Ա. ՄԱՍ ՀՕՐԵՂԲԱՅՐ ՍՄԲԱՏԸ</i>	<i>27</i>
<i>Բ. ՄԱՍ ՇՈՒՇԱՆԻԿ</i>	<i>127</i>
<i>Երախտիքի խօսք</i>	<i>252</i>

ՀՏԴ 850-3 Արսլան
ԳՄԴ 84.4 Իտ

Արսլան Անտոնիա
Ա. 933 Արտոյտների ագարակը: Վէպ / Անտոնիա Արսլան.–
Եր.: Սահակ Պարթեւ, 2007.–258 էջ

Էջաղբուճճ Անժէլա Մանուկեան
Տպագրուել է
«Սարգիս Խաչենց» հրատարակչութեան տպարանում
0010, Երեւան, Արամի փ. 1
Հեռ./Ֆաքս. (37410) 58-27-03, e-mail: skhach@nga.sci.am